

Ankegç Ejer (1890- 1914) : D. Hator

Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

Hintliyan, Hovhannes T'. (1866-19..). Ankegç Ejer (1890-1914) : D. Hator. 1922.

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'oeuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF. Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :

*La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.

*La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

Cliquer [ici](#) pour accéder aux tarifs et à la licence

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

*des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.

*des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment passible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter reutilisation@bnf.fr.

Յ. Թ. ՇԻՆԴԼԵԱՆ

ԱՆԿԵՂԾ ԷԶԵՐ

(1890-1914)

Դ. ՀԱՏՈՐ



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԿՐՈՒԹԻՒՆ Յ. ԾԱՏԹԻՍՆԵԱՆ

1922

3

41327102

Յ. Բ. ՇԻՆԴԼԵԱՆ

ԱՆԿԵՂԾ ԷԶԵՐ

(1890-1914)

Գ. ՀԱՏՈՐ



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՎ ՄԱՏԹԻՈՍԵԱՆ

1922

ՅԿ ԳՅԲ

2008-129962

ԱԼԳ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Գ. Հ Ա Տ Ո Ր Ի

Ներկայ հասորը կը փակէ *Անկեղծ Էջերը* : Հինգերորդ հասոր մը իբր յաւելուած , պիտի պարունակէ այն յօդուածները որոնք , ետք հրատարակուած ըլլալով կամ մոռացման հետեւանօք , չեն երեւիր *Անկեղծ Էջերու Ա.-Գ.* հասորներուն մէջ : Վերջին տարիներու ընթացքին՝ զանազան թերթերու մէջ հրատարակուած ինչ ինչ յօդուածներս շարքի կրնան երեւիլ այդ հինգերորդ հասորին մէջ , որովհետեւ հրդեհի հետեւանօք զրկուած մնացած եմ եովս զտնուած բնագիրներէն եւ դժուար պիտի ըլլայ զանոնք գտնել :

Ինչպէս ըսած էի Ա. Հասորի յառաջաբանին մէջ , *Անկեղծ Էջերը* հրատարակելով՝ նպատակս եղած է , ամեն բանէ առաջ , «Նոր Դպրոց»ի աւակերտաց ծնողաց ճանչցրնել խորհող , զգացող եւ գործող մարդր որ եղած է «Նոր Դպրոց»ի Հիմնադիր-Տնօրէններէն մէկը : *Անկեղծ Էջերը* կրցա՞ծ են ծառայել այն նպատակին որուն սահմանուած են անոնք՝ ամեն բանէ առաջ : Զգիտեմ : Միայն կ'ուզեմ շեշտել հոս սա կէտը թէ անոնք իրօք անկեղծ էջեր են , փրցուած՝ հայ մանուկը խորապէս սիրող դաստիարակի մը մտածումներէն եւ զգացումներէն , հայ մանուկին համար բաբախող հայ դաստիարակի մը արեւն :

Կ. Պոլիս, 1922

Յ. Խ. Հ.

ԱՅԼԵՒԱՅԼՔ

Ան. Յոս. Շառեֆի Զ. Պատմաբան

Ինքնաշարժական և Ինքնաշարժական

Երևան 1925 թ. Նոյ 17

Գրքարան

ԱՆԿԵՂՑ ԷՋԵՐ

Դ. ՀԱՏՈՐ



ՃԱՄԲՈՐԴՈՒԹԵԱՆ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌ ՅԱՐԳՈՅ ՊԱՇՏՈՆԱԿԻՑՔՍ

Եթէ ճամբորդութիւնն օգտակար է առ հասարակ ամէն մարդու համար, պիտի ըսեմ թէ պէտք մ'է այն հայ դաստիարակին համար՝ որ, մանկավարժական տեսակէտով, գրեթէ ոչինչ կը տեսնէ այն միջավայրին մէջ ուր կ'անցնի իր կեանքը: Ծամբորդելու է մարդ աղէկ մը համոզուելու համար թէ ո՛րքան բաներ կան կարեւոր զորս գրքերու մէջ չպիտի գտնենք երբեք և որք աչքով ու ականջով միայն կը սովորին. ճամբորդութիւնն այն քաղաքակրթեայ երկիրներուն մէջ, որք Ֆրանսա, Գերմանիա, Զուիցերիա, ևն. կը կոչուին, մեծ դպրոց մ'է որ մէկ կողմէ կ'ամբողջացնէ, կ'ամրացնէ ու կը ճշդէ այն ուսմանց պաշարն զոր դաստիարակը կը համբարէ գրքերու մէջէ, և միւս կողմէն ճաշակը կը կրթէ ու կ'ազնուացնէ: Ու յետոյ, գիտէ՞ք շատ անգամ ի՛նչ կ'ըսեն մեզ համար, մեզ, հայ դաստիարակացս համար. «Ընկերութեան մարդիկ չեն ստոնք, ամբողջ կեանքերնին տղոց հետ անցընելով անցընելով՝ իրենք ալ տղայ մնացած են, տաղակալի են» և դեռ ասոր պէս խել մը խօսքեր զորս կարելի է ամփոփել սա մէկ քանի բառերով. «Ընդհանուր-թիւն (tact) չունին հայ դաստիարակները»: Եւ

եթէ պէտք է ճշմարտութիւնը խոստովանիլ, շատ անգամ իրաւացի են դժբաղդարար իրենց դիտողութիւններն : Արդ, ի՞նչ բանէ յառաջ կուգայ ընտրողութեան պակասութիւնը, ինչո՞ւ համար է որ չենք գիտեր թէ ո՞ր բանը պէտք է ըսենք ու ո՞րը չըսենք, ինչէ՞ն է որ ընկերական սովորութեանց բաւական տեղեակ չենք միշտ, ինչո՞ւ համար ուսմանց վրայ կը ճառենք երբ պէտք էր լռել, կը կատակարանենք երբ պէտք էր լուրջ ըլլալ . ո՞ւրկէ յառաջ կուգայ որ օտար անձանց խօսակցութեան կը խառնուինք առանց հրաւէր մը ստացած ըլլալու խօսքով կամ աչքի նշանով մը, ինչէ՞ն է որ վիճարանութեան մը մէջ մեր հակառակորդին անձնականութեան կը դպչինք, և կամ յանդէպս կ'երկնցնենք խօսակցութիւն մը՝ որ շատոնց լմացած ըլլալու էր, ինչէ՞ն յառաջ կուգան այս և ասոնց նման հազարաւոր պարագաներ ընտրողութեան պակասութեան : — Շատ բան տեսած չըլլալէ : Ընտրողութիւնը կը ծլի, կը զարգանայ ու կը հասուննայ ուրիշ մարդիկներ, ուրիշ աշխարհներ, ուրիշ միջավայրեր տեսնելով և քննութեան ու գննութեան առարկայ ընելով տեսածը, լսածը : Ահա ճամբորդութեան մէկ ուրիշ և թերեւս ամէնէն մեծ օգտակարութիւնը : Ճամբորդութիւնն, այն մեծ վարժապետն, կը կրթէ, կ'ուղղէ, կը յանդիմանէ, մասնաւոր կ'ընէ մեր պակասութիւններն առանց վշտացնելու : Ու ո՞վ աւելի պէտք ունի ընտրողութեան քան դաստիարակն՝ որուն պաշտօնը միայն ուսեալ մարդիկ հասցնել չէ, այլ նաև, այլ մանաւանդ բարեկիրթ, քաղաքավար և աշխարհային սովորութեանց վարժ մարդիկներ հասցնել : Ահա ինչու կ'ըսէի քիչ մը վերը որ եթէ ճամբորդութիւնն օգտակար է առ հասարակ ամէն մարդու համար, պէտք մը կրնայ սեպուիլ հայ դաստիարակին համար, որ 40-50 տակի խնայողութեամբ մը կրնայ, եթէ ոչ ամէն տարի կամ մէկ երկու

աարին անգամ մը — ինչ որ անկարելի չէ — գո'նէ մէկ անգամ, իր տարեկան պարապուրդից օրերն անցընել ճամբորդութեամբ՝ մտքով ու մարմնով նորոգուած և հասունցած մտնելու համար՝ դպրոցական նոր տարեշրջանին՝ վարժարանէն ներս: Գոնէ ես այս համոզումը գոյացուցի այն հինգ շաբաթուան ճամբորդութեան մէջ զոր ըրի ի Բարիզ, ի Զուիցերիա և ի Վիեննա, և որուն իմ վրայ ըրած ամենէն խորունկ տպուորութիւնները պիտի ջանամ հաղորդել իմ յարգոյ պաշտօնակցացս:

Այս տարուան ընդհանուր քննութեանց աւարտումէն գրեթէ անմիջապէս վերջ, յուլիս 18ին կ'երթամ ուղղակի Մարսիլիա: Առաջին անգամն էր որ հեռաւոր ճամբորդութեան մը կը ձեռնարկէի, ես՝ որ Իշխանաց կղզիներէն անդին չէի գացած: Չեմ գիտեր թէ մասնաւոր բնաւորութեան մը հետեւանօք թէ բնական կերպով մը տեսակ մը վախ կ'զգայի շողենաւուն մէջ՝ որ քիչ մը վերջը ճամբայ պիտի ելնէր տանելով զիս օտար երկիր մը (բուն ճամբորդութեանս վայր սահմանած էի Զուիցերիան) ուր ոչ մէկ բան ծանօթ էր ինձ, բացի լեզուէն: Բարեբաղդաբար՝ շողենաւին մէջ կը հանդիպիմ աղնիւ ուսանողի մը, Պ. Երուանդ Շահինեանի, որ տարեկան արձակուրդէն կը վերադառնար ի Պորտօ, բժշկական վարժարանը: Սիրուն վառվոռն երիտասարդ մը որոյ ուշիմութեան վրայ հիացած էի, երբ, գրեթէ տասնուչորս տարի առաջ, իմ աշակերտացս մէջ զինքն ալ ունէի Սկիւտարու Ս. Ոսկ վարժարանին մէջ, ուր ուսուցիչ կարգուած էի՝ վարժարանէն ելնելէս գրեթէ ինն ամիս վերջը: Նոյն ուշիմութիւնը պահած էր միշտ, և ես՝ որ բնական գիտութեանց տարերքն կ'ուսուցանէի իրեն այն ատեն, հիմայ մեծ հաճոյքով կը լսէի իր բերնէն բժշկութեան վերաբերեալ տեղեկութիւններ. այս ուրախութիւնը քիչ մը չի' նմանիր անոր զոր կը զգայ երկրագործը երբ իր քրք-

տինքովը պարարտացուցած հողին վրայ հարիւրներով կը քաղէ այն հունտէն՝ զոր ցանած էր : Բայց արդէն շողենաւին ճամբայ ելնելու ժամանակն հասած էր , ու նոյն իսկ քիչ մ'ալ անցած : Ծնողք , աղգականներ ու բարեկամներ արտասուախառն համբոյրներու մէջ հրաժեշտ կուտային իրարու . 'սրտաշարժ տեսարան՝ որուն ազդեցութիւնը կ'աւելցնէր մայրը մտնելու մօտ արեւն : Քառորդ մը վերջը՝ նաւը ճամբայ կ'ելնէր . ճամբորդներուն յուզումը կը տեւէ քիչ մ'ատեն ևս , բայց , ինչպէս ամեն բան , մշտատե չկրնար ըլլալ . *alea jacta est* . պէտք է համակերպիլ այլ ևս , պէտք է չորցնել այդ արցունքները , պէտք է վանել տրամութիւնն , պէտք է բարեկամանալ անցորդներուն հետ , պէտք է դրօնուլ : Ընդհանուր սրտաբեկութիւնը առաջին անգամ թոթուողն կ'ըլլայ եւրոպացի ժիր և ուշիմ պատանեակ մը , որ մէկէն իր արցունքները կը սրբէ , կը վազէ դէպի իւր մայրը , կը համբուրէ զայն անդադար , յետոյ կը վազէ իւր շնիկին ետեւէն , կը դրգուէ զայն , և մէկ վայրկեանի մէջ կենդանութեամբ կը լեցնէ անկենդան նաւն : Քիչ մը ետքը Շիրքէթի շողենաւներէն մէկուն մէջէն թաշկինակներ կը ծածանին . ո՛հ , ի՛նչ յուզիչ են այդ բարեւներն , այդ ողջերթի մաղթանքներ : Չեմ գիտեր թէ ես ալ իմ բաժինս ունէի այդ բարեւներուն մէջ , բայց զրիթէ բնազդաբար կը պատասխանեմ +...+էթովս բարեկամական այդ եռանդալից ցոյցերուն :

Հիմա Իշխանաց կղզեաց մօտերն ենք . լուսնի լոյսն իր ամբողջ փայլովը կը լուսուորէ հանդարտիկ ծովն . մեզ ծանօթ ափունք կ'աներեւութանան տակաւ , և բոլոր անցորդք , յափշտակուած , կը դիտեն երկինքն ու ծովն , որոնցմէ զատ ոչինչ պիտի տեսնեն վերջը : Այդ խորհրդաւոր վայրկեանին , որ ամբողջ ճամբորդութեանս մէջ

իր նմաններն ունեցաւ յաճախ, մարդ կը մոռնայ ինք-
զինքն, մարդէն աւելի վեր, աւելի վեհ, Արարչին աւելի
մօտ կը զգայ ինքզինքն, ըլլայ անհուն ծովուն մէջ, ըլ-
լայ բարձր լեռան գագաթը, ո՛յնքան ճշմարիտ է թէ
«բնութեան զննութիւնը կը մղէ ճշմարիտ իմաստունն
Արարիչն զննելու. կը բարձրացնէ անոր հոգին մինչև այն
վսեմ խորհուրդն որ կը բացատրէ տիեզերքն: — Իմաս-
տասէրները կ'ուզեն ամեն բան իրենց տրամախոհութեանը
հպատակեցնել և չեն ուզեր հաւատալ թէ գերիվեր բա-
նաւորութիւն մը ստեղծած է տիեզերքն. իրենց գիտու-
թիւնն չի հրահանգեր, իրենց իմաստութիւնն չսփոփեր:»
(Պերնարտէն ԳԸ Սէն Բէէ-):

Բայց ախորժակնիս սրուած էր, և սպասաւորն արդէն
քառորդ մ'է որ զմեզ հրաւիրած է ճաշի: Տասը հոգի ենք
մենք, երկրորդ կարգի ճաշակիցքս, որոց մէջ երեք հայ,
մէկ իտալացի, մէկ յոյն, մնացեալները Ֆրանսացի: Չա-
նազան բնաւորութիւն և մտքի զանազան զարգացում
ունեցող այդ անձանց ընկերակցութիւնը, խօսակցութիւ-
նը այնքան հաճելի է որ չենք զգար թէ բոլորովին տար-
բեր և յաճախ մեր ճաշակին անյարմար կերակուրներ են
որ մեզ կը բերուին: Այդ ճաշածամերուն ամեն տեսակ խօ-
սակցութիւններ կ'անցնին, որոնք հետզհետէ նոր եռանդ,
նոր ուբեւորութիւն մը կ'ստանան գինւոյ գաւաթներուն
համեմատութեամբ. գիտական, ընկերաբանական խնդիր-
ներ կը լուծուին մէկ երկու ժամուան մէջ այդ ճաշի սե-
ղանին վրայ, խնդիրներ որ տարիներէ ի վեր չեն կրցած
ազատիլ գիտուններու սեղաններուն վրայէն: Ամեն պա-
րագայի մէջ, հրահանգիչ, զարգացուցիչ, շահեկան են այդ
խօսակցութիւնները կամ մանուաւանդ վիճարանութիւն-
ները զորս այնքան ճարտար կերպով համեմել գիտէր
կասքօն հիւանդ մեքենագէտ մը՝ իր ցեղին յատուկ մտացի
և սուր կատակարանութիւններով: Չեմ գիտեր թէ նոյն-

քան զուարթ ճաշ մը կ'ընէի՞ն առաջին կարգի ճամբորդներն , որոց մէջ իգական սեռն ալ իր ներկայացուցիչներն ունէր . բայց ճիշդ կիներ գտնուելուն համար է որ չեմ կարծեր թէ անոնց ճաշը նոյնքան ազմկալից կերպով երկարէր՝ առանց ճանձրոյթի հետքն իսկ ներկայացնելու : Տեսէք ինչո՞ւ : Այդ կիներն երկու որոշ դասակարգերու կը բաժնուէին . առաջինը կը կազմէին վերին աստիճանի բարեկիրթ , մտքով զարգացեալ կիներ . իսկ երկրորդը , ճիշդ հակառակը , հաճոյքի համար ծնած , ինքզինքնին և ուրիշները զուարճացնելու համար ապրող էակներ . և երբ իրարու տրամագծապէս հակառակ մտքի ու սրտի տէր կիներ իրարու քով կը գտնուին , չեմ կարծեր թէ իրենց ներկայութիւնը կրնայ հրապոյր մը տալ այն ընկերութեան՝ որուն մէջ կը գտնուին . հակառակն հաւատալու զանազան առիթներ ներկայացուցին :

Առաջին դասակարգին իբր ներկայացուցիչ պիտի յիշեմ Տիկին Մօնարսիօն և Օրիորդ Վիտրնօրն : Տիկինն — ամուսինն այն հականեխիչին զոր օսմանեան կառավարութիւնն Պոլիս պաշտօնի կոչած էր քոլերային առթիւ — կրնայ ներկայանալ տիպար մայր մը : Լուրջ կին մը , այդ տիկինն , բայց ոչ արուեստակեալ , բռնազբօսիկ լրջութիւն մը . ոչ ճիգ մը ինքզինքը լուրջ ծախելու իրեն մօտ գտնուողներուն : Իրական լրջութիւն մը , բոլորովին բնական , որուն հետ անհաշտ չեն բնաւ զուարթութիւնն , ճաշակաւոր կատակներն . «Մեծին հետ մեծ էր , պղտիկին հետ պղտիկ » : Այնքան մեծ էր իր խօսքերուն ու ձեւերուն ազդեցութիւնը զաւկին վրայ , որ սա , իր ամենէն կրակոտ և անզուսպ վայրկենին իսկ , երբ պատշաճից հակառակ ընթացք մ'ունենար , մէկէն կ'զգաստանար իր մօր մէկ խօսքովը կամ նշանովն որ երբեմն զինքը լացնելու չափ կը գրգռէին իր պղտիկ անձնապատուութիւնը . ամբողջ դաս մ'էր գործնական մանկավարժութեան այդ

տիկնոջ իր զաւակը կրթելու եղանակն , որուն պիտի փա-
փաքէի որ ներկայ գտնուէին մեր մայրերն և . . . մեր
դաստիարակներն : Ու այդ տիկնոջ քով կար Քրանսացի
օրիորդ մը ծաղկահասակ , Վիտրնօրն :

Տժգոյն հիւանդոտ օրիորդ մը , որոյ միակ հաճոյքն էր
կարդալ — գրեթէ բոլոր մեծ մատենագիրները կը ճանչ-
նար — և խօսիլ ու վիճարանիլ ամեն տեսակ նիւթերու
վրայ , կրօնական ու իմաստասիրական , գրական ու գի-
տական : Ու մեր հաճոյքն ալ էր այդ օրիորդին հետ խօ-
սակցիլ , որ , առանց չափազանցութեան , գրքերով ու խօ-
սելով միայն կ'ապրէր : Հակառակ ճամբորդներուն թախան-
ձանաց , հակառակ նոյն իսկ առաջին նաւապետին սպառ-
նալեաց , Օրիորդ Վիտրնօրն կը յամառէր պտուղէ զատ
ոչինչ ուտելու . օր մը միայն յաջողեցանք քիչ մ'ապուր
խմցնելու իրեն , բայց շատ շուտով զղջացինք , ու դառն
կերպով . օրիորդը քիչ մը վերջը նուազած կ'իյնար իր
քովիներուն բազկաց մէջ . անմիջական խնամքներն հա-
զիւ կարողացան զինքը սթափեցնելու : Օր մը Համար-
դին տեսած էր մսավաճառներ , արիւնլուայ բազկօք , որ
եզ մը կ'սպաննէին , հորթեր ու ոչխարներ կը մորթէին
և կը յօշոտէին անոնց տակաւին դողդոջուն անդամներն :
Արևան վտակներ կը մխային տակաւին հոս հոն սալայա-
տակին վրայ : Սոսկմամբ խառն խորին արգահատութիւն
կը պաշարէ պատանեակն : Համարդին որ շուտով խոյս
կուտայ այդ ահուելի տեսարանէն . և այդ օրէն ի վեր-
զգուանք մը կ'զգայ մտին համար . նոյն իսկ մինչև տաս-
ներկու տարեկան միայն կաթ , բանջարեղէն և պտուղ
կ'ուտէ : Համարդին կը կարծէ թէ այս կերպ կենցաղաւա-
րութիւնն պատճառ եղած ըլլայ իր ծայրայեղ դիւրազգա-
ծութեան : Բանաստեղծին կարծիքը կը հաստատէր Օրի-
որդ Վիտրնօրն , որ համակ զգացում էր : Օրիորդ Վիտր-
նօրնի հետ սոսկալի հակապատկեր մը կը կազմէր ուրիշ

Ֆրանսացի օրիորդ մը, որուն անունը չեմ յիշեր այլ ևս . դժոխային էակ մը, այդ օրիորդն, որ իր մէջ կը պարունակէր ամեն ինչ որ ունի ամենէն աւելի զազրելի, ամենէն աւելի ահուելի մարդ արարածն . անկեալ կնոջ գերագանց տիպար մը, չար ու նախանձոտ, որ իր ժամանակը կ'անցնէր իր շան հետ, զոր ամեն մէկ կերպով կը չարչարէր, և կամ լացնելով Օրիորդ Վիտրնօրն՝ որուն վրայ կը թափէր իր կնոջական քստմանի նախանձին ամբողջ ժահրը :

Վեց օր կ'անցընենք այսպէս նաւուն մէջ, խօսակցելով, վիճարանելով, երգելով, խաղալով, կարդալով ու մանաւանդ դիտելով, հաճոյալի ժամեր՝ զոր երբեմն կուգար խանգարել ծովն իր ցայտուածնելով և իր մաղձադեղելով : Յուլիս 24ի երկուշաբթի կէս օրին Մարսիլիոյ առջեւն ենք, որոյ ժայռուտ ափունք մէկէն ի մէկ շատ հոճելի տպաւորութիւն մը չեն ըներ վրաս . գործունէութիւնը կ'սկսի, այդ ժայռերուն վրայէն իսկ, ուր ծծմբական թթուի գործարաններու արտադրութիւններն կ'երթեւեկեն անդադար երկաթուղիներու վրայէ : Ուշ կը գրաւէ ԻՖ կղզին և անոր դղեակը, զոր լաւ կը յիշեն Մօնթէ-Քրիստօ կարդացողներն և որ կառուցուած 1529ին Պրանսուա Ա.ի կողմանէ, հիմա կը ծառայէ իբր բանտ : Պրանսացի ճամբորդ մը կ'ըսէ ինձ թէ ծովէն շատ վար caveau ներ ունի այդ դղեակն, ուր Միլապօ բանտարկուեցաւ 1774ին : Մարսիլիոյ ծովեզերքը կը գրաւեն գործարաններ՝ յաճախ շրջապատուած ծառերով : Քիչ մը վերջը մեր նաւը մէկ կողմ կը ձգէ հին նաւահանգիստը առադաստանաւերու սահմանուած և կը մտնէ դանդաղ՝ Ժօլիէզի հիանալի նաւահանգիստն 1500 մետր երկայնութեամբ : Կառախուսման՝ որ զմեզ Բարիզ պիտի տանէր, չորս ժամ վերջը կը մեկնէր : Առիթէն օգուտ քողելով վերիվերոյ դադաւիար մը կուգեմ ստանալ Մարսիլիոյ վրայ .

ուստի կ'աւանդեմ զոյքերս կայարանը և կը պտըտիմ փողոցները, սքանչանալով ամեն կարգի շէնքերուն և ճեմելիքներուն վրայ և ժամանակիս մեծ մասն անցընելով Քանրպիէոի երկար ծառուղւոյն մէջ: Ախորժելի ճաշէ մը վերջ՝ կը մտնեմ կառախուժք քր գրեթէ 24 ժամէն պիտի տանի զմեզ ի Բարիզ: Ինչ գեղեցիկ, ինչ հրապուրիչ է ամբողջ այն գիծը՝ զոր Լիօն-Բարիզ-Միջերկրականի երկաթուղին կը քերէ. երկու կողմերն՝ աչքն ուրիշ բան չի տեսներ բայց եթէ դալարագեղ արտեր ու պարտէզներ, ուր երկրագործը կարծես կարկինով է աշխատած. արուեստն իր քմահաճոյից գերին ըրած է բնութիւնն, որմէ քաղած է բոնի այնքան բան՝ որքան կրնայ սույլ քարուտ լեռներն իսկ մարգերու, սյգիներու կամ անտառներու է փոխած, ա՛յնքան կանոնաւոր, ա՛յնքան մաքուր, ա՛յնքան կոկիկ որ ոտքը չպիտի համարձակէր կոխոտել այդ խոտերն՝ որ երկինքիանց թանկագին գորգերու պէս փրուուած են հողին վրայ: Խոտերու խուրձերն, աղբերու դէղերն իսկ ճաշակ մը կ'արտայայտեն:

Յաջորդ օրն երեկոյին Բարիզ կը հասնի կառախուժքը: Կանոնաւոր կերպով շարուած կառքերէն մէկուն լրջադէմ կառապանին կ'ըսեմ հասցէն Պ. Արամ Թահտաճեանի, որու առաջնորդութեանը կը յանձնարարէր զիս ազնիւ բարեկամս Թահտաճեան Խաչիկ էֆէնտի: Գրեթէ քառորդ մը վերջը պանդոկին դրան առջև էի: Պ. Արամ Թահթաճեանը կը հարցնեմ պանդոկապետուհոյն, որ ինձ կը պատասխանէ թէ քիչ մը վերջ պիտի վերադառնար պանդոկը: Լայն շունչ մը կ'առնեմ հոն. զոնէ շարաթուան մը համար անփորձ ճանքորդի մտատանջութիւններէն պիտի կրնայի ազատ ըլլալ, և պիտի կրնայի Բարիզի հրաշալեաց մէկ մասին վրայ սքանչանալ՝ առանց նեղութեան, առանց ժամանակի կորստեան, շնորհիւ ազնիւ ու անձնուէր առաջնորդի մը: «Բու սիրած տեղերդ ցուցուր

Հինդլեանին» կը գրէր Թահթաճեան էֆէնտի իր զաւկին . այս տողերն , ուղղուած գեղարուեստից վարժարանի յաջողագոյն աշակերտներէն մէկուն , որ իր արուեստին մասնաւոր սէրն ունի իր հօրը պէս , կը նշանակէին՝ «ցուցուր ինչ որ կայ ամենէն աւելի գեղեցիկ Բարիզի մէջ» : Ասկէ աւելի ինչի՞ կ'ընայի բաղձալ : Ճաշելէ առաջ ծնողացս առաջին նամակս գրելու զբաղած էի , երբ դուռս կը դարձնուի , ու քիչ մը վերջը ուրախութեան աղաղակի մը հետ գերազանցապէս որդեսէր հօր մը յանձնարարած համբոյրներովը կը ծածկէի սիրուն արուեստագէտին այտերն : Հազիւ քանի մը անմիջական տեղեկութիւններ կը հաղորդենք իրարու , ու առանց ժամանակ կորսնցնելու Պ . Թահթաճեան կ'ուզէ ընդհանուր գաղափար մը տալ ինձ Բարիզի վրայ՝ գիշեր ատեն : Չեմ գիտեր թէ հըշտի մակղիբը կը բաւէ՞ բացատրելու համար այն սպաւորութիւնն զոր ըրաւ իմ վրայ՝ ելեկարական լոյսի մէջ ողողուած ու շողջղացող Բարիզն : Կը կարծէի երազել . դողցես վաճառատան մը ապակապատ տուփին մէջ կը տեսնէի արուեստական Բարիզ մը՝ ի վաճառ դրուած : Եւ իրաւ ալ , ամբողջ արուեստ է Բարիզն . արուեստ՝ իր պողոտաներուն ու ծառուղիներուն մէջ , արուեստ՝ իր գետին եզերքն ու վրան , արուեստ իր հոյակապ ու ճաշակաւոր շէնքերուն մէջ , արուեստ՝ ամենէն աննշան բանին մէջ իսկ , արուեստ , վերջապէս իր բնակչաց վրայ : Չէ՛ . չպիտի կրնամ նկարագրել երբեք այդ ահագին հրապարակներն՝ ուր արձաններ կը վիստան — ա՛յնքան գիտէ Բարիզ համակրանաց ու երախտագիտութեան հարկ մատուցանել՝ մտքին ու սրտին — , այդ կանոնաւոր փողոցներն՝ ուր բազմութիւնն կ'ենայ , թէև «տարւոյն այս եղանակին մարդ չկայ Բարիզ» կ'ըսէ ինձ բարեկամս : Ի՛նչ կենդանաւթիւն , Աստուած իմ , ի՛նչ ողբերութիւն , ի՛նչ կեանք : Գրեթէ մինչև կէս գիշեր կը պտըտինք Բարիզի գըլ-

խաւոր ծառուղիներն , հրապարակներն ու փողոցներն . ազնիւ առաջորդս կը ցուցնէ ինձ դիտուելու ամենէն աւելի արժանի շէնքերն , արձաններն ու տեղուանքն , չի ձանձրանար տեղեկութիւններ տալով ինձ անոնց ամէն մէկուն վրայ : Բայց յոգնութիւնն զգալի կ'ըլլար տակաւ . կը զովանանք ու կը հանգչինք քիչ մը , և յետոյ , միշտ երազուն , կը մտնեմ պանդոկ՝ բարեկամիս հետ , «Մորփէոսի գրկաց մէջ հանգչելու համար» , ինչպէս պիտի ըսէր գրագէտ մը :

Յաջորդ օրը , մանր անձրև մը կը տեղար : Մտածեցի թէ առիթը շատ յարմար էր այցելելու Պ . Վահան Հազարապետեանին , վաղեմի բարեկամ մը՝ զոր առջի իրիկունը չէի կրցած գտնել իր տունը : Ինչ հոգեբանական երեւոյթ է ան որ տեղի կ'ունենայ երբ յանկարծ դէմ առ դէմ կը գտնուին երկու մտերիմներ՝ որ երկար ատենէ ի վեր զիրար չեն տեսած : Ամբողջ անցեալն ու ներկան իրար կը խառնուին . շատ մը բաներ ունին իրարու ըսելիք , և սակայն ձայնարկութիւններու և կցկտուր պարբերութիւններու մէջ կը խեղդուին զեղուն տպաւորութիւններն , զգացումներն ու տեղեկութիւններն : «Ի՞նչ , հո՞ս , Հինդլեան , բայց դուն ինչպէ՞ս եկար հոս , եղբայր :» — «Ինչ կայ , ինչո՞ւ չե՞գայի . բայց կատարեալ գիտուն մըն ես եղեր , Հաղարապետեան :» Ու իրաւ ալ արուեստագէտ-գիտուն մը կը ներկայացնէ յանձին , իր երկայն մազերովը , իր լուրջ դէմքովն ու խօսուածքովն այդ երբեմնի երիտասարդ ուսուցիչը որ քիչ ատենէն կ'ստանայ մասնագէտի վկայագիր՝ ամենէն փայլուն վարպետի մը ձեռքէն : Ահա կամքի ոյժի յիշատակելի օրինակ մըն ալ : Կը մնամ իր քով ժամու մը չափ , կը խօսակցինք , փոխադարձ տեղեկութիւններ կուտանք իրարու . բայց չեմ ուզեր անխորհրդութիւնն իր ծայրն հասցնել և Մօսկփողոցի ուսանողն առանձին կը ձգեմ իր մեծահասոր

գրքերուն հետ, որք, լայն բացուած, կարծես յանդիմանութիւններ կ'ուղղեն իրենց տիրոջ և . . . անոր խօսակցին :

Երեկոյին, ազնիւ առաջնորդս, հաւատարիմ իր խոստման, կը տանի զիս Բարիզի ամենէն շքեղ սրճարաններէն մին, ուր նուագահանդէս կը տրուի ամեն երեկոյ : Ամենէն աւելի սիրած բաներէս մէկն է նուագը . որքան շնորհապարտ եմ բարեկամիս որ ա՛յնքան հեշտալի ժամեր անցընել տուաւ ինձ :

Բայց արդէն ամբողջ օր մը, և նոյն իսկ քիչ մ'աւելի, անցած էր, և տակաւին չէի այցելած ոչ մէկ թանգարան, ու մտածել թէ շորաթ մը միայն կը թոյլատրէր ինձ յատակագիծս՝ մնալ Բարիզի մէջ : Ո՛չ, պէտք էր շուտով գործի սկսիլ : Նոյն խորհուրդը կուտայ ինձ Պ. Թահթաճեան, որոյ հետ հետեւեալ առաւօտուն կ'երթամ Լիւքսէնպուրի մուսէոնն, որոյ շատ մօտ կը գտնուէր մեր պանդոկը : Այս մուսէոնը, Բարիզի ամենէն գեղեցիկներէն մէկը, գանձարանն է արուեստագէտներու արտադրութեանց : Այդ նկարներն, այդ արձաններն՝ որոց իւրաքանչիւրն մէկ մէկ բան կը խօսի սրտիդ ու երեւակայութեանդ, խորին յափշտակութեան մը մէջ կ'ընկղմեն զքեզ, և ամեն օր ժամերով պիտի ուղէիր կանգ առնել անոնցմէ ամեն մէկուն տոջն՝ եթէ այդ ոտնալպիրծ տախտակամածներով ընդարձակ և մաքուր սրահներու շարքը չը խլէր զքեզ քու երազուն վիճակէդ : Ամեն օր, խուճր խուճր օտարականներ ու տեղացիներ, ամեն հասակէ ու ամեն սեռէ, կուգան սքանչունալ այդ արուեստի հրաշալեաց վրայ, և ամեն մէկ անգամուն նոր գեղեցկութիւն մը կը գտնէ մարդ հազար անգամ դիտած այդ նկարներուն ու արձաններուն մէջ . այս չէ՞ գեղեցկին յատկանիչը : Այդ սրահներուն խորհրդաւորութիւնը կ'աւելցնեն ժիր և երիտասարդ նկարիչներ և նկարչուհիներ որոնք

իրենց կամ ուրիշին նախընտրած նկարին առջև լռիկ մնջիկ կ'աշխատին կարելի եղածին չափ հաւատարիմ մնալ ճգնելով նախանկարին : Այսպէս , մուսէօնը ճաշակի կրթութեան , հողւոյ ազնուացման դպրոց մ'ըլլալէ ետքը շատերու ալ ապրուստի միջոցը կը հայթայթէ :

Երեկոյին , մեր սովորական պտոյտը կ'ընենք Լիւքսէնպուրկի Պարտէզին մէջ որ՝ Տպրոս ճարտարապետին յատակադծին վրայ շինուած է և որ , բաց ի շքեղ պարտէզի բոլոր հրապոյրներէն , կը պարունակէ բազմաթիւ արձաններ և նշանաւոր աղբիւր մը : Ինչպէս միւս պարտէզները , Լիւքսէնպուրկն ալ բաց է հասարակութեան , որ հոն կ'երթայ անցընել հաճոյալի ժամեր հովանուտ դարատափներուն մէջ՝ իւր արամադրութեան տակ ունենալով հարուստ նուազախումբ մը : Ճաշելէ վերջ , մեր քայլերը կ'ուղղենք դէպ ի Րիչլիէօ փողոցը , ուր կը գտնուի Թէադո-Ֆրանսէն , Բարիզի քառասուն և վեց թատրոններուն մէջէն դրամեայներէն մէկը՝ (300,000 ֆր .) Օբէնաի , Օբէնա-Քոմիքի և Օտէօնի հետ : Թէաթո-Ֆրանսէն , կամ ուրիշ անուամբ Քոմէտի-Ֆրանսէզ , որոց կը կցեն նաև յաճախ Մէլզօն տը Մօլիէո տեսակ մը պատուանուներ , ունի իր ամբողջ պատմութիւնն և խոսվալից անցեալ մը : Ճոխ է թատրոնն , ինչպէս որ պէտք է ըլլայ իբրև Ֆրանսայի առաջնակարգ դասական թատրոնը : Չեղունը նկարուած է հոյակապ վարպետի մը (Կլէո) մեծ աշկերտին (Մազրրօլ) կողմանէ , որ ուսուցիչ եղած է Գեղարուեստից Վարժարանը : Արձաններու երկրին մէջ՝ որ Բարիզ կը կոչուի , Թէաթո-Ֆրանսէն առած է իր արժանաւոր բաժինը . Թալմաի , որ Ֆրանսայի առաջին ողբերգու դերասանը կը նկատուի , և ողբերգութիւնն ու կատակերգութիւնն անձնաւորող երկու նշանաւոր դերասանուհիներու արձանները , Վօլդէոի , Ժօնժ Սանի արձանները , վերջապէս Մօլիէոի կիսարձանը՝ զոր կը պսակեն կատակերգակ

դերասաններ, ժամերով իրենց առջև կը գամեն այցելուն ։
Շէնքին արտաքին մասն ալ իր սիւներով և արեգակնա-
կով (belvédère) այնքան գեղեցիկ է որքան ներքին մասը ։
Շէնքին ընդարձակութեանը վրայ գաղափար մը տալու
համար ըսեմ թէ 1400 հոգի կրնայ առնել ։ Թէաթր-
Ֆրանսէի դերասանական խումբին մէկ մասը գոյացած
չահին բաժնեկից է և քսան տարիէ վերջ 5000 ֆրանքի
հանդատեան թոշակ կ'ստանայ . մէկ մասն ալ որոշ թո-
շակ ։ Այն ներկայացումները — Բասինի մէկ ողբերգու-
թիւնը և Ռընարի մէկ թատերախաղը — որոց հանդիսա-
տես գտնուելու հաճոյքն ունեցայ փոխան 2 1/2 ֆրանքի ,
հաստատեցին զիս սա համոզմանս մէջ թէ Թէաթր-Ֆրանս-
սէն ճաշակի կրթութեան մեծապէս նպաստելէ վերջ հոյա-
կապ դպրոց մ'է բեմասացութեան և բարւոք առողա-
նութեան ։ Որչա՛ն փ պիտի փափաքէի որ Բարիզի մեր հայ
ուսանողները աւելի յաճախ նախամեծար համարէին
զայն՝ ուրիշ զբօսավայրերէ ։

Յաջորդ առաւօտուն կ'երթանք պտոյտ մ'ընել Շան
զ'էլիզէն , այսինքն Բարիզի ամենէն նշանաւոր ճեմելիքը ,
որուն անունը չլսող չկայ . սակայն լսելէ տեսնել մեծ
տարբերութիւն կայ , և այդ ճեմելիքին զգլխիչ գեղեց-
կութեանը վրայ որոշ գաղափար մ'ունենալու համար
տեսնել պէտք է զայն ։ Բայց ի՞՞՞՞՞ անշտարակն , այնքան
նուրբ ու սիրուն հեռուէն՝ որքան վիթխարի մօտէն , կը
հրաւիրէ զմեզ դէպ ի Շան տը Մարս , որ այնքան նշա-
նաւոր դէպքերու թատր եղած է և ուր կը մնայ տակա-
ւին 1889ի ցուցահանդէսի շէնքերուն մէկ մասը ։ Քիչ մը
վերջը վերամբարձը (ascenseur) զմեզ կը պտըտցնէ աշ-
տարակին առաջին ու երկրորդ յարկերը (համարձակու-
թիւն չունեցանք աշտարակին սանդուխներէն վեր ել-
լելու) ։ Ի՛նչ տեղեկութիւն տալ ի՞՞՞՞՞ վրայ որ լսուած
չըլլայ . ըսել թէ երեք հարիւր մէթր բարձրութեամբ

և ինը միլիոն քիլոկրամ ամբողջական ծանրութեամբ քառայարկ այդ երկաթեայ աշտարակն սքանչելի համայնապատկեր մը վայելել կուտայ այցելուին . թէ ճարտարապետը այնքան ընդարձակ մակերեւոյթի մը վրայ հաստատած է այդ հսկայ շէնքը , որուն հիմերը կրող գետինը գրեթէ երկու քիլոկրամի ճնշում միայն կը կրեն , այսինքն սովորական շէնքի մ'ըրած ճնշումը . թէ իւրաքանչիւր յարկ մէկ մէկ ընդարձակ շէնք է՝ որ ունի իր զանազան վաճառատուները — տեղեկութիւններ են որոնք ստէպ յեղյեղուած են 1889էն ի վեր . Ինչ որ ամենէն աւելի յաւիշտակութեան մէջ կ'ընկղմէ զիս , մարդուն հանճարն է՝ որ կրցած է մինչև այդ ցնորեցուցիչ բարձրութեան հասնիլ , և հանճարին հետ մէկտեղ , ինչ որ կ'սքանչացնէ զիս , այն պաղարիւնն է , այն անդրդուելի անձնավստահութիւնն որ էֆէլի կանգնել տուաւ այս փառապանծ հրաշակերան ճարտարապետութեան՝ որուն քով փշրեցան իրեն հակառակորդներուն ծիծաղներն ու յարձակումները : Գիտէք թէ ի՞նչ էին եղած առարկութիւնները . մէկ կողմէն՝ գետինը չպիտի կրնար վերցնել այդչափ ծանրութիւն . միւս կողմէն՝ հովը պիտի երերցնէր աշտարակը , և այս երկու պատճառները իրարու միանալով օրին մէկը աղէտ մը պիտի յառաջ բերէին : Գիտութիւնը յաղթապանծ պատասխանեց այս առարկութեանց . գետինը գրեթէ երկու քիլոկրամի ճնշում կը կրէ այդ ահագին աշտարակէն , որ 400 քիլոկրամ ճնշում մը կը կրէ , քառակուսի մէդր գլուխ , հովին կողմանէ , մինչդեռ Բարիզի մէջ տեսնուած ամենէն սաստիկ փոթորիկները քառակուսի մէդր գլուխ հարիւր յիսուն քիլոկրամէ աւելի ճնշում ի գործ չեն դրած : — Այն խորունկ տպաւորութենէն զոր կրեցի աշտարակին մէջ , յիշատակ մը պահելու համար՝ մէկ երկու պզտիկ առարկաներ կը գնեմ և հաւաքական գիր մը ուղղելէ յետոյ մեր ծնողաց՝ աշտարակին մասնաւոր քառոյ բօս-

դալով, բարեկամս և ես կը մեկնինք դէպ ի Hôtel des Invalides, հիմնուած Լուդովիկոս ԺԴ ի կողմանէ անկարգինուորներուն համար(*): Ժամանակին մեծ մասը կ'անցընենք Գմբէթին մէջ Նարոյէտնի հոյակապ և մեծաշուք գերեզմանին առջև (չինուած Վիսքօնդիի կողմանէ, Բրատիէի արձաններով ճոխացած) ուր իր աճիւններն ամփոփուած են: Կը դիտենք նաև Թիւռէնի և Վօպանի շիրիմները: Մեր առաջնորդը մանրամասն կերպով կը բացատրէ մեզ բոլոր մեր այցելած միւս մասերն (Թանգարան, Հրետանուոյ, Սէն Լուի եկեղեցին) և կուտայ տեղեկութիւններ՝ որոնք հոն տեղի իրական ապացոյցներուն հետ միանալով խորին տպաւորութիւն կ'ընեն մեր վրայ և քիչ մ'աստեն անցեալ ժամանակներու մէջ կը փոխադրեն զմեզ: — Էնվալիտէն դուրս ելնելով կ'ուղղենք մեր քայլերն դէպ ի կամուրջ և կը նստինք նաև՝ երթալու համար Ժառտէն տէ Բլանդ, ընդարձակ պարտէզ մը՝ (130 հէքդար մակերեւոյթ) որ երեք մասերէ կը բաղկանայ. 1. Բոօֆանհան, ուր կը գտնուին գրեթէ բոլոր ծանօթ տունկերու նմոյշները՝ իրենց պիտակներով. 2. Կէրֆանհան, ուր կը գտնուին ամէն տեսակ ողջ անասուններ, ամենէն ամեհիներն ալ, ամենէն անվնասներն ալ, ամենէն խոշորներն ալ, ամենէն պզտիկներն ալ. 3. Բոօֆանհան, ուր կը գտնուի Լիբանանու նշանաւոր եղեւինը: Կ'սկսիմ կենդանաբանական պարտէզն այցելելով, իբրև զիս ամենէն աւելի շահագրգռող մասը: Մեծ և փոքր դադաններու շարքէ մը վերջ, որոնք անծանօթ չեն ինձ, ոչ անուամբ, ո՛չ տեսքով և ոմանք միայն անուամբ, կը հասնիմ անասուններու (ketupa ceylonensis, cacatoës, ratel du Cap, coati) զոր աւելի երկար դիտելու պէտքը կ'զգամ:

(*) Խիստ շքեղ շէնք մը, որոյ ոսկեզօծեալ գմբէթը կը ցուցնէ ինձ հետուէն բարեկամս: Մեր մասնաւոր առաջնորդը կ'ըսէ մեզ թէ հոն ընդունուող անկարգինուորներուն թիւը հետզհետէ քիչնալու վրայ է:

Բայց եթէ մէկ կողմէն տեսնելու և սովրելու տեսչը կայ, միւս կողմէն անխորհուրդ չըլլալու փափաքը կայ, որովհետեւ հարիւրաւորներ են, մանչ եւ աղջիկ, մեծ ու պզտիկ, որոնք իրենց կարգին կ'ապաստեն ետեւս՝ իմ տեղս գրաւելու համար: Բազմութիւնն համեմատաբար քիչ մ'աւելի երկար ատեն կը մնայ վերոյիշեալ անասուններէն առաջինին առջեւ, որ թռչուն մ'է բաւական հազուադիւտ և որ իր նախընտրած անձին ձայնը կը հանէ ամենայն ճշդութեամբ: Կարգ մ'անասուններ ալ ուզածիս պէս չկրցի դիտել՝ անոնց յատուկ տեղը տիրող անտանելի գարշահոտութեան պատճառաւ: Միջոց մը կը սթափիմ զընտելութիւններէս, ժամացոյցս կը նայիմ: Տէր Աստուած, ճաշելու ժամը հասած է արդէն, որպէս զի բաւական ժամանակ ունենանք Օրէրա երթալու համար պէտք եղածը հոգալու: Ու ես որ միամտօրէն կը կարծէի թէ բաւական ժամանակ ունէինք տակաւին պարտէզին միւս մասերն ալ զննելու: Ճարը չկար, պէտք էր մեկնիլ: Վերջին ակնարկ մ'ալ կը ձգեմ այն պարտէզին վրայ՝ որ տարիներէ ի վեր կենացս երազն էր եղած, կը նստինք շոգենաւ և կուգանք Պուլվար տէ Գարիւսէն, ուր կը գնենք մեր ատմասակները Օրէրայի համար: Հիմայ, 20 Փրանքի փոխարէն, երկու քնիս ալ մեր գրպանին մէջ զետեղած ենք մեր ատմասակներն, այլ ևս տարակոյս չիկայ. «ատմասակները հատած են» ի խնդիր չկայ. պիտի կրնամ վերջապէս վայելել այդ Օրէրան, այդ անմատչելին՝ զոր Պոլիս եղած ատենս այնպէս կը կարծէի թէ մեծամեծ դժուարութիւններով պիտի կրնայի ձեռք ձգել: Ի լրումն բարեբաղդութեան, Վակնէրի Թանհէօյզերն էր որ կը ներկայացուէր այդ երեկոյ, Թանհէօյզեր՝ որով 1845ին, Վակնէր երաժշտական աշխարհին մէջ այնքան մեծ աղմուկ կը հանէր: Բայց ո՞րուն վրայ քիչ մ'երկարիլ, շէնքի՞ն թէ խաղին: Շէնքը. ի՞նչ բան կարելի է երեւակայել աւելի հոյակապ

և աւելի նրբաճաշակ ու գեղարուեստական քան Օբէռան , որուն համար 47 միլիոն ծախսուած է (արձաններն ալ մէջը հաշուելով) : 11,237 քառակուսի մէդր տարածութիւն ունի այդ մեծասքանչ շէնքն , որուն փառքը կ'սկսի իր շքեղ վերնագաւթակէն իսկ (perron) : Որո՞ւն վրայ աւելի հիանալ . այդ կամարակապներո՞ւն , այդ կորընթեան սիւներո՞ւն , այդ պատշգամին , այդ գմբէթի՞ն թէ այդ արձաններուն վրայ , որոնք 5—7 1/2 մէդր բարձրութիւն ունին : Ներքին կողմն ալ նուազ նշանաւոր չէ . սանդուխը ինքնին հրաշակերտ մ'է , զարդարուած կամարներով , ճեմակ կուճէ աստիճաններով , եղնգնաքարէ վանդակապատներով՝ որոց խաղխամներն կարմիր մարմարիոնէ են , կոնաչ մարմարիոնէ խարխիսներու վրայ : Պօտրիի նկարները ներքնակողման շքեղութիւնը կը լրացնեն : Արահը 2400 հոգի կ'առնէ : Ձեղունը նկարած է Լընէրվէօ՝ պղինձի վրայ . — Իսկ սքանչացումս չափ շունի այլ ևս , ճշմարիտ գլխու պտոյտ մը կ'ունենամ՝ երբ վարագոյրը վեր ելնելով բազմաթիւ արուեստագէտներէ բաղկացեալ նուազախումբ մը լսելի կ'ընէ մեծ վարպետին հրաշակերտը , մարդկային ամենէն քարցրալուր ձայնը կը միանայ գործիներու ձայնին , սրահը հիմա աւելի լուսաւորուած է , վիժակները կը շողշողան , տեսարանը հետզհետէ կը լեցուի , զգլխիչ պար մ'է կ'սկսի . . . ու հանդիսականները իրենց շունչը կը բռնեն :

Թ Ա Ն Հ Է Օ Յ Ձ Է Ր

Այս ամէնը այնքան հրապուրիչ է՝ որ կ'արժէ թերևս խաղին ամփոփումը հոս զետեղել : — Տասներեքերորդ դարուն մէջ՝ այնպիսի հաւատք մը կար թէ Այգընախի և Վարդպուրկ դղեակին մօտ կը բնակէին սատանաներ , կոապաշտութեան ժամանակէն մնացած շաստուածներ՝ դուրս վանուած իրենց մեհեաններէն : Հոն մոլութեան

դիցուհին՝ հաստատած էր իր բնակութիւնը : Գիշերը լկտի
երգեր կը լսուէին հոն , կանացի ստուերներ կ'ուրուագրծ-
ուէին մթութեան մէջ , քաղցրահնչիւն ձայներ կը ջանա-
յին հրապուրել ուշ մնացած ճամբորդները : Առաջին ա-
րարուածին , Վէնիւսպէրկի խորհրդաւոր արձանները կը
տեսնուին , ասպետն Թանհէօյզէր՝ բանաստեղծ և երգիչ՝
նշանաւոր իր ներշնչութեան ուժգնութեամբ , մեղկօրէն
պառկած է դիցուհւոյն ծնգաց վրայ :

Օր մը , հպարտութենէն և ցանկութենէն մղուած ,
բաժնուած է իր մրցակիցներէն , թողած Վարդպուրկի դըղ-
եակն՝ ուր Հէրման Լանտկրաֆն (իշխանական տիտղոս) կը
նախագահէ երգի մրցմանց հանդէսին , և առ ոչինչ գրելով
բանադրանքն , մտած է Վէնիւսպէրկ , սիրած է չարաղէտ
դիցուհին և սիրուած անկէ : Հիմա կ'ուզէ բաժնուիլ ան-
կէ , մրցիլ , լալ , աղօթել , տառապիլ : Ի՞ դուր դիցուհին
կը պաղատի որ չերթայ , կը հմայէ , կը ժպտի , կը սպառ-
նայ . Թանհէօյզէր կ'անհետանայ մթութեան մէջ :

Ձորին մէջ , ասպետը Վարդպուրկի ստորոտը կը գտնէ
ինքզինքը՝ գարնան լուսաշողշող առաւօս մը : Ուխտա-
ւորնուր կ'անցնին , ասպաշխարութեան աղօթքը կ'երգեն :

Հասկնալով վերջապէս հրաշքն որ կը կատարուի՝
Թանհէօյզէր՝ խորտակեալ , երեսի վրայ գետին կ'իյնայ
և արտասուաց հեղեղ մը կը թափէ : Ահա այս դիրքին մէջ
կը գտնեն զայն իւր վաղեմի բարեկամներն , որք հազիւ
կը ճանչնան զայն . իրենցմէ ոչ մէկը կրնայ գուշակել թէ
ուրկէ կուգայ ասպետը : Բայց վեհ սիրան Վօլֆրամ ,
իւր ամենէն նշանաւոր մրցակիցը , դէպի Թանհէօյզէր
կը յառաջանայ , ձեռքը վեհանձնութեամբ կարկառած ,
կը խօսի անոր էլիզապէղի վրայ , Լանտկրաֆին քեռ-
դուստրն , որ անոր կը սպասէ , որ անոր վրայ կը մտա-
ծէ , որ կը սիրէ անշուշտ զայն : Այս անուան վրայ՝
Թանհէօյզէր նոր կեանք մը կը նշմարէ մթութեան մէջ :

ուրախութեամբ կը հաւանի վերադառնալ ի Վարդպուրկ ։
Իրօք էլիզապէդ կ'սպասէր Թանհէօյզերի ։ կը սիրէր
այդ նրբաճաշակ երգիչն որ միայն կրցած էր գինքն յու-
զել իր երգերով ։ Երգերու մրցման հանդէս մը կը տրուի
ի պատիւ այս վերադարձին ։ Իշխաններուն և ազնուական
տիկնանց ներկայութեան Վօլֆրամ կ'երգէ ամենէն առաջ
սիրոյ մեծութիւնը , բայց սուրբ սիրոյ , պատրաստ ամեն
տեսակ զոհողութեանց , որովհետև ինքը , լուրջ քերթող ,
կը սիրէ էլիզապէդը իր սրտին լուութեանը և անձնուրա-
ցութեանը մէջ ։ Թանհէօյզեր կը պատասխանէ , և իւր
երգած երգին տուներն հետզհետէ տարօրինակ ոգեւորու-
թիւն մը կ'ստանան , որովհետև լքեալ դիցուհին անգամ
մ'ալ կը տիրանայ իր ասպետին խանդավառ հոգւոյն ։ կը
մտնայ էլիզապէդը , կը վառի հպարտութեամբ և անխառ-
նութեամբ , դիցուհւոյն գովեստը կ'երգէ , կը պանծայ իւր
եղեռնաւոր յանդգնութեան վրայ . « Ողորմելիներ որ չէք
գիտեր ի՛նչ է սէրն , Վէնիւսպէրկ գացէք և գտէք զայն ։ »
Սարսափի աղմուկ մը կը յաջորդէ այս յայտնութեան ։
Ասպետները կը խոյանան դէպ ի այդ անուանարկն , բայց
նոյն միջոցին սուր աղաղակ մը կը թնդայ . էլիզապէդ մե-
ղապարտին և պատժոյն մէջտեղ նետուած է ։ Ինքզինքն
կը ներկայացնէ յարձակողն ինքն , անմեղն կը ծածկէ յան-
ցաւորն իր մարմնով , շնորհ կը խնդրէ ոճրագործին հա-
մար ։ Այսպիսի անձնուիրութեան մ'առջև , ասպետները
կանդ կ'ստնուն , սուրերը վար կ'իջնեն , սոսկումները
կարծես հրաշքով կը զսպուին . Թանհէօյզեր , վերջապէս
հասկնալով թէ ի՛նչ է ճշմարիտ սէրը , էլիզապէդի ոտից
առջև կ'ողբայ իւր անարժանի վարմանց ողբը ։ Բայց Լանտ-
կրափը կը խօսի . անիծեալը միա՛նայ երիտասարդ ուխ-
տաւորներուն որ Հոռմ կ'երթան , երթա՛յ քահանայապե-
տէն ներում խնդրէ ։ Հեռուն կը հնչէին բարեպաշտ թա-
փորին երգերը ։ Թանհէօյզեր , էլիզապէդի առջև գետնա-

տարած կը բռնէ կուսական ծոպը , անոր կը փակցնէ իր շրթունքն և կ'երթայ ուխտագնացութեան իր մեղքերը քաւելու :

Աշուն է . եղանակին տխրութիւնը սփռուած է ձորին վրայ . արեւմուտքի կարմրութիւնը կը ծիրանացունէ Վարդպուրկի պարիսպներուն կատարները : Ճամբուն եղերքը , էլիզապէդ կ'աղօթէ սպասելով ուխտաւորներու վերադարձին : Իրմէ քիչ մը հեռու Վոլֆրան զայն կը դիտէ ակնապիչ : Երգ մը կը բարձրանայ՝ հետզհետէ մօտենալով . ուխտաւորները ներում գտած են քահանայապետէն և կը վերադառնան : Բայց էլիզապէդ ի զուր Թանհէօյդէրը կը փնտռէ անոնց մէջ . չկայ , ըսել է միւսներուն պէս քաւութիւն չէ գտած : Այն ատեն , վերջալոյսին աղօտութեան մէջ , դեռատի աղջիկը ի ծունր կ'իջնէ , կը պաղատի Ս . Կոյս Մարիամին , իր կեանքը զոհ կը մատուցանէ ի փրկութիւն հոգւոյ մեղապարտին՝ գոր սիրեց :

Էլիզապէդ Վարդպուրկ ելած է ուր իր փրկութեան աղօթքը , ինչպէս դիւրին է հասկնալ , լսելի պիտի ըլլայ Աստուծոյ : Վոլֆրամ աչքովը կը հետևի մթութեան մէջ այս սպիտակութեան՝ որ իր կենաց սրբասէր լոյսն եղաւ : Այն ատեն երգի մը մէջ կը հռչակէ այս հոգւոյ մօտաւոր համբարձումն յերկինս :

Եւ ահա Թանհէօյդէր , որ Հռոմէն կը վերադառնայ անիծեալ , կը պատմէ Վոլֆրամի իր կամաւոր ապաշխարութիւններն և իր ճակտին վրայ ինկող անագորոյն վճիռը :

Լա՛ւ , թող դիցուհին հիւրընկալէ մերժուած ապուշխարողն : Թանհէօյդէր օգնութեան կը կոչէ դիցուհին , Վէնիւսպէրկի բոլոր հմայքը նորէն կ'երևի մթութեան մէջ , դիցուհին ինքն ալ կ'երևի այս վսեմ պահուն , ներշնչութիւն մը կ'անցնի Վոլֆրամի միտքէն . օգնութեան կը կոչէ Ս . Փրկիչն «էլիզապէթ» : Հմայքը կը դադրի , արշալոյսը կը ծագի :

Զորին մէջ, էլիզապէղի յուղարկաւորութեան թափորը կը յառաջանայ. ձայներ կ'երգեն. Սուրբ է կոյսն՝ որ կանգնած է Աստուծոյ գահուն առջև. երանելի է այն մեղաւորն՝ որոյ համար աղօթեց: Թանհէօյզէր նուազկոտ կը քաշկռտուի կ'երթայ դէպի նահատակին դագաղն. ի ծունր կ'իջնէ, կը մեռնի, արտասանելով սա միակ խօսքն «Սուրբ Եղիսարեթ, աղօթէ ինձ համար»:

Ու, այս պահուն, Հռոմի ծաղկահոսակ ուխտաւորները կը դիմեն: Բոլոր ձայները կը միանան. թողութեան և հաւատքի երգը կը բարձրանայ արշալոյսին փառաց մէջ:

Կ'զգամ թէ նիւթին վեհութիւնը պիտի ոչնչացնէի՝ եթէ փորձէի հոս նկարագրել այն բոլոր արուեստն ու այն բոլոր ճոխութիւնը որով այդ գիշերն Օբէռան դիս վերացուց, բառին բովանդակ ու ամենէն ընդարձակ նշանակութեամբը:

Յաջորդ օրը կ'երթամ ի Լուվր, Փարիզի և թերևս Եւրոպիոյ ամենէն ընդարձակ պալատը (Թիւլլըրին ալ միասին առնելով 195,000 քառակուսի մէդր տարածութիւն մը կը զրաւէ): Ո՞վ չէ լսած Լուվրի անունը և անոր Colonnadeին համբաւը: Քանի մը բուռերու մէջ ամփոփինք հոս այդ հոյակերտ շինուածին պատմութիւնը: Ֆիլիք-Օկիւսթ վայն շինել տուած է ամենէն առաջ. Կարոլոս Ե. հոն հաստատելով իր բնակութիւնը՝ մեծապէս գեղեցկացուց զայն, բայց Ֆրանսուա Բ. հին շէնքը փլցնել տուաւ և սկսել տուաւ արդի շէնքը զոր իրարու յաջորդող վեհապետներ մեծցնել ու ձեւափոխել տուին և որ Նաբոլէոն Գ. ի օրով աւարտեցաւ: Հիմա պալատին մէկ մասը յատկացած է ելեւմտից նախարարութեան, մնացեալ մասը՝ թանգարաններուն: Այդ հոյակապ շէնքէն ներս մըտնելով ինքզինքս կորսուած կը զգամ արձաններու և նկար-

ներու զգլխիչ ճոխութեան մը մէջ . ո՛ւրկէ սկսիլս , որո՛ւն առջև աւելի երկար ատեն կանգ առնելս չեմ գիտեր , կը մտածեմ թէ նոյն իսկ հարեւանցի ակնարկ մը ձգելով պիտի կրնամ մինչև որոշեալ ժամը տեսնել գեղարուեստից բոլոր այդ հրաշալիքն . ու վայրկեան՝ մը շուարած ու ընկճուած կը մնամ՝ արուեստին այդ բարձրութեան առջև :

Ամբողջ հատորներ հազիւ կը բաւեն պէտք եղածին . պէս նկարագրելու համար Լուվրն իբր շէնք , ինչպէս նաև այն շքեղութիւններն՝ զորս կը պարունակէ : Ամենահարեւանցի գաղափար մը միայն պիտի կրնամ տալ այդ մուսէոններու թագուհւոյն վրայ . մնաց որ աւելի ընդարձակ գաղափար մը տալու համար աւելի երկար ատեն դիտած ըլլալու և քան զիս աւելի հասկցող մ'ըլլալու է նկարագրողը : Գետնայարկը , մասնաւորապէս ուշադրութիւնս կը գրաւեն Սփինքսը , Ապիսի արձանը , ամաններ , գոհարներ , մոմեաներ , շիրիմներ , պրտուեղէն թուղթի վրայ ձեռագիրներ : Այս մասին մէջ եզրպատական և ասիական արձաններ կան որ գրէթէ 6000 տարուան հնութիւն ունին : Հիանալի են Միլօի Վէնիւսը , Թիպսը , Պալլասը , Սուսերամարտը , ևլն : — Միջին դարու և Վերածնութեան արձանագործութեանց Մուսէոնին մէջ նշանաւոր են Ժան Կուժօնի Անահիտը , Միքէլ Անճէլօյի երկու գերիները , Պէնվէնուզօ Չելլինիի Յաւերժահարսը , Պլանչ սը Շամբանի պղնձեայ արձանը , ևլն : Իսկ Ֆրանսական արդի արձանագործութեան Մուսէոնին մէջ կը գտնուին Բիւժէի , Քուսդուի , Հուսոնի , Բրատիէի , Ռիւտիի , երեւելի գործերը : Կ'անցնինք առաջին յարկը՝ ուր կ'այցելենք նկարչութեան թանգարանը . ի՞նչպէս ընտրութիւն ընել , ինչպէս յիշել հրաշակերտներէն մին առանց զրկանք մ'ընելու միւսին : Գրէթէ 2000 պատկերներ կը գրաւեն այդ թանգարանը . 800ը Ֆրանսական դպրոցէն (ԺՂ . դարէն սկսեալ) . 600ը իտալական : Մասնաւոր ուշադրութիւն կը դարձնեմ Սալօն

Քառէին պարունակած նկարներուն վրայ . հակառակ ժամանակին սղութեան և հակառակ բազմաթիւ պատկերներուն զորս կը մնար դեռ զննել , չեմ կրնար ինքզինքս զսպել քիչ մ'աւելի երկարօրէն սքանչանալէ Ռաֆաէլի Սբ. Ընտանիքին , Լէօնաո տը Վինչիի Փօքօնտին , Բուսէնի Լէ Պէոժէ տ'Առքատիին , Ռանպրանդի Լը մէնաժ տը Մընիւիզիէին , Բօլ Վէրօնէզի Լէ նօս տը Քանաին , Վան Տիքի Շառլ Բորմիէին , Ժէրար Տօուի Լա Փամ իտտօրիքին , Միւռիլլօի Բօնսէլսիօն տը լա Վիէոժին վրայ : Կ'այցելենք վերջապէս սքանչելի Կալրի տ'Աքօլօնը՝ շքեղ ձեղունոր կը պարունակէ Կօպլէնի վիժակներ , գոհարազարդեր , Սէն Լուիի և Ան տ'Օդրիշի գոհարազարդերու արկղիկները , Հանրի Բ .ի դրահները , Կարոլոս Թ .ի սաղաւարտը , վահանը , և այլն :

Ակամայ կը բաժնուիմ այդ հրաշալեաց սրահներէն ուր մարդ ինքզինքն այնքան շուարած կզգայ :

Հապճեպով ճաշելէ վերջ , քանի մը ընկերներով կերթանք ի Պուա տը Պուլօներ , զոր վիպասանութեան սիրահարները շատ լաւ կը ճանչնան : Այս անտառն որ հին Ռուվոէ անտառին մէկ մասն է , 900 հէքտարի մօտ տարածութեամբ սքանչելի պարտէզ մըն է , ուր , երեկոյին , ժամադիր կ'ըլլայ ընկերութեան բարձր դասը . ամենէն շքեղ կառքերն որոց կը խառնուին պարզերն ալ , երկու լիճերուն շուրջը , կը պտըտին , որոնք անտառին զարդն են . այս լիճերէն մէկուն մէջ կը գտնուի մեծ ջրվէժը որ արուեստական անձաւ է մը կը գահավիժի 7 մէթր բարձրութեամբ : Մեծ ջրվէժին գրեթէ զիմացը կը գտնուի Լօնչանի ձիընթացարանը , ուր տեղի կ'ունենան նաև մեծ դօրահանդէսները :

Յաջորդ օրը , կիրակի , առաւօտուն կ'երթանք այցելել Conservatoire des Arts et Métiersն , (հաստատեալ 1794ին Վօքրանսոնի ձեռամբ) ուր ի տես դրուած են ամէն տեսակ

մեքենայներ և գիտական ու արուեստական հաւաքածոյ-
ներ՝ որոցմէ աւելի ճոխը կարելի չէ երեւակայել: Բա-
րիզի մէջ անցուցած օրերուս ամենէն աւելի ինձ գոհու-
նակութիւն պատճառողներէն մէկն եղաւ այդ օրն: Արդա-
րև, չեմ կրնար երեւակայել մեծ գոհունակութիւն մը քան
զայն՝ զոր կ'զգայ մարդ երբ գրքերու մէջ տեսած ու լսած
մարդկային ճարտարութեան մեծ ու պզտիկ ամէն տեսակ
արտադրութիւններ շատ մօտէն տեսնելու, գրեթէ շօշա-
փելու առիթը կ'ունենայ: Ի՞նչպէս կ'ուզէք որ մարդ տգէտ
մնայ, ի՞նչպէս կ'ուզէք որ տղան չի զարգանայ այդ քա-
ղաքին մէջ որ կատարեալ դպրոց մ'է ինքնին իր արձան-
ներով, իր թանգարաններով, իր թատրոններով, իր պար-
տէզներով. վերջապէս, ո՞ր մէկը թուեմ, իր պէս պէս
հրահանգիչ հաստատութիւններով: Conservatoire des Arts
et Métiersն ամենաճոխ թանգարան մ'ըլլալէ զատ վար-
ժարան մ'է ուր երեկոները հրապարակային դասախօսու-
թիւններ կ'ընեն ճրիարար ամենէն ևրեւելի դիտունները
կիրառեալ ուսողութեան (mathématiques appliquées),
գծագրութեան, մեքենագիտութեան, բնաշուծութեան և
շինողութեան վրայ:

Կէս օրէ վերջ ևրկաթուղիով կ'երթանք այցելել Վեր-
սայի պալատը. գործ Լուգովիկոս Ժ՛.ի, այսօր գրեթէ ամ-
բողջովին պատմական թանգարան մ'է 173 սրահով և 6000
նկարներով, արձաններով ու կիսարձաններով, ամենքն
ալ Ֆրանսական պատմութեան վերաբերեալ: Կ'այցելենք
նաև galerie des glacesը և պատմական սենեակներն որոց
մէջ առաջնորդը ցոյց կուտայ մեզ անկողին, գրասեղան,
հայելի և ուրիշ առարկաներ: Այցելուները, բաւական բազ-
մաթիւ, տեսակ մը երկիւղածութեամբ մտիկ կ'ընեն այդ
մարդուն բացատրութիւններն, ո՞վ գիտէ քանի միլիոնե-
րորդ անգամն ըլլալով կրկնուած այդ օրը: Կ'այցելենք
նոյնպէս կուսատունն՝ ուր մեզ ցոյց կը տրուին կառքեր

ու դեասպակներ : Պարտէզներն , որոց յատակագիծը շինած է այն ատենի արքունի պարտէզներուն տեսուն Նոզր , անստղիւտ ճաշակի տիպար մը կը ներկայանան : Երփնե-րանոց ծաղիկներն ու զմրուխտ դալարիքն հոս հոն կ'ընդ-հատին աւազաններով :

Յաջորդ օրը կը յատկացնենք եկեղեցեաց այցելու-թեան : Կ'սկսինք , բնականաբար , Նոզր Տամէն , ջլանա-յին (ogival) արուեստի ամենէն գեղեցիկ շէնքերէն մէկը , զոր երգած է , ինչպէս գիտէք , Վիքդօն Հիւկօ : Նուրբ քանդակագործութիւնն , մանաւանդ ճակատին 68 մէդր բարձրութեամբ երկու շքեղ քառակուսի զանգակատուն-ներն ու՛յնքան լու ներդաշնակուած 96 մէդր բարձրու-թեամբ սլաքին հետ , հեռուէն կը հրապուրեն այցելուն , որ , երբ ներս կը մտնէ եկեղեցիէն , իր կրած տպաւորու-թիւնները չի կորսնցունելու այդ կամարներուն տակ զորս կանգուն կը պահեն 75 սիւներ : Լատին խաչի ձևով շին-ուած է եկեղեցին , 127 մէդր երկայնութեամբ և 48 մէդր լայնութեամբ : Արձաններ , հարթ քանդակներ (bas-relief) (նշանաւոր են դասին մէջ դանուածները) , շիրիմներ , տամ-կանկարներ (fresque) կը զարդարեն եկեղեցին : Չենք ու-ղեր բաժնուիլ այս հոյակապ շէնքէն առանց մինչև դա-գաթը ելած ըլլալու : Ուստի կը վճարենք քառասունական սանդիմի տուրքը և կ'սկսինք մագլցիլ , ուրիշ այցելուաց հետ , մութ սանդուխներէն վեր : Երկրորդ յայկը , պու-հապանը մեզ ցոյց կուտայ երկու զանգակները , մէկը մեծ , իսկ միւսը պզտիկ , գրիթէ անարժէք , կ'ըսէ , որ միայն իբր յիշատակ պահուած է : Նոզր Տամէն վերջ կ'այցե-լենք , յաջորդաբար , Սէն Սիւլբիսի եկեղեցին , ամենէն ընդարձակը և ամենէն շքեղներէն մէկը , Սէն Ժէոմէնի եկեղեցին , Լուվրի ետև , ամենէն սիրուններէն մէկը , և Մատչէնի եկեղեցին :

Յաջորդ առաւօտուն կը նայիմ թղթիկիս վրայ՝ այն օրը այցելելու տեղուանքը յիշելու համար : Անգո՛ւթ ուղեցոյց . վերջին օրը կը ցուցնէր ինձ , միակ վերջին օրը զոր պիտի կրնայի անցընել Բարիդի մէջ : Այս բանը տեսակ մը տրամութիւն կը պատճառէր ինձ , զոր փարատելու համար կը դիմեմ ի Պօն Մարշէ , հոյակապ , ճոխ , ընդարձակ շէնք մը՝ որուն քով գաճաճ մը կրնայ համարուիլ Բերայի Պօն Մարշէն . հոն երթալու է համոզուելու համար թէ ի՞նչ կատարելութեան հասած է ճաշակի նըրբութիւնը Բարիդի մէջ : Ժամերով կը պտրտինք , շնք կշտանար սքանչունալէ այդ ճոխութեանց վրայ , կ'երթանք քիչ մը հանգչիլ ընթերցասրահին մէջ , ուր աչքէ կ'անցընենք լրագիրները , և յետոյ դարձեալ կը պտրտինք այդ անվերջանալի սրահները :

Կէս օրէն վերջ կ'այցելենք Բանդէօնը , պատկառելի շէնք մը յունական խաչի ձևով . կեդրոնը , գմբէթ մը կորնդական սիւներով շրջապատուած՝ որոնք կանդուն կը բռնեն եռապատիկ կամար մը 24 մէդր արամագծով : Շէնքին տողև 11 աստիճանով վերնագաւթակ մը՝ դարդարուած կորնթական 22 սիւներով՝ գրեթէ 20 մէթր բարձրութեամբ : Նոանկիւն ճակատին վրայ Տալիտ տ'Անմէի նշանաւոր մէկ քանդակագործութիւնը :

Ներսի կողմը դարձեալ կորնդեան սիւներ (130 հատ) : Գմբէթին ձեղունին վրայ , որ 69 մէդր բարձրութիւն ունի , «Սուրբ Բէնովարէի» պատկերը կրօի կողմանէ , որոյ նկարները տեսած էի այդէն Լուվրի և Վէրսայի թանգարաններուն մէջ : Իր գործոց չափ նշանաւոր մնացած է վախճանը այդ մեծ նկարչին՝ որ իր մէկ պատկերին յարուցած քննադատութիւններէն կատղած՝ կ'երթայ ինքզինքը նետել Սէն գետը : Պատերն ալ ծածկուած են մեծադիր նկարներով , պատմական կամ կրօնական : Մեղք որ չի կրցինք այցելել Վ. Հիւկօի , Վօլդէոի , Ժ. Ժ. Ռուսօի

ածիւններն ամփոփող գետնափոր գերեզմանները, զորս կարենալ այցելելու համար «մասնաւոր արտօնագիր ունենալու է» կ'ըսէ մեզ մայր դրան վրայ փակցուած գեղուցագիրը :

Բանդէոնէն մեկնելով կ'երթանք Քլիւնիի Թանգարանը, կառուցուած Քօնսթանս Քլօռ կայսեր Թէրմ պալատին տեղը, որոյ աւերակ բաղնիքը (thermes) կը պտըտինք, երեք դար առաջ ապրելով այսպէս գոնէ քառորդ ժամու մը չափ : Կօղտկան շէնք մ'է այս հետաքրքրաշարժ Թանգարանն, ուր կը գտնուի ամէն տեսակ արուեստական առարկաներու ճոխ հաւաքածոյ մը, Հռոմայեցւոց ժամանակէն սկսեալ : Աւելի գաղիական ազգին պատմութեան վերաբերող նիւթեր են ադոնք, որոնք կը ներկայացնեն քեզ դարերով առաջ ապրող այդ մարդիկն իրենց տարազով, իրենց գործածած դրամներով, իրենց հեծած կառքերով, ու, պիտի ըսեմ նաև, իրենց բարքերով : Եւ մտածե՛լ թէ այն մտչած ու փտած գամերը կամ ուրիշ ասոնց նման առարկաները՝ զորս կը կոխտտենք յաճախ, դարեր վերջը կրնան գին չունենալ ու այդքան գուրգուրանաց առարկայ ըլլալ :

Քլիւնիէ ելնելով, կայսարանին ճամբան ընելէ առաջ, Լիւքսէնպուրկի պարտէզը կ'երթամ, ուր զինուորական նուագածուաց խումբը լսելի կ'ընէր այդ օրն երաժշտական ընտիր հատուածներ :

Երեկոյեան ժամը ծին շողեկաւք կը հեծնեմ, քառորդ մը վերջ՝ շողեկառքին սուր սուլումին և անիւներու առաջին ճոնչիւններուն հետ յուզմամբ լեցուած աչքերէս կը հեռանային տակաւ ինձ ընկերացող երկու բարեկամներու գլխարկներու ճօճումները :

Հիմա, խորչին մէկ անկիւնը քաշուած, կէս քուն կէս արթուն, կը փորձեմ վերլուծել այն ընդհանուր տպաւորութիւնը, զոր Բարիզ թողած է վրաս : Հակառակ այդ

հոյակապ թանգարաններուն, հակառակ այդ սքանչելի
թատրոններուն, հակառակ այդ պատկառելի արձաննե-
րուն, մէկ բառով, դիւթահրաշ Բարիզին՝ իր ամբողջու-
թեամբ, և հակառակ այն հեշտութեան՝ զոր կեանքը կը
ներկայացնէ այդ աննման մայրաքաղաքին մէջ, չպիտի
ուզէի հոն ապրիլ: Չսփազանց մխոթ կայ հող, կեանքը
չատ պիտի յոգնեցնէր դիս այդ տեղ, բան մը ինձ կ'ըսէ
թէ ինչ որ պիտի շահէի հող մտքով, պիտի կորսնցնէի,
ապահովապէս, առողջութեամբ: Յաճախ պիտի երթայի
հիանալ այդ սքանչելի Բարիզին վրայ, ուսմանց, գիտու-
թեանց և գեղարուեստից այդ վառարանին վրայ, բայց
նուազ աղմկալից, նուազ համարձակ, մարդկութիւնն ու
կեանքն աւելի որոշ գծերով հասկցուած, պարկեշտու-
թիւնը ու առաքինութիւնը աւելի ճշդուած, աւելի պատ-
կառոտ տեղ մը պիտի ուզէի ապրիլ: Ո՞րը պիտի ըլլար
այդ տեղը. Չուիցերիան ներկայացուցած էին ինձ: Ու
Չուիցերիան պիտի ըլլար մնա:

Ի Լ Օ Ձ Ա Ն

Յաջորդ օրը, շորեքշաբթի, կէս օրին մօտերը կը հաս-
նիմ Լօզան, Վօ նահանգին մայրաքաղաքը: Չուիցերիոյ
վրայ կարդացած ու լսած տեղեկութիւններս իրաւունք
կուտային ինձ հաւատալու թէ անսիրձ ուղեւորի մը
դժուարութեանց չպիտի մատնուէի այդ երկրին մէջ: Եւ
իրաւ ալ, հազիւ կայարանէն դուրս ելած, դիմացս ելնող
առաջին անձը — սափրիչ մը — այն համակրալից ու աղ-
նիւ սասցուածներով, որ ցոյց կուտան թէ խօսակիցդ,
ո՛չ թէ լոկ պարտականութիւն մը կատարելու համար —
պարզապէս անքաղաքավար չըլլալու համար — այլ սըր-
տանց, ճշմարտապէս այլասիրիկ զգացմամբ, կ'ուզէ օգ-
տակար ըլլալ, ձեռքէն եկած ծառայութիւնը մատուցա-
նել, ընձեռեց ինձ ամէն դիւրութիւն: Առաջնորդ գիրքիս

մէջ գրուած էր թէ օտարականի մը համար աւելի խնայողական և աւելի հեշտ է թոշակով տան մը մէջ ապրիլքան պանդոկի մը մէջ : Ու արդարև Լօղանի ամենէն համբաւաւոր փողոցներէն մէկուն մէջ կրցի թոշակաւոր ըլլալ ամսական եօթանասուն և հինգ ֆրանքով (կահաւորեալ բաւական գեղեցիկ սենեակ մը , և օրը երեք անգամ կանոնաւոր ճաշ) Յորեկը , ճաշի ատեն , կը բարեկամանամ միւս թոշակաւորներուն հետ , ամէնքն ալ երիտասարդ , որոնք տեղեկութիւններ կուտան ինձ նահանգին վրայ : Դժբաղդուար իրենց զբաղումները թոյլ չէին տար իրենց՝ ինձ հետ պտըտելու : Ուստի , կէս օրէն ետքը , կ'երթամ կայարանը (հազիւ հինգ վայրկեան հեռաւորութեամբ) գտնել թիւ 30 բանասրարն , որ պայուսակա տուն փոխադրած էր : Համակրելի մարդ մ'էր այն , որ կը խօսէր ֆրանսերէն և գերմաներէն : Եթէ պէտք չէ կասկածիլ իր անկեղծութեանը վրայ , օր տեսած մարդ է եղեր : Ու իրաւ ալ , այդ թիւ 30ը կը զատուէր իր արհեստակիցներէն իր խօսուածքովն՝ որ բաւական զարգացեալ մտքի մ'արտայայտութիւնն էր , իր կիրթ ձեւերովն ու շարժուածքովը : Ըստ սակացուցի , ժամը 6() ամնդիմի հաշուով , կ'այցելեմ իր առաջնորդութեամբ , բնական և ֆիզիքական գիտութեանց Համալսարանը , որովհետև ճամբան ըսած էր ինձ առաջնորդս որ թէև մէկ երկու օրէ ի վեր նախակրթարանները բացուած էին , սակայն ներելի չէր դասախօսութեանց ներկայ գտնուիլ՝ առանց մասնաւոր արտօնադրի , իսկ միւս վարժարաններն ու համալսարանն , որք զրեթէ ամիս մը վերջը պիտի բացուէին , ապա էի այցելելու : Տասնչորս տարեկան սիրուն ու մտացի պատանի մը , Շառլ Փաք , գոնապանուհւոյն զաւակը , կը պտըտցնէ զիս ամբողջ շէնքը , գեղեցիկ ու ընդարձակ , այցելել կուտայ ինձ մանրամասնօրէն բոլոր գործանոցները (laboratoire) . բաւական գոհացուցիչ կեր-

պով կը պատասխանէ այն տեղեկութեանց զորս կ'ուզեմ
իրմէ , և Զուիցերիացւոց յատուկ քաղաքավար ձեւերով
ու խօսուածքով տեղեկութիւններ կը խնդրէ առ հասա-
րակ Պոլսոյ և մասնաւորապէս մեր վարժարաններուն ու
քարքերուն վրայ : Հաճոյք կ'զգամ իրեն հետ խօսակցե-
լով և կ'զմայլիմ իւր մտքի զարգացման և քաղաքավա-
րութեան վրայ :

Երեք ժամու չափ Համալսարանին մէջ մնալէ յե-
տոյ՝ առաջնորդիս հետ կ'երթամ այցելել դատական
պալատը , որ Լօզանի էն գեղեցիկ պարտէզին մէջ
կառուցուած է և ունի խիստ գեղեցիկ տեսարան մը Լե-
ման Լիճին , Ժիւռու և Ալպեան լեռանց վրայ : Պալատը ,
բաւական հոյակապ և շքեղ , փոքր է Բարիդի պատկա-
ռելի շէնքերուն քով : Սակայն հոս տեղն է ըսելու որ
եթէ Լօզան , կամ աւելի ընդհանուր կերպով խօսելով
Զուիցերիա , կը նսեմանայ Բարիդի քով իբրև ճոխ երկիր
մը՝ ամէն մէկ կերպով , պէտք է սակայն ընդունիլ , միւս
կողմէն , թէ Զուիցերիա ոչինչ կը խնայէ քաղաքին բա-
րեզարդութեան համար , հետզհետէ աւելի ճոխանայու-
համար , և թէ առանց ծայրայեղ պերճութեանց , ունի
ինչ որ կրնայ պահանջուիլ կոկիկ , մաքուր , կանոնաւոր ,
պարկեշտ , յառաջդիմասէր երկրէ մը :

Յաջորդ օրը կ'այցելեմ Մայր եկեղեցին , 1000ին սկըս-
ուած և 1216ին աւարտած և երեք անգամ հրոյ ճարակ
եղած : Շէնքը , որ նոյնքան գեղեցիկ է դուրսէն որքան
ներսէն , 65 մէդր բարձրութիւն և 100 մէդր երկայնու-
թիւն ունի : Կամարները կրող սիւները և անոնց ձեւե-
րուն զանազանութիւնը ըսել տուած են Վիօլլէ-Լըտիւքի
(մին այն ճարտարապետներէն որ նորոգած են Բարիդի
Նոդր-Տամը) թէ Լօզանի Մայր-Եկեղեցին բօժան և կօշի-
տնի գոհարն է : Դասը այնպէս մը շինուած է որ Քրիստոսի
գլուխը կը ներկայացնէ , իսկ երկու թւերը՝ բազուկները :

Նոյն օրը կը ներկայանամ հանրային կրթութեան նախարարութեան, որմէ, ինքզինքս ներկայացնելէ վերջ, տեղեկութիւններ կ'ուզեմ Լօզանի վարժարաններուն վրայ: Մայրայեղ ազնուութեամբ կուտան ինձ ամեն տեսակ տեղեկութիւններ, և բացի կանոնագիրներէ ու ծրագիրներէ՝ Լօզանի ամէն կարգի վարժարանաց յատուկ, արտօնագիր մը կը յանձնեն ինձ, որոյ շնորհիւ պիտի կրնայի ներկայ գտնուիլ նախակրթարաններու դասախօսութեանց: Իմանալով որ մէկ երկու դասագրքեր շինած էի՝ կը փափաքին զանոնք ունենայ իրենց նահանգային մատենադարանին մէջ, զաղափար մ'ունենալու համար մեր դասագրոց մանկավարժական արժէքին վրայ, փափաք՝ զոր պատիւ կը համարիմ ամէն բանէ առաջ գոհացնել՝ Պոլիս վերադարձիս: Վերջապէս, մեկնելու պահուսկը հրաւիրեն զիս ներկայ գտնուիլ մանկավարժական համաժողովին, որուն վերջին նիստը տեղի կ'ունենար յաջորդ օրը ի Բայէրն:

Հանրային կրթութեան պաշտօնատունէն ելնելով Ուշի տանող (Լօզանի նուահանգիստը) funiculaireը (պարանաւոր երկաթուղի) կը հեծնեմ. եօթը վայրկեան վերջը Ուշի եմ, զուարթադէմ Լէմանի եզերքը: Շոգենաւուն սպասող կամ պարզապէս ժամանակ անցնելու համար հոն խոնրուած երկսեռ բազմութեան մէջ ես ալ տեղ կը գրուեմ նստարանի մը վրայ ու կը սկսիմ զննել մերթ լիճն ու անոր օփանց վրայ բարձրացող լեռները, մերթ աշխարհիս ամենէն հեռաւոր վայրերէն հող ժամադիր եղած ինձ նման օտարականներն՝ որոց շատերն — ամենէն սլզտիկ աղջիկներն իսկ — յարդէ լայն գլխարկ մը գլուխնին անցուցած, սլաքաւոր բիր մը ձեռքերնին բռնած, մախաղ մը ուսերնին նետած և խոշոր գամերով մուճակներ հագած, գլխարկնուն կամ կուրծքերնուն վրայ լեռնակուս ծաղիկներ կամ խոտեր խոթած, իրենց ամբողջ մարմնովը

կ'արտաշնչեն բարձր լերանց կենսատու օդը զոր լիաթոք
ներշնչած են քանի ժամ առաջ : Կարծես մուրացկաններ
են ադոնք , արեւուն տակ եփած այդ մարդիկը , որոց
ամէն մէկը , ով գիտէ ո՛ր Ամերիկացի կամ Անգլիացի մի-
լիոնատէրը կամ լորտն է : Ու այդ օդը , այդ առողջու-
թիւնը , զոր բերած են լեռներէն , նոր կենդանութիւն
կուտայ անոնց ալ որ , ինձ նման , այդ սեպ գագաթները
մագլցելու ուժը չեն ունեցած : Քիչ մը հեռուն , պատանի-
ներ ու պատանեակներ , առ ոչինչ՝ գրելով արեւուն շեշ-
տակի ճառագայթները , զբաղած են կարմրախայտ կամ
գայլաձուկ որսալու : Որքան մարդ անհամբեր է այդ համ-
բերող էակներուն ի տես՝ որոնք երբեմն ժամերով կ'ըս-
պասեն հող , գլուխնին ծռած , ինքզինքնին մոռցած , դի-
տելով խեղճ համր անասունն՝ որ գոնէ քիչ մ'ատեն կը
յաջողի ի դերև հանել մարդուն հնարագիտութիւնները :
Շատ հանդարտ է այդ հրապուրիչ լիճն ժընէվի , որուն
մէջէն կ'անցնի Ռօն գետը . « հանդարտ , այո , բայց պէտք
չէ խալուիլ , » կ'ըսէ ինձ Բարիզցի տիկին մը , որ տասն
և ինը տարեկան աղջիկը մէկ երկու ամիս առաջ գերեզ-
մանին յանձնող մօր մը թախիժը ի զուր փարուտել կը
ճգնէր օտար երկրի մը տակ , « այդ վճիտ լիճը , թէև այս-
քան խաղաղիկ , իր փոթորկի վայրկեաններն ալ ունի ,
երբ ոտնները փչէ : » Ու քիչ մը յետոյ , աչքերը լեցուած ,
« կեանքին պէս է , կ'ուելցնէ , ամենէն չը յուսացած վայր-
կենիդ իսկ կը յուզուի , կը խռովի մէկէն ի մէկ ու կը
պտուտկեցնէ իր ջրերը : » Եւ մինչ լուազոյն ձեր կը փրն-
տուէի մտքիս մէջ , հարստութեանը մէջ դժբաղդ այդ կիներ
մխիթարելու , « Կարդացած էք , կը հարցնէ ինձ , Հէման-
սի «Մովուն Գանձերը» , որոյ առաջին տողերը կ'արտա-
սանէ սարսուեցուցիչ շեշտով մը . « Ի՛նչ ունիս դու , ծով ,
պահած անդունդիդ մէջ » : Ո՛վ անզօր ճիգեր ուսեալ մայր
մը սիրտիելու :

Յաջորդ օրը շոգեկառք կը հեծնեմ, ներկայ գտնուելու համար Ուսուցչական համաժողովին, որ տեղի կունենար ի Բայերն (երկաթուղիով երկու ժամ հեռու Լօզանէն)։ Դժբաղդաբար, ժողովն, որ այդ օրը — վերջին օրը — մինչեւ կէս օր կ'երկարէր, աւարտած է գրեթէ և ժողովական դաստիարակք ու դաստիարակուհիք ցնծութեամբ կը պատրաստուին մէկ երկու ժամ հեռաւորութեամբ գիւղի մը մէջ դաշտային հանդէս մը կատարելու։ Ժողովական դաստիարակներէն մէկը, Պ. Ժօմինի, որ քիչ մը անհանգիստ ըլլալով չէր կրնար այդ պտոյտին մասնակցիլ, իր գուլիցերիական ամբողջ հաճոյակատարութիւնը իմ տրամադրութեանս տակ կը դնէ՝ տալու համար ինձ բոլոր այն տեղեկութիւնները զորս կրնայի խնդրել իրմէ։ Այդ տեղեկութիւնները պիտի հաղորդեմ յարգոյ պաշտօնակցացս ուրիշ տեղեկութեանց հետ՝ ի մասին Լօզանի և Փրնէվի նախակրթարաններու։ Գուցէ քիչ մ'երկար ըլլան անոնք, բայց ո՛չ ապաքէն ճիշդ անոնք են որ կրնան մասնաւորապէս հետաքրքել զմեզ, դաստիարակներս. պիտի տեսնուի թէ այդ նախակրթարաններու համար ձեռք առնուած կարգադրութիւններէն ոմանք արդէն իսկ կը գործադրուին, առաւել կամ նուազ տարբերութեամբ, մեր բարեկարգ նախակրթարաններուն մէջ, կան ալ որ ցարդ չեն գործադրուած։ Ամէն պարագայի մէջ, ապահով եմ թէ իրենց օգուտը պիտի կրնան ունենալ այս տեղեկութիւնները, որոնցմէ նոր լոյս մը կրնայ ստանալ մեզմէ իւրաքանչիւրն, մտցնել իր վարժարանին մէջ նոյնութեամբ կամ պատշաճեցուցմամբ, ինչ որ օգտակար ու յարմար, կամ աւելի օգտակար ու աւելի յարմար դատէ տեղական պահանջներուն։ Պոլսոյ այն դաստիարակներն որոնք իրենց ստպարէզին մասնաւոր սէրն, ու այդ ստպարէզին մէջ հետզհետէ յառաջդիմելու տենչն ունին, ընդհանրապէս կը հետեւին ֆրանսական մանկավարժու-

թեան և զայն կ'ուսուճնասիրեն . այս լաւ , բայց ա՛լ
աւելի լաւ կ'ըլլայ անշուշտ , եթէ քիչ մ'աւելի մօտէն
տեղեկութիւններ ալ ստանան մանկավարժական աշխարհի
մէջ ոչ նուազ հռչակ վայելող ուրիշ երկիրներու վարժա-
րանական կազմակերպութեանց , կանոններուն ու մէթոտ-
ներուն վրայ : Մէկը միւսը կ'ամբողջացնէ : (1)

Պ Տ Ո Յ Տ Ն Ե Ր

Ակսիւք , եթէ կ'ուզէք , ծովային պտոյտով մը ի Վէլէ :
Շատ հեռի չէ , երկու ժամէն հոն ենք , մեկնելով Ուշիէն
չոգենաւով , և հանդիպելով Բիւլլի՝ նշանաւոր իր այգես-
տանով , Լիւդրի , Քիւլլի , Բիվա Սէն Սաֆօրէն՝ նկարա-
վայել իրենց դիրքով և սանդղած և մարգերով : Ահա հա-
սանք Վէլէ , Ժօռա լերան ստորոտը 8000 բնակչօք հրա-
շալի քաղաք մը : Հարկ չկայ որ այցելենք Սէն-Մարգէն
եկեղեցին՝ պահուրտած այգիներու մէջ , Մատենագարանն՝
12000 հասարով , ու միւս շէնքերն : Ադոնց նման և
ադոնցմէ աւելի աղէկ շէնքեր տեսանք արդէն ու պիտի
տեսնենք տակաւին : Այն քիչ մը ժամանակը զոր կը
չնորհէ մեզ Ուշի վերադարձող շոգենաւը , նուիրենք Վէ-
լէի ընծայած բնական դեղեցկութիւնները զննելով .
պտըտինք , զոր օրինակ , սա սքանչելի ճեմելիքներուն ,
լիճին եղերքը գտնուող սիրուն պարտէզին մէջ : Բայց մեր
ճաշակները երբեք դո՛հ ըլլայ չեն գիտեր : Այնքան հրա-
պոյր , այսքան շքեղութիւն չեն բաւեր , ու կը գանգա-
տինք թէ ինչո՛ւ այդ օրը տեղի շունենար ի Վէլէ այ-
գեգործներու հանդէսն , որ հարիւր տարուան մէջ հինդ-
վեց անդամ կը կատարուի՝ միջին դարու երկրագործնե-

(1) Զանց կ'ընեմ հոս արտասուկ Լօզանի և Փընէվի նախակրթարան-
ներու վերաբերող էջերը , նկատելով որ քիչ մը հեռուն նոյն նիւթը ներկայա-
ցուած պիտի ըլլայ աւելի մանրամասն կերպով .

րու կողմանէ քաղքին շրջակայքը գտնուող խոպան բլուրները մշակուելէն ի վեր :

Երեկոյին , ընթրիքէն վերջ , կրնանք մեր ժամանակը շատ ախորժելի կերպով անցընել Քաղինօ-Թէաթոի պարտէզին մէջ , ուր , 50 սանդիմ մուտքով , կրնանք վայելել , մինչև կէս գիշեր , երաժշտական ամենաընտիր հատուածներ՝ Լօզանի ամենէն համբաւաւոր նուագախմբին կողմանէ : Ընտիր է քաղմութիւնն ալ հոն , մանաւանդ այս գիշեր , որովհետև համբաւաւորն Պ . Քիւրզօ , որ վերջերս առաջին մրցանակ ստացած է երաժշտանոցէն , մասնաւոր տարազով բեմ պիտի ելնէ իր բամբ ձայնին ախորժալուր շեշտերն անձնուիրութար մեզ լսելի լինել տալու համար :

Այսօր չորեքշաբթի է , այսինքն մին շաբթուան այն երեք օրերէն յորս հասարակութիւնը կրնայ ձրիարար այցելել թանգարանները , մասնաւոր ժամերու մէջ : Կ'երթամ ուրեմն Քեղարուեստից Մուսէոնն , կամ ուրիշ անուամբ , Մուսէոն Արլոն (իւր հիմնադրին անուանով) : Լօզանի համար բաւական ճոխ է թանգարանն և հեշտ՝ այցելուին համար , որ կրնայ , համեմատաբար , քիչ մ'աւելի երկար ատեն հիանալ այդ հրաշակերտներուն վրայ՝ քան Լուվրի , Վէրսայի կամ Լիւքսէնպուրկի թանգարաններուն մէջ : Թանգարանը լեցուած է մանուաւոր Կլէրի գործերով , որոյ կիսարձանը կանգնուած է սրահներէն մէկուն մէջ իր բարեկամներուն և սքանչացողներուն կողմանէ և որոյ յիշատակին՝ վարձատրութեանց միջոցապէս ժողովը նուիրած է վկայագիր մը 1878ի տիեզերական ցուրահանդէսին ատեն : Յիշատակելի են նաև Տիտէի , Քլամի (Տիտէի աշակերտ) գեղեցիկ դաշտանկարները , Անքելի (աշակերտ Կլէրի) , Քարլ Ժիրարտէի , Վօդիէի գործերը : Անքէրի մէկ պատկերը մանաւանդ

աքանչացման աղաղակ մը կը խլէ ինձմէ : Ինչ բնակա-
նութիւն , Աստուած իմ , այդ «նորածին»ին մէջ : Մանկան
մայրն անկողնոյն մէջ է . նորածինն՝ իր խշտեակին մէջ :
Երկու պզտիկ աղջիկներ և պզտիկ մանչ մը կը դիտեն
երախան միամտութեան վսեմ արտայայտութեամբ ,
ժպիտ ի շրթունս , ժպիտ՝ խառնուած զարմացմամբ և
աքանչացմամբ միանգամայն : Ամենէն պզտիկն ամենէն
աւելի զարմացած է ու աչքերը խոշոր խոշոր բացած :
Ուրիշ մանչ մը , նուազ պզտիկ , կանխահաս լրջու-
թեամբ մը կը դիտէ նորածինն . արդահատանք մ'է արդ-
եօք զոր կ'արտայայտէ այդ մատաղ դէմքն ի տես այս
երախային , արդահատանք այդ դեռափթիթ կենաց վրայ :

Արձաններուն մէջ , ո՛չ բազմաթիւ , ուշս կը գրաւէ
Պերնասքօնիի Բիէդրօինը (Միլան , 1883) : Երիտասարդ
մ'է , մասնաւոր գլխազարդով , որ լրագիր կը կարդայ :
Մարդ կը զարմանայ թէ ի՛նչպէս արձանագործը կրցած է
այդքան կենդանութիւն տալ այդ մարմարիոնի կտորին :

Քեզարուեստից վարժարանէն կ'երթամ musée canto-
nalը (հնախօսական և կենդանաբանական) : Նախապէս
կրած տպաւորութիւններս արթնցուց հնախօսական թան-
գարանն՝ ուր կը գտնուին ամեն տեսակ վաղնջուց առար-
կաներ՝ աշխարհիս ամենէն այլանդակ ձեւերով , որոց իւ-
րաքանչիւր կը ներկայացնէ իւր անունն ու ծագումը ,
բայի անոնցմէ զոր խուզարկուն չէ կրցած ճշդիւ սահ-
մանել : Մաշած , ժանդէն կէսը ոչնչացած բանալի մը ,
զրեթէ քովը կը գտնուի նոր , փայլը տակաւին բոլորովին
չկորսնցուցած բանալիի մը , որ չգտեմ ինչ մորմոքեցու-
ցիչ տպաւորութիւն մը կ'ընէ . — Նարուէոնի բնակած տան
(ի Լօնկուուտ) դրան բանալին է ան : Քիչ մը հեռուն , ու-
րիշ սրահի մը մէջ , մերկ գանկեր սարսեցուցիչ կերպով
կը նային քեզ . հոն կրնաս տեսնել Պոլիվիացւոյ մ'ամբողջ
կմախքն , իր բոլոր տգեղութեամբը , Պէրպէրիստանցի

էրիկ մարդու մը , կնիկ մարդու մը ու տղեկի մը , ինչպէս նաև խել մը ուրիշ եգիպտական մոմիաներու մօտ : Անդին կը տեսնուի Պուտտան կանգնած , ոսկեով և գոյնըգոյն ապակիներով գրուագեալ : Պահարանի մը մէջ , ամեն ազգի հին դրամներ : Քիչ մը հեռուն , Պէրդ թագուհւոյն ամուսնութեան պայմանագրութիւնն (Քոլոմպիա , 2 դեկտեմբեր 938) ինչպէս նաև Ատէլաիտ իշխանուհւոյն նշանտուքի գիրը , միւսոյն տեղէն՝ միւսոյն թուականու :

Հնախօսական թանգարանէն կ'անցնիմ կենդանաբանականին , ուր ի տես դրուած են աշխարհիս բոլոր անասուններն յարդով լեցուած ա՛յնքան ճարտար կերպով որ կարծես ողջ են տակաւին : Բարիզի Ժառանգն տէ Բլանդէն ետքը Լօզանի , ու յետոյ Նէօշադէլի ու Լիւսէռնի կենդանաբանական թանգարաններն այցելելով իր փափաքը գոհացուցած կրնայ զգալ մէկը՝ որ մասնաւորապէս կը հետաքրքրուի բնական պատմութեամբ :

Բայց թանգարաններուն գոց օդը , խառնուած +լեռնա-+բլուզի կամ Նֆրլի թափանցիկ հոտով , ողնայարիս և սրունքներուս վրայ զգացած խոնջութիւնս՝ բաց օդի պէտքը կը զգացնեն ինձ : Կը հետեւիմ ուրեմն այն ճամբուն՝ որ կը տանի դէպ ի Սինեալ , 661 մէդր բարձրութեամբ լեռնակ մը նկարչագեղ , որ Չամլըճան կը յիշեցնէ ինձ , թէև աւելի ճիշդ կ'ըլլայ նմանութիւնն , և թէ Գանտիլիի բարձունքին՝ Իճատիէի հետ բաղդատուի : Գրեթէ կէս ժամէն կը հասնիմ գագաթը , անցնելով երկու կողմը դալարեօք և այգիներով ծածկուած կանոնաւոր նրբուղիներէ , ուր տեղ տեղ նստարաններ կան հանգչելու համար և տախտակներ՝ չմոլորելու համար : Գագաթը կը գտնուի սրճարան-ճաշարան մը : Տեղւոյ հեռաւորութիւնը խնդիր չէ . Չուիցերիոյ երկու հազար մէդր բարձրութիւն ունեցող լեռանց վրայ ալ մարդ պատուական ճաշ կ'ընէ այն գնով՝ զոր վճարել պէտք է քաղքին մէջ : Զմայլելի է

համայնապատկերն . ամբողջ լինն իր շոգենաւներով ու նաւակներով , ամբողջ քաղաքն՝ իր մեծ ու պզտիկ շէնքերով , իր մարգերով , իր այգիներով ու այգորդներով աջացդ առջև պարզոււած են : Դիմացդ է Սաւուան՝ իր ժայռերով ու իր սարերով , աստ անդ ընդհատուած ձորերով կամ հարթ ճամբաներով : Մտացդ ամփոփման մէջ վերյուշութեամբ կը կրկնես գրեթէ անզգալաբար Կիրօի սրտաշարժ տողերը . « Սեղճ պզտիկ . . . » : Ու միևնոյն ժամանակ , կարծես կը տեսնես բոլոր այն ճամբաներն ուրկէ անցած է պզտիկ Սաւուացին , երթալու մուրալու համար ի Բարիդ , ու այն ծործորն՝ ուրկէ կը վերադառնայ խեղճ պզտիկը , մէկ ձեռքը գաւազան մը , միւս ձեռքը՝ ճերմակ տոպրակ մը բռնած , որոյ մէջ պահած է , ինքն անօթի , հացը՝ զոր կը տանի իր մօրը :

Քիչ մ'ալ կը գիտովեամ այն յափշտակեցուցիչ տեսարանով , զոր լինն հիմա կը ներկայացնէ իր ամբողջութեամբ՝ վերջալոյսին վերջին ցոլքերուն տակ . աւելի կազդոււրուած ու աւելի բարոյացած՝ կ'իջնեմ բլուրէն վար :

Քաղքին մէջ զիս տուն տանող ճամբուն վրայ , պըզտիկ միջադէպ մը՝ զոր կը յիշեմ մասնաւորապէս մեր նախակրթարաններու ուսանողաց համար :

Տասնըմէկ տասներկու տարեկան պատանեակ մը ու աւելի տարիքոս երիտասարդ մը , որ դէմս կ'եննեն ճամբուն վրայ , աշխոյժ ձեւերով ու ժպտուն դէմքով կը բարեւեն զիս : Պատանեակն աշակերտ է Ուշիի նախակրթարանին , զոր այցելած էի քանի մը օր առաջ , իսկ երիտասարդը , զոր կը ներկայացնէ ինձ , իր եղբայրն է , աշակերտ բժշկական վարժարանի : Կ'ընկերանան ինձ երկուքն ալ մինչև տուն , կը ջանան զիս շահագրգռող տեղեկութիւններ տալ ինձ . կանխայօժար մեծարանօք կը զեղուն զիս , ու վերջապէս այցետոմսս կ'ուղեն , « յիշա-

տակ մը պահելու համար ինձմէ ի Լօզան» : Ախ, այդ տղաքն ու մեր տղաքը :

Կ'այցելեմ կոյրերու Ապաւէնը (asile des aveugles), որ բաց է հինգշաբթի օրերը այցելուաց : Տնօրէնը կ'առաջնորդէ սակաւաթիւ այցելուները նախ աշխատանոցներն : Գործնական, բարոյականի ինչ սրտաշարժ տեսարան, բարոյական ոյժի ինչ ազդու օրինակ այդ տարիքոտ ու երիտասարդ մարդոց համախմբութիւնը, որոնք կը մտքառին բազդին դէմ՝ որ զիրենք զրկած է զգայարանաց ամենէն թանկագինէն, ու վերջապէս կը յաղթեն, իբրև այպանու մն ներկայացնելով անոր՝ իրենց ճարտար մատներով շինած այդ կողովներն, այդ խողանակներն, այդ ակթոռներն, ճախարակէ անցած այդ հազար ու մէկ առարկաներն, այդ կօշիկներն, այդ զգեստնդէններն : Մարդ չպիտի կրնար հաւատալ, եթէ աչքովը չտեսնար, թէ այդ ճաշակաւոր ու նուրբ առարկաներն շինուած են բնութեան այդ ժառանգազիրկներուն կողմանէ, որոց ամեն մէկուն կերպարանքը, չզիտեմ ինչ սրտայոյզ վեհութիւն մը կը ցայտեցնէ, իր հացը իր ճակտին քրտինքովը վստառելի ուզողի մը, մուրալու կորանաց չի զիջանողի մը վեհութիւնը : Պատուական մարդիկներ :

Աշխատանոցներէն կ'անցնինք սենեակ մը, ուր կոյր վարժուհւոյ մը առաջնորդութեամբ, տասնի չափ մանչերև աղջիկներ, ու թնէն տասնեւչորս տարեկան, Այսճասարգի նման գրքի մը մէջէն սահուն կերպով կը կարդան : Հիացմամբ խոտն երկիւղածութեամբ մը մտիկ կ'ընենք այդ խեղճ տղոց, որոնք իրենց դժբաղդութեան վրայ գողափար շունին անշուշտ, ա՛յնքան զուարթ են յաճախ, թէև միշտ լուրջ՝ իրենց զուարթութեան մէջ, կոյրերու յատկանշական լրջութիւն մը : Վայրկեան մը աշակերտներէն մէկը կը շփոթի, ու կակաղելով կը յառաջանայ : Եստանի է թէ խեղճին սիրտը ուժգին կը տրոփէր այդ

պահուն . վարժուհին սրտնեղութեամբ կը պոռայ , ու կը կարծեմ տեսնել արցունքներ տղուն անյոյս աչաց մէջ . ու արցունքներ իմ ալ աչաց մէջ՝ որ անգթօրէն կրնային դիտել այդ տղեկն : Տնօրէնը կը միջամտէ , տղուն ուսին վրայ բարեկամական թափ մը , ցած ձայնով արտասանուած մէկ երկու խօսք , ու ամեն բուն կը կարգադրուի . տղան կը շարունակէ կարդալ : Գոհ է հիմա բարի տնօրէնը , և ուրախ դէմքով մը պատմութիւնը կ'ընէ մեզ . մէկ երկու խօսքով՝ կոյրերու վարժարաններուն : Կոյրերու բուն դաստիարակութիւնը , մէթոտաւոր դաստիարակութիւնը կ'սկսի ժԸ . դարէն , որ ատեն Վալանթէն Հալի կը հնարէ ընթերցման համար մասնաւոր մէթոտ մը , նախ ուռուցիկ շարժուն տառեր , յետոյ ցցուած տառերով գրքեր : Այս մէթոտով կ'ուսուցանէր իր կոյր աշակերտներուն՝ ընթերցանութիւն , գիր , աշխարհագրութիւն , թուարանութիւն , երաժշտութիւն , լեզուներ և դանազան ձեռարուեստներ : Այս մէթոտը շարունակեց մինչև 1830 , և Վալանդէն դնաց Պերլին , Բեդերսպուրկ ալ մտցուց դայն : Բայց դիտուեցաւ որ տարիքոտ կոյրերը , շօշափելեաց պահանջուած զգայնութիւնը ու փափկութիւնը չունենալով , չէին յաջողեր պէտք եղածին պէս օգտուելու այս մէթոտէն : Ուստի հնարուեցաւ ուրիշ մէթոտ մը , որուն մէջ ցցուած տառերուն տեղը կը բռնեն ցցուած կէտեր , դանազան կերպերով բաղադրուած (առաւելագոյն բաղադրութիւնը՝ 6 կէտ) : — Անդին , ուրիշ սենեակի մը մէջ , կոյր պատանեակ մը դաշնակի մը վրայ վարժութիւններ կ'ընէ միշտ միւսնոյն մէթոտով . métronome կոչուած փոքրիկ գօրծի մը՝ սկանջին յստակ կերպով հաղորդած իր ճօճումներով կը ցուցնէ չափը : Տնօրէնին հրամանին վրայ , պղտիկ աչազուրկն՝ երաժշտական հատուած մը կ'ածէ , թրթռուն հատուած մը՝ որ քիչ մը

զուարճութիւն կը բերէ յուզման տակ մնացած այցելուաց դէմքերուն վրայ :

Մեկնելէ առաջ, կը փափաքիմ յիշատակ մը տանիլ հետս այդ կոյրերէն՝ որոց համար այդ օրն անքան սէր ու այնքան յարգանք զգացի : Ազնիւ անօրէնը կը տանի զիս սրահ մը ուր պահուած են ոչ-կոյր գործավարներու առաջնորդութեամբ կոյր գործաւորներուն շինած սոարկաներն, որոց իւրաքանչիւրն կը կրէ զայն յօրինող գործաւորին անունը, որովհետեւ վաճառման արդիւնքը — ու պզտիկ բան չէ այդ վաճառումն, քանի որ տեղական և օտար վաճառատուննէր անպիմ քանակութեամբ ապսպրանք կ'ընեն — մասամբ կը պատկանի նոյն գործաւորին, մասնաւոր պայմանադրութեան մը համաձայն : Կը գնեմ մէկ երկու դիւրատար առարկաներ, որոց մէջ խողանակ մը. եթէ ուզէի աւելի համբերատար ըլլալ ու սպասել քանի մը օր, այդ խողանակը պիտի յանձնուէր ինձ՝ անուանա ու մականուանա սկզբնատառերը գոյնզգոյն գրուած խողի մաղերով :

Կ'այցելեմ նահանգային մատենադարանը, որ կը պարունակէ 80,000 գիրք և 100,000 տետրակ (brochure) : Պ. Պիչօնէ, Իաշնակցութեան խորհրդական, որ անցեալ տարի մեռաւ, մատենադարանին նուիրել է քսանուհինգ հազար ֆրանք արժողութեամբ գիրք : — Մաքուր և բաւական ընդարձակ սրահի մը մէջ, ճաշակաւոր կերպով կուհաւորուած, նստած են երիտասարդ ու տարիքոտ դաստիարակներ, անօրէններ, ուսանողներ, գրականութեան ու գիտութեանց զանազան ճիւղերով պարուպող անձեր, որոնք անձայն, իրենց գրքին բոլորովին անձնատուր, շատ անգամ չեն զգար ներս մտնելդ : Սեղանին մէկ անկիւնը կը գրաւէք. գրուպետը անմիջապէս կը ներկայացնէ մեծահասոր գրացուցակներու անպիմ կոյտ մը :

Ձեր առջև դիզուած մասնաւոր տումսակներէն (bulletin) մէկուն վրայ կը գրէք թուականն ու դաշնադրական տառն հատորին, հեղինակին ու գրքին անունը: Կը ստորագրէք, կը նշանակէք ամսաթիւն ու ձեր հասցէն: Վայրկեան մը ետքը գրապետը կը բերէ ձեզ ձեր ուզած գիրքը, եթէ բաժանորդի մը քով չէ, որովհետև մատենադարանը բաժանորդագրութիւն ալ ունի, տարին վեց ֆրանք: Այսպէս, երեկոյեան մինչև ժամը չորս, կրնաք անցընել ձեր ժամանակն այդ մատենադարանին մէջ, որ կ'ընձեռէ ձեզ ձրիարար գործեր՝ որոց ստացման համար ահագին գումարներ ծախսել պէտք պիտի ըլլար: Երախտագիտութեան ինչ մեծ իրաւունք ստացած է այն բարերարն՝ որ առաջին անգամ յղացած է ազգային մատենադարաններու այս օգտաշատ գաղափարը:

Այսօր, շաբաթ, կ'այցելեմ Ճարտարութեանց թանադարանը, բաւական ճոխ: Բաց ի զանազան մեքենաներէ, կը պարունակէ ճարտարութեանց գրեթէ բոլոր ճիւղերու վերաբերեալ նիւթերու նմոյշներ, հին ու նոր: Հոն կը գտնենք ածուխն՝ իր բոլոր տեսակներով, ապակիներու հետաքրքրաշարժ և խիստ ճոխ հաւաքածոյ մը, ուր կը տեսնէք millefioriներ՝ ներսի կողմը դեղեցիկ ծաղկեպսակներով, կամ verre filigranéներ ու verre dentelleներ: Կը գտնէք ճենապակիներու հաւաքածոյ մը (զուիցերիական, չինական, Սէվրի, Սաքսոնիոյ), փաւեակներ, որոց մէջ է Պէրնար տը Բալիսիի փաւեակներուն չքնադագիւտ նմոյշը, Մայեօրքեան փաւեակներ, ԺՆ. դարէն սկսեալ, գոյնզգոյն ներկուած և մեծ վարպետներու գծագրութիւններովը զարդարուած, ետրուրական վաղնջուց խոշոր աման մը, որոյ նախատիպն (Նարոլիի թանգարանին մէջ) 40,000 ֆրանք արժած է և Տրովադայի վերջինը կը ներկայացնէ, — հռովմէական գուլ (amphore)

մը , 1851ին գտնուած այգիի մը մէջ , — Ոսկրեղէն առարկաներու հաւաքածոյին մէջ , չինական հողմահար մը մածուածեայ (gélatine) , — կեղեւներու հաւաքածոյին մէջ չինական այլանդակ հովանոց մը պամպուէ , — Գրի պատմութեան մէջ , բարելոնական օղիւս մը՝ ասորերէն արձանագրութեամբ՝ estampé եղած : Է. դարէն սկսեալ , գրերու ճշգրիտ օրինակներ , — ու բրդեղէններ , մոմեր , մորթեր , ստւեր , եղջիւրներ , ներկեր , բժշկական նիւթեր , ո՛ր մէկը յիշեմ , ամենքն ալ իրենց պիտակներով , որոնք երբեմն կը ներկայացնեն տառասխալի նոյնքան հետաքրքրաշարժ և անհաւատալի նմոյշներ : Բաց ի այս պիտակներէն , կան մասնաւոր քարտէսներ՝ ուր ամփոփ կերպով թանգարանին այս կամ այն բաժնին վերաբերող առարկաներու պատմութիւնն եղած է , այս կերպով կըրկնակի օգտակար և շահեկան գործելով այդ թանգարանին այցելութիւնն :

Յետոյ կ'այցելեմ Զգոստարանը (pénitencier) , որոց դանազան մասերը կը պտըտցնէ զիս պահապանը շահեկան տեղեկութիւններ տալով միանգամայն : Ընդարձակ սրահներու մէջ կալանաւորներ , որոնք ամենքն ալ աշխարհիս ամենէն բարոյական ու պարկեշտ մարդուն կերպարանքն ունին հող , գլուխնին ծուռ լռիկ մնջիկ կ'աշխատին . ոմանք աթոռ կը շինեն , ոմանք կօշիկ կամ պայուսակ , ուրիշներ պարտիզպանութեամբ կը դրաղին զգաստարանին պարտէլին մէջ : Ի՛նչ բարոյացուցիչ դրութիւն է կալանաւորները օգտակար աշխատութեամբ մը պարապեցնելու այդ դրութիւնը . ստով մանաւանդ անկետղ մարդը պիտի զգաստանայ : Ապաշխարութեան այս իմաստուն միջոցին կցուած է ուրիշ մ'ալ նոյնքան և թերևս աւելի ազդու : Մատենադարանն է այն , ուր որոշեալ ժամերու՝ կալանաւորները կ'երթան հրահանգուիլ շինիչ ընթերցում-

ներով . հապա կարդալ չգիտցողները , պիտի հարցնէք .
ադ ալ խորհուած է . մասնաւոր ժամերու կարդալ գրելու
և հաշուելու դաս կը տրուի այդ տեսակներուն : Ու դրպ-
րոցին և մատենադարանին կից կը գտնուի մատուռ մը ,
որոյ պատերուն վրայ արձանագրուած են կրօնական ու
բարոյական առածներ :

Շատ պայծառ է օդն այսօր . լերանց սարերը շատ պարզ
կ'որոշուին , բան մը որ շատ հազուադէպ է . այդ սարերն
յաճախ քողարկուած կ'ըլլան մշուշով : Ահա ինչո՛ւ մեծ
է բազմութիւնը Թէրիդէ դացող՝ Բօշէ-տը-Նէ ելնելու հա-
մար : Կը խառնուիմ ես այ այդ բազմութեան մէջ , որ
կը լեցնէ շոգենաւը իր զուարթ երգերով ու քրքիջներով :
Թէրիդէէն կը հեծնենք funiculaire որ գրեթէ սասը վայր-
կեանի մէջ կը հանէ զմեզ Կլիօն , 687 մէդր բարձրու-
թեամբ , գեղեցիկ տեսարաններով սեպ հրուանդանի մը
վրայ , ուրկէ կը պարզուի հրաշալի լիճը միապաղաղ , ուր
հաւակներն արդէն շատ փոքր երեկը կ'սկսին : Կլիօնէն
Բօշէ-տը-Նէ հեռաւորութիւնն է 7680 մէդր : Տասը ֆրանքի
փոխարէն յանձն կ'առնէ անարի ճամբորդները լեռան մին-
չև գագաթը հանել ճանկոթուելով Ապդի դրութեամբ
լեռնական շոգեկառք մը , որոյ դծին շինութիւնը երեք
տարի առաջ աւարտած է : Ահարեկեալ ճամբորդները հի-
մա սկսած են իրարու հարցումներ ուղղել . « Երբեք վտանգ
պատահած է . — Եթէ crémaillèreներէն մէկը կոտորի՝ վտան-
գըն անխուսափելի՞ է : » Կան ալ որ , ինձ' նման , առանց
այդ ճակատադրական պատահարներն . հաշուելու՝ աջ ու
ձախ կը դարձնեն անդադար իրենց զլուխը , բան մը չի
կորսնցնելու համար բոլոր այն հրաշալիքներէն՝ զորս
բնութիւնը կը ներկայացնէ այդ բարձրութեանց վրայ ու
այդ բարձրութեանց տակ : Բոլիս նստած է ազնիւ ընտա-
նիք մը , Տէր և Տիկին Պլօք , Վէլէցի : Շատ զուարթ են

անոնք և սիրտ կուտան մէկուէն միւսին . Անգլիա ու Ամե-
րիկա ճամբորդած են ու շատ կը հետաքրքրուին ինձմով .
Այ ուրախութիւնս չափ չունի . ահաւասիկ ընտանիք մը՝
որուն հետ պիտի կրնայի անցընել օրը շատ ախորժելի
կերպով : Այրն ու կինն իրարու հետ կը մրցին ամենէն
աւելի առատ ու ամենէն աւելի շահեկան տեղեկութիւն-
ներ տալու համար ինձ շոգեկառքին մագլցած տեղերուն
վրայ : Հոս Քօի սարահարթն է , 960 մէդր բարձրութեամբ
ու սքանչելի տեսարաններով , հոն Տան տը ժամանն է ,
1760 մէդր բարձրութեամբ և ժամանի լիճէն քիչ մը
հեռու : Երկու հարիւր քառասուն մէդր երկայնութեամբ
փապուղիէ մ'ալ կ'անցնինք և կը հասնինք Նէ , 1980 մէդր
բարձրութեամբ : Հոն քիչ մը կ'սպասենք — հազիւ մէկ
երկու ըստակ գարեջուր խմելու չափ՝ շոգեկառքի ընկե-
րութեան շինել տուած buffetին մէջ — և շոգեկառք կը
փոխենք լերան գագաթն (Շօ տը Նէ 2045 մէդր) ելնելու
համար , ուրկէ պարզուած տեսարանին գեղեցկութիւնը
չպիտի փորձեմ նկարագրել , որովհետև , պարզապէս ան-
նկարագրելի է , դոնէ սովորական գրիչներու կողմանէ :
Ինչպէս վարը , նոյնպէս գագաթը մեծ ճաշարան մը կա-
ռուցանել տուած է երկաթուղւոյ ընկերութիւնը : Ազնիւ
տիկինն ու իր ամուսինը կը հրաւիրեն զիս մասնակցիլ
իրենց գեղջկական , կամ աւելի ճիշդ , լեռնական ճաշին
զոր հետ բերած էին և պիտի ընէին ճամբորդներու հա-
մար յատկապէս շինուած տաղաւորներէն մէկուն մէջ ,
բայց ես , շուղելով չարաչար գործածել իրենց բարեսըր-
տութիւնը , շնորհակալիքս յայտնելէ վերջ կը բաժնուիմ
իրենցմէ կէս ժամու չափ և կ'երթամ մասնակցիլ պան-
դոկին table d'hôteին , ուր պատուական և ճոխ ճաշ մը
կ'ընեմ 4 ֆրանքով , առանց հաշուելու Մօն-տ'Օրի ճեր-
մակ ազնիւ գինին , կէս շիշը 2½ ֆրանքի : Ճաշէն վերջ
կ'երթամ գտնել զիրենք , ու կ'սկսինք պտոյտներու , կանգ

առնելով ամենէն աւելի գահավէժ անդունդներու եզրն , ուր անխոհեմ քայլ մը բաւական պիտի ըլլար փսոր փսոր ընելու մարդը : Եւ սակայն , որքան փորձիչ են այդ խորխորատներն , որոց ներքին եզրերը դալարեաց վրայ , կարծես իբր խանձ բուսած են բոգեր ու Ալպեանց անմոռուկներ կամ էփըլձայներ , ինչպէս կը կոչեն գիտական լեզուաւ : Ու բան մը պակաս չձգելու համար այն հեշտալից օրուան մէջ՝ զոր անցուցի՝ տիպար ամուլից գերազնիւ ընկերակցութեամբ , երեկոյին կը վերադառնամ , լուսնի լուսով , յիւշի՝ վերջին շողենուով , ուր երաժշտասէր երիտասարդք ու երիտասարդուհիք գործիական ու ճայնական երաժշտութեան բոլոր հմայքն կը թափեն մեր վրայ :

Ահա այսպիսի խորունկ ու բարոյացուցիչ տպաւորութեանց տակ կ'աւարտեմ օր մը , որ , աւանդ , վերջինն էր ի Հօղան անցուցած հեշտալի օրերուս , և որոյ նմաններ կ'երթամ փնտռել յաջորդարար ի ժընէվ , ի Նէօշադէլ և ի Լիւսէրն , Զուիցերիոյ մէջ :

Գեղեցիկ դիրքով սիրուն քաղաք մ'է ժընէվ , Լէման լիճին հարաւային արեւմտեան կողմը , 72,000ի մօտ բնակչօք : Բաղաքին երկու բլուրները , զորս իրարմէ կը զատէ Ռօնը , կը հողորդակցին վեց կամուրջներով և մէկ կամրջակով : Ընդարձակ և ճաշակաւոր պողոտաներ , իրենց հանրակառքի կամ tram électriqueի գիծերով , իրենց բարձրութեամբը մասնաւորապէս աչքի զարնող հոյակապ շէնքեր , գեղեցիկ արձաններ կերպարանափոխ ըրած են Ալլորրոքայւոյ հին քաղաքը՝ որ , ատենօք ամբութեանց մէջ , հիմա պզտիկ Բարիդի երեւոյթն ստացած է ու կ'ըստանայ օր ըստ օրէ : Մեղմ է ժընէվի կլիման , որ , սակայն , ամառը մինչև 30⁰ տաքութիւն կ'ունենայ (ինչպէս այս տարի) : Այն ատեն , դպրոցները կը գոցուին և ամէն մարդ կ'երթայ զովանալ , կամ լեռներուն վրայ , կամ

լիճին , Ռօճին , և մանաւանդ Շամուռնի սառնակոյտերէն իջնող առողջարար և խիստ թթուածնաւէտ ջուրերուն մէջ (Արվ) : Տեղացիներէն կ'իմանամ թէ ձմեռը ժընէվի բարեխառնութիւնն է — 20^օէն-7^օ : Դիտելի է թէ ժընէվի մէջ բնաւ քոյերա չէ պատահած , բան մը՝ որոյ բացատրութիւնը՝ մէկ կողմէն bise կոչուած հիւսիսային քամիէն , և միւս կողմէն՝ քաղաքին առողջապահութեան ուշի ուշով հսկող bureau de salubritéէն պէտք է խնդրել : Եթէ փողոցներու ծայրայեղ մաքրութիւնը բաւական համողիչ փաստ մը չկրնար սեպուիլ այս մասին , կոյանոցներու ամենակատարեալ ցանցը կայ — Բարիզինին չափ կատարեալ — որ երկու հաւաքիչ խողովակներու միջոցաւ կը թափի Ռօճի մէջ , արագահոս Ռօճին մէջ՝ ուր աղտոտութեան հետքն իսկ չի մնար քիչ վերջը : Իսկ իրր ըմպելի ջուր , ահագին քիլիկոններ , (կ'արժէ այդ մեքենաներն այցելել) մեքենագիտական վերջին կատարելագործութիւններով շինուած Ջուրիխի գործարաններուն մէջ , կը բաշխեն բոլոր քաղաքին և բոլոր տուններուն մէջ Ռօճի ջուրը , որ , երեւելի դիտումներու խօսքին նայելով , Եւրոպիոյ ամենէն զուտ ջուրն է :

Իրր ճարտարական քաղաք , ամէն մարդ գիտէ թէ ժընէվ նշանաւոր է իր ժամացոյցներով , որոց ճշդութեան ու կատարելագործութեան ո՛չ մէկ երկրի ժամացոյց կըրցած է հաւասարիլ : Ամէն մրցման , ամէն ցուցահանդէսի մէջ (տեղական կամ օտար) , ժընէվի ժամացոյցները միշտ առաջինը հանդիսացած են , դերագանցելով այսպէս նոյն իսկ այն երկիրներու ժամացոյցներն՝ որոնք նոյնքան մեծ համբաւ կը վայելեն մեքենագիտութեան այս ճիւղին մէջ (Պրզանսօն , Քիու , Մելպուրն) : Բարիզի 1889ի մեծ ցուցահանդէսին մէջ ժամագործութեան համար շնորհուած քսան ոսկիէ մէտալներուն մէջ ամենէն շատ (5) առնողներն եղան զուիցերական վաճառատուներն , որոց 4ք

Ժընէվէն : Այս առթիւ , կրնայ յիշուիլ նաև թէ սուանց բանալիի , լարիչով ժամացոյցներն առաջին անգամ Ժընէվի գործարաններէն ելած են : Բացի ժամագործութենէ Ժընէվ նշանաւոր եղած է նաև միշտ ակնագործութեան , կիտուածանկարչութեան , նուագարանաշինութեան ճիւղերուն մէջ , որոց փայլուն հրաշակերտներն ի տես պիտի դրուին 1896ի Զուիցերիական մեծ Յուցահանդէսին մէջ , որ տեղի պիտի ունենայ ի Ժընէվ և որոյ պատրաստութիւնները փութով յառաջ կը տարուին :

Ժուլիէն Անկէն , լիճին ճիշդ քովը գեղեցիկ ճեմելիք մ'է հոյակապ աղբիւրով մը՝ որ հաճոյատեսիլ նկարներ կը կազմէ ցայտած ջրոյ դերձաններովն : Ու քիչ մը հեռուն , դալարագեղ թաւուտի մը քով կը գտնէք Տիտէ և ասոր աշակերտ Քալամ նկարիչներուն կիսարձանները :

Պարտէզէն ելնելով՝ կրնաք այցելել , եթէ ուզէք , սուսական մատուռն՝ որոյ սակեղօժ հինգ գմբէթներն արդէն կը տեսնէք հեռուէն : Յետոյ Ստուէյր Թէօֆֆըէն անցնելով կը դիտէք պահ մը Ժընէվցի նշանաւոր սրախօս մատենագրին կիսարձանը , և ա՛լ աւելի երկար ատեն դիտելով՝ Սէնդ-Անթուան ճեմելիքէն՝ լիճը , որ գեղեցիկ տեսարան մը կ'ընծայէ հողկէ , կը մտնէք հին Ժընէվին մէջ՝ որ կատարեալ հակապատկեր մը կ'ընծայէ նորին հետ : Դիմացնիդ է դատական պաշտօնատուներ : Տըլէէ ու Բուլ կոչուած սանդուխ մը կը տանի Ս . Պետրոսի Մայր եկեղեցին , որոյ ներսի կողմը դիտելի է , ի մէջ այլոց , շիրիմն Թէօտօր Ակրիբա տ'Օպինեէի , բանաստեղծ և զրագէտ Քրանսացի , որ եօթն ու կէս տարեկան եղած ատենը , Պղատոնի Կղէփօնը կը թարգմանէ եղեր : Շարաթը երկու անգամ շքեղ երգեհոններ , դէպ ի անհունն կը վերացնեն զքեզ իրենց խորաթափանց շեշտերով , որոնք ամբողջ հողին կը թրթռացնեն : Եկեղեցիէն ելնելով , կ'արժէ այցելել Պատմական Թանգարանը :

Եթէ Վօլդէո մասնաւորապէս կը շահագրգռէ զձեզ , կրնաք կառախուժք հեծնել , որ անցնելով Կրան-Սաքոնէ-էն , ուր կը պարզուի Ալպեանց հրաշալի տեսարանը , կէս ժամէն կը տանի զձեզ Ֆէրնէ կամ Ֆէրնէ-Վօլդէո , ուր անմահ մատենագիրն , որ կրնայ այդ քաղաքին հիմնադիրն համարուիլ , գործարաններ հիմնեց և իրեն համար զղեակ մը շինել տուաւ : Վերադարձին , ամենապատուական համայնապատկերը կը վայելէք Ալպեան լեռանց :

Կ'այցելենք Միւզէ Բաղը , որ մասնաւորապէս ժընէվցի նկարչաց և արձանագործաց արտադրութիւնները կը պարունակէ : Անդին կը գտնէք Միւզէ Ֆօլը , որ կը պարունակէ հռոմէական , ետրուրական և յունական հնութիւններ , լճային հնութիւններ , և Միջին դարէն ու Վերածնութենէ մնացած արուեստական նիւթեր : Այս մուսէոնը կը գտնուի Մեծ Փողոցին մէջ , որ մասնաւոր շահեկանութիւն մ'ունի դաստիարակին համար . կ'ըսուի թէ թիւ 40 տան մէջ ծնաւ Ժ . Ժ . Ռուսօ :

Եթէ մուսէոններէն չէք ձանձրացած , — ու կարելի է ձանձրանալ — կրնաք այցելել նաև Առիանա մուսէոնը , քաղաքէն երկու քիլոմէտր հեռու , ընդարձակ պարտէզի մը մէջ . Հիմնադիրը վերջերս ժընէվի կտակած է այս ճոխ թանգարանն , այն պայմանաւ որ հասոյթը յատկացուի մուսէոնը պահպանելու և հետզհետէ ճոխացնելու :

Սակայն միտքս պտըտցնել չէր ընթերցողներս ամբողջ ժընէվն , որ եթէ իր պզտիկութեան հետ քաղցրատուի բազմաթիւ շքեղ ու ճաշակաւոր շէնքեր ու հաստատութիւններ ունի ամեն տեսակ , բոլորն ալ այցելուելու արժանի :

Ելնենք ուրեմն Սալէվ լեռն ու յետոյ թողլով ժընէվը մեկնինք Նէօշաթէլ : Ժընէվ երթալ ու Սալէվ չեղնել անըմբռնելի է պարզապէս , այնքան հաճոյքներ կը վերապահէ այդ հազար երկու հարիւր մէտր բարձրութեամբ լեռն ուղեւորին :

Հմայիչ է համայնապատկերը : Մէկ կողմէն Ռօնի հո-
վիտն է , բերրի և լաւ մշակուած , իր կեդրոնն ունենա-
լով Ժընէվը և անոր կապուտակ լիճը՝ ուր շոգենաւներ
ու պչրող առագաստանաւեր կ'երթեւեկեն անընդհատ .
միւս կողմէն , Ալպեան լեռնաշղթան , վեհաշուք և խրոխտ :
Միայն մաղթելու է որ օդը ջինջ մնայ մինչև վերջը , ինչ
որ շատ յաճախադէպ չէ այդ կողմեր . այն ատեն մերկ
աչօք կարելի է որոշել Տան Գիւմի և Մօն-Պլանի բոլոր
անհարթութիւններն . իսկ վերջալուսին , կ'ըսեն թէ դիւ-
թահրաչ է տեսարանը զոր կը ներկայացնեն այդ ձիւնա-
պատ սարերն , որոնք պէս պէս գոյներ կ'առնեն արեւուն
վերջին ցոլքերուն տակ . նախ՝ սաստիկ կարմիր , յետոյ
հետդհուտէ վարդագոյն , սակեգոյն , կանաչ , և վերջապէս ,
դիակի նման ճերմակ գոյն մը՝ զոր կ'ստանայ Մօն-Պլան՝
այն պահուն՝ երբ գիշերն իւր ստուերը կը սփռէրաչափին
վրայ :

Մասնաւոր ճամբաներ կան ոտքով վեր ելնել ուզող-
ներուն համար . բայց մենք մեր ուժը և մեր ժամանակը
խնայելու պէտք ունինք : Հեծնենք ուրեմն ելեքարաչարժ
կառախուժքն , որ կը տանի մեզ ի Վէռիէ . հոնկէ *crémaill-*
*lère*ով կ'ելնենք լերան գագաթը , Թեղ-Աուդը^(*) , ուր
պարզ՝ այլ ճաշակաւոր և հեշտ ճաշարան մը կը հրաւիրէ
զմեզ գոհացնել մեր ստամոքսն , որ մեզ դէմ ձայն բարձ-
րացնելու սկսած է արդէն : Համեղ կերակուրներ , որոնք
յայտնապէս կը ցուցնեն թէ ո՛ր և է կերպով խարդախ-
ուած չեն — ինչ հակապատկեր քաղաքներու , մանաւանդ
մեծ քաղաքներու կերակուրներուն հետ — պատուական
կարագ՝ որուն համէն հոտէն մարդ չկշտանար , ապուխտ ,
հորթի միս՝ խորոված գետնախնձորով , խորոված վառեակ՝
թարմ լուբիայով , տանձ՝ որ բերնիդ մէջ կը հալի , դեղձ ,

(*) Հոս Թեղ տաներէք չի նշանակեր , այլ աղաւաղեալն է Բե-
(երեք) զեղզկական բառին :

անմահական ճերմակ գինի, ահա այսօրուան ճաշացուցակը, ընդ ամենը $3\frac{1}{2}$ ֆրանք: Ստուգիւ, եթէ ես քիչ մ'երկար ատեն ժընէվ մնայի, կարելի եղածին չափ յաճախ պիտի ելնէի Սալէվ, ուր մարդ զգալապէս նոր կեանք, նոր արիւն կ'ստանայ:

Ճաշարանէն ելնելով՝ կարելի է պատրաստ էշերն հեծնել — ո՛չ ճրիարար — և քիչ մ'ուելի բարձրէն վայելել հեռուն ցցուած բարձրաբերձ լերանց հրապոյրն, որովհետև հակառակ իրենց դաժան տեսքին՝ հրապոյր ունին, և իրաւունք ունի կաքոռաէր, երբ կ'ըսէ թէ մարդ քանի բարձրանայ լեռներուն վրայ, կարծես իր հոգին ալ մէկտեղ կը բարձրանայ, կը վսեմանայ, աւելի խորունկ դիտել կ'սկսին աչքերը:

Զուգեցի բաժնուիլ ֆրանսական Զուիցերիայէն, առանց Նէօշադէլն ալ այցելելու, թէև համեմատաբար կարճ պիտի ըլլար այցելութիւնս: Նէօշադէլ ունի գրեթէ 16 հազար բնակիչ և կը գտնուի Ժիւրաի ստորոտը, Նէօշադէլ լիճին եզրը, ուր բազմաթիւ լճային բնակութիւններ գտնուած են: Շոգեկառքէն ելնելով աչքիս զարնող առաջին բանը կ'ըլլայ մեծկոկ շէնքի մը դրան վրայի լատինական վերտառութիւնը, labor improbus omnia vincit (յամառ աշխատութիւնը ամեն բանի կը յաղթէ): Ե իրաւ ալ անձայն անշշուկ աշխատութեան բոյն մ'է կարծես Նէօշադէլ, որ շնիւղէ չախորժողներուն յանձնարարելի դերադանց քաղաքը պիտի ըլլար: Կ'անցնիմ մաքուր ճամբաներէն, կը դիտեմ ձկնաւէտ լիճը, օրուան թերթերը աչքէ կ'անցունեմ նահանգային ընթերցասրահին մէջ — ճրի, — կը քերեմ ժամագործութեան շքեղ վաճառատունները, կանգ կ'առնեմ Տավիտ Բիւրրիի արձանին առջև, որ Նէօշադէլի — իր ծննդավայրին — կտակած է վաճառականութեամբ շահած բուլանդակ հարստութիւնն

(4 ու կէս միլիոն), որպէս զի այդ գումարին հասոյթը գործածուի բարեգործական և կրթական նպատակներու և քաղաքին բարգաւաճման : Յետոյ կ'այցելեմ հին դղեակը , ժ. դարէն մնացած , ուր զետեղուած է հիմա նահանգային վարչութիւնը : Դղեակին քով կը գտնուի Դ-ՆՔ-Կ-Է-Զօն , ժ. դարէն մնացած : Իրան առջև կանգնած է արձանն Կիյյօմ Փարէլի (1865), թմբիներով զարդարուած գեղատեսիլ դարատափին մէջտեղ : Փարէլ , բողոքական աստուածաբանն , մասնակից այն հալածանաց՝ որոց ենթարկուած էր Կալվին, իր մխիթարութիւնը կը գտնէ այս արձանին մէջ :

Կ'այցելեմ նոյնպէս Էլէէշ Քօլէժիւը որ ներսէն ու դուրսէն համակ հնութիւն կը բուրէ . և կ'երթամ աւարտել Նէօշադէլի մէջ այցելութիւններս ու պտոյտներս մարդակազմական , կենդանաբանական ու երկրաբանական հարուստ թանգարաններն այցելելով , ուր տեղ մարդկրնայ համուղուիլ թէ ուսմունք և գիտութիւնք շատ յարգի են Նէօշադէլի մէջ ալ , որ ունի իր Ակադէմիան , աստուածաբանութեան ուսուցչաց կաճառը , ժիմնազը , բարձրագոյն վարժարաններ , վաճառականական և արհեստից վարժարաններ , գիտական ընկերութիւններ :

Օգոստոս ամիսը վերջանալու շատ մօտ էր և արդէն կը լսէի ականջիս մէջ ձայնն որ կը յիշեցնէր ինձ թէ հարկ էր , վերջապէս , հրաժարիլ այս թափառական դատարկ կեանքէն և ընդհատեալ դասախօսութեանց թելը ձեռք առնել վերստին : Բայց ի՞նչպէս դիմադրել հելուեստական յանկուցիչ ընդդիմակաց ձայներու ոյժին՝ որք անդադար կը թրթռային ականջս ի վար՝ ճգիտցիր որ թերի պիտի ըլլայ ճամբորդութիւնդ , եթէ անդամ մը Լիւսէնը չայցելես : Իրաւունք ունէին : Լիւսէնն օժտուած է աննման դիրքերէն մէկովն՝ որ քանի զննուին՝ այնքան նոր հրապոյր մը

կ'ընծայեն աչաց : Քաղաքը , 450 մէդր բարձրութեամբ
և 20,134 բնակչօք (գրեթէ ամենքն ալ կաթողիկ և գեր-
մանախօս) , կը գտնուի հրաշալի լիճի մը եզրն , Ռիկի և
Բիլադ լեռներուն մէջտեղը : Լիճին եզերքը գտնուող նկա-
րագեղ պարտէզի մը մէջ հանգիստ առնելէ և ամէն կողմէ
ներկայացող բնական ու արուեստական ակնախառնից հրա-
շալեաց վրայ զմայլելի վերջ , այս անգամ ամենայն հա-
ւասարմութեամբ կը հետևիմ ուղեցոյց գրքիս ծանօթու-
թեանց՝ համեմատաբար քիչ ժամանակուան մէջ կարելի
եղածին չափ շատ վայելելու համար Լիւսէոնի հրատյոյրները :

Կը հետևիմ ուրեմն քարափին մաքուր ճեմելեաց ,
անցնելով Քիւրսալի առջևէն , որ քաղաքին գլխաւոր դրօ-
սավայրն է գիշերը՝ իբր թատրոն և երգեցիկ սրճարան :
Կը դիտեմ շքեղ վաճառատուններն , որոց ապակիներուն
մէջէն կ'երեւին՝ հոս ակնախառն բեհեղներ , հոն՝ հետա-
քրքրաշարժ իւղաներկ նկարներ կամ խաղալիկներ , և
կը հասնիմ Հօֆֆիրխէ եկեղեցին , ուրկէ ներս մտնելու
համար հարկ է անցնիլ սիրուն գերեզմանատունէ մը —
եթէ ներելի է այս մակդիրը գործածել գերեզմանատան
համար — ինչպէս են բոլոր գերեզմանատուններն Եւրո-
պայի մէջ : Իբրև ճեպեայ ճանապարհորդ՝ հետաքրքրու-
թենէ շարժեալ միայն ներս կը մտնեմ եկեղեցիէն քանի
մը վայրկեանի համար լոկ . չգիտեմ ի՞նչ մոզական զօրու-
թիւն ամբողջ կէս ժամ կը դամէ դիս հոն . դիմացս գրտ-
նուող մայր տաճարին ճակատը դրուած Յիսուսը Չիթեն-
եաց պարտէզին մէջ՝ միացեալ երգեհոններու խորհրդաւոր
շեշտերուն , որոց կ'ընկերանար տիրացուի մը նոյնքան
խորհրդաւոր ձայնն հեռաւոր՝ քաղցր ու շարարձութեան
մը մէջ ընկղմած էին ամբողջ էութիւնս : Ա՛հ , կրօնք .
եկեղեցի , ահա ինչպէս կը հասնիք դուք ձեր վսեմ նալա-
տակին , ահա ե՛րբ կ'ազդէք մարդուն վրայ՝ մարդէն վեր
բարձրացնելով դայն :

Այս խոր տպաւորութեան տակ, կէս մը թմրած տակաւին և երազուն, դուրս կ'ելնեմ եկեղեցիէն, ուրկէ քանի մը քայլ անդին ինքզինքս կը գտնեմ ահագին տրամագծով աշտարակի մը առջև: Իէպ ի մուտքը կ'ուղղեմ քայլերս և կը կարդամ Բանօրածա: Կը վճարեմ 1 ֆրանք մուտքը և ներս մտնելով գրեթէ մթութեան մէջ կ'ելնեմ վեր քանի մը ոտք սանդուխէ: Հոն, մէջտեղի Բլաքֆօրժին վրայ, յանկարծահաս ցնորք մը, խորունկ և անրացատրելի, կը պաշարէ դիս. զուտանցական վիճակ մը, որմէ կ'սթափիմ բաւական ժամանակ վերջը միայն: Այն ատեն կը տեսնեմ իրականութիւնը. երկու հազար քառակուսի մէդր տարածութեամբ շրջանակաձև կտաւի մը վրայ՝ նկարիչը, Քասդո, չքնաղ սաղանդով մը ներկայացուցած է, 1870—1871ի ֆրանք և գերմանական պատերազմին ամենէն սրտաշարժ մէկ դրուագը, Պուրպաքի զօրապետին անցքն ի Վէրիէր—Սիւիս: Բայց ահա մանկամարդ օրիորդ մը մեր քով եկած է և յափշտակեալ հետաքրքիր ներուս կը բացատրէ այդ տեսարանն՝ իր բոլոր մանրամասնութիւններով, ֆրանսերէն կամ գերմաներէն լեզուաւ՝ ըստ մեծամասնութեան այցելուաց:

Ո՛հ, դթութեան ի՛նչ կենդանի օրինակ է այդ դրուագը: Զուլցերիոյ բնակիչներն, իրենց ծանօթ մարդասիրութեամբ, կուգան իրենց ձեռքէն եկած օգնութիւնն ընծայել ձիւնին մէջ մնացած, ցուրտէն սառած այդ խեղճ վիրաւորեալներուն. հոս կը տեսնես խեղճ երկրագործ մը՝ որ իր գեղջկական վտիտ քսակին պարունակութիւնը կը թափէ երիտասարդ զինուորի մը գիրկը. հոն, կին մը՝ որ վիրաւորեալի մը վէրքը կը կապէ. անդին ուրիշ մը՝ կռնակը կ'առնէ տարիքոտ զինուոր մը՝ որոյ սրունքէն արիւնը կը վաղէ կաս կարմիր, և կը տանի դէպի կառախումբն, որ հոն սեղէն այդ խեղճերը պիտի տանի Վէրի-

էրի եկեղեցին, այս առթիւ դարմանոցի փոխուած, անկից ալ նէօշադէլի դարմանոցները փոխադրուելու համար: Ու բոլորն ալ, կին, տղայ, մեծ, պզտիկ կը բերեն ուտելիք, գինի, ջուր: Չէ՛, ասկէ աւելի ազդեցիկ, ասկէ աւելի ազէխարշ օրինակ չեմ կրնար երեւակայել եղբայրութեան:

Բանօրամաէն ելնելով կ'այցելեմ քովի մուսէօնն Ալպեանց յասուկ անասնոց՝ յարդով լեցուած, ընդ ամէնը հարիւր քսան երկու կտոր, որոցմէ շատեր խումբեր են. մուսէօն մը՝ լրատ ամենայնի արժանի այցելութեան: Անկէ կ'անցնիմ քիչ մը աւելի հեռուն գտնուող Լէօվընֆէնկհալ-հալէօր (միշտ 1 ֆր. մուտքով), ուր ի տես դրուած է Diorama des Alpes Bernoisesը, մէկ երկու տարի առաջ նկարուած 77 քառակուսի մէդր տարածութեամբ կտաւի վրայ՝ խարուելու աստիճանն ընական գոյներով. տեսնողը կրկարծէ իրօք գտնուիլ Մէնլիխընի մէջ, Չուիցերիոյ ամենէն գեղեցիկ տեղերէն մէկը. ձախ կողմը կը տեսնուին Շուկկընի դալարագեղ մարդերն. կտեր կը բարձրանան մեծաշուք Այկըրը, Մէօնխը և Նունկֆրաուն, իր գեղեցկութեան մէջ ահարկու Նունկֆրաուն, որ այնքան դրօսաչրջիկներու գերեզմանն է եղած. յետոյ Սիլպըրհօրնը, Միդգակսհօրնը և Կրօսհօրնը որ իրենց սառնամանեաց վեհ տեսարանը կը ներկայացնեն Ալպեանց մէջ: Աջ կողմը կը տարածուի Լաուդերայրունըն սիրուն ծորձորը: Առջևի կողմը, Մէնլիխընի զառիվայրներուն վրայ կ'արածին այծեր. հոն է հովիւն (իբր բնական մեծութեամբ) լեռնական ծողկանոց մէջտեղ. քովէն կը հոսի առուակ մը:

Այս մուսէօնէն ելնելով կ'երթամ քովի պարտէզն, ուր աշխարհիս ամենէն խորհրդաւոր տեսարանը կ'ապասէ այցելուին: Լիւսէրնի Առիւծն է այն, որոյ անունը լսած են թերևս շատեր, որ Չուիցերիա չեն գացած: Արուեստական քարայրի մը մէջ քանդակուած առիւծ մ'է օրհա-

սական՝ որ իւր թաթով կը ծածկէ Պուրպոններու վահանը : Նիզակ մը մտած է իր կուշտն : Այս առիւծը կը ներկայացնէ Չուիցերիացի պահակազօրաց դիւցազնութիւնն և հաւաասարմութիւնն 1792 օգոստոս 10ին :

Լիւսէոնի Առիւծին քովը կը գտնուի Սառնամանեաց պարտէզն (մուտք 1 Քր .) որ երկրաբանական մեծ շահեկանութիւն կ'ընծայէ : Այս պարտէզին մէջ կը գտնուին աշխարհի կազմութեան զանազան դարագլուխներէ մնացած հատակոտորներ , մանաւորապէս նախապատմական , սառնական կոչուած ժամանակէն մնացած որ ստեն , երկրաբաններուն խօսքին հայելով , դրեթէ ամբողջ Չուիցերիա , ինչպէս նաև մեր կիսագունտին մեծ մասը , ծածկուած է եղեր սաւով . և հազիւ տեղ տեղ կը գտնուին եղեր ուլտախներ՝ ուր ապրեր են անասուններ՝ որոնց ցեղը այսօր բնաջինջ եղած է աշխարհիս երեսէն : Երկրաբան մ'ըլլալու պէտք չկայ անձանձիր դիտելու համար այդ marmite de géantները , որոց մին ունի Զու կէս մէզը խորութիւն և 8 մէզը տրամագիծ , և որոյ յատակը կը տեսնուին տակաւին շատ մը ջաղացքներ՝ իրարմէ անջատուած ժայռերով : Երբեմն ալ ժայռի մը մէջ կը տեսնուին քարոցած գեղեցիկ անասուններ և տունկեր : Պարտէզին քէօշկին մէջ կը գտնուին լճային բնակարաններու բեկորներ , ինչպէս նաև Չուիցերիոյ մէկ մասին ուռուցիկ յատակագիծը :

Հիմա կ'անցնիմ Լիւսէոնի հին փողոցներէն , որոնք այլապէս շահեկան են , և կը հասնիմ պատմական թանգարանն , ուր բաւական ճոխ հաւաքածոյ մը կը գտնուի հնութեանց և պատերազմական գործիներու ու նիւթերու : Քովի սրահը կը գտնուի նկարներու թանգարանն ուր մանուուորապէս մեծ պատկեր մը ուշս կը գրաւէ : Ծաղկազարդ է : Մերունի մը , ծունր իջած , կ'աղօթէ . իր մերկ ոտից փորչապարն աներեւակայելի բնականութեամբ

հերկայացուած է՝ ամեն մէկ մանրամասնութեամբ : Տղեկ մը , սարսափած՝ ձեռքերովը կը գոցէ երեսն , ի տես պատարագիչ քահանային որ կը յառաջանայ բուրվառ ի ձեռին : Եկեղեցին գտնուող ժողովրդեան երկիւղած կերպարանքը՝ կատարելապէս բնական է : — Սիրուն է նաև սա միւսը : Պղտիկ աղջիկ մը կերակուր կ'ուտէ պնակի մը մէջէն . չորս հինգ սագեր կուզան իրենց բաժինը պահանջել կերակուրէն : Աղջիկը վախէն գետին կը ձգէ պնակը և կռնակի վրայ կ'իյնայ մէկ ձեռքը բռնած պատառաքողն՝ որոյ ծայրը կը գտնուի պատառը : Անդիէն , փիսիկը , իր կեղծաւոր կերպարանքով , կամացուկ մը ետևէն կ'երկնցնէ թաթիկը և պատառը կ'առնէ :

Նոյն շէնքին մէջ կը գտնուին նաև հնախօսական և մարդակազմական թանգարաններ , ոչ շատ հարուստ :

Պատմական թանգարանէն կը վերազառնամ պանդոկ , անցնելով փայտէ փլած փրփլած հին կամուրջին վրայէն , որ , 1303ին շինուած , Լիւսէոնի ամենէն յատկանշական և ամենէն հին կամուրջն է : Երեք հարիւր քսան և չորս մէդր երկայնութիւն ունի և դարդարուած է 154 շահեկան պատկերներով , ամենքն ալ քաղաքին պատմութեան վերաբերող . մէջտեղը կը գտնուի բաւական եզակի աշտարակ մը , որ աստիճաք փարոս (շաշէշնա) է եզեր և կը պարունակէ քաղաքին հին յիշատակարանները : Կամուրջին քովն ի վեր շարուած են անակներ կարապներուն և բաղերուն համար , որ դատարկապորաններու կամ ցորեկը հանգիստ առնող գործաւորներու համար բաւական ախորժեկի թամանց մը կ'ընձևուին :

Այսպէս կ'աւարտէի այցելութիւններս ու պատշտներս ի Լիւսէոն , և Լիւսէոնի հետ ի Զուլիցերիա : Գարոցակունաց երկուշարթի օրուան ծանօթ փոքրի դաւին մօտ բան մը կ'ըզգայի այդ իրիկունը , երբ կը մտածէի թէ յաջորդ օրը կառախուսքը Վիէննայի ճամբով պիտի հետացնէր

դիս բնութեան այդ երկրէն, զոր այնքան սիրեցի :
Ո՛չ, իրաւունք չունէի այնքան տրամելու : Զուիցե-
րիա չէր հատցուցած տակաւին իր հրապոյրները, մանա-
ւանդ թէ ամենէն սքանչելիները պահած էր ինձ վայելել
դէպ ի վիէննա ճամբորդութեանս միջոցին : Մինչև կե-
նացս վերջը թարմ պիտի պահեմ յիշատակն այդ բարձ-
րաբերձ լեռներուն, հոս հոն ձիւնապատ սարերով՝ տար-
ուան այդ ամենէն տաք եղանակին մէջ : այդ ահեղագոչ
հեղեղներուն որոնք կատաղօրէն կը սահին կ'իջնեն փռ-
փրայով լերանց կողերէն ահագին ջրոյ հոսանքներ կազ-
մելու համար վարը, որոնց վրայէն կ'անցնի տեղ տեղ
մեր կառախումբն : Եւ կարծես աւելի կատարեալ ընելու
համար արհաւիրքը՝ զոր լնութիւնը կը ներկայացնէ ամէն
կողմէն այդ ահագին լեռներուն տակ՝ որոնց սարերն եր-
բեմն կը խառնուին ամպերուն հետ, մեր կառախումբն,
որ աննշան կէտի մը պէս կ'երևի հող, կ'անցնի յաճախ
երկայնաձիղ փապուղիներէ : Թէև օդը չափազանց տաք,
թէև կառախումբին մեր խորշը լեփ լեցուն, թէև երես-
նիս ու մարմիննիս քրտինքով ու գետնածխոյ մասնիկ-
ներով ծածկուած, սակայն ճանճրոյթի հետքն իսկ չի
ներկայացնէր այս ճամբորդութիւնը՝ բնութեան մերկ ծո-
ցին մէջ : տեսարանը գրեթէ նոյնն է միշտ, բայց այդ
նոյնութեան մէջ իսկ, լի հրապոյրներով ու սքանչելեօք,
սքանչելիք՝ որոնց կը խառնուի մերթ ընդ մերթ, անճառ
յուզումն, որով կը լեցնէ հողին, հեռուէն տեսնուած
փայտէ կամ մարմարիոնի մէջ փորուած Յիսուսի պարզ
խաչելութիւնը, որ կ'երևի հիւզակի մը դրան առջև :

Յուզում, քանի՜ բուռն և երկարատև եղաւ նաև այն
զոր զգացի ի Լանտէք : Խորշին մէջ դիմացս կը գտնուէին
կին մը և պատանի մը — մայր ու զաւակ : Միջոց մը,
պատանին կը մրափէ, ու կլնն, անհուն այն գորովով
զոր մայրերը միայն կրնան երեւակայել, կ'սկսի շոյել իր

զաւկին լեռնցիի անկեղծ դէմքը, կարճ մազերը, պահ-
ւրտած քասքէղին տակ: Երբ Լանտէք կը հասնինք, զա-
ւակն, յուզմամբ լեցուն աչքերովն, որք կը ճգնէին յետա-
մղել խուժող արցունքն, ու ձայնով մը՝ որ ի զուր կը
փորձէր հանդարտ երեւիլ, հրաժեշտ կուտայ իր մօր, կը
ծածկէ անոր այտերն ու ձեռքերը ջերմ համբոյրներով,
ու իր monocycleն առած կը հեռանայ, ճօճելով իր քաս-
քէթն՝ որ կը փայլի արշաւներու մէջ շահած շքանշաննե-
րուն տակ: Ու մինչ նոր յաղթանակի մը փառաւոր հե-
ռապատկերը կ'ուռնցնէ իր կուրծքն և արդէն ժպտը
վերադարձուցած է անոր դիմաց վրայ, մայրն արտաս-
ուելէ կարմրցած և հիւանդացած աչքերով կը հեռակ իր
սրտի հատորին:

Քսան և չորս ժամ վերջը Վիէննա եմ, ուր սրամաղ-
րելի քիչ մը ժամանակս կը գործածեմ քաղաքին գլխու-
ւոր տեղուանքը կոտքով պարտելէ վերջ, այցելելու գր-
խաւորարար Մխիթարեանց հոյակապ վանքն համանուն
փողոցին մէջ (Մխիթարիադրնկասէ): Հայր Մէնէլիշեան,
գերադնիւ հիւրամեծարութեամբ, կը պարտցնէ զիս ամբողջ
վանքը, զոր նախանձելի վիճակի մը մէջ դնելու համար
ու է ջանք չեն խնայեր վերապատուելի հարք: Հպար-
տութեամբ խառն հրճուանք մը առթեցին ինձ ճօխ մա-
տենադարանն, ուր չքնադազիւտ երկեր չեն պակսիր,
դրամագիտական թանգարանն՝ որ ինքնին պիտի բաւէր
թերևս վանքին փառքը կազմելու, հանքերու և հանա-
ծոններու թանգարանն, հնախօսական մուսէոնն և վեր-
ջապէս հոյակապ տպարանն՝ ուր վերջին դրութեամբ շո-
գեշարժ մամուլի մը շուրջ, աւսարիացի պատանիներ
հայերէն կամ գերմաներէն ձեռագիրներ շարելու զբաղած
են: Ազնիւ առաջնորդս և յետոյ ուրիշ վանական վերա-
պատուելի հարք կուտան ինձ մանրամասն տեղեկու-
թիւններ վանքին վերաբերեալ, և իրապէս «քաղցր տպու-

ւորութեան» մը տակ կը բաժնուիմ վանքէն ու վանա-
կաններէն՝ այցելելու համար քիչ մը հեռուն գտնուող
Քեղարուեստից Թանգարանն, որ Լուվրի մէջ կրած տպա-
ւորութիւններս կ'արթնցնէ յիս :

Երեկոյին, առիթը չեմ ուզեր փախցնել երթալու Օ-
բերան, որոյ մասին այնքան սքանչացմամբ խօսած էին
ինձ : Իբրև շէնք վար կը մնայ, մանաւանդ դրսէն, Բա-
րիզի Օբերաէն : Կը պատմուի թէ ճարտարապետն, որ
շէնքն աւարտելէն վերջը դիտեր է թերութիւնները՝
չորս կողմէն կծու քննադատութիւններով մատնանիչ
եղած, յուսահատութենէն վերջ տուած է իր կենաց :
Բայց եթէ իբր շէնք չհաւասարիր Բարիզի Օբերաին,
նոյն բանը կարելի չէ ըսել արուեստագէտներուն և վի-
ժակներուն մասին, որոցմէ գերազանց բան մը կարելի չէ
երեւակայել : Ապահովապէս Շէյքսպիր ինքն ալ չպիտի
կրնար զսպել հիացմամբ խառն արդար հպարտութեան
բացագանչութիւններ, եթէ հոնդիսատես ըլլար այդ
երեկոյ Համլէթի ներկայացման, ու հո՛ն մանաւանդ
պիտի տեսնէր իր խաղին մեծութիւնը : Եւ կ'արժէր որ
Անպրուազ Թոմա, մեծ թատրերգակին արժանի մեծ
նուագայտրդարն, ինքն ալ կարենար կարգալ շնչելու
չհամարձակող պակուցեալ հանդիսատեսներու դիմաց
վրայ ու աչաց մէջ յուզումն դոր, իբր մակածական հո-
սանք, կը բերէին արուեստագէտին բերնէն սլացող սա-
բառերն . «դայն օտէռ նիհիթ դայն .» բառեր՝ որ յաջորդ
օրն արեւելեան ճեպընթացին մէջ ալ, անկէ ետքն ալ,
մինչև այս վայրկենիս և անշուշտ տակաւին շատ ժամա-
նակ պիտի թրթռացնեն լսելիքս :

(Արեւելք, 1895 Սեպտ. — 1896 Յունուար)

Դ Ր ՈՒ Ա Գ Մ Ը

Քսան տարիներ անցած են արդէն անկէ ի վեր , բայց տեսարանն աչացս առջև է միշտ շատ կենդանի գոյներով :

Դպրոցն ողջոյն սրտարեկ երեւոյթ մը զգեցած էր՝ յորմէ հետէ չէր տեսներ անոյշ ու պատկառելի դէմքն անոր՝ որ հոգին էր դպրոցին : Ու համակամ , սրտապախ , կ'սպասէր անձայն անշշուհ :

Լուռ էր դպրոցը , ամէնէն աւելի լուռ ու տրտում՝ դպրոցին ամէնէն զուարթ ու յորդածայն օրը : Դրաւոր քննութիւններն աւարտած էին ու պարզեարայտութեան վիճակացոյցերը պիտի բաշխուէին : Զանգակը հնչեց , չոր դողանջ մը , համադրութիւն տխուր , դրեթէ յուսահատ շեշտերու : Դանդաղ քայլերով աշակերտները դուրս ելան սրահին շուրջը սիրուած դաստրաններէն ու շարուեցան սրահին մէջ շուրջանակի : Դասախորակները , տեսրակներու և թուղթերու դէզի մը մէջտեղ , կրթնած էին ամպիոնին : Այդ թուղթերը , ուր ամէն աշակերտ կը փնտռէ իր փառասիրութիւնը , չէին գրուեր հիմա մեր ուշագրութիւնը : Ամէնուս աչքերը սեւեռուած էրն ո՛չ թէ վիճակացոյցերուն , այլ ամպիոնին այն կէտին վրայ՝ ուր սովոր էինք տեսնել , նմանօրինակ հանդիսական օրերու , մեր պաշտեցեալ Տնօրէնը :

Պիտի կրնա՞ր եղնել դուրս իր սենեկէն՝ ուր ծանր հիւանդութիւն մը զինքը կը տանջէր : Պիտի կրնա՞ր իջնել վար սանդուղներէն : Պիտի կրնայի՞նք տեսնել զինքը , իր քաղցր դէմքը լուստապայծառ : Պիտի կրնայի՞նք լսել զինքը , իր սրտագրաւ խօսքերը կրթիչ :

Ու կ'սպասէինք մտածկոտ , վրդովուհ , չի համարձակելով բառ մը արտասանել իրարու : Կ'սպասէինք ,

գիտնալով հանդերձ թէ բժիշկները հրամայած էին իրեն կատարեալ հանգիստ իր սենեկին մէջ, հանգիստ մարմնոյ և մանաւանդ թոքերու :

Առաջ ոտնաձայն մը հասաւ յանկարծ մեր ականջներուն . սրտերը բարախել սկսան, զգայարանքի անգուծ պատրանքի մը երկիւղով : Ուրուանկարը մարմին կ'առնէր տակաւ : Դպրոցին հոգին կը նշմարուէր հիմա ամպիտնէն՝ ամբողջ սրտին վրայ :

Գունատած էր իր դէմքն ա'յնքան գեղամոյն, նուազած էր պայծառ նայուածքն Հրաչեային, ուժաթափ եղած էր այդ մարմինն որ յոգնիլ չէր գիտեր : Աթոռի մը վրայ նստած, անհուն նայուածքով մը կը դիտէր ու կը դիտէր իր աշակերտները՝ զորս ա'յնքան կարօտցած էր և որոնք կարօտցած էին զինքը ա'յնքան : Բառ մը չէր արտասաներ նա մեզ . բժիշկները հրամայած էին շատ խիստ ու անգուծ կերպով՝ այդ զոհողութիւնը : Բայց իր քաղցր դէմքին ազդեցութեան տակ կը կարդայինք իր աշակերտաց հանդէպ ունեցած սէրը . ծծելով այդ անձնուէր հոգւոյն կենսատու նեկտարը :

Եթէ վարժապետը սաղրած էր աշակերտները, աշակերտներն ալ սաղրած էին վարժապետը : Տարօրինակ ոյժով մը յանկարծ ոգևորուած, ոտքի ելաւ մեր Տնօրէնը, ու իր մեղրակաթ հոգեչան բառերով, որոնց ուղղեւծուծը ոչ ոք ըմբոշխնած է այնքան որքան իր աշակերտները, անգամ մըն ալ յուզեց մեր սրտերը, բարձրացուց մեր հոգիները դէպ ի բարին, գեղեցիկն ու ճշմարիտն :

Հազի մը գալարմանց մէջ մարեցաւ իր ձայնը : Աչքերն իս լեցուած հետեւեցան սանդուղին աստիճաններէն վեր իր դողդոջ քայլերուն, որոնք պէտք կ'ունենային զպրոցին դաստիարակներուն նեցուկին :

Հազիւ սենեակը մտած, մեր պաշտեցեալ անձնուէք
Տնօրէնը ուժասպառ ինկեր էր նուազած . . .

(Մանգուսի էփեար, 1901 Հոկտեմբեր)

Ի ՆՊԱՍՏ ԱՄՈՒՐԻՈՒԹԵԱՆ ԲԱՅՑ ՈՉ ԸՆԴԴԷՄ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ

Տանուտէր Յարոյի և Հորոյի այն գեղեցիկ յօդուածներն՝ որ վերջին երեք տարիներու մէջ յուզեցին ընկերական յոյժ կարեւոր հարց մը — ամուսնութեան հարցը, — պարտ էին վիճարանութիւններ գրգռել այս կենսական խնդրոյն վրայ: Չարմանալի է որ այդ տեսակ բան մը չեղաւ: Մեր բժիշկներէն անոնք մանաւանդ որ բարձր ըմբռնում մ'ունին իրենց ընկերական դերին վրայ, ինչպէս կրցան լուռ մնալ: Բի-շնդ-նէ զատ ուրիշ թերթեր ալ քիչ շատ զբաղեցան այդ խնդրով, բայց, որչափ գիտեմ, ոչ մէկ խորին ուսումնասիրութիւն երեւցաւ՝ որ քննէր խնդրոյն զանազան կողմերն ու հանդամանքը: Յանդգնութիւն կը համարուի գուցէ այսքան բարդ խընդրոյ մը միջամուխ ըլլալ, բայց յանդգնութիւնն իր իմաստը կը կորսնցնէ՝ երբ անկեղծ ևս կարծիքներուդ մէջ և գիտես համակիր ոգևով լսել ուրիշին ալ կարծիքները: Արդաստեղի միտք, ապաքէն, այն միտքը՝ որ կը հուսատայ ճշմարտութեան անուղտպահն ըլլալ. խղճալի միտք, մարդկութեան համար պատուհաս այն միտքն՝ որ կատաղութեամբ կը բորբոքի օտար մտածումներու և զգացումներու հանդէպ: Դպրոցները մեծագոյն և ամէնէն փառաւոր արդիւնքը ձեռք պիտի ձգեն իրենց գործին մէջ այն օրն՝ որ գիտական մտքերու փոխած պիտի ըլլան իրենք իրենցմով փքանալու հակամէտ միտքերը:

Յանդգնութիւն կամ յարակնտութիւն չեմ համարեր ուրեմն իմ մտածումներս պարզել հոս ամուսնութեան հարցին վրայ, և ի բոլոր սրտէ կը փափաքիմ՝ որ ազատ վիճարանութեան մը մղեն անոնք:

Թէ ամուսնութիւնը կարելոր հաստատութիւն մ'է, թէ մարդ ջանադիր ըլլալու է կանուխէն ընտանիք կազմելու, այս կէտը վիճելի չի կրնար ըլլալ, կարծեմ, ու ես չպիտի կրնայի նոր բան մ'ըսել այնքան գեղեցիկ յորդորումներէ և տեսութիւններէ վերջ՝ որ զրուած են այս մասին: Նպատակս է, օգտուելով այս խնդրոյն վերաբերող հրատարակութիւններէն(1), շօշափել խնդրոյն այն կողմերն՝ որոնք շատ շին ուսումնասիրուած:

Ու նախ, սա խնդիրը. Զգաստութիւնը, այսինքն սերական յարաբերութենէ ժուժկալութիւնը, անկարելի՞ բան մ'է: — Կենսաբանութեան (biologie) և հոգեբանութեան նորագոյն խուզարկութիւնները ցոյց կուտան թէ ուրիշ ամէն կիրքի պէս սերական բնազդն ալ — թէ էրիկ մարդու թէ կնոջ — պատշաճ դաստիարակութեան մը շնորհիւ, կրնայ սանձուիլ՝ առողջութեան համար անվնաս կերպով: Պէպըլ(2) որ կը գրէ թէ «մարդը պէտք է միշտ հնազանդի ո՛ր և է բնական մղումի, և նուիրէ սերական գործարաններու գործունէութեան զարգացման՝ նոյն այն խնամքը՝ զոր կը նուիրէ իմացական գործունէութեան զարգացման», և Տքդ, Թիւլիէ(3) որ կնոջական սրբութիւնն հակարնական բան մը կը համարի, շատ համախոհներ չունին այսօր գիտական աշխարհին մէջ: Իրաւ է թէ սովորութիւն եղած է զգաստ մէկը ֆիզիքապէս և բա-

(1) Տես, ի մէջ այլոց, A. de Morsier: Le droit des femmes et la Morale intersexuelle. (Paris, Schleicher Frères, 1903).

(2) Bebel: La femme dans le passé, le présent et l'avenir. (Paris, Carré, 1891). Թարգմ.

(3) Dr. Thulié: La femme, (Delahaye et Lecrossier, Paris, 1885).

րոյապէս կորսուած էակ մը համարիլ, բայց փորձը ցոյց կուտայ և անշուշտ ցոյց պիտի տայ հետզհետէ թէ զգաստութիւնն ուղեղին և հոգւոյն ոյժերը կ'աւելցնէ: Բացառութիւններ կրնան գտնուիլ (զգաստութեան հետեւանքով հիւանդացողներ), բայց հաւանականաբար անոնք ալ անոր համար մնասուած են զգաստութենէն՝ որովհետև պատշաճ միջոցներով ինքզինքնին չեն վարժեցուցած անոր: Այդ միջոցներն են, գլխաւորաբար, սակաւապիտութիւն, գրգռիչ ըմպելիներէ ժուժկայութիւն, մարմնակրթանք, մտաւոր լուրջ դրաղումներ, գրգռիչ տեսարաններէ, ընթերցումներէ և մտածումներէ խորշիլ:

Արդ, եթէ ընդունինք թէ զգաստութիւնն ոչ սնկարելի է ոչ ալ մնասակար, պիտի յանգինք կարգ մը ծանրակշիռ եզրակացութիւններու: Պատանին, դպրոցէն մեկնելէն քիչ յետոյ, մէկ կողմէն սերային բնազդին անձնատուր, միւս կողմէն այն համոզմամբ թէ զգաստութիւնն ազիտաբեր է սուղջութեան համար, կ'սկսի վատահամբաւ տուներ յաճախել: Եւ եթէ փորձեա գինքն զգուշացնել, առաջ կը բերէ բժշկին խորհուրդը. այո՛, բժիշկը խորհուրդ տուած է իրեն սերային յարաբերութիւններ մշակել՝ իբր դարման գլխու ցաւին, կամ սրտի բարախման, կամ անքնութեան, ևն: Է՛հ, ի՞նչ հարկ յոգնիլ, ժամավաճառ ըլլալ՝ լրջօրէն քննելով հիւանդը, հասկնալու համար թէ հիւանդը շատ օղի կը խմէ՞, շատ կը ծխէ՞, գոց օղի մէջ կամ նստողական կեանք կը վարէ՞, և կամ ուրիշ պատճառ մը կա՞յ հիւանդութեան: Ինչո՞ւ յոգնի՞ անոր հասկցնելով թէ ի՞նչ միջոցներով կրնայ զգաստութեամբ ապրիլ, եթէ, այս կամ այն պատճառաւ, ի վիճակի չէ ամուսնանալու: Ա՛հ, սրբան պիտի փափաքէի որ մեր երիտասարդները կարգային այս ամենակարևոր նիւթին նուիրուած հրատարակութիւններ, ինչպէս են, օրինակի համար, Dr. A. Herzenի Science et Moralitéն (Lausanne,

libr. Payot), — Dr. Goodի Hygiène et Morale (Aber-
len et Cie., Vals-les-Bains), ևն . : Հոն պիտի գտնէին գի-
տուն բարեկամներու հեղինակութիւնը վայելող խորհուրդ-
ները , հոն պիտի տեսնէին թէ զգաստութիւնն անկարելի
քան մը չէ , բաւական է որ ինկատ առնուին ինչ ինչ
պայմաններ , — թէ՛ անհատական և ընկերային ահեղ
փորձանքներու աղբիւր են վատահամբաւ տուներու մէջ
վաստուած փոխանցիկ և յաճախ անբուժելի ու ժառան-
գական հիւանդութիւնները :

Ժառանգական : Ու խորհիլ թէ secret professionelը ,
այդ աղիտարեր սովորութիւնը , պարտք կը դնէ բժիշկնե-
րուն վրայ երեւան չհանել իրենց յաճախորդներուն ափ-
րողիտեան ախտերը : Մարդասպանութեան որքան տե-
սակներ կան , Աստուած իմ : Անմեղ էակներու կեանքը
փրկելու մարդասիրական բարձր զգացումով մը՝ Շուե-
տացիք հիմնած են , անցեալ դարու սկիզբէն ի վեր , ափ-
րողիտականներու յատուկ հիւանդանոցներ , ուր հիւանդ-
ները կը դարմանուին ճրիարար : Տեղական իշխանու-
թիւններն ի հարկին կ'օտիպեն ժողովուրդն որ բժշկին
քննութենէն անցնի , որպէս զի հիւանդներն հիւանդանոց
դրուին : Ահա՛ հետեւելի օրինակ մը , սպասելով աւելի
արմատական միջոցին : Ափրողիտականներու յատուկ
«սանադօրիօմ»ներ նուազ կարևոր չեն անշուշտ , քան
հիւժախաւարներու յատուկ «սանադօրիօմ»ները , որոնց
մասին այնքան գովելի եռանդ ցոյց կը տրուի :

* * Նթէ իրաւ է թէ զգաստութիւնն անկարելի ու
մնասակար չէ , ապա ուրեմն ամուսնութիւնն ալ անհրա-
ժեշտ պէտք մը չէ Ֆիզիոլոգիան տեսակէտով , և ընկերային
բարոյականը պարտք կը դնէ մեր վրայ՝ ամուրի մնալ և
ընկերութեան համար օգտակար կեանք մ'ունենալ , եթէ
ամուսնութիւնը կը ներկայանայ աննպաստ ու առողջա-
կան աղիտարեր պայմաններով : Հոս խնդիրը կը կնճռտի ,

հարկ է ամենամեծ շրջահայեցութեամբ քննել զայն :

Ընկերական աղէտ մ'է ամուսնութիւնը՝ երբ ամուսնացողներն ունին առողջական կարեւոր թերութիւններ, որոնց ամէնէն զլիսաւորներէն մէկն է ջլտութիւնը : Ուրիշ առթիւ նոյն այս սիւնակներուն մէջ, ցոյց տրուած է արդէն թէ ընկերութեան համար սրբախի անօգուտ և յաճախ վտանգաւոր, ողորմելի էակներու ծնունդ կուտան այդ պայմաններուն մէջ կատարուած ամուսնութիւնները(1) :

Պատուհաս մըն է ամուսնութիւնը՝ երբ լոնի է այն, և ոչ արդիւնք ազատ ընտրութեան, կամ երբ երիտասարդն ու օրիորդը կ'ամուսնանան անգիտակցաբար, կուրօրէն, ծնուցանելու բնազդին և ընկերական սովորութեան մը խաղաղիկ : Աւելորդ կը համարիմ հոս ծոնրանալ այն անպատկճութեանց վրայ՝ որ կը բղխին անյարմար ամուսնութիւններէ : Ամէնուն ծանօթ իրողութիւններ են անոնք, որոց ականատես կ'ըլլանք ամէն օր :

Բայց խնդիր մը՝ որուն բաւական ուշադրութիւն չենք դարձուցած գուցէ, այն նախապաշարումներն են որ կը տիրեն կնոջ դերին և ամուսիններուն փոխադարձ յարաբերութեանց նկատմամբ : Կարեւոր է, զիտական-ընկերական գաղափարներու բարեշրջութեան երկույթներուն վրայ հիմնուելով, այդ նախապաշարումները ուսումնասիրել, որովհետև անոնք պատճառ են ընկերական խել մը շարիքներու(2) :

Եթէ զգուստութիւնն ոչ անկարելի է և ոչ ալ մեասակար, ինչպէս կը հաւատայ այսօր գիտուններու ստուար մեծամասնութիւնը, մայրութիւնն անհրաժեշտ խոչաղի,

(1) Բի-զանդիան է. տարի (1903), Թիւ 1919, 1920, 1922. Ջլտութիւնը արդէն (ԱՆԿՆՆԸ ԷՋԵՄ, Բ. Հատոր, էջ 299)

(2) Ձեռագրին մէջէն ջնջուած էր այս հատուածը, չեմ գիտեր ի՞նչ պատճառաւ :

անխուսափելի կոչումն է ամէն կնոջ : — Ո՛չ , կը պատաս-
խանեն բնախօսներ և գիտուններ : Մայրութիւնն ոչ կա-
րելի է և ոչ իսկ փափաքելի է ամէն կնոջ համար : Մնաց
որ , մայրութեան բնազդը շատհմանափակուի զաւակ-
ներու ծնունդ տալուն մէջ . այդ բնազդն հետզհետէ կը
վսեմանայ այնքան որ կրնայ բոլորովին մերկանալ իր
անասնական բնաւորութիւնը : Եթէ կան կիներ որ կը
յուսահատին , կը դառնանան ու ջլախտաւոր կը դառնան
զաւակ չունենալնուն համար , պատճառն իրենց մտքի և
կամքի անյարմար դաստիարակութիւնն է : Այդ խեղճ կի-
ները շատ առողջ , շատ զուարթ , շատ գործօն ընկերը
պիտի ըլլային իրենց ամուսնոյն , եթէ իրենց միտքը
տարբեր ուղղութեամբ խորհելու վարժուած ըլլար , եթէ
մայրութիւնն ամուսնութեան միակ նպատակը չըլլար
իրենց համար : Կը հետևի թէ դաստիարակութիւնը մեծ
դեր ունի կատարելիք այս խնդրոյն մէջ : Դատապարտելի
է այն սովորութիւնն որ կ'ուզէ ազջիկն անգիտակից պա-
հել իր ապագայ գործունէութեան մասին : Եթէ այսօր ոչ
ոք մտքէն կ'անցընէ տարակոյսի տակ ձգել , ինչպէս կ'ը-
նէին հինգերորդ դարու մէջ , թէ կլինն հոգի ունի՞ , տա-
կաւին մեր օրով ալ , սակայն , կիներն յաճախ մեծ տղա-
ներ են , կեանքն երազ մը կամ վիպասանութիւն մը
նկատող , անկարող լուրջ մտածումներու , ամուսնոյն գե-
րին կամ բռնաւորն ըլլալու յարմար : «Կինը քաղաքա-
կոնապէս անչափահաս մ'է և բարոյապէս գերի մը . բա-
րենորոգում մը կարևոր է .» կը գրէր Հիւկօ 1877ին : Այս
բարենորոգումն հազիւ սկսած է հոս հոն , և կրնայ ըսուիլ
թէ արդիւնքները , առ այժմ , կամ ժխտական եղած են
և կամ հակառակ : Ստուգիւ , կամ ամուսինն իր կինը
կը նկատէ տակաւին իր մարմնական ցանկութեանց հլու
գործին և զաւակ ծնուցանող մեքենայ մը , կամ «ուսում-
նական» կինը փորձանք մը կը դառնայ իր ամուսնոյն

դլխոյն , կամ սանձարձակ ապերասան սէրը կը ջատագովուի ոմանց կողմանէ(1) . այսինքն , կամ հին նախապաշարունակներու շարունակութիւն , կամ հակառակ ծայրայեղութիւն . juste milieu (արդար միջինը) բացառութիւն մ'է անկաւին , իսկ հաւասարութիւնն առն և կնոջ՝ ա՛ր աւելի հաղուողիւտ բան մը :

Այրն իրաւունք չունի կինն իրմէ ստորին էակ մը նկատելու : Եթէ գիտութիւնն հաստատած ըլլար թէ կինը բնախօսապէս նուազ կ'արժէ քան այլը , թերևս ներելի ըլլար վիճարանութեան ենթարկել , ամուսնութեան խընդրոյն մէջ , Նիչէի վարդապետութիւնը , ըստ որում «յոռի»ները պէտք է ծառայեն «լաւ»ներուն մշակութեան , ի սէր Գերամարդուն , այդ արեւուն «որ կ'ստիպէ աստղերը դառնալ իր շուրջ» : Բայց , ըստ Բրօֆ . Մանուլրիէի , կնոջ ուղեղին անդամազննական մէկ ստորնութիւնն ապացուցանելու համար առաջ բերուած փաստերէն և ոչ մէկն արժէք ունի գիտութեան արդի վիճակին մէջ : Ամէն պարագայի մէջ , գիտութիւնն իր վճիռը չէ արձակած : Եթէ Տքթ . Մէօպիուս իր «կնոջ բնախօսական տկարութեան վրայ(2)» գործին մէջ , որուն առաջին ապացրութիւնն այնքան աղմուկ հանեց Գերմանիոյ մէջ , կը ջանայ հաստատել կնոջ մտքին բնական ստորնութիւնը՝ բաղդատամար էրիկ մարդուն , ստորնութիւն՝ որ ի յայտ կուգայ ֆիզիքական և հոգեկան նկարագիրներով (կնոջ ուղեղն աւելի պզտիկ և աւելի թեթեւ է , նորածիններու վրայ հաստատուած է Ռիւտընկըրի կողմէ թէ աղջկանց ուղեղին ճակատի և քունքի պատուածքը (circonvolution) նուազ զարգացած է քան մանչերունը , կնոջ զգայարանքը նուազ

(1) *Sto G. Novicow* : L'affranchissement de la femme, (Paris, Alcan, 1903).

(2) .— *Dr. Mœbius* : Ueber den physiologischen Schwachsinn des Weibes. (Halle, Marhold, 1903).

սուր են, իր բնազդները կը տիրեն իմացականութեանը վրայ, քննասէր միտք չունի, ևն.) — եթէ Տքթ. Մէօպիուս, յենչով այսպիսի կենսաբանական հիմերու վրայ, կ'ուզէ յանդիլ սա եզրակացութեան թէ կնոջ միակ դերը, մարդկութեան մէջ, մայրութիւնն է՝ որուն վնաս կը հասցընէ մտաւոր աշխատութիւնը, նուազեցնելով ծննդականութիւնը, կաթին արտադրութիւնը, ևն., — ուրիշներ (այր թէ կին) կը բողոքեն այս յայտարարութեանց դէմ հակառակ փաստեր առաջ բերելով, (ոչ հակիթը ոչ սողմը սեռ ունին ի սկզբան. սերականութիւնը (sexualité) ստացական է և ոչ սկզբնական. — պէտք չէ շփոթել ուղեղին կշռական բացարձակ նուազութիւնն անոր համեմատական կշիռին հետ, ևն.) թողունք որ եթէ նոյնիսկ հաստատուած ըլլար կնոջ բնախօսական կրտսերութիւնը, Տքթ. Մէօպիուսի այն պահանջումը թէ կնոջ դերը պէտք է սահմանափակուի մայրութեան մէջ՝ վիճելի խնդիր մը պիտի ըլլար անտեսական և ընկերական տեսակէտով :

* * Բայց մենք, առանց գիտական նորին վարկածներու ցանցին մէջ մտնելու, ջանանք որոնել համեմատօրէն թէ ինչ տեսակ դաստիարակութիւն մը պիտի կրնար աղնուացնել ամուսնութիւնն և ընել զայն այլապէս օգտակար հաստատութիւն մը քան ինչ որ է հիմա : Բարեչըրջութեան երեւոյթներն որ տեղի կ'ունենան ամէն բանի մէջ, չեն կրնար հաշտուիլ հին դարերու ըմբռնումներուն հետ. դաստիարակութեան գործն է կանխատեսել ընկերական բարեփոխութիւնները՝ որ հեազհետէ անխուսափելի կը դառնան, և պատրաստել միտքերը զանոնք բնդունելու : Ամէն բանէ առաջ, ի բաց թօթափենք այն նախապաշարումը՝ որուն համեմատ ծնողք և դաստիարակներ ամօթ և անխոհեմութիւն կը համարին պատահելիներու — մանչ թէ աղջիկ — խօսիլ ամուսնութեան

վրայ : Ընդհակառակը , մեր պարտքն է լրջօրէն ուսումնասիրել անոնց հետ այդ ամենայուրջ խնդիրը , որ ապագայի ամէնէն կարեւոր խնդիրն է իրենց համար : Հասկըցնենք մեր մանչ ու աղջիկ պատանիներուն՝

1. Թէ խիստ կենսական և ծանրակշիռ հարց մ'է ամուսնութիւնը , անհրաժեշտ է որ ամուսնացողները գիտակից ըլլան այդ էական հարցին բարոյական ու ընկերական մանրամասնութեանց :

2. Թէ ամուսնացողները պէտք է ունենան առողջ մարմին և առողջ հոգի՝ ունենալու համար առողջ զաւակներ(1) : — Պէտք է գիտնան — մասնաւորապէս կինը — զաւակ մեծցնելու արուեստը , որ գիտութիւն մ'է միանգամայն :

3. Թէ ամուսնութիւնը պէտք է ըլլայ ազատ , այսինքն երկու կողմերը պէտք է նախապէս զիրար ճանչցած , իրարու համակրած , փոխադարձ վստահութիւններ շնչած և իրենց բաղդը միացնել որոշած ըլլան ազատօրէն : Այս ազատ ամուսնութիւնը , որ չէ այն ապիրասան ազատութիւնը որուն ջատագով կը կանգնի Նօլիքով իր կնոջ Ձերբազատութիւնը գործին մէջ , պիտի նուազեցնէ անշուշտ ամուսնայուծութեան պարագաները , որոնք այնքան բանաւոր են յաճախ — թէ և օրէնքին կողմանէ արգիւտած — ամուսնութեան արդի պայմաններուն մէջ(2) :

4. Թէ ամուսնութեան էական նպատակը գործակցութիւն մ'է և ոչ զաւակ հասցնել . և թէ , հետեւաբար , ֆիզիքական թերութիւն մը արդելք ըլլալու չէ այդ արդիւնաւոր գործակցութեան , և կամ , կինը մայր ըլլալու ստիպուած պէտք չէ ըլլայ՝ հակառակ իր կամաց , իբր

(1) Բե-զ-ն-դ-ի-ն , Թիւ 1919, 1920, 1922 — Թիւ 2157 .

(2) Ձեռագրին մէջէն ջնջուած էր այս հատուածը :

ատրուկն իր ամուսնոյն : Ռուսօ յոռի խորհրդատու մ'է այս մասին(1) :

5. Թէ զգաստութիւնն անկարելի կամ մնասակար քան մը չըլլալով, պէտք չէ որ ամուրիութիւնն առողջութեան համար մնասակար նկատուի և կամ ջլատէ գործունէութեան եռանդն : Աղջիկն իր կենաց բացարձակ նպատակ ընդունելու չէ ամուսնութիւնը. իր իտէպը պէտք է ըլլայ արհեստի մը միջոցաւ անկախ դիրք մը ձեռք ձգել : Այն ատեն է որ ամուսնութեան բնորութեան մէջ պիտի կրնայ պահել իր ազատութիւնը : Եթէ կան աղջիկներ որ իմաստակներ դարձած՝ բանի մը յարմար չեն, յանցանքն ուսմունքինը չէ ապահովարար, այլ յոռի դաստիարակութեան : Լուրջ, գիտական դաստիարակութիւն մը տարբեր արդիւնք մը պիտի տար, և այն ատեն, անշուշտ, կիներ տգէտ պահել ուզողները՝ ընկերութեան համար այլապէս օգտակար անդամ մը պիտի ուզէին ընել կիներ, քան թէ այն «կուսական հրապոյրն» որ էրիկ մարդոց ծունգերը կը կքեցնէ(2) :» Ամուսնութեան յաջողութիւնն և արժանապատուութիւնը կը պահանջեն որ կիներ յարգուած մտնէ ամուսնական յարկին մէջ... Ամուսնութիւնն այնքան աւելի յաջող պիտի ըլլայ, որքան աւելի լաւ պատրաստուած ըլլան աղջիկներն ամուրիութեան(3) :» Մնաց որ կոչս կամ ամուլ կիներն ունի կատարել, ընկերութեան մէջ, անձնութիւնն և սիտիանաց այնքան վեհ գործեր :

Չէ՞ք կարծեր թէ ամուսնութեանց քանակը պիտի աւելնայ և որակն ազնուանայ, եթէ կարդ մը նախապաշարուներ դադրին վարելէ ընկերային այս կենսական հարցը :

(Բիւզանդիոն, 1904, Յուշիս)

(1) Sté Gréard : L'éducation des femmes par des femmes. (Paris, Hachette, 1897.)

(2) Hugues-le-Roux : Nos filles. (Paris, Calman Lévy, 1898.)

(3) Ch. Secrétan : Le Droit de la femme, (Paris, Alcan, 1888)

ՆԱՄԱԿ ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԲԻԻԶԱՆԴԻՈՆ» Ի

Թոյլ տուէք որ շնորհակալութիւններս յայտնեմ ձեզ
այն յառաջամտութեան համար՝ որով հաճեցաք, ձեզ
յատուկ պերճախօսութեամբ և մտածմանց ընդարձակու-
թեամբ, ընդլայնել մեծագոյն մասն այն գաղափարներուն
զորս նախագծած էի յօդուածիս մէջ, և ի վեր հանել,
այս կերպով, կարևորութիւնը խնդրոյ մը՝ որ պէտք է
ամէնուն ուշադրութեան առարկայ ըլլայ:

Ձեր հինգշաբթի օրուան յօդուածին մէջ, սակայն,
կէտ մը կայ զոր կարևոր է ճշդել, կարեւոր՝ ոչ այնքան
թերևս, յօդուածին ընդհանուր ոգւոյն ըմբռնման համար
որքան գիտական ճշդութեան տեսակէտով:

Կնոջ սևուական պէտքն այնքան զօրաւոր է, կ'ըսէք,
որքան է էրիկ մարդունը: Բոլորովին ճիշդ է այս: Լօ-
զանի համալսարանին բնախօսութեան ուսուցիչը, Բրօֆ.
A. Herzen, որ Զուիցերիայէ դուրս ալ համբաւ կը վայելէ,
սերական պէտքին վրայ խօսելով կը գրէ. «Այս պէտքն
ընդհանրապէս աւելի սաստիկ է արուին մէջ: Ուստի և
արուն է որ կը հալածէ էգը, կը բռնէ զայն, և կ'ստիպէ
շաղտաբան: Էգը կը փախչի, խոյս կուտայ: Մարդուն
համար ալ այսպէս է. մարդոց, ինչպէս նաև ուրիշ կա-
թրնատուներու համար, սերական պէտքն աւելի ստիպիչ
է, աւելի դժուարաւ յաղթելի՝ էրիկ մարդոց քան կա-
նանց համար: Միանգամայն ֆիզիքական և հոգեկան
նկարագիր մ'է այս. կ'ինը՝ բնականէն՝ աւելի երկչոտ,
աւելի զգոստ, աւելի ամօթխոտ է, և գրեթէ միշտ էրիկ
մարդն է հրապուրողը:» (Dr. A. Herzen: Science et
Moralité, էջ 7):

Ձեր ուշադրութեան յանձնելէ վերջ այս տողերը, կը
համարձակիմ ստորագծել ձեր յօդուածին սա կարևոր

կողմը թէ ընկերային կարկառուն անարդարութիւններէն մէկն է կնոջմէն պահանջել սերային պէտքի գոհացման զսպումը, մինչդեռ հակառակը կը պահանջենք — յանուն առողջութեան — երիտասարդ մանչերէն :

Կինը պիղծ և պատճառ անկման, կինն իբր ստրուկ ապրելու արժանի ու յարմար, կինն էրիկ մարդուն պաշտպանութեան կարօտ արարած մը տկար, — հին ըմբռնում մը, հին անարդարութիւն մ'է այս, որուն հետքերը կը գտնենք Madame de Staëlի քով, որ Մօնղէսքիէօներու Ռուսօներու, Վօլգէաներու, Տիարոօներու, Միռապօներու Տանդօներու, Ռօպէսքիէօներու ըմբռնմանց արձագանգ կ'ըլլայ երբ Mme. Necker de Saussureի գրած մէկ նամակին մէջ կ'արդարացնէ էրկան յայանքները, բայց ոչ կնոջը, «որ պէտք է շատ աւելի ցածուն ըլլայ, որովհետև կինն էրիկմարդուն չափ արդար չի կրնար ըլլալ, որովհետև կնոջ բնութիւնը կատարեալ էրիկ մարդուն բնութեան չափ սուրբ չէ, որովհետև կինն իր ամուսնոյն կը վերաբերի » Եւ, մասամբ ժառանգականութեամբ և մասամբ այ ծուռ դաստիարակութեամբ՝ բարոյական ստորնութեան մէջ մնացած մարդկութեան այս կէսը բարձրացընելու համար՝ Ժ. Սիմօններու, Լապուլէներու, Լըկուվէներու, Լ. Ռիշէներու, Տիւմաներու ըրած ազնիւ մարդօրու ջանքերուն քով շատ անախորժ չեն հնչեր Dr. Rochardներու, Dr. Barbaudներու, Dr. Lefèvreներու ըմբռնումները, երբ առաջինը կը գրէ. «Երիտասարդ մանչերու համար մոլութեան գիտակցութիւնը միշտ կանխահաս է, բայց կարելի չէ դանօնք զերծ պահել անկէ՝ առանց բովանդակ աշխարհէն կղզիացնելու զանօնք : Նոյն բանը չէ աղջկանց համար, պէտք է հեռու պահել զանօնք այն ամէն բանէ՝ որ կրնայ վիրաւորել անոնց ամօթխածութիւնը կամ գիտակից ընել զանօնք մոլութեանց՝ զորս պէտք է միշտ անգիտանան», — կամ երբ միւս երկու

բժիշկները կ'ըսեն թէ ամէն երիտասարդ մանչ լուսեայն արտօնեալ է երիտասարդական անմտութիւններ գործելու : Որքան աւելի իրաւունք կուտանք Բրօֆ . Հէրցլնի՝ երբ կ'ըսէ . «Երիտասարդ մանչը կրնայ հոմանուհիներ ունենալ, հանրատուներ յաճախել, ներելի է, հասկնալի է, բնական է այս : Մինչդեռ աղջիկ մը որ Տէյ աֆֆօ միջն մուրաժ մեղանչած է, այնպիսի պարագաներու մղմամբ՝ որոց չէ կրցած դիմադրել, որոց մէջ նետած են զինքը ստախօտութիւններ, խարէութիւններ, ուրոյ կամ ամուսնութեան սուտ խոստումներ, կ'անպատուելի, կը լքուի, կ'անարգուի . հապա բուն յանցաւորը . անոր ինչ կ'ըսեն . . . : Անարդարութիւն է այս : Պէտք է որ այլը, որ այնքան խիստ է կնոջ համար, քիչ մ'աւելի խիստ ըլլայ ինքզինքին համար : »

(Բիւզանդիոն, 1904 Յուլիս)

ՈՒՂՂԵԼԻ ԲԱՐՔԵՐ

Գաղափարը զամի կը նմանի . պէտք է ծեծել՝ մինչեւ որ միտուի .

Ամբողջ տարի մը հարկ եղաւ սպասել՝ ժամանակ դրանելու համար նորէն ձեռք առնելու, Հոլանդի յօդուածին առթիւ (Բէյլանդիան, թիւ 2394) այն հարցը՝ զոր անցեալ տարի կարեւոր համարեցի յուզել այս սիւնակներուն մէջ (Բէյլանդիան, թիւ 2374 և 2384), եթէ ընթերցողներուս մէջ կան այնպիսիներ որ կը մեղադրեն զիս այս տարապայման կերպով յայտադեալ յօդուածիս համար, «լաւ է անագան քան երբեք» չքմեղանքը կը մատուցանեմ իրենց խոնարհարար, թոյլտուութիւն խնդրելով վերադառնալ հարցի մը, որոյ վրայ որքան ալ խօսուի նորէն քիչ է և որոյ այժմէութիւնը, դժբախտարար, այնքան թարմ է

այսօր որքան էր տարի մ'առաջ : Մնաց որ , քննադատութեան մը պատասխանը որչափ աւելի ուշանայ՝ այնքան աւելի կ'արժէ , որովհետեւ , այս կերպով , մարդս՝ որ դեռ չէ կրցած ի բաց թօթափել նախաւոր մարդէն ժառանգած ցասկոտութիւնը , նպաստաւոր պարագային մէջ կը գտնուի իր անձին իշխելու , իր կրից բռնութեան դիմադրելու , հանդարտութեամբ խորհելու , ընդդիմաբանին կողմէ կամօք թէ ակամայ արձակուած՝ անձնականութիւնը վիրաւորող այսինչ խօսքէն չազդուելու , և քրննելու բնաբանը՝ իր մերկութեանը մէջ :

Խնդիրը , այն ձեւին տակ՝ որով ներկայացուցած էի զայն , որքան կենսական՝ նոյնքան նոր է . և բարդ , և կ'արժէր որ ուսումնասիրուէր իր զանազան կողմերովը : Հո՞րչ կամաւ կը հրաժարի քննելէ անոր բնախօսական կողմը , զոր մասնագէտներու կը թողու : Արի տես որ խընդրոյն հիմը բնախօսական է . անո՛ր վրայ պէտք է հաստատուին մարդկութեան շահերուն ամէնէն աւելի համաձայն , բանաւոր և արդար սկզբունքները զորս կը խուզարկենք : Երեքլնելով անկեղծ խորհրդածութիւնները զորս կրկնած է արդէն զանազան ոլորակներով , Հո՞րչ չի տիռեր դեռ իր լուծման սպասող այս կնճռոտ հարցին վրայ այն նոր լոյսը զոր կը փնտռենք . բնախօսական—ընկերական հիման վրայ կատարուած ուսումնասիրութիւններն են որ պիտի կրնան առաջացնել այս կարեւոր հարցը և մտցնել զայն այն շրջանին մէջ զոր կը հետաքննեն անկեղծ և մարդասէր ընկերաբաններ , իմաստասէրներ և մանկավարժներ : Եթէ զանց առնենք այդ բնախօսական հիմը , մեր ակռաներուն տակ չգտնուած մէկ բանը ծամած կ'ըլլանք :

Խնդիրը քննել փորձած էի այդ հիման վրայ , թելադրուելով և առաջնորդուելով անոր նուիրուած նորագոյն ուսումնասիրութիւններէն , և ի մէջ այլոց , A. de Mor-

sierի Le droit des Femmes et la Morale intersexuelle հիւթեղ հատորիկէն, զոր դարձեալ ինձ առաջնորդ պիտի ունենամ յետագայ յաւելուածական խորհրդածութեանցս մէջ, զօրացնելու համար արդէն պարզած գաղափարներս և ցրուելու համար այն թիւրիմացութիւններն որոցմէ կը թուի թէ զերծ չեն մնացած անոնք:

Ունախ և առաջ, կ'ուզեմ դիտել տալ որ, եթէ ամուրիութեան ի նպատակս խօսած եմ, մտքէս չեմ անցուցած երբեք ընդդէմ ամուսնութեան խօսիլ: Բացայայտ կ'երևի այս իրողութիւնը նախորդ յօդուածիս առաջին տողերուն մէջ իսկ: Չեմ ըսած թէ ամուրիութիւնը, «կշք», լաւագոյն է քան ամուսնութիւնը. ամուլ անձնաչարչարութեան վարդապետութիւնն ալ չեմ քարոզած: Անկեղծօրէն կը հաւատամ թէ ընտանիքն է և պարտի ըլլալ ընկերական բջիջ մը: Բայց ամուսնութիւնը, արդի պայմաններով, յարմար չի թուիր երաշխաւորելու կենսականութիւնը և բարոյական արժէքն այդ բջիջին՝ որոյ ամբողջութիւնն անհրաժեշտ է մարդկութեան յառաջախաղաց կեանքին համար: Բարեփոխութիւններ մտցնել հարկ է ամուսնութեան մէջ, որպէս զի իրօք օգտակար հաստատութիւն մը ըլլայ այն:

Գալով սա կարծիքին թէ ամուրիութիւնն ապօրէն կենակցութիւն մը կ'ենթադրէ ինքնին և անպատճառ, պէտք է վերստին քննել զգաստութեան կարելիութեան խնդիրը, որոյ մասին թերահաւատ կը թուի Հոբոյ, մասնաւանդ քաջակազմ անձերու համար և 25էն 45 տարեկան հասակին մէջ: Ընդդէմ գիտուն հեղինակութեանց, որոնք կողմնակից են զգաստութեան կարելիութեան, յարգոյ յօդուածագիրը կը դիմէ Պօղոս առաքեալի վկայութեան՝ որոյ ինչ ինչ խօսքերէն կը մակաբերէ թէ առաքեալը չարաչար կը նեղուէր բացարձակ ժուժկալութենէն և ներքին պայքարի մը մէջ էր ինքն իր անձին

դէմ. Բայց նախ՝ պայքար անկարելիութիւն չի նշանակեր. բարոյական մարդը պայքարի մէջ է իր կիրքերուն դէմ. պարկեշտ մարդու յատկանիչն է այն և առաւելութիւնը. մարդկութեան բարեշրջութեան պայմանն է այն. Յետոյ, մէկ երկու օրինակով բան չապացուցուիր գիտութեան մէջ: Այնպէս որ, Հոբոյ պիտի ներէ ինձ՝ եթէ, մինչև որ գիտական համոզիչ հակառակ փաստեր մէջ չբերուին, աւելի վստահութիւն ունենամ այն բաղմաթիւ գիտուններուն վրայ՝ որոնք, միջավայրին պատշաճելու կենսաբանական օրէնքին վրայ հիմնուելով, զգաստութեան կարելիութիւնը կը յայտարարեն, քան Պօղոս առաքելու լին վրայ: Այդ գիտունները կ'ըսեն թէ սերային կիրքը, ուրիշ ամէն կիրքի պէս, թելադրութեան կամ մանաւանդ ինքնաթելադրութեան խնդիր է, և, հետեւաբար, ժուժկալութեան կարելիութիւնն ամեն բանէ առաջ կախում ունի կամքի ոյժէ: Կիւիյօ, վաղամեռիկ իմաստասէրն հանճարեղ, ցոյց տուած է բնագոյն և թելադրութեան սերտ առնչութիւնը, նմանութիւնը: Ամէն թելադրութիւն նորածին բնագոյ մ'է, տարրական կամք մ'է: Եւ ամէն բնագոյ ինքզինքը կ'սպաննէ կը ջնջէ՝ երբ գիտակցական վիճակի կ'անցնի: Բնախօսական հոգեբանութիւնը ցոյց կուտայ թէ կիրքերը կը դաստիարակուին բանականութեան, ընդհանուր դաստիարակութեան և ունակութեան սողկեցութեան շնորհիւ: Սերային բնագոյը — և կնոջն էրիկ մարդուն բնագոյէն աւելի — կրնայ սանձուիլ, կառավարուիլ և որոշ նպատակի մը պատշաճեցուցուիլ: 1902 տարւոյ Սեպտեմբերին, ամբողջիտեան ախտերու նախապահեստ զգուշութեան համար ի Պրիւսէլ գումարուած միջազգային ժողովին մէջ, ոչ մէկ գիտուն ընդդէմ խօսեցաւ զգաստութեան ընկերական և բժշկական առաւելութեանց: Դիտնանք ինքզինքնիս ազատել սերային զգացումները գրգռող դաղափոսրներու տիրապետութենէն,

գիտնանք ժուժկալել, կարելի եղածին չտի, գրգռիչ սնունդներէ, ոգելից ըմպելիներէ, և զգաստութիւնն անկարելի պիտի չըլլայ: Եղջերուաքաղ չէ այս ամէնը, եթէ գիտութիւն եղջերուաքաղ չի նշանակեր: Ինչ որ բացառութիւն է, ոչ թէ զգաստութեան կարելիութիւնն է, այլ զգաստութեան անկարելիութիւնն է. և այս՝ ըստ գիտութեան, և ոչ՝ ըստ ամուրիներուն: Ուրիշ բան է ըսել դժուար է, ուրիշ բան է ըսել անկարելի է: Դժուար, այո՛, որովհետև ոգորիլ պէտք է ստացուած բնագղի մը դէմ, զոր սնուցանող և գրգռող պատճառներ չեն պակսիր ժամանակակից ընկերութեան մէջ (կեանքի տափակ, մարմնապաշտ ըմբռնում, աղտոտ գրականութիւն, բարոյապէս ինկած ընկերներ, լպիրշ տեսարաններ): Դժուար, այո՛, որովհետև տղայ կամ հիւանդ կը կոչուի կարգ մը անձանց կողմանէ այն երկտասարդն՝ որ զգաստ կեանք մը կ'ուզէ վարել, և որ կամքի բաւական կորով չունի դիմադրելու համար ապուշ հեզնութեանց և իր համոզումներուն միայն անսուլու համար: Դժուար, այո՛, կնոջ կոչման մասին տիրող սխալ ըմբռնման մը հետեւանքով: Դժուար, այո՛, այս և ասոնց նման բնախօսական և հոգեբանական — ընկերային պատճառներով. բայց անկարելի ըլլալուն չենք համոզուած. ընդհակառակը: Բարեկամներէս ոմանք կ'առարկեն թէ ինչո՞ւ ուրեմն հանրատուները թոյլատրուած և նոյն իսկ պաշտպանուած են, եթէ սերային զգաստութիւնն առողջութեան անմլաս է: — Տէր Աստուած, ընկերութեան մոլորութիւններէն մէկն է անշուշտ գոյութիւնն՝ այդ տուներուն, որոց ոմանք իբր «հարկաւոր չարիք» կ'արդարացուին, զգաստութեան անկարելիութեան կողմնակիցներուն կողմանէ, իսկ ուրիշներ՝ բացարձակապէս անարդարանալի, քսամնեցուցիչ հաստատութիւններ են: Եւ ներելի է հաւատալ թէ օր մը ընկերութիւնը պիտի ուղղէ իր այդ մոլորութիւնն ալ:

Մեծն-Բրիտանիոյ, Նորվեկիոյ, Տանըմարքալի, Հոլանտաի, Զուիցերիոյ մէջ Պետութիւնն առաւել կամ նուազ խստութեամբ կ'արգիլէ հանրային պոռնկութիւնը: Ռուսիոյ և մանաւանդ Ֆրանսայի մէջ ալ նոյն արդիւնքին հասնելու համար ջանքեր կ'ըլլան: Fédération abolitionniste internationaleի աշխատութեանց հետեւիլ կը բաւէ այս մասին համոզում գոյացնելու համար: Մնաց որ, եթէ կարելի իսկ ըլլայ այդ տուներէն անվնաս դուրս ելնել՝ ֆիզիքապէս, բարոյական վնասը կայ ու կը մնայ միշտ: Պոռնիկն անկեալ մ'է, դո՛հ մ'է յաճախ, ամէն պարագայի մէջ արգահատելի էակ մ'է, և շատ բթացած խիղճ ունենալու է մարդ՝ քաջալերելու համար ընկերական այս դարհուրելի աղէտը, ա՛լ աւելի արիւննելու համար ընկերութեան այդ վէրքը լայնափեռել:

Եւ եթէ, տուեալ պայմաններու մէջ, զգաստութիւնն անկարելի չէ և ոչ ալ վնասակար, ընկերային առողջապահութիւնը՝ մէկ կողմէն, արդարութիւնը՝ միւս կողմէն, պարտք կը դնեն մանչ երիտասարդներու վրայ՝ իրենց ամուսնութեան օրը կոյս ներկայանալ կոյս աղջկան: Երկու տեսակ բարոյական պէտք չէ գոյութիւն ունենայ, մէկը մանչ և միւսն աղջիկ երիտասարդներու յատուկ: Անիրաւութիւն է, նոյնպէս, նուազ անաչառ ըլլալ էրկան քան կնոջ հանդէպ՝ ամուսնական անհաւատարմութեանց մասին: Գաղափարաց այս կարգին մէջ, պոռնկութեան դէմ դրուած օրէնքները բարեփոխութեան կը կարօտին:

Գալով անոնց, որ ամուրի մնալու ստիպուած են այս կամ այն պատճառաւ, դարձեալ կը կրկնեմ թէ այդպիսիք ընկերային աստիճանին վրայ ստորագաս նկատելու չեն ինքզինքնին և նկատուելու չեն ուրիշներէն: Ամուրին ալ ամուսնացեալին չափ օգտակար դեր մը կրնայ կատարել ընկերութեան մէջ: Համակարծիք չեմ Հոլլանդի, որ ամուրիութեան մէջ կը տեսնէ ընկերական վտանգ մը

և Չատագովել կը թուի է՛նչ ըլլայ ըլլայ՝ «Տոսանուլի վարդապետութիւնը (Տես մանաւանդ Բէ-շնդիւն, թիւ 2249) . կը խոստովանիմ թէ ճիշդ այդ վարդապետութիւնն էր որ գրգռեց առաջին յօդուածս : Ընտանեաց մայրերու համաժողովին եռամեայ ժողովին մէջ Միացեալ-Նահանգաց Նախագահին վերջերս արտասանած ճառն , որով Բուզվէլդ կը բողոքէ մալդուսականութեան և պսակալուծութեան դիւրութեան դէմ , չի փոխեր , նոյնպէս , համոզմանս էութիւնը , որովհետեւ Նախագահը , իր բանախօսութեամբ , Չատագոված է աղէկ պայմաններու մէջ կրնաքուած ամուսնութիւնները , և այս մասին , ամեն ողջամիտ մարդ այդ դատին պաշտպանն է : Բայց կը կրկնեմ թէ ամուրիութիւնը շատ աւելի համաձայն է ընկերութեան օգուտներուն՝ քան թէ յոռի պայմաններու մէջ կնքուած ամուսնութիւնը , և եթէ ամուսնութիւնը մէկ կերպ լուծում մ'է , ամուրիութիւնն ալ ուրիշ կերպ մէկ լուծումն է խնդրոյն : Աւելին կայ . ինչպէս ըսած էի նախորդ յօդուածիս մէջ , ըստ բնախօսութեան , սերային ժուժկալութիւնը , ջնջելով ջղային թրթուումներն և պահեստի դնելով գործարանաւոր արտադրութիւններ , կը զարգացնէ ուղեղային և հոգեկան , և անշուշտ արիւնային ոյժեր , որոնք կուգան նոր զօրութիւն մը տալ էակին կենսական տարրերուն և հաւանականաբար զարգացնել բարոյական զօրութեան նոր ոյժեր :

Աղջիկները մանաւանդ պէտք է գիտնան թէ իրենք միմիայն զաւակ հասցնելու համար ստեղծուած չեն . էրիկ մարդիկ հնարած են այս վարդապետութիւնը , որպէս զի գոհացում տան իրենց կիրքերուն , ռանակոխ ընելով կնոջ բարոյական աղատութիւնն և արժանապատուութիւնը : Այս խօսքերով մեր էութեան մէջէն կնոջ տարագրումը չէ որ կը քարոզեմ . . . Պօղոս առաքեալի մը պէս : Ըսածս սա է թէ ամուսնութեան միակ և նոյն իսկ պլխաւոր

նպատակ ընտրուելու չէ սերային կիրքերու գոհացումն և ոչ իսկ զաւակ հասցնելը : Ամուսնութեան նպատակը զաւակ հասցնել չէ՝ հապա ի՞նչ է . կը հարցնէր օր մը Հ-րոյ բորբոքած շեշտերով (ԲՆ-ՆՆԳԻՆ, թիւ 2249 և 2584) : Ամուսնութեան էական նպատակը պէտք է ըլլայ առն և կնոջ գործակցութիւնը , որովհետեւ երկու տարբեր սեռերու գործակցութիւնը կ'աւելցնէ արդիւնքը : Կինը կ'ամբողջացնէ այրը , չափաւորելով մանաւանդ տնոր արուական անձնասիրութիւնը , անոր կիրքերը : Առնակինը պէտք է տէրը մնայ իր մարմնոյն և ինքն իր կամօք և զիտակցարար հուանի մայր ըլլալ :

Անճիտման վտանգը : Այս կողմէն ալ վախնալու բան չկայ , կարծեմ : Զաւակ ունենալու բնազդը պիտի մնայ միշտ : Շատ շատ ծննդականութիւնը միայն պիտի նուազի , բայց ազգի մը բարոյական զօրութիւնը տարեկան ծնունդներու գումարովն հաշուել բանաւոր չթուիր : Յեղին արժէքին վաւերացումը (sanction) թիւը չէ : Մարդը՝ թուաբանական միութիւնն է . զօրութեան արժէքը՝ ցեղը , տեսակն է : Եւ ո՞վ պիտի կրնայ ապացուցանել թէ կարեւոր է որ ցեղը ծաւալի այսինչ կամ այնինչ համեմատութեամբ : Ո՞վ պիտի կրնայ ապացուցանել թէ մեր մոլորակին վրայ ծնանելի կեանքին պատասխանատու ենք : Եթէ Բուզվէլդ նախագահը , իր այն բանախօսութեան մէջ որուն կ'ակնարկէի վերը , այնպէս կը նկատէ թէ միայն երկու զաւակ ունեցող ծնողք ըստ բաւականի չեն կատարած իրենց պարտականութիւնը մարդկութեան հանդէպ , անշուշտ ինքը խնդիրը տարբեր տեսակէտէ մը կը քննէ :

Ամուրիութեան թշնամիներուն մէկ ուրիշ փաստն ալ սա է թէ՛ ամուրիութիւնն սպօրէն կենակցութեան և , հետեւաբար , ընկերական բարուց քայքայման կ'առաջնորդէ : Բացատրեցի արդէն թէ ամուրիութիւնն անպատ-

ճառ ցոփակեցութիւն չենթադրեր : Ու մի՛ ըսէք ի յառաջագունէ թէ տեսական գաղափար մը , իտէալ մը , եղջերուաքաղ մ'է լոկ այս , գործնականին մէջ անիրականալի :

Կա՛մ պէտք է ապացուցանել թէ գաղափարն ինքնին , սկզբամբ , անիրականալի է , և այն ատեն — բայց ա՛յն ատեն միայն — պէտք է մէկ կողմ նետուի այն , և կամ , իբր ճշմարիտ բարեկամ մարդկութեան , ջանալու է , բանիւ և գրով , տեսականը գործնական ընել , գաղափարը իրողութեան փոխել , բարուց մէջ մտցնելով զայն :

Շարունակելով ուսումնասիրել ամուսնութեան բարեշրջութիւնը , ուշադրութիւն դարձնելով մեր շուրջն անցած դարձած ընկերական կարեւոր չարիքներու , առողջական քայքայիչ զեղծումներու վրայ , որոնք մեր դոյութեան կ'սպառնան , ուսումնասիրելով իրենց չարժաոյթներն և դարմաններուն վրայ խորհելով , դիտել տուած էի նաև նախորդ յօդուածիս մէջ , և դարձեալ դիտել կուտամ թէ պատկալութեան կնճառտ խնդիրը պէտք է մանր ուսումնասիրուի և բարեփոխուի : Այս խնդրոյն նուիրուած լուրջ և անկեղծ հրատարակութիւններ և բանախօսութիւններ բազմապատկուելու են : Ամուսնական երջանկութեան միջոցը պէտք է փնտուել ոչ թէ դասող օրէնքներու մէջ , այլ մանչ և աղջիկ պատանիներու արրուած բանաւոր դաստիարակութեան մէջ , գիտակից ընելով զսոնոնք այս նկատմամբ իրենց վրայ ծանրացող բարոյական պատասխանատուութեանց : Մտողք և ուսուցիչները մեծ պարտականութիւն մ'ունին կատարել հոս : Ճամբայ ելնելով բոյսերու և անասուններու սերումը վարող երեւոյթներէն , շատ պարզ , շատ բնական կերպով և մանաւանդ մեծ գոգով պէտք է խելամուտ ընել մանչ և աղջիկ պատանիները մարդկային ծննդական երեւոյթներուն , զգաստութեան պէտքին և ամուսնութեան բարեշրջութեան : Սխալ և ցաւալի ըմբռնումով մը ծնողք

և ուսուցիչներն ամօթ կը համարին այս նիւթերուն վրայ խօսիլ պատանիներուն : Ի՞նչ կ'ըլլայ հետեւանքը . կա՛մ պատանիներն երկար ատեն կ'անդիտանան այսքան կարեւոր բան մը , կա՛մ իրենց ընկերներէն կը սորվին զայն՝ գէշ ու սխալ . երկու պարագաներն ալ մնասակար : Շատ գիրքեր կան արդէն հրատարակուած այս նիւթին վրայ . յանձնարարելի են մասնաւորապէս՝ *L'école de la pureté, par M^{me} Pieczynska. — Hygiène et Morale, par le Dr. Good. — Science et moralité, par le Dr. Herzen, ևն. ևն. :*

Բիւզանդ էֆ . Քէչեանի հետ (*Տես Բիւզանդիոն , թիւ 2556*) եւ ալ սա համոզումն ունիմ թէ վեներախտի դէմ դրուած զսպող և զգուշական միջոցներն անզօր են կամ գոնէ անբաւական , նոյն իսկ եթէ այնքան խիստ բլլան անոնք որքան են Շուէտի մէջ , ուր կառավարութիւնն հսկողութիւն ի դորժ կը դնէ նաև արանց վրայ : Սողօնի օրէն ի վեր ամէն տեսակ զսպող միջոցներ փորձուած են ամէն երկիրներու մէջ , բայց ոչ մէկ ատեն և ոչ մէկ տեղ փափարուած արդիւնքը կարելի եղած չէ . ձեռք ձգել : Իսկ թէ կառավարութեանց կողմէ հրամայուած այս զսպող միջոցները ինչ խժոժութեանց և ինչ անիրաւութեանց տեղի տուած են(1) , թէ նոյն իսկ վարչութեանց միջամտութիւնն այս խնդրոյն մէջ ո՛ր աստիճան արդարանալի և արդիւնարար բան մ'է , այդ ալ ուրիշ հարց մ'է , ուրոյն ուսումնասիրութեան կարօտ : Կ'արժէ կարդալ այս մասին , ի մէջ այլոց , Yves Guyotի աղէկ խորհուած և աղէկ զգացուած հատորը , *La prostitution : Բարոյական միջոցներէն միայն կարելի է իրական արդիւնք սպասել . դաստիարակութիւնն է որ մարդկութիւնը պիտի փրկէ իրեն սպառնացող այդ պատուհասէն : Իպրօցը պարտի ցոյց տալ վեներախտի վտանգները , համոզուած և զգա-*

(1) Այս մէկ երկու տողերը ջնջուած էին ձեռագրին մէջէն :

յուն շեշտերով ի վեր հանել «ուրախութեան աղջիկ»ներու տխուր, արգահատելի վիճակը, արդարութեան զգացումն յուզել իր դեռատի ունկնդիրներուն մէջ՝ ընկերութեան այդ եղկելի զոհերուն հանդէպ:

Մասնաւորելով խնդիրը կանանց վրայ, պէտք է շեշտել սա կէտը թէ կինը, գերազանցապէս երեւակայող և երազող էակ, պէտք ունի լուրջ դաստիարակութեան մը, որպէս զի իր վառ երեւակայութիւնը յարմար ուղղութիւն մ'ստանայ: Առանց այս դաստիարակութեան, երեւակայութիւնը, որ թանկագին ոյժ մ'է կեանքին համար, կ'ըլլայ ի՞նչե՞նչ և կը դառնայ կեանքի թշնամին: Առանց այս դաստիարակութեան, երազը իբր իրականութիւն պիտի ընդունին աղջիկները: Յարդ միջակ դասակարգի աղջիկներէն պահանջուեցաւ պարել, հագուել, դաշնակ զարնել, մտացի կերպով խօսիլ, մարդու մէջ նշնել, տանտիկնութիւն գիտնալ, իրենց մարմնոյն գեղեցկութեան հոգ սանիլ, անպատկառ ձեւերէ և խօսակցութիւններէ զզուշանալ: Իսկ եթէ օրիորդը պատկանի հայ-լայճին, քիչ-քիչ և ազատ խօսակցութիւններ կանոնական են ընդհանրապէս: Չեմ խօսիր գործաւոր աղջիկներու և սպասուհիներու վրայ, որոնք յաճախ անխիղճ երիտասարդներու զոհերն ըլլալու կոչուած են: Ամուսնութեան վրայ խօսիլ աղջկանց, ամուսնական պատասխանատուութեանց իրազեկ ընել զանոնք, ի՞նչ գայթակղութիւն՝ միջակ դասակարգի ծնողաց համար, ի՞նչ գուեհիկ բան բարձր դասու ծնողաց համար: Այդ՝ ամուսնութիւնը խորհրդաւոր անձանօթը պէտք չէր ըլլար օրիորդին համար որ կ'ուռաջնորդուի ի պսակ: Լուրջ դաստիարակութիւն մը պէտք է հաւասարակշռէ կնոջ զգացումները՝ դատողութեան միջոցաւ: Կիներէն մեծագոյն մասին համար գաղտնիարները միւսնոյն մակարդակին վրայ կը գտնուին: սկզբունքին կրկնումը (pétition de principe) կանոնցի իմացակա-

նութեան սովորական թերութիւնն է : Կնոջ երեւակա-
յութիւնը բանականութեան հակակշռէն զերծ է : Միայն
գեղեցկութիւն և սրտի ազնուութիւն պէտք չէ պահան-
ջել կիներէն , այլ նաև ողջամտութիւն : Այն երկիրներուն
մէջ , ուր առիթ չունի և չէ վարժուած իր անհատակա-
նութիւնը ցոյց տալու , կիներ շատ աւելի դիւրազգաց և
նոյն իսկ զգայասէր կը մնայ : Անլիւսաքսոն երկիրներու
մէջ , կիներ շատ աւելի անհատականութիւն ունի , շատ
աւելի խորհիլ գիտէ , քան լատին երկիրներուն մէջ : Եւ
այս լուրջ դաստիարակութիւնը , որոյ շնորհիւ օրիորդը
գիտակից պիտի ըլլայ ամուսնական պատասխանատուու-
թեանց և պարտականութեանց , պահանջելի է ոչ միայն
յօգուտ ընկերութեան՝ այլ նաև կնոջ շահերուն համար :
Կիներ կը կարծէ թէ իր գեղեցկութիւնը անդիմադրելի ոյժ
մ'է , որուն առջև կուգան կը փշրին առնական առաւե-
լութիւններն և յաւակնութիւնները : Կիներ կ'երեւակայէ
թէ իր գեղեցկութեան շնորհիւ կրնայ բոլոր իր պահան-
ջումները գոհացնել տալ : Դարաւոր ցաւալի փորձեր տա-
կաւին չեն սորվեցուցած իրեն թէ , ընդհանրապէս , որքան
աւելի յաղթական ըլլայ սիրոյ մէջ՝ այնքան աւելի պարտ-
եայ մ'է՝ ընկերապէս :

Աղջիկները պէտք է անկախ դիրք մը ձեռք բերեն
արհեստ մը սորվելով , որպէս զի ամուսնական խնդրոյն
մէջ կարենան իրենց ազատութիւնը պահել , այսինքն
իրենք որոշեն ամուսնանալ կամ ոչ , և ամուսնանալ
իրենց ընտրած անձին հետ : Ամուսնութիւնը պէտք
է դադրի առուտուր մ'ըլլալէ , շահու վրայ հիմնուած ,
կամ կոյրդկութեան : Որքան օգտակար է որ ծնողք
ուշադրութեամբ կարդան այն գեղեցիկ , ապրուած և
զգացուած անկեղծ հատորը՝ զոր վերջերս հրատարակեց
պատուական կին մը (Une jeune fille, par M^{me} Renard.
Bibliothèque de la Femme Nouvelle) : Ու որքան փա-

փառքելի է որ մեր օրիորդները կարգան սա մէկ ուրիշ գիրքը՝ La princesse, par Sophie Urbanovska (A. Colin), ուր պիտի գտնեն հետեւելի ոքանչելի օրինակ մը։ Les Annales politiques et littérairesի ընթերցողները թերևս կը յիշեն այն սարսուցուցիչ եղելութիւնը — մայրը պատճառիւ աղջկան բարոյական անկման — զոր անցեալ տարի Cousine Yvonne կը պատմէր յիշեալ հանդէսին 1103րդ թիւին մէջ։

Այդ արտօնը ոչ հաղուագիւտ և ոչ ալ բացառիկ բան մ'է գուցէ։ Միջոցներ խորհելու է օրինաւոր յարաբերութիւններ հաստատելու երկու սեռէ երիտասարդներու միջև։ Գիտեմ թէ շատ փափուկ խնդիր մ'է այս, գիտեմ թէ մանչ և աղջիկ միասին դաստիարակելու խնդիրն առ այժմ աւելի հակառակօրդներ ունի քան կողմնակիցներ։ Սեւ Հորոյ իսկ, որ կը սոսկայ coéducationի այս դրութեանէն (Բի-շանդիան, թիւ 2249), չընդունիր սակայն թէ ամուսնական դժբախտութեանց գլխաւոր պատճառներէն մէկն այն է որ՝ երիտասարդ մը և երիտասարդուհի մը, առանց իրարու բնութիւն ճանչնալու, առանց փոխադարձ վստահութիւն ներշնչած ըլլալու միմեանց, իրարու հետ կ'ամուսնանան, իբր թէ ամուսնութիւն խաղային։ Սեւ կրբ բնաւորութեանց անյարմարութիւնն ալ կ'ուզէ պսակալուծութեան պատճառներուն մէջ դասել, յարդոյ յօգուածագիրը չի՞ կարծեր թէ պսակալուծութեան պատճառներէն մէկը յուծուած պիտի ըլլար՝ եթէ ամուսնացողները նախապէս իրար ճանչցած ըլլային։ Հապա յէշէ + էրթիէն։ Հետաքրքրաշարժ պիտի ըլլար գիտնալ թէ ո՞ր դրութեան անպատեհութիւններն աւելի են. անձանօթներո՞ւ միջև կնքուած ամուսնութեան թէ երիտասարդներու և երիտասարդուհիներու միջև հաստատուած պարկեշտ յարաբերութեանց։ Այս տեսակ վիճակագրութիւն մը կը կարծեմ թէ այլապէս օգտակար պիտի ըլլար

քան այն որ, ըստ փափաքանաց Հօրոյի (ԲՆ-ՂՆԴԻՆՆ, ԹԻԼ 2249) մեր աչաց առջև պիտի պարզէր թէ Պոլսերնակ Հայոց մէջ ո՞րքան ամուսնութիւն, ո՞րքան որդեծնութիւն կը պատահի տարին և ո՞րքան մահ, և հին ատենն ո՞րքան կ'ըլլար, թէ մեր ժողովրդեան չափահաս մասէն ո՞րքանն ամուսնացեալ է այսօր, ո՞րքանն ամուրի :

1902 տարւոյ Սեպտեմբերին ի Պրիւսէլ դումարուած ժողովը՝ առողջական և բարոյական նախապահեատ զգուշութեան համար՝ փափաք կը յայտնէր որ երկու սեռերու առնչութեանց վերաբերող խնդիրներու բանաւ որ և յառաջախաղաց դաստիարակութեան հարցը, առողջապահական տեսակէտէն, կրթութեան ամէն աստիճաններուն ուշադրութեան առարկայ ըլլայ : Յանձնաժողով մը կազմուեցաւ ուսումնասիրելու համար խմբագրութիւնն երկասիրութեան մը՝ որ, ներշնչուելով արդէն գոյութիւն ունեցող հրատարակութիւններէ, իբր ուղեցոյց պիտի ծառայէ դաստիարակներուն, և այդ գաղափարներուն ծաւալման միջոց մը պիտի ըլլայ : Կը մաղթեամ որ մեր դաստիարակներն ալ դիտնան օգտուիլ այս կենսական խրնդրոյն նուիրուած հրատարակութիւններէն : Ուսուցիչներն են որ այս գաղափարները տեսականէն պիտի իջեցնեն գործնականին մէջ. ուսուցիչներու ձեռքն է այնպէս մը ընել որ Ի-Դ-ՔԻ, եղջերուաքաղ չըլլան այս գաղափարները, այլ՝ տակաւ առ տակաւ մտնեն բարքերուն մէջ և ըլլան այնքան սովորական՝ որքան են դեռ այսօր հին դարերու նախապաշարումներն ու անիրաւութիւնները : Մարդոց մեծագոյն մասին տկարութիւնն է կանխակալ սովորութեանց վրայ հանգչիլ, բարեչրջութեան պահանջներէն սոսկալ և արհամարհել զանոնք : Դաստիարակը պիտի շունենայ այդ տկարութիւնը, որովհետև դաստիարակը սովորական մարդ մը չէ : Մէկ կողմէն կարելի եղածին չափ քիչ օտար (պաշտօնական և ոչ-պաշտօնական)

միջամտութիւն, միւս կողմէն ամուսնութեան վրայ աւելի լայն, աւելի արդար, մէկ խօսքով, աւելի նոր ըմբռնում, ահա՛ այն երկու էական բարեփոխութիւններն որոնք պէտք է մտնեն մտքերուն և բարքերուն մէջ, եթէ կուզենք որ ամուսնութիւնն ըլլայ իրօք օգտաշատ բան մը անհատին և համայնքին համար .

Թավչանճեան էֆ .ի մարդասիրական ղգացմանց բացարձակապէս արժանի պիտի ըլլար մրցման դնել հետեւեալ հարցերը .

1 . Ամուսնութիւնն անհրաժեշտ է ֆիզիքական տեսակէտով :

2 . Ամուրին, ընկերապէս, ստորագոյս մ'է ամուսնացեալէն :

3 . Իրաց բնութեան մէջ է որ կինը — իբր «առն յաւելուածական ոսկոր» — ստորագոյս մնայ ամուսնութեան մէջ, ըլլայ էրկանը հլու կամակատարը :

4 . Օրէնքը մինչև ո՞ր աստիճան պէտք է միջամտէ ամուսնական խնդրոց մէջ :

(Բիւզանդիոն, 1905, Յուլիս)

Է Ս Բ Է Ռ Ա Ն Դ Օ

Ներկայ Օգոստոս 28էն Սեպտեմբեր 6 (Ն.Տ.), Զուիցերիոյ մէջ տեղի կ'ունենայ էսրէռանդօի երկրորդ Համաժողովը : Երբ, մէկ քանի տարիներ առաջ, լսեցինք միջազգային այս նոր լեզուին հնարումը, քիմիժաղ մը երեցաւ մեր շրթանց վրայ : Կը խորհէինք թէ էսրէռանդօն աւելի յաջողութիւն չպիտի գտնէր անշուշտ քան իր հանգուցեալ քոյրը՝ վօլաբիւքը : Անկէ ի վեր, Տքդ . Զամէնհօֆի հնարած լեզուն իր ճամբան շարունակեց առանց կար-

կաշեւու, լրջամիտ անձի մը պէս, և եկաւ օր մը որ ինքզինքն հարկադրեց մեր ուշադրութեան: Կը կարծեմ թէ կ'արժէ որ Բի-շանդի-նի ընթերցողներն ամփոփ և որոշ գաղափար մ'ունենան անոր վրայ:

Տիեզերական լեզուի մը առաջին գաղափարն յղացաւ Լայպնից՝ որ, 1666ին, զայն հրատարակեց De arte combinatoria անունով: Լայպնիցէն վերջ Քօնտօրսէ, 1794ին, նորէն զբաղեցաւ այս գաղափարով իր Esquisse d'un tableau historique des progrès de l'esprit humain գործին մէջ: 1818ին, Պիւռես անուն գերմանացի մը կարծեց իրագործել նոյն գաղափարը Pasilalie անուն երկովը: Վերջապէս 1825ին, Վիէննայի մէջ, Շդէդի, իր Lingua universalis գործին մէջ, նորէն ձեռք առաւ խնդիրը՝ որուն գործնական լուծում մը կարծեց տալ, 1874ին, Շլէյըր ժողովրդապետը, իր Grammatik der Universalsprache Volapük երկասիրութեամբը: Վօլաբիւքին յաջորդեց էսքէռանդօն, որ, ինչպէս քիչ մը վերջը պիտի տեսնենք, շատ աւելի նպատակայարմար հիմերու վրայ հաստատուած է: Հետաքրքրաշարժ զուգադիպութեամբ մը Տքդ. Զամէնհօֆ՝ Ռուսիոյ մէջ և տը Պօֆօն՝ Ֆրանսայի մէջ, միևնոյն ատեն աշխատած են նոր լեզուի մը հնարման՝ ստանց տեղեկութիւն ունենալու իրարու աշխատութեանէն: Այս վերջինը ջնջեց իր աշխատութիւնները, երբ իմացաւ թէ Տքդ. Զամէնհօֆ աւելի առաջ տարած է իր ձեռնարկը: Արդէն յիշուած հեղինակներէն զատ, Պէքըն, Բասքալ, Տէքաուդ, Լօք, տը Պոսս, Քօնտիյեաք, Վօլդէո, Տիտրոս, Վօլնէ և ասոնց հետ նշանաւոր բանասէր Պիւռնուֆ, Կոիմ և Մաքս Միւլլէո հաւատք ունեցած են միջազգային լեզուի մը կարելիութեան վրայ և ցոյց տուած են այն պայմանները՝ որոցմով այդպիսի լեզու մը կրնայ գոյութիւն ունենալ: «Արուեստական լեզուի մը գաղափարը կը հեգնեն, կ'ըսէր Մաքս Միւլլէո, բայց եթէ այս

հարցը իրօք այլանդակ ըլլար, Լայպնիցի պէս մարդ մը պիտի փնտռէ՞ր անոր լուծումը . . . : Կը հաւաստեմ թէ այդ արուեստական լեզուն աւելի կանոնաւոր, աւելի կատարեալ, աւելի դիւրասանելի պիտի ըլլար քան ուէ բնական լեզու :» Եւ Էռնէսդ Նավիլլ, Բարիզի Académie des Sciences Morales et Politiquesի մատուցած տեղեկագրին մէջ կ'ըսէր թէ՝ «Միջազգային լեզուի մը հաստատութիւնն արդի քաղաքակրթութեան պէտքերէն մէկն է :» Եթէ այս պէտքն իրողութիւն մ'է, այնքան աւելի զգալի կը դառնայ այն՝ որքան աւելի կը բազմանան ժողովուրդներու յարաբերութիւնները, և զարմանալի չէ որ, հակառակ այն անյաջողութեանց՝ որոց մատնուած էին, առաւել կամ նուազ, այս մտօք արդէն կատարուած փորձերը, Տքդ. Չամէնհօֆ նոր փորձի մը ձեռնարկած ըլլայ, ուսումնասիրելէ վերջ այն պատճառներն որոնք ամլութեան դատապարտած էին իր նախորդներուն ջանքերը և իր հնարած լեզուն, որ տեսականապէս պատրաստ էր արդէն 1878ին : Դժուար է հաւատալ թէ՛ այն պայմաններուն մէջ ուր կը ներկայանայ, էսքէռանդօն չյաջողի հասնիլ իր նպատակին : Այդ պայմանները կրնան երկուքի վերածուիլ :

1. Էսքէռանդօն ցնորական նպատակը չունի տիեզերական լեզու մ'ըլլալու, այսինքն բոլոր միւս լեզուներուն տեղն անցնելու և ինքն ըլլալու միակ լեզուն՝ զոր գործածէ համօրէն մարդկութիւնը : Էսքէռանդօն ուրիշ բան չէ բայց եթէ օժանդակ լեզու մը, սահմանուած՝ դիւրացնելու միջազգային յարաբերութիւնները զանազան երկիրներու վաճառականներուն, դիտուհներուն, դրօսաչրջիկներուն : Շատ կարևոր կէտ մ'է այս, և էսքէռանդօն յաջողութեան լաւագոյն պայմանը :

2. Միջազգային լեզուին ընտրութիւնն երկրորդ պայմանն է յաջողութեան : Եթէ արդէն գոյութիւն ունեցող

լեզուներուն մէջէն ամէնէն պարզն և ամէնէն ընդհան-
րացածն ընտրուի՝ տոհմային անձնասիրութեան խնդիր կը
ծագի, ինչ որ ամենամեծ արգելք մ'է յաջողութեան :
Եւ յետոյ, միջազգային լեզուն շատ պարզ պէտք է ըլլայ,
այնքան պարզ որ միջակ զարգացմամբ մէկը կարենայ
սորվիլ զայն քիչ ժամանակուան մէջ : Արդ, ոչ մէկը բո-
լոր այն կենդանի լեզուներէն, որոնք արդէն գոյութիւն
ունին՝ կը ներկայացնէ պահանջուած պարզութիւնը :
Աւելորդ է ըսել թէ լատիներէնը, որ, իբր մեռեալ լեզու,
զերծ պիտի ըլլար, մինչև աստիճան մը, տոհմային անձ-
նասիրութիւնը գրգռելու անպատեհութենէն, չի գոհացներ
քնաւ պարզութեան պայմանը : Կը մնայ երրորդ միջոց մը,
այն է՝ նոր լեզու մը շինել : Ամէնէն դործնական եղա-
նակն է այս, որուն տուած են իրենց քուէն այն գիտուն-
ներն՝ զորս անուանեցինք վերը : Այս եղանակն ընդունած
է նաև Տքդ . Չամէնհօֆ :

Ամէնէն ապահով ապացոյցը, Էֆէֆէֆէօժը թէ էսքէ-
ռանդօն իր վրայ կը միացնէ միջազգային լեզու մ'ըլլալու
յատկութիւնները, սա է թէ՛ զանազան ազգութեանց և
ընկերային տարբեր տարբեր աստիճաններու վերաբերող
անձեր — ամէնէն ականաւոր դրագէտներու և գիտուն-
ներու հետ սոսկական անհատներ — որոց ոմանք, վճա-
րիւքի անյաջողութենէն ազդուած, թերահաւատ էին
միջազգային լեզուի մը կարելիութեան մասին, կը ջատա-
գովեն ու կը ներբողեն էսքէռանդօն : Այսօր շատ բարգա-
ւած վիճակի մէջ է ան, և երեսունի չափ հանդէսներ
(երեք տարի առաջ 12 հատ միայն) կը հրատարակուին
այս լեզուաւ, էսքէռանդօն տարածելու նպատակաւ աշ-
խարհիս ամէն կողմը կաղմուած ընկերակցութիւններու
կողմանէ, որոնք կը բաղմանան օր ըստ օրէ : Էսքէռանդօի
բազմաթիւ դասընթացքներ հաստատուած են : Իւրա-
քանչիւր տարի հրատարակուած adresaro մը էֆէֆէֆէօժի

Ներու մէկ փոքր մասին հասցէն կուտայ : Վերջին *ad-
ressar*օն քսան հազարէ աւելի անուն կը պարունակէ : Ար-
դէն էսրէռանդօն սկսած է գործնական արդիւնքներ տալ :
Զբօսաշրջիկներ և վաճառականներ սկսած են այդ լեզուն
գործածել : Անցեալ տարի , դաստիարակներու միջազգա-
յին համաժողովին մէջ , որ գումարուեցաւ ի Լիէժ և որու
մասնակցեցան եօթը հազարէ աւելի անձեր՝ Եւրոպայի
ամէն կողմերէն , էսրէռանդօն ընտրուեցաւ իբր օժանդակ
լեզու , զանազան երկիրներու դաստիարակաց յարաբե-
րութիւնները դիւրացնելու համար : Աւելցնե՞մ թէ Հոմե-
րոս , Շէյքսպիր և ուրիշ հեղինակներ էսրէռանդօի թարգ-
մանած են , քիչ մը ծայրայեղութեան տանելով անշուշտ
միջազգային լեզուին նպատակը , որ , կարծեմ , բացար-
ձակապէս գործնական պէտք էր մնալ : Ինչպէս հեղինակ
մը դիտել կուտայ , գրականութեան մէջ գաղափարն այն
աստիճան կապուած է ոճին , որուեստն այն աստիճան
կառւմ ունի զայն յղացող մտածումէն , որ իրօպէս ան-
կարելի է ո և է հրաշակերտ թարգմանել ո և է արուես-
տական լեզուի :

Մասնաւորապէս մենք , Հայ դաստիարակներս , պէտք
է ուրախութեամբ ողջունենք էսրէռանդօի յաջողութիւ-
նը : Մեր խեղճ աշակերտները չափազանց կը յոգնեցնենք ,
եօթն ութ տարիներ , սորվեցնելու համար անոնց հայե-
րէնի և թուրքերէնի հետ քիչ մը ֆրանսերէն , քիչ մը
անգլիերէն , քիչ մը գերմաներէն : Ի՞նչ մեծ բարիք մը
պիտի ընէ , ի՞նչ անգնահատելի ծառայութիւն մը պիտի
մատուցանէ էսրէռանդօն մեր տղայոց , երբ օր մը յաջողի
յիշեալ եւրոպական լեզուներուն տեղն անցնիլ : Յնօրք
մ'է խորհիլ թէ օր մը այս փափաքն իրականութիւն պիտի
ըլլայ , ֆրանսերէնը , անգլիերէնը կամ գերմաներէնը մնա-
լով թերևս , երկրորդական կրթութեան մէջ , իբր կամա-
ւոր ուսում , զուտ գրական պիտոյից ծառայող : Մինչ այ-

սօր , երկար տարիներու ընթացքի մը մէջ , արդի պայ-
մաններով (այս մասին կարծիքս ըսած եմ արդէն կենդանի
լեզուաց ուսուցման նուիրուած յօդուածիս մէջ) սղաք
հաղիւ քիչ մը եւրոպական լեզու կրնան սորվիլ , անոնք
պիտի կարողանան էսքէոանդօ սորվիլ շատ քիչ ժամա-
նակի մէջ , քանի որ իրազեկ անձեր կը հաւաստեն թէ
մէկ քանի ամսուան մէջ կարելի է այս լեզուաւ տեսակցիլ :

Մէկ քանի ամսուան մէջ , կը կրկնէք թերահաւատ
ժպտով մը : Ձեր տարակոյսը փարատելու համար , ներ-
կայացնեմ միջազգային լեզուին էական սկզբունքները .

Էսքէոանդօի դիւրուսանելիութիւնն հիմնուած է՝ 1 .
Իր ամենապարզ քերականութեան վրայ , որ 16 կանոն-
ներէ կը բաղկանայ և բացառութիւն ըսուած բանը չի
ճանչնար : 2 . Իր բառերուն վրայ , որոնք յոյժ սահմա-
նափակ թուով արմատներէ կը բաղկանան , մեծ մասամբ
միջազգային , և զորս , մասնիկներու հանճարեղ դրութեան
մը միջոցաւ , կարելի է բազմապատկել՝ որչափ որ պէտք
ըլլայ : Այս կերպով , էսքէոանդօն , կենդանի բոլոր օտար
լեզուներէն աւելի ճոխ բառարան մ'ունի : Օրինակի հա-
մար , parol արմատին վերջը o գիրն աւելցնելով կ'ունե-
նանք parolo, իօո+ , գոյականը : Եթէ a աւելցնենք , կ'ու-
նենանք parola, քէր-ն-ցի , ածականը : Եթէ e աւելցնենք ,
կ'ունենանք parole, ք-նի- քէր-ն-ց , մակբայը : Եթէ i
աւելցնենք , կ'ունենանք paroli, իօ-իլ բայը : Կը հետևի
թէ՝ երբ բառ մը օով վերջաւորի՝ գոյական է , երբ օով
վերջաւորի՝ ածական է , երբ օով վերջաւորի՝ մակբայ է ,
երբ իով վերջաւորի՝ բայ է :

Անդլիերէնի պէս , էսքէոանդօն միայն մէկ որոշիչ յօդ
ունի , և՛ a , որ անսիովիտիս է : Իսկ անորոշ յօդը գոյութիւն
չունի այս լեզուին մէջ : Յոգնակին կը կազմուի բառին
վերջը j (որ կ'արտասանուի ք-յ բառին յին պէս) աւելցը-
նելով :

Էսրէռանդօի քերականութիւնը համաձայնութիւն չունի : Միայն , խօսքին մէջ հայցականի դեր կատարող բառին վերջը ո կ'աւելցուի :

Բայերու խոնարհումը խիստ պարզ է : Ֆրանսերէն խոնարհմանց 2265 վերջաւորութեանց տեղ , Էսրէռանդօն ընդ ամէնը 12 վերջաւորութիւն ունի :

Անշունչ բառերը սեռ չունին բանաւոր նոր լեզուին մէջ . ոչ մատիտը արու է հոն , ոչ ալ գրիչը՝ էգ : Արանց համար երրորդ դէմքի իբր անձնական դերանուն կը գործածուի *li* , կանանց համար՝ *si* (արտաս . շի) , անորոշ սեռ ունեցող էակներու ինչպէս նաև իրերու համար *gi* (արտաս . ճի) : Միւս անձնական դերանուններն են՝ *mi* , է* , *vi* , դ* — կամ դ*+ (Էսրէռանդօն եղակի երկրորդ դէմքով չի խօսիր) , *ni* , Ֆե* , *ili* ~ն~ն+ (արական և իգական) : Եթէ այս դերանուններուն վերջը աւելցնենք *a* , կ'ունենանք ստացական սծականները . *mia* , էժ , *via* , յեր , *ilia* , ~ն~նց , ևն . . — Դերանունն է որ կը ցուցնէ դէմքը : — Բայերուն ժամանակը կ'որոշուի վերջաւորութեամբ մը , որ նոյնն է բոլոր դէմքերուն համար . *as* վերջաւորութիւնը ներկայի համար , *is* , ~նչէ~լի համար , *os* , ~դ~նի համար , *us* , թէ~կ~նի համար , *u* (արտաս . ո~) , հը~մայ~հան~սոր~դ*~ս~հ~նի համար (այս երկու եղանակներն ի մի ձուլուած են շատ տրամաբանական կերպով) : — Ընդունելութիւն անցեալը կը կազմուի *ita* վերջաւորութեամբ , *parolita* . Ընդ . ներկայն՝ *anta* վերջաւորութեամբ , *parolanta* : Կան նաև ընդունելութեան չորս ուրիշ ձևեր , որոնք նուազ գործածական են :

Ինչպէս բսի , Տքդ . Չամէնհօֆ իմաստուն գաղափարն ունեցած է Էսրէռանդօի մէջ առնելու բոլոր այն բառերը՝ որոնք արդէն միջազգային են , դանոնք ենթարկելով սակայն լեզուին ձայնական ուղղագրութեան և տալով անոնց *o* , *a* , *e* , ևլն . վերջաւորութիւնները , *telefono* , *teatro* , *fizi-*

ko, fotografio, muzeo, և ըն . : — Գալույլ այն բառերուն , որոնք բացարձակապէս միջազգային չեն , Տքդ . Չամէն-հօֆ ընտրած է այն արմատներն՝ որոնք կրնան հասկըց-ուիլ եւրոպական ժողովուրդներու մեծամասնութեան կողմանէ : Արդ , եւրոպական լեզուները լատիներէնով սողորուած ըլլալով , բնականաբար ումանական արմատ-ներն են որ առաւելակշռութիւն ունին էսբէռանդօի մէջ , ինչ որ , ըսենք անցողակի , պայծառահնչիւն և յստակ կ'ընէ զայն : — Մասնիկներու կատարած դերը ցոյց տուի արդէն : Այս մասին մէկ քանի մանրամասնութիւններ աւելի աղէկ պիտի հասկըցնեն 6 նախադաս մասնիկներու և 22 յետադաս մասնիկներու մատուցած ծառայութիւնը՝ բառերու կազմութեան մէջ : Արու էակներն էգի կը վե-րածուին ino յետադաս մասնիկով . patro, հայր , patrino, մայր . filo, ուսար , filino, դուստր . knabo, մանչ , kna- bino, աղջիկ . bovo, եզ , bovino, կով , և ըն . : — Ge նա- խադաս մասնիկն երկու սեռերն ի մի կը ձուլէ . gepatroj, ծնողք (հայր և մայր) , gesinjoroj, տեարք և տիկնայք , և ըն . : — Mal նախադաս մասնիկը ներհակները կազմելու կը ծառայէ . bona, աղէկ , malbona, գէշ . utila, օգտակար , malutila, մնասակար . helpi, օգնել , malhelpi, արգելք ըլլալ . gajni, շահիլ , malgajni, կորսնցնել , և ըն . : — Eco յետադաս մասնիկով վերացեալ անուններ կը կազմուին . bela, գեղեցիկ , beleco, գեղեցկութիւն . . granda, մեծ , grandeco, մեծութիւն : — Isto յետադաս մասնիկն ար- ուեստաուորը ցոյց կուտայ . pano, հաց , panisto, հացա- գործ , և ըն . :

Մէկ երկու տեղեկութիւն ալ արտասանութեան մասին . Բոլոր տառերը (28 հատ) կը հնչուին և ուղղագրու- թիւնը ձայնական է : Իւրաքանչիւր տառ միայն մէկ ձայն ունի : Որպէս զի նոր նշաններու պէտք չմնայ , բաղա- ձայններէն ոմանց վրայ accent circumflexe մը դրուած

է • Օրինակի համար , շին ձայնն է յ , եթէ վրան շեշտ մը ունենայ՝ կը հնչուի շ • Տի ձայնն է • , եթէ վրան շեշտ ունենայ՝ կը հնչուի շ : — Գալով հնչային շեշտին (accent tonique) , միշտ վերջընթեր վանկին վրան կ'իյնայ ան :

Վերջացնելէ առաջ , հոս կը զետեղեմ մէկ քանի տողեր միջազգային լեզուաւ՝ հանդերձ թարգմանութեամբ :

Simpla, fleksebla, belsona, vere internacia en siej elementoj, la lingvo Esperanto prezantas al la mondo civilizita la sole veran solvo de lingvo internacia ; car, tre facila por homoj nemulte instruitaj, Ésperanto estas komprenata sen peno de la personoj bone edukitaj. Mil faktoj atestas la meriton praktikan de la nomita lingvo.

Պարզ , ճկուն , քաղցրահնչիւն , խիստ միջազգային՝ իր տարրերով , էսքէռանդօ լեզուն կը ներկայացնէ քաղաքակիրթ աշխարհին՝ միջազգային լեզուի միակ ճշմարիտ լուծումը , որովհետեւ , խիստ դիւրին՝ թերուս անձանց համար , էսքէռանդօն առանց դժուարութեան կը հասկցուի ուսեալ անձանց կողմանէ : Հազարաւոր իրողութիւններ կը հաստատեն յիշեալ լեզուն գործնական արժանիքը :

(Բիւզակդիոն, Օգոստոս, 1906)

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՐԴԸ

(ՅԻՇԱՏԱԿ ՄԸ)

Իր մահուանէն մէկ քանի ամիս առաջ էր , աշնան վերջին օրերէն մէկը , մին այն երեկոներէն զորս կը փըն-

տըռէր իր խորտակուած սիրտը, ստիպելով Բնութիւնը՝ իրեն բացատրելու ահաւոր այն խորհուրդն՝ որոյ լուծումը չէր կրնար ընձեռել իմաստասիրութիւնը, Բնութենէ՛ն պահանջելով այն ոյժը՝ զոր ա՛յնքան անգթօրէն Բնութիւնն առեւանդած էր իրմէ։ Իւկօի մը վիշտը, բողոքները, պաղատանքը, իր վիշտը, բողոքներն ու պաղատանքը, որոնք չէին կրնար պարփակուիլ իր «Սոհք և Յուշք»ին մէջ, և որոց պէտք ունէր, հիմա, ամէն վայրկեան, ապրելու համար։

Երեկոյեան վերջին դասն հազիւ աւարտած էր, և ամբողջ էութիւնը տակաւին զեղուն՝ դասին յիշատակովը, շարունակելով, սրտին մէջ, խօսիլ իր սիրելի աշակերտներուն՝ որոնք իր մէջն են միշտ, իր քայլերը — մտածումներն անդամատող դաշնակաւոր քայլերը — կ'ուղղէր դէպ ի Իճատիէի բարձունքը, Դանիկի բացօթեայ ծովահայեաց սրճարանը, ուր սկսած էր անցընել երեկոյեան հանգիստը, յորմէհետէ լքած էր դպրոցին աւելի մօտ Մարքօի պարտէզը, որ ընտանեկան երջանիկ օրերու տխուր յիշատակը կ'արժարժէր իր մէջ։ Եւ յետոյ, միւսը, իր դիրքով և լուծեամբ աւելի յարմար էր իր հոգեկան վիճակին։

Երեկոյեան դասէ մը կը վերադառնայի ևս ալ, և դէպ ի Պրէնկին լեռը կ'երթայի պտոյտ մ'ընելու։ Միասին գացինք «սուրճ մ'առնելու» Դանիկին պարտէզը։ Ի բնէ երկչոտ, ախմար երկչոտութիւն մը զգացած ևմ միշտ վարժապետիս քով, թէև մէկ քառօրդ դարէ ի վեր աշակերտներ ունեցած ըլլամ ևս ալ։ Սիրտս բարախել սկսած է, ամէն անգամ որ վարժապետս ստիպած է զիս կտրծիքս յայտնելու այս կամ այն ինչորոյ վրայ, և կատարեալ ամօթ մը զգացած ևմ վարժապետիս յախճապակեալ, ճախարակեալ յղկեալ խօսքերուն զեղեցկութիւնն աւրելով ապականելով իմ կարճակտուր նեղացուցիչ պարբե-

րութիւններովս : Գեղեցիկ նկար մը ազտոտելու աններելի անբարոյականութիւնը , հեշտալուր երաժշտութիւն մը ապականելու վանդալութիւնը՝ զոր երբեք չեմ ներած ինքզինքիս : Եթէ աւելցնեմ թէ մասնաւոր պատճառներ ունեցած եմ աւելի վարժապետիս խօսիլը լսելէ քան թէ կարծիքներ յայտնելէ հաճոյք զգալու , բացատրած պիտի ըլլամ թէ ինչո՛ւ , գրեթէ միշտ , մեր տեսակցութեանց մէջ աւելի ունկնդիր մըն էի քան խօսող :

Իմաստասիրութեան դաս մը տուած էր վերջին ժամուն : Արուեստագէտ և ոչ արուեստաւոր դասախարակ , իր հոգին կը թրթռար տակաւին իր աւանդած դասովը : Հասկանալի է որ խօսակցութիւնը վերջապէս դառնար այն նիւթին վրայ՝ որուն վրայ պէտք էր դառնար , որուն վրայ սեւեռուած էր միտքը , որուն վրայ կը խորհէր իր սրտին մէջ : Սօսակցութեան ընթացքը մղեց զիս հարցնել իրեն — անսովորական համարձակութիւն — թէ ուսումնասիրած էր Նիչէն , թէ ի՞նչ կը խորհէր Զալտեր-ստրաի հեղինակին վարդապետութեան վրայ : « Նիչէն չեմ ուսումնասիրած » , պատասխանեց վարժապետս , « երբ մարդ Քանդն ուսումնասիրած է և անոր վարդապետութեամբը տուրբուած , ուրիշ վարդապետութեան համար տեղ չի գտներ իր մէջը : Պարտականութեան վարդապետութիւնը , ահա՛ ինչ որ արժէք ունի ինձ համար , ահա՛ ինչ որ պէտք է արժէք ունենայ իմ աշակերտներուս համար : »

Հոգւոյն խորքէն թղխած զգացումներ , որոնցմէ անկարելի է չազդուել : Այդ մէկ քանի խօսքերուն մէջ էր վարժապետս , այնպէս՝ ինչպէս ճանչցած էի զինքը միշտ , կարդացած ըլլալէ շատ առաջ իր առածը՝

Միշտ պարտք մը կայ կատարելու , ցորչափ օր կայ սպրեկու .

Անոր համար անձնատպանը պարտքն անկատար կը թողու .

Գաղափարի և պարտականութեան մարդ, ահա, ինձ համար, մեծագոյն արժանիքը Պէրպէրեանի, անոր էական հանգամանքը: Պէրպէրեան չպիտի կրնար որդեգրել Սբէնսրրի այն դաւանանքը՝ թէ «Մարդ չապրիր ուսնելու և աշխատելու համար, այլ կ'ուսնի և կ'աշխատի ապրելու համար.» ուսնիլ, աշխատիլ, պարտքը կատարել, այս էր կեանքին գոյութեան պատճառը՝ Պէրպէրեանի համար. վկայ իր սա երկտողեակը.

Բարոյական կեանքին վախճան չէ բնաւ ապրիլ ընդ երկար,
Այլ ապրելու նպատակն է իր պարտքն ընել անդադարս

Կարծակուն բոլոր հրամայականները չեն կրցած խախտել իր մէջը խարսխուած հատու հրամայականը, որ իր եսը կը կազմէր այլ ևս: Իրեն համար, կեանքին նպատակը երջանկութիւնը չէր, նոյն իսկ եթէ այդ երջանկութիւնն ըլլայ, ոչ թէ Եպիկուրի մը կամ Չենոնի մը լոկ եռասիրական երջանկութիւնը, այլ Սբէնսրրի մը այլասիրական զգացումներով տուգորուած երջանկութիւնը: Իրեն համար, կեանքին նպատակն է — կրկնեմ անգամ մ'ալ — պարտականութիւնը կատարել, պարտականութիւնը, իր զանազան ձեւերով, խտացուած իր «Հարիւր քարոյական երկտողեակ»ներուն մէջ, որոնց խրաքանչիւրը մէկ մասնիկն է իր հոգւոյն: Պարտականութիւնը կատարել՝ ի՛նչ ըլլայ ըլլայ.

Ի՛նչ փոյթ ձեզ Սէ, ապերախտ են մերթ երախտիք անողներ.

Բարին բարոյն համար պէտք է, գործել, եղբայրներ:

Ոտտամբե՛ր վարդապետութիւն, բայց որքան վաւեմ: Յրանի այն մարդուն որ այս հոգեւոր պաշարը ունի իր մէջը: Ահագին դժուարութիւններ կրնան զինքը նեղել, անտգորելի դժբախտութիւններ կրնան զինքը հարուածել, սե հոգիներու մէջ բուսող անխոսատվանելի ստորնութիւններ կրնան զինքը դաւնացընել, ատոնք ամէնքը սակայն չեն կարող հասնիլ մինչև պարտականութեան և

տեսլականի անմերձենալի անվկանդ օթեւանը : Այդ ահագին դժուարութիւնները, այդ անոգորելի դժբախտութիւնները, այդ անխոստովանելի ստորնութիւնները, Պէրպէրեան ճանչցաւ զանոնք, և ո՛րքան աւելի մօտեցան անոնք իրեն՝ ա՛յնքան աւելի սերտիւ կառչեցաւ ան իր տեսլականին, իր հաւատքին : Ամէն անգամ որ կեանքը չար եղաւ իրեն հանդէպ, անոր դէմ ճակատեցուց տեսլականը, որ կը ժպտի և մուսան՝ որ կ'երգէ : Հաւատարիմ մնաց ան իր առածին՝

Պտղարերէ՛, դու անվրէպ պարտքը ըրի, ու ևՍ,

կ'ոխերմանան քեզ չարակամք և յաչաղկոտք, դու . . . ժպտի՛ :

Չարակամներն ու յաչաղկոտները կ'արհամարհէր մերթ դառնութեամբ՝ փոխանակ ժպտելու : Ամէն անգամ որ վայր սնկեց՝ փունջ չքաղեց, այլ խայթ հնձեց՝ առանց տատակ ցանած ըլլալու . սէր չժողվեց միշտ՝ երբ համբոյր ցանեց, այլ քէն քաղեց՝ առանց հեռ ցանած ըլլալու : Սակայն, Սբենարրի սկեպտականութիւնը չունեցաւ երբեք բարոյական խղճին նկատմամբ ան որ կը հաւատար թէ՛

Խղճի անդորրն անոյշ գտնել տուաւ տանջանքն անիրաւ .

Ներքին խայթը տանջանք մ'ըրաւ փայելքն ու փա՛ռքը անիրաւ :

Իր ոչտկերան եղած ըլլալու է, մանաւանդ իր դրոյրոցի առաջին տարիներու աչակերտը, գիտնալու համար թէ ի՛նչպէս նիւթակոտն ամէն հանգիստ կը զոհէր իր տեսլականին, ինչպէս կ'անտեսէր ֆիզիքական կեանքն ի նպաստ մտաւորական կեանքին, սորվելու և սորվեցնելու համար : Իր մտերիմն եղած ըլլալու է՝ տեղեակ ըլլալու համար իր նեղութեանց : Անխոտով կը տանէր տրնութիւնները, տատապանքը՝ տեսլականով իբնօթիշուցեւ Քանդեանը : Եւ ո՞վ պիտի ըսէ մեզ թէ Պէրպէրեան, իր ամէնէն դժնդակ նեղութեանց մէջ իսկ, շատ աւելի երջանիկ չէր, իրապէս երջանիկ, քան թէ անոնք որ երջանիկ կը նկատուին ընդհանրապէս : Երջանկութեան ամէնէն ամուր,

ամէնէն տեւական , միակ անկապտելի և իրական տարրը
 բարձր իտէալի մը հետապնդումը չէ՞ : Ի՞նչ անհամ բան
 մը պէտք է ըլլայ կեանքն՝ առանց իտէալի : Որքան
 դժնդակ կերպով իր ետեւէն քաշկուտել հարկ պիտի ըլլար
 կեանքն առանց իտէալի : Կը կորսնցունես նիւթական բա-
 րորութիւնդ , հողւոյդ հատորը կը բաժնուի քեղմէ ան-
 դարձ , և դու , ապշած ու ամօթահար , կը պահես զուար-
 թամտութիւնդ , ցոլքը տեսլականիդ , այն միակ բանին՝
 զոր ոչ մէկ բան կրնայ կապտել քեղմէ : Եւ որքան ազէկ
 կ'ըմբռնեմ թէ նիչէի «անատակներու զոհ»ի վարդապե-
 տութիւնը չյարմարէր վարժապետիս եսին . եթէ ընտրու-
 թիւն մ'ընել հարկ ըլլար , չարիքին չընդդիմանալու վար-
 դապետութիւնը նախամիծար պիտի համարէր անշուշտ
 ան որ կը գոչէ՝

Խաչը սեր է , խաչը զոհ է , խաչին կրօնքով պարծեցէր ,
 Խաչին ստոյգ աշակերտներ ըլլալու միշտ ջանացիք :

Եւ կամ

Չարին դժ չար մի՛ գործեր դու , յայժմ , չարին բարիով ,
 Մռ.Սն զմութը չի վաներ բնու . կը ցնդի միզն արևով .

Այնպիսի դարու մը մէջ ուր ծայրայեղ դրականու-
 թիւն մը կը ձգտի չորցնել այն ամէն բան որ կայ ազնիւ
 և վեհ՝ հողւոյն մէջ , արդարակշիռ իտէականութիւն մը
 մասնաւորապէս թանկագին առաքինութիւն մըն է : Օրհ-
 նեա՛ւ ըլլայ յիշատակդ , ո՛վ սիրեցեալ վարժապետս , որ
 դու.անող մը եղար տեսլականին , պաշտող մը պարտա-
 կանութեան , և ամբողջ կեանքիդ մէջ — ի՞նչ վոյթ քեզ
 համար թէ կեանքդ կարճ եղաւ , քեզ համար՝ որ կը դա-
 ւանիս թէ՛

Երկար կեանքը այն չէ՛ որ մեծ կը հաշուէ թիւ ամերու ,
 Այլ այն որ ցոյց կուտայ երկար շարք մը ազնիւ գործերու :

— ամբողջ կեանքիդ մէջ այդ դաւանանքդ ջանացիր
 սփռել շուրջդ՝ խօսքով , գրչով և գործքով .

Բարձրին նայէ՛, միշտ դէպ ի վեր նկրտէ՛ դու ելնելու .

Չը հասնիս ալ, այդ ճիգ զբեզ վար սանել, կ'արգելու .

Այս եղաւ նշանաբանդ : Քու սիրելի յիշատակդ յարգողները պիտի յարգեն նշանաբանդ : Եւ դու , գերեզմանիդ մէջ ալ պիտի կրնաս կրկնել՝

Ժառանգութի՛ւնը մեծագոյն զոր մարդ թողու իր զաւկին՝

Ուղիղ մարդու , պարկեշտ անձի մարուք անունն է անգին .

(Բիւզանդիոն, 1908, Ապրիլ)

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Սիրելի ընթերցողներս կը հաճի՞ն թոյլ տալ ինձ , իրենց վաղեմի դժնեայ բարեկամին , պահ մը ընդհատել իրենց արդար ցնծութիւնը՝ մէկ քանի պարզ խորհրդածութիւններով , Սահմանադրութեան վերահաստատութեան առթիւ : Հազիւ մէկ երկու վայրկեանի ընդմիջում , որ թերեւ իր օգուտն ունենայ , որքան ալ արտանուազ հնչէ երգս՝ հասարակաց այս հեշտական ջնաշխարհիկ երկնապսոճոյճ նուագահանդէսին մէջ :

Ազատութիւնն ամէնէն մեծ բարիքն է մարդուն համար , երբ գիտէ զայն գործածել : Իսկ երբ ազատութիւնն ընդունող ժողովուրդը սղայ է և խողայիկ մը կը կարծէ զայն , այն ատեն ազատութիւնն ամէնէն ձախող արդիւնքները կրնայ ունենայ : Վկայ է Պատմութիւնը :

Ազատութիւնն անկարգապահութիւն և անխիստութիւն չէ : Ազատութիւնն ինքնակամ հպատակութիւնն է օրէնքին , որ զմեզ կը պահպանէ մեզմէ իւրաքանչիւրին ներսիդին մրափող բարբարոսութեան դէմ : Լքջութեամբ , անկեղծութեամբ , հանդարտութեամբ աշխատակցիլ քաղաքակրթութեան յառաջդիմութեան , ահա՛

Ազատութիւնը : Հետեւ օրէնքներուն , պոռալով պոռ-
չըտելով , կիրքերու անձնատուր ըլլալով , ահա՛ բարբա-
րոտութիւնը , ահա անխիշխանութիւնը : Ազատութիւնը
պատասխանատուութեան արտաքսում չէ . ընդհակառա-
կը , որքան աւելի ազատ ըլլայ մարդ՝ ա՛յնքան աւելի պա-
ասխանատուութիւններ ունի : Քիչ մը մտածել կը բաւէ՝
համոզուելու համար այս ճշմարտութեան : Կղերին պար-
տականութիւնն է այս ճշմարտութիւնը քարոզել ժողո-
վուրդին՝ անոր հասկանալի լեզուաւ մը և համոզիչ շեշ-
տերով , և ոչ թէ գրական-խմաստասիրական ոլորտներու
մէջ սաւառնելով — երբեմն ալ մոլորելով — և հմտու-
թիւն ծախելով , կամ թէ աշխարհիս ամէնէն ձանձրա-
ցուցիչ եղանակաւ՝ տափակութեանց և տղայութեանց
անվերջանալի կրկնութիւններով դուրս ձաթեցնելով և
ականջներ խլացնելով : — Ժողովուրդին պարտականու-
թիւնն է զիրար դաստիարակել , նոյն տեսակէտով : Ոչ
մէկ դաս այնքան ազդեցիկ է որքան այն՝ որ ժողովուրդի
մարդ մը կուտայ ժողովուրդի ուրիշ մարդու մը , ինչպէս
որ դպրոցի մէջ ոչ մէկ դաս այնքան ազդեցիկ է որքան
այն՝ զոր աշակերտ մը կուտայ իր մէկ ընկերոջ : Վաղը
ժողովներ պիտի վերակազմուին , վիճարանութիւններ
տեղի պիտի ունենան : Ժողովականներուն պարտակա-
նութիւնն է իրարու հասկցրնել թէ ճշմարտութիւնը գրա-
նելու համար անհրաժեշտ պայմանն է հանդարտ ըլլալ
վիճարանութեան մէջ , մտքով անջատել անձը՝ խնդիրը
միայն քննելու համար , համակրանօք լսել հակառակորդին
կարծիքը , անկեղծ ըլլալ ինքզինքին հետ : Խօսելու ազա-
տութիւնը պէտք չէ մղէ զմեզ չյարգելու ընդդիմարանին
խօսքը : Ընկերային ահագին կարեւորութիւն ունի խօսե-
լու և գրելու ազատութեան դաստիարակութիւնը : Գի-
տուններու կաճառի մը մէջ կատարուած վիճարանու-
թեանց պէտք է նմանին մեր ժողովաւարահներուն մէջ

տեղի ունենալիք վիճարանութիւնները . բանականութիւնը պէտք է տիրէ հոն , ոչ՝ անձնասէր ու նախանձոտ կիրքը : Այս տեսակէտով , մեծ շրջահայեցութեամբ , մեծ իմաստութեամբ , մտքի կատարեալ անկախութեամբ պէտք է ընտրել՝ ժողովներու և Խորհուրդներու անդամները : — Բայց Ազատութեան դաստիարակութեան ամէնէն մեծ բաժինը դպրոցինն է : Մանկապարտէզէն սկսեալ — դիտէք թէ դաստիարակութիւնը օրօրանէն կ'սկսի — մինչև երկրորդական վարժարաններու բարձրագոյն կարգը՝ պէտք է զգալ և ըմբռնել տալ աշակերտաց թէ ի՛նչ բանի մէջ կը կայանայ արդարակշիռ ազատութիւնը , թէ ի՛նչ տեսակ պատասխանատուութիւններէ կազմուած է ան , ի՛նչպէս պէտք է գործածել զայն՝ որպէս զի արտադրէ այն բարիքը զոր արտադրելն իր բնութեան մէջ է : Սահմանադրութեան վերահաստատմամբ՝ ընկերային բարեշրջութեան օրինաց համաձայն կեանքով մը կ'սկսինք ապրիլ : Բարիք միայն կարելի է սպասել այդ կեանքէն՝ եթէ գիտնանք պատշաճ ուղղութիւնը տալ անոր : Ազատութիւնը զոր կը համբուրենք այնքան սաստիկ յուզմամբ , ազատութիւնը՝ որուն կը փարինք այնքան մեծ խանդովառութեամբ , պէտք չէ ըլլալ հեղեղն որ կը քանդէ կ'աւերէ ինչ որ գտնէ իր ճամբուն վրայ . այլ հեղեղն որ , ելեկարականութեան վերածուած , բարիք կը սփռէ իր շուրջը զանազան ձևերով : Զգուշանա՛նք . առանց փոխանցումի , մէկ վիճակէ ուրիշ վիճակ մը կը մտնենք . վիճակի այս յանկարծական փոփոխութիւնը կրնայ խենթութիւններ բնել տալ : Յուզուինք , բայց չմոլորինք . թող բանականութիւնը տիրէ միշտ սիրտին վրայ :

Կղեր , ժողովուրդ , դպրոց , հետեւանքներով լեցուն ահագին պարտականութիւն մ'ունին կատարել՝ Սահմանադրութեան վերահաստատութեան բիւրիցս երջանիկ թուականէն սկսեալ : Զտեսներ չըլլանք , և ոչ ալ միա-

միտներ . չկարծենք թէ Սահմանադրութեան վերահաս-
տատութիւնը մոզական դաւադան մըն է որ ամէն ինչ կեր-
պարանափոխ պիտի ընէ ինքնին : Այնքան կ'արժէ Սահ-
մանադրութիւնը՝ որքան կ'արժէ ժողովուրդը որ կը վա-
յելէ դայն : Եթէ չուզենք Սահմանադրութեան ոգևոյր
տոգորուիլ , եթէ չուզենք անոր միջոցաւ խեղդել բար-
բարոսի , վայրենիի բնազդները , — ոխերիմ թշնամիներ
ազատութեան — որ կան մեր ներսիդին , մէկ քառով ,
եթէ չուզենք դաստիարակել ազատութիւնը , ոչինչ կ'արժէ
ազատութիւնը , մանաւանդ թէ դժբաղդութեան աղբիւր
մըն է : Ազատութիւնը — և անոր միջոցաւ երջանկութիւ-
նը — մէկ վայրկեանի մէջ ձեռք բերուելիք բան մը չէ .
առօրեայ , յարատև , համբերատար ճիգերով միայն կա-
րելի է տիրել անոր : Աշխարհիս լաւագոյն կառավարական
ձևը բան մը չարժեր՝ երբ ժողովուրդը չաշխատակցիր
կառավարութեան , երբ իւրաքանչիւր անհատ « չառնէ
մանդաղ մը » և չաշխատի անձնապէս : Ազատութիւնն
որքան իրաւունք մը՝ նոյնքան ալ պարտականութիւն
մըն է : Ազատութեան դաստիարակութիւն , ա՛յս պայմա-
նաւ միայն երջանկութեան և բարգուաճութեան նոր
դարադրուի մը պիտի ըլլայ Յուլիս 10ի յաւէտ երջան-
կայիչատակ օրը : Սահմանադրութեան տենչալէ վերջ՝ ցոյց
տանք թէ արժանի ենք անոր :

(Բիւզակնդիոն, 1908, Յուլիս)

ԱԶԳ. ԵՐԵՍՓՈՒԱՆԻ ՅՈՒՇՏԵՏՐԷՍ

Արտատրոսի կը հասնիմ Մայր եկեղեցի , որոչեալ
ժամանակէն մէկ քառորդ ժամ առաջ : Հազիւ մէկ քանի
երեսփոխաններ . Թիկնաթոռներ և աթոռներ՝ խնամով

շարուած , բայց աղտոտ ուտճահալ սեղան մը՝ զոր զոնէ չի զուարթացներ կանաչ ծածկոցը : Կենցաղագիտական այս պակասը մեր Աւագ ժողովին մէջ՝ եռանդը կը զիջուցանէ պահ մը . . . :

* * Որոշեալ ժամանակը կ'անցնի , մէկ քառորդ ժամ , կէս ժամ , մէկ ժամ և ուելի : Ու Ատեանը չի բացուիր : Երկրորդ սրտնեղութիւն : Գիտէի թէ ժամադրութիւն յարգելու մասին , ինչպէս ուրիշ շատ բաներու մէջ , մեր խիղճը բաւական առաձգական է . բայց չէի կրնար երեւակայել որ նոյն զանցառութիւնը կարենար տևիլ ունեւալ նոյն իսկ մեր Աւագ ժողովին մէջ : Եթէ պէտք է որ զինուորական կարգապահութեան վարժուելու սկսինք , ասոր ամէնէն հեշտ միջոցն է զինուորական ժամին հետ ընտանենալ :

* * Ազգ . Երեսփոխաններս , սակաւաթիւ բացառութիւններով , անտևղեակ ենք ազգային կեանքին պատմութեան և Ազգ . Սահմանադրութիւնը վարող Ներքին Կանոնադրի տրամադրութեանց : Դժբախտութիւնն հոն է որ Ներքին Կանոնագիրը պարունակող գրքոյկը կարելի չէ գտնել ո՛չ Պատրիարքարանը , ո՛չ ալ գրավաճառներու քով : Ազգ . Երեսփոխաններու ընտրութեան սկսուած օրէն պէտք էր որ Պատրիարքարանը վերստին տպադրել տար Ներքին Կանոնագիրը : Այս կերպով ամէնուս ալ խնայուած պիտի ըլլար թոքերու անտևղի յոգնութիւն , զլխու անհանդուրժելի ցաւ , և մանաւանդ անհարկի ժամավաճառութիւն :

* * Ռհ , խօսելու մոլութիւնը : Խնդիր մը լուսարանուած է պէտք եղածին չափ . ինչ անբարոնելի սնապարծութիւն է այն որ զմեզ կը մղէ արդէն յայտնուած կարծիքները կրկնելու , երեքկնելու , առանց նոր լոյս մը սփռելու խնդրոյն վրայ : Եթէ խօսին հաճոյք է , լոկը պարտականութիւն է : Ինչ փոյթ թէ մեր ըսելիքն ուրիշ

մը ըսէ, ի՞նչ փոյթ թէ թերթերն զմեզ չյիշատակեն, խօսողներու շարքին մէջ, ի՞նչ փոյթ թէ ունկնդիր ժողովուրդը չապշեցնենք մեր բառերու հոսանքովը, ի՞նչ փոյթ թէ Պատրիարքարանի ատենագրութեանց մէջ մեր խօսքը չըլլայ :

* * * Սօսած ըլլալու համար խօսիլ, այս հիւանդութիւնըն ուրիշ ձև մ'ալ ունի : Որովհետև պէտք է որ անպատճառ խօսինք, չենք անդրադառնար նախապէս՝ մեր բնութիւնն լրայ, հսկողութիւնն ի գործ չենք դնել մեր ուղեղին վրայ, որ աշխարհիս ամէնէն շարաճճի բանն է. տղու մը պէս ազատ մուտք կուտանք մեր գանկին մէջ՝ ամէն տեսակ գաղտնիարներու : Մինչև հոս վնաս մը չկայ ժողովին համար, բայց գէշն հոն է որ մեր գանկին մէջ անոնց մուտք տալէ վերջ՝ ժողովասրահին մէջ ալ ազատ մուտք կուտանք անոնց, ինչ որ անիրաւութիւն մըն է, բռնաբարութիւն մըն է հանդէպ ժողովին : Ժողովն իրաւունք ունի պահանջելու որ մեր ըսածները տրամաբանական ըլլան նախ, և յետոյ, տրամաբանօրէն սորնչութիւն ունենան քննելի խնդրոյն հետ :

* * * Որչա՛փ իրաւունք ունի Ռընան, երբ կ'ըսէ. «Ահն ինչ ուսար է, Բայի «ղճար»-իէնէն :» Եւ որչա՛փ սիրելի են մեզ մեր այն երեսփոխանները, որոնց մէջ որոշ կերպով կը տեսնուի այս չքնաղ բարեմասնութիւնը : Բայց որքան աւելի սիրելի պիտի ըլլային անոնք մեզ, եթէ Գրիգոր Զօհրապ էֆէնտիին պէս, իրենց ողջմտութեան միացնէին խօսքերու սեղմութիւնը : Ունկնդիր երեսփոխանները դպրոցականներ չեն վերջապէս, և ատենաբան երեսփոխանները տեսակ մը թշնամանք ըրած կ'ըլլան անոնց՝ անհարկի և անվերջանալի մանրամասնութիւններով և կրկնութիւններով երկարելով իրենց պատճառաբանութիւնը :

* * * Գիտական միտք. ո՛րչա է երեսփոխանէն պահանջ-

ջուլած էական հանգամանքներէն մէկը : Կարծիք մը կը յայտնենք . ընդդիմախօս մը շատ պայծառ կերպով ցոյց կուտայ մեզ մեր սխալը . ինչո՞ւ քաջութիւնը չենք ունենար ընդունելու մեր սխալը և ինքզինքնիս ծիծաղելի կ'ընենք խուսափանքով : Սխալն ընդունելէն աւելի ի՞նչ քան կը բարձրացնէ մարդն իր և ուրիշներուն աչացն առջև : Ընկերային ի՞նչ բեղմնաւէտ ազդակ է սքանչացումը , և ի՞նչ ցամքեցուցիչ բան է նախանձը :

* * Դիտական մտքի պակասը չէ՞ նաև որ զմեզ կը մղէ դատապարտելու՝ առանց խնդրոյ նիւթ եղած դատը մանր քննած ըլլալու : Նախորդ Պատրիարքը ճանչցող ամէն Հայ կ'ուզէ զայն դատապարտել . բայց չաճապարենք , ռամիկի պէս չվարուինք : Յիմարի գործ է հաւատալ թէ բան մը սա պէս է՝ որովհետև կ'ուզենք որ սա պէս ըլլայ : «Պէտք է այնպէս մ'ընել որ քաղաքակիրթ մարդն ինքզինքին վրայ ունեցած իշխանութիւնը բարձրացնէ իրերու վրայ ունեցած իշխանութեանը :» Ըսենք Կիւլյօի հետ . «Ի՞նչ որ ալ գտնեմ ո՛յն ճամբուն ծայրն՝ ուր կը մտնեմ , եթէ գտածս հակառակ իսկ ըլլայ բոլոր նախատեսութեանցս և բոլոր իղձերուս , այն ամէն բունի որուն կը հաւատայի և որուն կը հաւատան իմ չուրջս . եթէ հակառակ իսկ ըլլայ այն ամէն բունի զոր ըսած եմ ես ինքս . եթէ նոյն իսկ քանդէ ան՝ բոլոր իմ գաղափարաց զուգորդութիւնները . եթէ նոյն իսկ խանդարէ այն՝ բոլոր այն հաշիւները , բովանդակ այն դրութիւնը՝ զոր իմացականութիւնս հանդերձած էր մինչև այն ասուն , վերջապէս եթէ չքացնէ իսկ ան՝ անցեալ կեանքիս ամբողջ գործը , — եթէ ճշմարտութիւնն է ան , ո՛րքան ալ դժնդակ ըլլայ , կ'ուզեմ զայն գտնել , կ'ուզեմ անոր հաւատալ , որովհետև ճշմարտութիւնն արժանի է սիրոյ և կը սիրեմ զայն :» Ամէն միջոց փնտռել արդարացնելու համար , ոչ թէ հակակրութիւն , այլ համակրութիւն ցոյց

տալ — որքան ալ դժուար ըլլայ ան՝ մեր սրտին համար — այն անձին հանդէպ՝ որուն դատը քննելու կոչուած ենք . ոչ թէ ցոլական (réflexe), այլ իմաստասիրական մտածումներէ կառավարուիլ, ահա՛ ինչ պէտք է ըլլայ դատ մը քննելու առաջին պայմանը : Ի՞նչ են սու տղայական ծափերը՝ անխորհուրդ կերպով առաջարկուած պարսաւանաց քուէի մը համար : Չմոռնանք թէ ժողովուրդը կայ «վանդակէն ներս», և ժողովասրահն իբր դպրոց ալ պէտք է ծառայէ անոր : Գէշ դպրոց մը չըլլայ մեր ժողովասրահը :

* * * Ենթագիտակցութիւնը : Գիտեմ, հաշուի առնելու է ան՝ նախորդ Պատրիարքին դատավարութեան մէջ : Գիտեմ թէ նոյն իսկ եթէ մէկ հատ չօչափելի, օրինական փաստ չունենայինք մեր ձեռքը, մեր հոգւոյն խորը նշնջող զարհուրելի փաստեր կան . սնորոշ, տարտամ շատ անդամ, բայց իրական, նախորդ Պատրիարքին դէմը տնկուող : Բայց մեր պարտականութիւնն է այդ տարտամ դիժերը ճշդել կարելի եղածին չափ, մաքրել դանոնք :

* * * Յոլական գործ, ի՞նչ անախորժ խաղեր կը խաղայ այն մեղ : Յատենի ժողովոց կը յայտարարուի թէ ժողովին կաթողիկոսական առաջին ընտրելին է Իդմիրլեան Սրբազանը : Այս բայցայայտ և բարձրաձայն յայտարարութիւնը լսելէ վերջ կը ստանձնենք պատգամաւորի պաշտօնը . մէյ մ'ալ անախորժ անակնկալի մ'առջև և ձախող դիրքի մը մէջ կը դնենք ժողովը յայտարարելով թէ մեր առաջին ընտրելին Իուրեան Սրբազանն է :

* * * Յաւալի կերպով ծիծաղելի ենք՝ երբ չգիտեմ ի՞նչ տեսակ արդարասիրական կամ ազգասիրական զգացումէ մղուած, դիտակցարար կամ անգիտակցարար կը խեղաթիւրենք ուրիշին բացայայտ կերպով անկեղծ և պարզ զգացումներն ու մտածումները : Տեղապահ Սրբազանը, իրողութիւններ ի ձեռին, ցաւ կը յայտնէ գաղթականնե-

րէն ումանց անվայել ընթացքին համար . ի կարգ կը հրաւիրենք զինքը՝ ազգն ամբաստանողի զգացումներ վերագրելով անոր : — Կաթողիկոսական պատգամաւորն Իզմիրլեան Հայրիկը կ'ուզէ տեսնել բողոքած՝ Պատրիարքական Աթոռին վրայ , իբրև Դուրեան Սրբազանէն աւելի յարմար՝ ազգին և երկրին ներկայ վիճակին մէջ . նախատինք կը տեսնենք իր այս խօսքերուն մէջ Դուրեան Սրբազանի անձին դէմ և յետս կոչում կը պահանջենք իրմէ : Զգուշութիւն , Տեա'րք Երեսփոխանք , վտանգաւոր խաղ մըն է ուրիշին խիղճին հետ խաղալը :

* * Ազգ . Սահմանադրութեան որոշ և մեղ ծանօթ տրամադրութիւնները կը սրբազրենք և մեր վիավաքին համաձայն առաջարկնուր կ'ընենք , իբր թէ Օրակարգին վրայ ըլլար Սահմանադրութեան վերաքննութիւնը : Պարզապէս անըմբռնելի է այս :

* * Այո՛ , սիրելի Վոսմշապուհ էֆ . , իրաւունք ունիք , ատենական ամենատարրական ճշմարտութիւն մըն է որ մէկ նիստէն միւս նիստը , արդէն տրուած որոշումը չբեկանուի , առաջին նիստին մէջ տրուած քուէին հակառակ քուէ չտրուի երկրորդ նիստին : Այո՛ , բայց եթէ այդ տրուած որոշումը գիտակցական որոշում մը չէ . եթէ քուէն տուողն ինքն ալ չգիտէ որոշ կերպով թէ ի՞նչ բանի տուած է իր քուէն : Ձե՛ւր պէտք է զոհուի այն ատեն հիմին , թէ հիմը՝ ձևին : Ահ , եթէ խորհէինք միշտ թէ ո՛րքան պատասխանատուութիւններով լեցուն է ձեռքը՝ որ վեր կ'ելլէ :

* * Եւ որպէս զի պաշտպանուած բնաբանը զիւրաւ հասկըցուի , մանաւանդ չորս հինգ ժամ ուղեղային ձրդատումէ վերջ , ջանանք միշտ այնպէս մը խօսիլ որ ատենաբանին խօսելէն վերջը , ունկնդիրը չստիպուի փնտռել թէ ի՞նչ ըսաւ ատենաբանը : Արդ , այս անպատեհութեան մէջ չիյնալու ամէնէն ապահով միջոցներէն մէկն է լաւ

ըմբռնած և լաւ ուսումնասիրած ըլլալ բնարանը, ապա թէ ոչ՝ «ձին վար կը նետէ ձիաւորը»:

* * Որչափ ուրախ էինք որ վիճարանութիւնները բաւական քաղաքավար ընթացք մ'ունէին. բայց քիչ մնաց որ անցեալ օր այդ ուրախութիւնը ցաւի փոխուէր: «Անձնականութեան չդպչիլ, բնա՛ւ, բնա՛ւ»: Մէր մըտքին առջև ունենանք միշտ այս սկզբունքը, որ ալիան և ուր պէտք է ըլլայ ինքզինքն յարգող ամէն վիճարանութեան:

* * Եւ անո ի՛նչպէս Ղալաթիոյ ժողովասրահը իրարավարժական դպրոց մըն է նաև ժողովականներուն համար: Զիրար դաստիարակելու պէտք ունինք և պիտի ունենանք մինչև վերջը: Կարգապահութիւն, լրջութիւն, անկեղծութիւն, դիտական և քննող միտք, անա կարգ մը էական յատկութիւններ զորս իրարմէ պահանջելու պարտաւոր ենք և զորս, ճի՛շդ այս պատճառաւ, իրարու սորվեցնել՝ պարտականութիւնն է մեզմէ իւրաքանչիւրին:

* * Ի՛նչ լրջութիւն, ի՛նչ կորով, ի՛նչ անկեղծութիւն կը ճատագայթէ մեր սիրելի Նախագահ Սրբազանին անձնամբողջ, ի՛նչ ցայտուն հակադրութիւն կը կազմէ ան՝ իր թեթեւամիտ նախորդին հետ — ներուի ինձ այս ոչ-խորհրդարանական ոճը. ի յաւելուածոյ սրտի խօսի բերանս — Նախորդ Պատրիարքն ամէնէն լուրջ բաներուն կը մօտենար՝ զուարճանալով ամոնց հետ՝ առանց խղճահարութեան, և զուարճութեան առիթներու վերածելով դանոնք: Իսկ Իզմիրլեան Սրբազանը. անկարելի է զինքը տեսնել, զինքը լսել և չլսել. «Եթէ մեր այս Պատրիարքին օրով ալ բան մը չկրնանք ընել, ոչ մէկ Պատրիարքի օրով բան մ'ընելիք ունինք»:

* * Ժողովասրահն ինքզինքը կը գտնէ, թէև դանդաղ կերպով, ինչպէս . . . ամէն բարեշրջութիւն: Ոչ միայն սեղանը կանաչացած է, այլ և բեմ մ'ալ կայ հոն հիմա,

որուն վրայ չի տեսնուիր սակայն, դաւաթ մը «չաքարեալ» ջուրը, հաւանականաբար աւելորդ բան մը համարուած ան՝ առաջին անգամուան համար, կանխատեսուած ըլլալով թէ նախ ատենարանները պէտք ունէին ընտելանալու ամպիոնին տեսքին հետ, մինչև որ տեսակ մը քաջութիւնն ունենային անոնք հոն կլլելու՝ խօսելու համար, յարդելով այսպէս Ազգային ժողովոյ Կանոնագրութեան 23րդ յօդուածը :

Հիմա կ'սպասենք ջերմոցին, կարեւոր՝ որքան ֆիզիքականին նոյնքան իմացականին համար, հաստատուած ըլլալով թէ ցուրտը նպաստաւոր չէ մտածման կեանքին :

* * Ատենական կողմակերպութեան տեսակէտով, ժամանակն եկած չէ՞ որ երեսփոխաններս ժողովասրահին մէջ մեր որոշ տեղերն ունենանք՝ մեր բժրոնմանոց համեմատ : Այս արտաքին ուղղակները, ինքնին թէև անարժէք, առանց աղղեցութեան չեն, սակայն, մեր ուղեղին վրայ : Միւս կողմէն, իրաւ է թէ աջակողմեան կամ ձախակողմեանի մեր դերին վրայ լրջօրէն խորհած մտածած պէտք է ըլլանք : Արդ, չզիտեմ թէ քանի՞ երեսփոխան այս խոստովանութիւնը կրնայ ընել ինքզինքին :

* * «Մի՛ ընդմիջէք խօսքս, կ'աղաչեմ.» քանի՞ քանի՞ անգամներ այս արդարացի դիտողութիւնը լսուեցաւ ժողովասրահին մէջ : Ու կը վախնամ թէ շարունակենք չը յարդել Կանոնագրութեան 28րդ յօդուածին առաջին մասը, ցորչափ որոշում չտանք մեր ձեռքն ունենալութուղթ ու մատիտ, նշանակելու համար թեր ու դէմ կարծիքները դորս կը թելադրեն մեզ ատենարանին խօսքերը : Չեմ խօսիր այն ծառայութեան վրայ զոր պիտի մատուցանէին մեզ թուղթն ու մատիտը՝ եթէ տրամադրութիւն ունինք մեր ըսելիքներուն գո՛նէ մէկ մասը մոռնալու, երբ ոտքի կ'ելլենք խօսելու համար :

* * Անգամ մ'ալ կ'աղաչեմ, Ատենապետ էֆէնտի, բժշկեցէք զմեզ սա խօսելու հիւանդութենէն: Բացորոշ կերպով յայտարարեցէք թէ ոչ մէկ երեւոյթիսան իրաւունք ունի խօսելու՝ երբ նոր բան մը չունի ըսելիք: Ի գործ դրէք Ատենապետի ձեր իրաւունքը: Մնաց որ Դիւանը պէտք ունի ինքզինքը դաստիարակելու՝ իր պաշտօնին բարւոք կիրառման մասին:

* * Երկրորդ անգամն է որ պարսաւադիտութեան ենթակայ կ'ըլլամ: Առաջին անգամուն — Սահմանադրութեան վերահաստատութենէն մէկ քանի օր առաջ — Ուսումնական Խորհրդոյ կողմանէ, որ նախորդ Պատրիարքին փափաքին համաձայն, հաւատաքննութեան ատեանը կը հրուիրէր զիս — թէև լրագիրներու մէջ միայն երեւցաւ այդ հրաւերը, և պաշտօնական հրաւերը չստացայ ընաւ, ինչ որ արգելք մը չեղաւ որ՝ լրագիրներու մէջ այդ հրաւերը կարդալուս պէս՝ բողոքագիր ուղղէի առ Ուսումնական Խորհուրդն — որովհետև յանդգնած էի, անուանական կերպով Ուսումնական Խորհրդոյ կողմանէ, ըստ իրապէս նախորդ Պատրիարքին կողմանէ պատրաստուած — դիտէք որ ամէն բանի միջամուխ կ'ըլլար նախորդ Պատրիարքը, խելքը հասածին ալ չհասածին ալ — աղգային վարժարաններու կազմական կանոնադրին մասին քննադատական մէկ քանի խօսքեր ընել՝ իրր յառաջարան, և «խայտատակ» անուանել այդ կանոնադրութիւնը:

Իսկ այս անգամ Երեւոյթիսանական ժողովոյ յարգոյ պաշտօնակիցներէս մէկն է որ ապօրէն և անախորժ կը գտնէ որ Երեւոյթիսան մը իր կարծիքը, զգացումներն ու տպաւորութիւններն յայտնէ մամուլին միջոցաւ: Թերևս չվերադառնայի հոս այս խնդրոյն, եթէ Բէ-շ-ն-դ-ի-նի տեղեկարարը, տարբեր բաներ ըսել տուած չըլլար ինձ՝ քան ինչ որ ըսի յատենի ժողովոյ: Երեւոյթի ժողովոյ

նիստերն հրապարակային են, հետեւաբար ամէն Երեսփոխան, Էրէֆէնի հանգամանակ իրաւունք ունի մամուլն ընտրելու իբր միջոց իր կարծեաց արտայայտման:

Կալով նախորդ Պատրիարքին դէմ պարսաւանոց քուէի խնդրոյն, զոր յարգելի պաշտօնակիցս առաջարկած էր նախ քան յատուկ Յանձնաժողովոյ մը քննութեան արդիւնքը, անգամ մ'ալ կը կրկնեմ թէ անժամանակ էր, անխորհուրդ էր ան, որովհետեւ հակառակ էր արդարութեան գիտական սկզբունքներուն:

* Սրդարութեան գիտական սկզբունքը, ահա՛ ինչ որ մասնաւոր կարեւորութիւն մը կուտայ Աւետիս էֆ. Սուրէնեանի նամակին. պէտք է այնքան նախանձայնութիւն ցոյց տանք այս խնդրոյն համար՝ որքան ցոյց տուաւ Զօլա, Ճշմարտութեան այդ հոյակապ ախոյեանը, Տրէյֆիւսի դատին համար:

* Սովեալները: Ահ, ինչ կակծեցուցիչ հարց է այն որ ամէն նիստի կը խոցոտէ զմեզ: Համերաշխութիւն, ընկերային պարտք, եթէ սին բոտ մը չես դու, պէտք է ցոյց տաս մեզ միջոցները՝ ստոյգ մահէ ազատելու մեր եղբայրները: Թող իւրաքանչիւր ոք տայ, ոչ իբր ողորմութիւն, այլ իբր իրական պարտք, ինչ որ կրնայ տալ, սկսեալ տասը փարայէն, և օգնութիւնն ապահովուած պիտի ըլլայ: Ընկերային այս պարտքն իրական է. մեզմէ իւրաքանչիւրն իր գոյութիւնը կը պարտի ուրիշին. անհատն ընկերութենէն զուրս գոյութեան իրաւունք չունի: անհատը գոյութեան իրաւունք ունի իբր մէկ մասն համայնքին, ազգին, ընկերութեան: Մէկն ամէնուն համար, ամէնքը մէկուն համար. ահա՛ քանաստեղծական նշանաբանը, ուր խառացուած է մեր գոյութեան պայմանը: Տանք դրամ, ուտեստ, զգեստ. մեր պարտքն է հատուցանել. չհատուցանել՝ գողութիւն է, աւազակութիւն է:

* * Ախ, սա Երուսաղիմայ Միաբանութիւնը, կամ մանաւանդ չմիաբանութիւնը: Ամօթ: Իբր թէ Ազգը քիչ հոգ ունենար, այդ անխիղճները, անխղճութեան քոյր նրբութիւններն ի գործ կը դնեն՝ անտեղի հոգեր աւելցնելու Ազգին արդէն չափազանց բաղմամբիւ անձկութեանց վրայ: Անզգամներ:

* * Երկու հարցապնդումներ, երկուքն ալ դաստիարակութեան վերաբերող, կարծէք պէտք եղածին չափ չչահագրգուցին ժողովականները: Եթէ ճիշդ է տպաւորութիւնս, ցաւալի պարագայ մ'է այս: Ի՞նչ բան աւելի կարեւոր, ազգի մը ճակատագրին համար, քան դաստիարակութեան հարցը, և ի՞նչպէս մեկնել այն տեսակ մը անփութութիւնը որ ցոյց կը արուի մէկ կողմէն նոր Ուսումն. Խորհրդոյ կազմութեան, միւս կողմէ, Կեդրոնականի վերաբացման առթիւ: Խորունկ համոզումս է թէ մեր կրթական կազմակերպութիւնը հիմնական բարեփոխութեան կը կարօտի անհրաժեշտապէս. արդ, ազգային դաստիարակն՝ ըլլալով մանաւանդ այն անձն որ, սկզբամբ և ըստ սահմանի, կ'ըբաղի մանկավարժութեամբ և մօտէն տեղեակ է մեր դպրոցներու վէրքերուն, Ուսումնական Խորհրդոյ մէջ գո՛նէ մէկ երկու հաս այդ պաշտօնին յարմար ուղղային դաստիարակներ պէտք է գտնուին անհրաժեշտապէս: Գործին մարդն ազգային դաստիարակն է մանաւանդ, միւսներն օժանդակներ և լրացուցիչներ են: Ժամ է որ ընդունինք այս ճշմարտութիւնը, և վստահնք այն տեսակ մը վարկարեկութիւնը, որուն երկար ատեն ենթարկուեցաւ դաստիարակը: Ազգային դաստիարակը պիտի պաշտպանէ իր այս իրաւունքը, որ իր պարտականութիւնն է միանգամայն:

* * Գալով Կեդրոնականի խնդրոյն, ի՞նչ անըմբռնելի պատճառներ են անոնք որ դպրոցին դուռները դոց կը պահեն ցարդ՝ այդ միւս սովեալներուն, որոնք նուազ

խղճալի չեն քան Չէյթունիները : Տակաւին պիտի հանդուրժե՞նք այն զարհուրելի զրկանքին՝ որուն հնթարկուած է ամբողջ սերունդ մը խոստմնալից և բեղուն : Մտածենք թէ ի՞նչ պատասխանատուութիւն է՝ տկարին, ինքզինքը պաշտպանելու տնկարողին մեաս հասցընելու պատասխանատուութիւնը, և վերաբանանք շուտով, շուտով կեդրոնականը, մեր տպագայ սերունդին այդ միակ ժողովրդական տնկարանը :

* * Նախորդ Պատրիարքին դատը քննելու պաշտօն ունեցող Յանձնաժողովը պիտի կազմուի յառաջիկայ նիստին մէջ : Մաղթենք որ Յանձնաժողովոյ այս ո՛րքան կարեւոր նոյնքան փափուկ աշխատութեան մէջ Սիրար թարգմանն ըլլայ Միտքին, և ոչ կիրքերուն :

* * «Օրինական մեծամասնութիւնը 71 է, մինչդեռ մենք 67 ենք միայն : 67ը չի կրնար մեծամասնութիւն նկատուիլ : Եթէ նկատենք, օրինազանցութիւն ըրած կ'ըլլանք, Սահմանադրութեան դէմ մեղանշած կ'ըլլանք : Ինչ կ'ըլլայ՝ ըլլայ, պէ՛տք է խոնարհիլ օրէնքին տուել :» — «Բայց արդէն ընտրուած 140 Երեսփոխան չունինք որ 71ը մեծամասնութիւն ըլլայ : Արդէն ընտրուած Երեսփոխաններուն թիւը նկատի առնելով, 67ը մեծամասնութիւն է, և աւելին իսկ :» — «Նոյն իսկ հին Ազգ. Ժողովներու մէջ 51ը մեծամասնութիւն բնորոշուած է : Մենք ինչու չընդունինք :» — «Պէտք չէ որ հին դեղձումները մենք նուիրագործենք, և յետոյ, պէտք է քննել թէ ի՞նչ պարագաներու մէջ և ի՞նչ կերպով 51ը մեծամասնութիւն նկատուիր է այն ատեն . . .» ևն . . . Ուր որ այս սիրտմաշուք խօսքերը՝ միայն անոր համար որ պարտաճանաչ չենք, պատասխանատուութեան գորաւոր զգացում չունինք : Արդի՞ւնք : Կարեւոր, ստիպողական խնդիրներ կը ձգձգուին : Մեղք է ու ամօթ է : Սիրա կը ծակէր մեր նախագահ Սրբազանին՝ Կղզիացեալ մնացած ըլլալու

առթիւ յայտնած ցաւը, բողոքը: Հաւաքուինք մեր սիրելի Պատրիարքին շուրջը, և վճարենք, իւրաքանչիւրնիս, մեր ընկերային պարտքը, եթէ կ'ուզենք պահպանել մեր գոյութիւնը, եթէ չենք ուզեր կորսուիլ կեանքի պայքարին մէջ, հիմա՝ ամէն ատենէ աւելի լուռն մեզ համար: Ոչ միայն չմերժենք մեր աշխատակցութեան ուղղուած կոչերը, այլ ինքնաբերաբար մատուցանենք մեր գործակցութիւնը:

* * Քաղաքական ժողովը, Ազգային ժողովին հետ կ'ընդունի թէ Ուսումնական Խորհրդոյ մէջ ազգային դաստիարակ պէտք է: Բայց ընտրութիւնն արդէն կատարուած է, առանց ազգային դաստիարակի: Կ'սպասենք ասպետական թե՛քի Ուսումնական Խորհրդոյ մէկ երկու անդամներուն կողմանէ՝ իրենց տեղը տալու համար ազգային դաստիարակներու: Որքան պիտի մեծնան անոնք այն ատեն մեր աչաց առջև:

* * «Բժիշկներն արգիլած են իրեն մտքի ու է յուղում: Խնայենք իր ատողջութեանը: Եթէ արդարասիրութիւնն առաքինութիւն մ'է, գթասրտութիւնն ալ ուրիշ առաքինութիւն մ'է: Յետաձգենք մեր ամբաստանութիւնները . . . » Այս լիամասոր նման — զիստով արտասանուած — խօսքեր կը լսուին Ղալաթիոյ ժողովասրահին մէջ՝ մէկ երկու նիստերէ ի վեր: Կը խոստովանիմ թէ, թէև չեմ կարծեր անդուժ քարոսիրտ մէկն ըլլալ, նախորդ Պատրիարքին նկատմամբ ցոյց տրուած այս արդահատանքին ընդունակ չեմ դտներ ինքզինքս: Նախորդ Պատրիարքը կա՛մ անմեղ է կամ ո՛չ: Եթէ անմեղ արդար է, այդ ամբաստանութիւններն ո՛ր է յուի, վնասակար աղղեցութիւն պէտք չէ ընեն իր վրայ: Ընդհակառակն, ամբաստանութիւններն ո՛րքան աւելի բազմաթիւ ըլլան՝ ա՛յնքան արժէքաւոր պիտի ըլլայ իր ռեպուտացիան, ա՛յնքան աւելի պիտի բարձրանայ նախորդ:

Պատրիարքը իր և ուրիշներուն աչացը առջև : Իսկ եթէ յանցաւոր է, նախ անիրաւութիւն է, ախտաժետ գթասրտութեան գործ է յեառձգել անոր դատը : Իրեններուն կ'իյնայ, եթէ պէտք տեսնեն, իրմէ գաղտնի պահել այդ մասին ամէն դրուած կամ ըսուած : Եւ յետոյ, մենք ի զուր պիտի փորձէինք խնայել իրեն ո՛ր և է յուզում, եթէ իրօք յանցաւոր է ան. այդ յուզումը, անգութ, անողոք այդ յուզումը պիտի բղխի իր ներսիդին, հակառակ արտաքին, արուեստական ամէն արգելքներու և զգուշութեանց : Անարդարութիւն մը գործողին սրտին մէջ կը ձեւանայ անջնջելի առամ մը, որ մարդկային բնութեան գերազանց տուամն է, և այդ տուամն այնքան աւելի վաանդաւոր, այնքան աւելի աղիտաբեր է, որքան աւելի մեծ է մարդը և որքան աւելի բան գիտէ ան : Այդ յուզեալ վայրկեաններուն, Նաբոլէոն ի զուր կ'ըսէ իւրովի թէ՛ մեծ կեանքի մը բարոյականը ՚չի կրնար ըլլալ այնքան պարզ՝ որքան է սովորական կեանքի մը բարոյականը, թէ գործօն և կորովի կամք մը ունի առանձնաշնորհութիւններ՝ որոնցմէ զուրկ է կայուն և անզօր կամք մը, թէ արդարացի է անտեսել ինչ ինչ խղճահարութիւններ, երբ մեծ ու փառաւոր նպատակի մը համար անտես կ'առնենք զանոնք . թէ չարիք հասցընելը վտանգաւոր չէ, երբ մարդ գիտէ թէ չարիք կը հասցընէ, և ինչո՛ւ : Այս ամէնը չի խաբեր բնութեան խորքը : Անարդարութեան գործ մը կը սասանէ միշտ այն վատահոութիւնը զոր էակ մը ունէր ինքզինքին և իր ճակատագրին վրայ : »

* * Այս ո՛րքան ժամավաճառութիւն : Խնդիր մը սեղանին վրայ կը ներկայանայ՝ դուրս գալով դիւանական թուղթերէ : Եւ ահա՛ ժամերով վիճարանութիւններ տևողի կ'ունենան այդ խնդրոյն վրայ, ապօրէն կերպով, քանի որ Օրակարգը չէ անցած այդ խնդիրը : Կարծեմ թէ Դիւան-

նին հետեւելիք ուղղութիւնը պէտք է ըլլայ՝ խնդիրը ներկայացնել, որոշել տալ ժողովին թէ պէ՞տք է յաջորդ նիստի Օրակարգն անցնի ան, և անցնիլ Օրակարգին :

* * Դարձեալ, խնդրոյ մը կարգադրութիւնը կը պատկանի Բաղաք. ժողովին կամ այս ինչ Յանձնախումբին : Մոռնալով այս կարեւոր կէտը, կ'սկսինք վիճարանութեան նիւթ ընել խնդիրը, այս կերպով անտեղի ժամաւաճառութիւն մը և դժուար պակաս մը թոյլատրելով մենք մեզի : Ի մտի ունենանք, Տեսարք Երեսփոխանք, Թալեռանի խօսքը . «pas trop de zèle!» որքան ալ պարագոնները մղեն զմեզ չափազանց եռանդ ցոյց տալու : Հետեւական ըլլանք մենք մեզի հետ : Երբ Յանձնաժողով մը կ'ընտրենք, ռանձգութիւններ չընենք անոր գործունէութեան վրայ, ցորչալի պատճառ և իրաւունք չունինք դժգոհ ըլլալու անոր գործունէութենէն : Այս քանի՞ անգամ է որ ասոր հակառակ ընթացք մը կ'ունենանք :

* * Pas trop de zèle! Ծրագիր մը, առաջարկութիւն մը կը ներկայացուի մեզ՝ կենսական ու կնճռոտ խնդրոյ մը վրայ : Առտուել կամ նուազ երկար ատեն կը վիճարանինք առաւել կամ նուազ գիտակից կերպով՝ նոյն խնդրոյն վրայ . յետոյ, քուէարկութիւն Կարծեմ թէ ձախող դրութիւն մըն է այս : Որքան կնճռոտ նոյնքան կենսական խնդրոյ մը վրայ հանդարտ մտօք և երկար ատեն խոկալու պէտք ունինք՝ կարելի եղածին չափ խոհական որոշման մը յանգելու համար : Պէտք է որ, որքան ալ ստիպողական ըլլայ խնդիրը, գոնէ մէկ քանի որ որոճանք նոյն խնդրոյն վրայ և յետոյ բերենք մեր կարծիքները՝ ժողովին :

* * Գաղթակոններու հարցը : Շատ բարդ խնդիր, այո՛, բարդ՝ պատասխանատուութիւնները ճշդելու տեսակէտէն, բարդ՝ դարման գտնելու տեսակէտէն : Բայց լսելէ վերջ Յանձնաժողովին տեղեկութիւնները, ի՞նչպէս

տրամադիր չըլլալ կուսակից ըլլալու նիչէի անատակներու վարդապետութեան, ընդդէմ Թալսդոյի՝ չարիքին չընդդիմանալու վարդապետութեան: Ամէն պարագայի մէջ, անհերքելի ճշմարտութիւն մը կայ, սա է թէ մեր ժամանակի գթասրտութիւնը, պէտք չէ ըլլայ հին ժամանակներու գթասիրութիւնը, որ շատ անգամ ախտաժէտ, ընկերային շահերուն վնասող կը ներկայանայ այսօր: Ողորմածութեան նոր կողմակերպութեան մը պէտք կայ համաձայն ընկերային արդի ըմբռնմանց: Պէտք է ի մտի ունենանք այս կէտը՝ Գաղթականներու խնդրոյն մէջ: Ողորմութիւնը՝ արժանաւորին. ա՛յս պէտք է ըլլայ, կարծեմ, մեր սկզբունքը:

* * * Կերջապէս լուծուեցաւ սա մեծամասնութեան խնդիրը, որ մէկ երկու նիստեր արգելք եղաւ մեզ Օրակարգին մօտեցնալու: ՂԵՆ է որ ընդունուեցաւ, և բոս իս, իրաւամբ: Յարդ ընտրուած երեսփոխաններէն, բացակայութեանց ամէն հարկեցուցիչ պատճառներ հաշուի առնելով, ՂԵՆ ներկայութիւնն ապահով է, եթէ իւրաքանչիւր երեսփոխան իրեն վարուց ընթացք ընտրած ըլլոյ՝ իր երեսփոխանի պարտականութիւնը խղճի մտօք կատարել, իր պարտականութեան գերին ըլլալ: Իսկ եթէ հարկ է ենթադրել թէ պատասխանատուութեան զգացումը պիտի շարունակէ թոյլ մնալ երեսփոխանացս մէջ, թիւր կարեւորութիւն չունի, ո՛ր և է թուով, միշտ վախ կայ որ մեծամասնութիւն չգոյանայ: Մէկ երկու նիստերէ ի վեր փոքրամասնութեան տաղնապը չկայ ժողովարահին մէջ, թէև երեսփոխաններս sur le qui-vive ենք միշտ, ա՛յնքան զժուարաւ կը դոյանայ ՂԵՆ:

* * * Կուսակցութիւններու գողափարը կամաց կամաց կը մտնէ Երեսփոխանութեան մէջ, ինչ որ բարի նշան մըն է: Պէտք է խոստովանիլ թէ սկզբունքի լուրջ պայքար մը դեռ չէ սկսած Ազգ. ժողովին մէջ: Իւրաքանչիւր

չիւր երեսփոխան, առանց գուցէ նախապէս ուսումնասիրած ըլլալու օրակարգին վրայի խնդիրները, կը ներկայանայ ժողովասրահը, և չեմ գիտեր ո՛ր աստիճան առաջնորդուելով անանձնական, առարկայական մտածումներէ, անկողմնակալութեան, զուտ արդարութեան և իրաւանց սկզբունքներէ, նոյն վայրկենի թելադրութեանց տակ, կը խօսի կամ կուտայ իր քուէն: Այս կերպով չէ սակայն որ պիտի պաշտպանուին ազգին շահերը, այս կերպով չէ որ դէպի կատարելութիւն պիտի առաջնորդենք ազգը: Անանձնաւորութիւն և անկեղծութիւն անհրաժեշտ հանգամանքն է ամէն երեսփոխանի: Բայց այսչափն ալ չի բաւեր: Պէտք է զիրար լուսարանել, զիրար համոզել, ինչ որ անշուշտ չի նշանակեր իրարու կարծեաց վրայ ճնշում բանեցընել: Գաղափարաց ընդհարումէն է որ լոյս կը ծագի, այո՛, պայմանու, սակայն, որ գաղափարաց ընդհարումը կամ խարտումը, ինչպէս պիտի ըսէր Մոնդաները, հանդարտ կերպով, առանց աճապարանքի, գիտական ոգւով կատարուի և ոչ թէ ջղագրգռութեամբ, հապճեպով՝ ինչպէս տեղի կ'ունենայ յաճախ Ազգ. Ժողովին մէջ: Աստի՛ կարեւորութիւնը կուսակցութեանց, ուր երեսփոխաններ պիտի ուսումնասիրեն նախապէս օրակարգի խնդիրները, նպատակ ունենալով կարծեաց միութիւն մը գոյացնել: Աւելորդ է ըսել թէ կուսակցութեան մը պատկանիլ չի նշանակեր իր կարծիքը ծախել, ինչ որ անբարոյականութիւն մը պիտի ըլլար: Զանալ զիրար լուսարանել, զիրար համոզել, բայց պահել միշտ մտքի անկախութիւնը, ահա՛ հետեւելի ուղղութիւնը՝ կուսակցութեանց մէջ:

* * Այս կուսակցութեանց շնորհիւ է որ Ազգ. Ժողովին մէջէն պիտի անհետանան նախապաշարումները, նախայղացեալ կարծիքները՝ այս ինչ խնդրոյ մասին, կամ խնդրոյ մը հետ կապուած այս ինչ անձի մասին,

որոյ նկատմամբ, այս կամ այն պատճառաւ, իրաւամբ կամ յանիրաւի, համակրութիւն կամ հակակրութիւն կը սածենք: Այս կուսակցութեանց շնորհիւ է, նոյնպէս, որ նոր կարիւրութիւն մը պիտի ստանան մեր մտքին մէջ խնդիրներ՝ որք անկարելոր կը թուէին մեզ: Այսպէս, օրինակի համար, վերջին նիստերուն մէջ, Ազգ. կեդր. Վարժարանի Նախակրթարանի շէնքին մէջ պատրասարուած ուսանողներու խնդիրը, որոնք առողջապահական ամէնէն վատթար պայմաններուն մէջ կը գտնուէին: Այս խնդրոյ մասին առաջին հարցապնդում մը, որ սակայն շատ որոշ և շատ թանձրացեալ կերպով կը պատկերացնէր ուսանողաց արգահատելի վիճակն և մասնաճանիչ կ'ընէր խնդրոյն ստիպողականութիւնը, մեծ համակրութեան չարժանացաւ, և գրեթէ դժկամակութեամբ մը պատասխանուեցաւ թէ խնդիրը նկատողութեան առնուած է արդէն: Բայց եթէ խնդիրը նկատողութեան առնուած էր, ուսանողաց վիճակը չէր բարելաւուած ևրեք շաբաթ վերջն ալ, և նոր հարցապնդման մը, Վարչութեան անդամներուն մէկուն կողմէ նոյն դժկամակութիւնը ցոյց տրուեցաւ: Եւ այս՝ մահու և կենաց խնդրոյ մը համար, քանի որ հակառողջապահական այդ միջավայրին մէջ տղաք դանդաղ կերպով կը մեռնէին ամէն օր:

Նոյն դիրքը՝ Վարչութեան անդամներու և ևրեախոխաններէ ոմանց կողմէ՝ կեդրոնականի խնդրոյն առթիւ: Դաստիարակ մը կը բողոքէ թէ Խնամակալութիւնը չարաչար անիրաւութիւն մը գործած է իրեն դէմ, թէ խնդիրն ո՛չ այնքան անձի խնդիր է, որքան խնդիր ազատագրութեան Հայ դաստիարակին, որ, ամէն ժամանակ զոհն ևղած է Թաղական աղաներու և Հոգաբարձութեանց, թէ, հետեւաբար, Ազգ. Ժողովին պարտականութիւնն է լրջօրէն գրադիլ Հայ դաստիարակին բարձրացման խնդրովը, քանի որ Ազգ մը այնքան կ'արժէ

որքան կ'արժեն իր դաստիարակները . թէ , միւս կողմէն , ազգին այն միակ ժողովրդային հաստատութեան մէջ , ուր պիտի կազմուի ապագայ սերունդը , ուսանողներ կը զոհուին ամէն օր , շատերը անդիտակցաբար , ուրիշներ համակամութեամբ , — և այսքան կարեւոր , այսքան կենսական խնդրոյ մը առթիւ բացուած վիճաբանութիւն մը խեղդել , խափանել կը փորձուի : Գայթակղեցուցիչ բան է աս , որ ահագին պատասխանատուութիւն կը հրաւիրէ Ազգ . ժողովին վրայ : Մէ'կ կողմ նախապաշարուած , մէ'կ կողմ՝ ամէն խնդրոյ մէջ անձնականութիւն տեսնելու սա մեր վատթար սովորութիւնը , կուսակցութիւններ կազմենք , անկեղծ կուսակցութիւններ , ուր խնդիրները քննենք բոլորովին անանձնական , առարկայական կերպով , լուստրանենք և համոզենք զիրար , և միացնենք մեր ազատ քուէները՝ անկեղծօրէն պաշտպանելու համար Ազգին շահերը :

(Բիւզանդիոն , 1908 , Հոկտեմբեր , Նոյեմբեր , 1909 , Մարտ)

Տ Ո Ւ Ք Ն Ո Պ Ո Ւ Ն Ե Ր Ը

Նետուած՝ քաղաքակիրթ կոչուած կեանքի մը մէջ որ կեղծիքէ և խարդախութենէ մանաւանդ կազմուած է . ատելութեամբ լեցուած՝ ջիղերը հիւժող այդ կեանքին դէմ , որու անիւներէն ճողոպրիլ անկարելի է , որքան անձկանօք կը փնտռենք այն առիթները՝ ուր , կարելի եղածին չափ հետու մարդէն՝ որ գայլ է մարդուն համար , կարենանք մխրճիլ ընտելեան մէջ , գլուխ գլխու տուած , սրտաբաց ապրելու համար անոր հետ , ու որքան հեշտութեամբ կը կարդանք այն գրուածքները որ , մէկ քանի ժամեր , պարզ կեանքը ապրիլ կուտան մեզ երե-

ւակայութեամբ, ֆուռիէական լաւագոյն սկզբունքներով կառավարուած երկրի մը մէկ անկիւնը :

Այդպիսի կեանք մըն է Տուքհոպոտներու կեանքը, որուն կը ծանօթանանք Թալսդոյի աշակերտ՝ Պիրիուքօֆի մէկ հրատարակութեանը միջոցաւ :

* * *

Տուքհոպոտները 20,000 հոգիէ բաղկացած ռուս աղանդ մը, հասարակութիւն մըն են, միշտ հալածուած, միշտ չարչարուած՝ ռուս կառավարութեան կողմանէ, անշուշտ անոր համար որ այս ցեղը եկեղեցի չերթար, սուրբերու պատկերները չընդունիր, չի խաչակնքեր, պահք չի բռներ, կամ թէ չի խմեր օղի, ու այս կերպով մեծ մեծ կը հասցնէ պետական դանձին, ինչպէս նաև անոր համար որ, հակառակ միշտ հալածուած ըլլալուն, անարտունջ կը շարունակէ աշխատիլ և իր յարատև աշխատութեամբը ձեռք բերած է դիւրակեցութիւն մը՝ զոր մութիկներէն շատեր իրենց երազին մէջ իսկ չեն տեսած. վերջապէս, և մանաւանդ, անոր համար նաև որ՝ Տուքհոպոտները, սկզբամբ, յանուն կրօնի, չեն ուղեր պատերազմի մասնակցիլ, թէև անշուշտ չարչարանաց ենթարկուած ըլլան իրենց այդ սկզբունքին համար՝ ռուս կառավարութեան կողմանէ. այդ «քրիստոնեայ եղբայր»ներուն սկզբունքն է՝ ոչ թէ կռիւ կեանքին համար, այլ միաբանութիւն կեանքին համար : Բայց արդի մարդկութիւնը չի հասկընար այդպիսի նշանաբան. հետեւորար, մինչ մէկ կողմէն գրաքննութիւնը կ'արդիւէր այդ աղանդով դբաղիլ և անոր վրայ խօսիլ, միւս կողմէն՝ կառավարութիւնը դահիճներուն կը յանձնէր կամ Սիպերիա կ'աքսորէր այդ մարդիկը, որոնց միակ յանցանքը՝ իրապէս քրիստոնեայ եղած ըլլալնին է :

Տուքհոպոտները, որ տասը տարի առաջ Ռուսիայէն

Քանատա գաղթեցին, ինքզինքնին կը դաւանին ցեղ մը՝ սերած այն երեք պատանիներէն զորս Նաբուքոդոնոսոր կ'ուզէր հնոցին մէջ նետել, ի զոհ Բաաղու, որովհետեւ կը մերժէին զինքն իբր Աստուած ճանչնալ: Այս աղանդը, իր երկու դարերու գոյութեան միջոցին, այնքան հալածանք կրած է որ՝ հալածանքի այս կեանքը համարած է այն բնականոն կեանքը որուն սահմանուած է ինքը:

Տուքհոպոուներուն համոզումն այն է թէ կրօնական արարողութիւնները կարեւորութիւն չունին հոգւոյն փրկութեան համար, և թէ՛ պաշտօնական եկեղեցին, բուն քրիստոնէութեան անկումովը, աւաղակներու որջ մը դարձած է: Ճշմարիտ և հաւատարիմ քրիստոնեաներու համախմբումը միայն կ'ընդունին, բայց այս համախմբումներուն համար որոշ անդ մը չունին, որովհետեւ կրօնական արարողութեանց յատկացուած տեղերու սրբութիւնը չեն ընդունիր: Իւրաքանչիւր ոք ազատ է իր տունը հաւաքելու իր եղբայրները՝ եթէ ուզէ: Եթէ հաւաքումը տեղի ունենայ աղքատի մը տունը, ունեւորները պէտք եղած նիւթական դիւրութիւնները կ'ընձեռեն իրեն: Ժողովարան հասած ատեն, այրերը և կիները, զատ զատ, զիրար կ'ողջունեն աջ ձեռքով և երեք անգամ զիրար կ'ողջագուրեն յանուն Աստուծոյ (երեք անձնաւորութեանց միութիւնը)՝ մարդկեղէն մարմինը սրբագործելու և հպարտութիւնը վանելու համար: Կը հաւատան թէ Յիսուս-Քրիստոս երկրիս վրայ եկած է և կը ճանչնան անոր գործերը, վարդապետութիւնը և զոհը: Բայց այս իրողութիւնները հոգեւորապէս կ'ըմբռնեն. այսպէս, Քրիստոսը պէտք է յղացուի մեր մէջը, ծնի, մեծնայ, սորվեցնէ, տառապի, մեռնի, յարութիւն առնէ և նորէն երկինք բարձրանայ՝ մեր մէջը, որովհետեւ ասո՛ր մէջ կը կայանայ մարդուն վերածնութիւնը: Հաւաքմանց մէջ,

աղօթք կ'ըսեն , սաղմոսներ կ'երգեն և Աստուծոյ պատուէրները կը սորվեցնեն իրարու : Որովհետեւ գրեթէ ամէնքն ալ անուս են , գիրք չունին , իրենց ուսուցումը բերանացի է և ուանդական : Քահանայ չունին . հովիւ մը միայն ունին , «Արդարը , Սուրբը» , որ իրենց միակ աէրն է և որուն պատուէրները իրարու կը սորվեցնեն ժողովներու մէջ . հոն , իւրաքաչիւր ոք , այր թէ կին , — արանց և կանանց մէջ խտիր չկայ բանականութեան տեսակէտէն — կրնայ ըսել ինչ որ գիտէ : Իրենց ամէնէն աւելի յարգած առաքինութիւնը՝ եղբայրսիրութիւնն է :

Իրենց կրօնական գիրքը Աստուածաշունչը չէ . Աստուածաշունչին մէջէն կ'առնեն ինչ որ կը յարմարի իրենց տեսութեանց : Իրենց կրօնքը հիմնուած է իրենց ուանդութեանց վրայ՝ զոր կը կոչեն «Կենդանի Գիրք»ը , և որ կազմուած է սաղմոսներէ , այսինքն՝ Նոր և Հին կտակարաններէն առնուած տուներէ , որոնց կը խառնուին իրենց կողմանէ յօրինուած վճիռներ :

ԺԹ . դարու սկիզբը , Աղեքսանդր Ա . , Լա Հաորի աղղեցութեամբ , մերժեց հալածել Տուքհոպոտները , բայց օրթօսօքս քահանաներուն մոլեռանդութեան գոհացում տալու համար , դանոնք ամէնքն ալ աքսորեց ի Մօլօչնիա Վօտի : Հոն , Տուքհոպոտները կազմեցին անկախ հասարակութիւն մը , դադրեցան Ռուս անունը կրելէ , բայց հաւանեցան Չարին վճարել տուրք մը : Բոլոր իրենց ստացուածքը դրին հասարակաց շէնք մը , միմիակ դրամարկղ մը կազմեցին , մէկ հօտի մէջ ամիտփեցին բոլոր իրենց դուարը : Իւրաքանչիւր եղբայր հասարակաց մթերանոցին մէջէն կ'առնէ իր պիտոյքը :

Տուքհոպոտները շատ ասպնջակամն են . բայց որպէս զի օտարականներու թերութիւններէն բարոյապէս չվնասուին , այս վերջիններուն համար մասնաւոր տուն մը շինած են : Հոն կ'ընդունին նաև սուս պաշտօնակալները :

Տուքհոպոսները շատ զթաաիրաւ են , ոչ միայն իրենց նմանեաց , այլ և անասուններուն հանդէպ , զորս երբեք չեն չարչարեր :

Տղաք կը մեծարեն իրենց ծնողքը և անդրանիկները՝ որոնք բռնապետական ընթացք չեն ներեր ինքզինքնուն :

Դաստիարակութիւնը սլարդ է և բնական : Երբ տղան կ'սկսի խօսիլ և հասկնալ , կարճ աղօթքներ և սաղմոսներ կը սորվեցնեն անոր , Սուրբ Գիրքէն պատմութիւններ կը պատմեն և քրիստոնէական օրէնքը կը սորվեցնեն անոր , առանց ո և է դիրքի օժանդակութեան : Երբ քիչ մը աւելի մեծնան , տղաք ներկայ կ'ըլլան մողովներուն , ուր կը դրուցնեն իրենց գիտցած աղօթքները և կ'երգեն սաղմոսներ : Այս հանդարտիկ դաստիարակութեան շնորհիւ , ծնողաց ոգին կը թափանցէ նոր սերունդին մէջ :

Եղբայրները արտաքսումէ տարբեր պատիժ չեն ճանչնար : Եթէ յանցաւորը քրիստոնէական ոգին կորսնցուցած է և ուրիշներու յոռի օրինակ ըլլալ կ'սպառնայ , եղբայր մը դինքը կը յորդորէ : Եթէ այսչափը չյաջողի , բոլոր եղբայրները հաւաքումի մը մէջ կը յորդորեն զինքը : Եթէ յանցաւորը յամառի , այն ատեն զայն կ'արտաքսեն հասարակութենէն :

Եթէ պատահի որ եղբայր մը ուզէ հասարակութենէն բաժնուիլ , բնաւ ճնշում ի գործ չեն դնել անոր վրայ . ընդհակառակը , իրեն ինկած բաժինը կուտան իրեն : Եթէ զղջայ և վերադառնայ , վերստին կ'ընդունին զայն :

Տուքհոպոսները ոչ կառավարութիւն , ոչ իշխանութիւն , ոչ պրաւոր օրէնք ունին . ինքզինքնին և զիրար կը կառավարեն շատ հանդարտ կերպով և համերաշխաբար : Եւ սակայն յաճախ չորս-հինգ ընտանիքներ կ'ապրին ընդարձակ իսպաի մը մէջ՝ կատարեալ մտերմութեամբ :

Մէկ կողմէ կառավարական հալածանքներ , միւս կողմէ

խարդախութիւններ բոլորովին կործանած էին տուքհոպոսները, որոնց մէջ, ի լրումն դժբաղդութեան, պառակտում ալ մտաւ միջոց մը: Արդ, այն տուքհոպոսները որ հաւատարիմ մնացած էին իրենց ազանդին — և ամէնէն բազմաթիւներն էին ասոնք — շատ դրամի պէտք ունէին Ռուսիան թողելու և ուրիշ տեղ մը գաղթելու համար: Թալսդոյ անոնց օգնեց անձնապէս: Յայտնի է թէ Ռուս իմաստասէր-գրագէտը իր երկասիրութեանց վաճառման արդիւնքէն հրաժարած է: Բացատրութիւն մը ըրաւ ի նպաստ տուքհոպոսներուն և անոնց յատկացուց արդիւնքն իր Յարուքիւն վիպասանութեան, զոր բարձր գնով մը ծախել տուաւ: Բաց աստի, յաջողեցաւ տուքհոպոսներու վիճակին վրայ կարեկցիլ տալու Անգլիոյ և Ամերիկայի քուէյքըրները, որ մեծապէս զիւրացուցին տուքհոպոսներու գաղթումը և ի Գանատա հաստատումը:

« Գանատայի կանանց Ընկերակցութիւն »-ը դրամ հայթայթեց անոնց՝ կով և հազուատ զնելու համար: Բրիտանական ազատ հողին վրայ, զինուորական ծառայութենէ զերծ էին, բայց քաղաքակիրթ երկրի մը մէջ էին, և ամէն քաղաքակիրթ երկիր ունի կազմակերպութիւն մը որուն հետ չեն հաշտուիր տուքհոպոսներու սկզբունքները: Այսպէս, ամէն գաղթական որ տասնևութը տարեկան է՝ իրաւունք ունի ընտրելու անտէր գետին մը, իր անուան արձանագրել տալու զայն և անոր տէրը դառնալու: Տուքհոպոսները մերժեցին հպատակիլ այս օրէնքին և, 1901ին՝ Գանատայի կառավարութեան ուղղուած ազերասպրով մը բացատրեցին թէ ի՞նչ պատճառներով կը մերժէին այդ օրէնքը: Անոնք կ'ըսէին. « Եթէ, տկարութեամբ, կարելի է արդարացնել մէկը որ իրեն կը սեպհականացնէ այն բաները զորս իր աշխատութեամբ տրտաղրած է, անկարելի է արդարացնել զայն՝ որ կը ճանչնայ Աստուծոյ օրէնքը և իրեն կը սեպհականացնէ ինչ որ ար-

դիւնքը չէ իր աշխատութեան, այլ Աստուծոյ կողմանէ ստեղծուած է բոլոր մարդոց համար: Պատերազմներու և վէճերու պատճառը այս չէ՞ միթէ: Տէրերու և դերիներու գոյութեան պատճառը այս չէ՞ միթէ: Աստուծոյ օրէնքը մարդոց կը հրամայէ իրր եղբայր ապրիլ՝ ընչից հասարակութեամբ, իրարու օգնելով. բայց եթէ մարդ մը կրնայ իւրացնել ինչ որ ինք չէ ստեղծած, ինչպէս կրնայ բաժնել իր եղբօր հետ՝ իր աշխատութեան արդիւնքը: Ուստի կ'ազատենք որ մեր տամադրութեան տակ զնէք հողերը՝ առանց պահանջելու անձնական սեպհականութեան իրաւունք: Գայով այդ հողերուն վարձքին, պարտաւոր ենք վճարելու՝ ինչ որ մեր նիւթական կարողութիւնը կը ներէ: »

Վէճի ուրիշ պատճառ մը եղաւ ամուսնութիւնները կառավարութեան ղեկուցանելու պարտաւորութիւնը: « Բարոյական փոխադարձ հրապոյրի մը սուրբ զգացումը միայն՝ օրինաւոր կ'ընէ ամուսնութիւնը յաջս Աստուծոյ, և չենք կրնար հանդուրժել որ այս վաւերացումը Աստուծոյ ձեռքէն ռասիկանութեան ձեռքն անցնի: »

Նոյնպէս, սուքհոպոսները պակասութիւն չեն ընդունիր. բայց որովհետեւ Աստուծոյ օրէնքը ազատութեան օրէնք մըն է, եթէ ամուսնութեան մէջ բարոյական հրապոյրը դադրած է՝ լծակիցները կրնան իրարմէ բաժնուիլ, առանց որ և է օտար միջամտութեան, զոր չեն ընդունիր. միայն թէ ոչ այրը ոչ կիներ պէտք չէ նորէն ամուսնանան:

Գանատայի կառավարութիւնը անկարելի դատեց ընդունիլ սուքհոպոսներուն պահանջումները և հրամայեց հպատակիլ երկրին օրէնքներուն: Կառավարութեան այս ընդդիմութեան արդիւնքն այն եղաւ որ՝ սուքհոպոսները ո՛չ միայն ա՛լ աւելի փարեցան իրենց համազումներուն, այլ նաև, ինչպէս կը պատահի յաճախ, կարելի

եղած ծայրայեղութեանը տարին զանոնք, և իրենցմէ շատեր սա մտածումն ունեցան թէ չէր բաւեր բուսակեր ըլլալ — տուքհոպոսները բուսակեր են —, և իր նմանները չսպաննել, այլ մարդը իրաւունք չունի իրեն համար աշխատցնելու անասունները: Տեսեալքար ազատ թողուցին իրենց կովերը և ձիերը: Կառավարութիւնը պարտաւորուեցաւ թողվել այս անասունները, զորս ծախեց 15 հազար տոլարի, և գումարը տուքհոպոսներու տրամադրութեան տակ դրաւ:

Մայրայեղութենէ ծայրայեղութիւն երթալով, հրաժարեցան զգեստէ, դրամէ, և խումբ խումբ — իւրաքանչիւր խումբ երբեմն կը բաղկանար հինգ հարիւր հոգիէ, այր, կին և տղայ — սկսան թափառել փողոցները, նոր օրէնքը քարոզելու համար: Գանատայի կառավարութիւնը ետ կեցաւ ու է միջամտութենէ, որպէս զի այս նոր թափառականները իրենք իրենցմէ համոզուին թէ անկարելի էր շարունակել այդպիսի կեանք մը: Սակայն երբ անոնք Եօրքդաունէ 200 մղոն հեռուցան, ստախոսները բռնի կառախումբ հեծցուցին զանոնք և իրենց գաղութը վերադարձուցին: Բարեբախտաբար, տուքհոպոսներուն պետը, Բիէն Վէսիկին, որ աքսորի մէջ էր, և բարոյական մեծ ազդեցութիւն մ'ունեցած էր միշտ անոնց վրայ հետուէն իսկ, ռուս կառավարութենէն արտօնութիւն ստացաւ Գանատայի գաղթականներուն մօտ երթալու: Իր ողջմտութեամբ, բարութեամբ և բարոյական հեղինակութեամբ՝ խելքի բերաւ այդ գրգռուածները: Անոնց հասկցուց թէ անտեղի էր շաշխատայնել ձիերը՝ զորս պէտք չէր նկատել իբր գերիներ, այլ իբր բարի բնակերներ, աշխատակիցներ: Եթէ ձին մարդուն կը ծառայէ, մարդն ալ ձիուն կը ծառայէ. ծառայութիւնը փոխադարձ է և երկուքն ալ կ'օգտուին: Ձին կ'աշխատի ոչ միայն իր ախրոջ ցորին տալու համար, այլ նաև բուսցնելու համար այն

վարսակը՝ որուն ինքը պէտք ունի : Մարդը կը հնձէ և կը ժողովէ խոտ՝ ձիերուն համար և ախոռներ կը շինէ անոնց :

Մէկ քանի տուքհոպոսներ խղճահարութիւն կ'ունենային կովեր բուծանելու, զի մի՛ գուցէ այս կերպով չափէն աւելի եղնէր ունենային և զանոնք մսավաճառներու ծախելով՝ մասնակցած ըլլային սպաննութեանց : Վէսիկին հանդարտեցուց անոնց խիղճը, բացատրելով անոնց թէ չողենաւին մէջ հանդիպած էր եօթը հարիւրէ աւելի դահազան տեսակ գաղթականներու, որոնք երկրագործութեամբ պիտի զբաղէին. եթէ աւելորդ եղ ունենանք, կ'ըսէր, այդ գաղթականներուն կուտանք, և այս կերպով մեր սկզբունքներէն չենք շեղիր :

Տակաւ առ տակաւ Վէսիկին յաջողեցաւ անոնց ընդունիլ տալ Գանատական կառավարութեան դրեթէ բոլոր պահանջները : Իսկ անոնց՝ որ կը կարծէին թէ իրենց պարտականութիւնն էր երթալ նոր օրէնքը քարտղել, Վէսիկին հարցուց թէ բաւական կատարելութեան հասած էին իրր օրինակ ծառայելու համար, աւելցնելով որ ինքը ինքզինքը բաւական կատարեալ չէր զգար այդպիսի ձեռնարկի մը համար : « Ամէն պարագայի մէջ, յիշեցէք թէ՛ դուք աէրն էք ձեր անձին, բայց իրաւունք չունիք գրկանք և տատապանք հարկադրելու ձեր կանանց և ձեր գաւակներուն : » Աւելին ըրաւ. արդարացուց Գանատական կառավարութեան ձեռք առած միջոցները. « Այս գործին մէջ Աստուծոյ մասը կը տեսնեմ եւ, բաւ. մեղք չէ՛ բռնութիւն ի գործ դնել արգիլելու համար մարդիկ անձնատապան ըլլալէ : Գանատայի կառավարութեան ըրածն ալ ուրիշ բան չէ : »

Այսպէս, այս իմաստուն և բարի մարդը քիչ առնուտան մէջ յաջողեցաւ, միայն համոզելով և առանց բռնասական միջոցներու դիմելու, կարգապահութիւնը վերա-

հաստատել տու քհոյութներու գաղութին մէջ : Մէկ քանի տարիներէ ի վեր անոնք հրաժարած են իրենց վարդապետութեան ծայրայեղութիւններէն և աշխատած են արդիւնաւորելու իրենց յանձնուած հողերը : Իրենց գաղութը խիստ բարգաւաճ է , երկրագործութիւն և ճարտարութիւն հուսաար յաջողութեամբ կը ծաղկեցնեն : Հաստատած են ջաղացքներ , սղոցարաններ , ասուիի , աղիւսի գործարաններ , և կը մտածեն քիչ ատենէն շաքարի զտարան մը հաստատել : Իրենց գործարաններու արտադրութիւնը չեն ծախեր և վարձքով գործաւոր չեն բանեցներ : Իրենց գիւղերը կ'որոշուին գինետան և անբարոյականութեան ծառայող ո և է շէնքի մը բացակայութեամբ :

* * *

Տու քհոյութներ , համակրելի , վեհոգի , խաւալի մարդիկ , որքան կը նախանձիմ ձեր վիճակին , որքան պիտի ուզէի ձեր մէջ ապրիլ : Դուք իրագործած էք ընկերաբանական , կրօնական , բարոյական բոլոր այն գեղեցիկ սկզբունքները զորս այսքան տարիներէ ի վեր կը ջարդեն աշխարհիս բոլոր ընկերաբանները և բարոյախօսները , և որոնց ոչ մէկը իրականութիւն է տակաւին՝ քաղաքակրթութեան գլուխը գտնուող մեր երկիրներուն մէջ : Ընչու՞մ , բունադատութիւն , բունապետութիւն , ահա՛ հիմը այդ քաղաքակրթ երկիրներուն ամէնէն տե՛մօքոտ կառավարական ձե ին և ընկերային ամէն կարգի հաստատութեանց : Կեղծիք , փարիսեցիութիւն , նախանձ , գաղանթիւն , ահա՛ քաղաքակրթ երկիրներու մարդոց փոխադարձ յարաբերութեանց հիմը : Տու քհոյութներ , որոնց կրօնքը պիտի որդեգրէր ամէնէն ազոտախո՛ճ կրօնազուրկն անգամ , Տու քհոյութներ , որ այնքան բնական և պարզ եղանակաւ մը լուծեր էք այն ահադին , զար-

հուրելի հարցերը որ այսքան տարիներէ ի վեր կը չար-
չարեն մեր միտքերը, որքան կը նախանձիմ ձեր վիճա-
կին, որքան պիտի ուզէի ապրիլ ձեր մէջ, ձեր դոյզն՝
բայց վսեմ հասարակութեան մէջ . . .

(Շիրակ, 1909, Մարտ)

ԶԳՈ՛ՅՇ, ԿԸ ՄՈԼՈՐԻՆՔ

Միտքերու գրգռումը երթալով կ'աճի: Երեւոյթը սո-
վորական ըլլալուն համար չի դադրիր նեղութիւն պատ-
ճառելէ այն ամէն մարդու որ՝ «կեանքի պայքար»ի
սկզբունքին հակակիր, «իրերօգնութեան» սկզբունքին
է համակիր: Բայց առաջին սկզբունքին իսկ կուսակից
մը — անկեղծ և լուրջ կուսակից մը, աւելորդ է ըսել —
դուարթ սրտով պիտի տեսնէ՞ր արդեօք այն երվիներանդ
տգեղութիւններն որ ամէն վայրկեան կը պայթին մեր
աչաց տալև, ժամանակէ մ'ի վեր: Կեանքի, իմա՛ սկըզ-
բունքի պայքարը՝ ատելութեան և ոխի մշակո՞ւմն է
արդեօք, մայր թիւրիմոցութեանց և ամէն տեսակ չար-
կաց:

Եթէ մզուած պայքարն իրօք ազգասիրական է, ի՞նչ
է ուրեմն այն անիշխանական վարմունքը զոր թոյլ կու-
տանք մենք մեզի: Եթէ մեզմէ իւրաքանչիւրն իր հա-
մոցումները քաղեցնելու համար դիմէ բռնութեան, ի՞նչ
բան կանդուն պիտի պահէ Ազգը: Կ'ըմբռնեմ որ Սահմա-
նադրութիւնը մեզ իրաւունք տուած ըլլայ՝ մեր անկեղ-
ծօրէն ազգասիրական համոցումները պարզելու բերանացի
և գրաւոր: Կ'ըմբռնեմ որ մեզմէ իւրաքանչիւրն իրեն
համար պարտականութիւն համարի իր անկեղծօրէն ազ-
գասիրական համոցումները պաշտպանելու և տիրել տա-

լու, քննադատելով պաշտօնի վրայ եղող իշխանութեանց այն արարքը՝ որ քննադատելի կը նկատէ. քննադատելով ազգին ներկայ կազմակերպութիւնը. կ'ըմբռնեմ որ մեզմէ իւրաքանչիւրն աշխատի իր անկեղծօրէն անդամաիրական զգացմանց համապատասխան անձերն անդային պաշտօններու գլուխն անցընելու: — Բայց չեմ կրնար ըմբռնել որ իրօք ազգասէր մէկն տնիշխանական ընթացք մը թոյլ տայ ինքզինքին, և փոխանակ իր գաղափարները օրէնքին արամադրելի բրած միջոցներովը տարածել և տիրել տալ աշխատելու, բռնական միջոցներու ակողմէ և հետտէ անդային իշխանութեանց դէմ: Գաղափարները շինել, կարելի եղածին շափ բազմաթիւ կուսակիցներ գտնել և պատրաստել ջանալ այն գաղափարներուն զորս անկեղծօրէն ամէնէն աւելի օգտակար կը համարինք ազգին, այս է, կարծեմ, ազգին շահերը պաշտպանելու կոչուած մարդոց ընթացքը: Իսկ բռնութիւնը, բարբարոսներու յատուկ այդ դէնքը, ուրիշ բանի չի կրնար ծառայել՝ բայց եթէ առաջ բերելու կիրքերու ազգամիլաս գերազրգոում մը: Ահա՛ շատ սովորական հասարակ տեղիք մը, զոր կը խեղդեն ամլացուցիչ ետակահութիւններ: Եթէ իրօք ազգին շահերուն պաշտպան կը կանգնինք, չհալածենք, այլ համոզենք: «Մարդ ո՛յն ատեն կ'սկսի հալածելու, երբ կը յուսահատի համոզելէ, կամ կը հայնոյէ ինքն իր մէջ ճշմարտութեան գորութեան դէմ, և կամ վստահութիւն չունի իր քարոզած ճշմարտութեան վրայ:» Իսկ եթէ բռնական միջոցները կ'արդարայնենք անով որ անոնք բարքերու բարեփոխութիւնը կը փութացնեն, չմոռնանք թէ իրական բարեփոխութիւնը դաստիարակութեան միջոցաւ կատարուածն է, և բարքերու բարեփոխութիւնը դաստիարակութեան միջոցաւ՝ ժամանակ պահանջող գործ մըն է, մանր մուկը բայց խորունկ և շարունակուած փոփոխութիւններով

կատարուելիք գործ մը : Ժողովուրդը պէտք է բարեփոխուի՝ առանց զգալու, կերպով մը, թէ կը բարեփոխուի : Բարիէն աղմուկ չելլեր, աղմուկէն ալ բարի չելլեր :

(Բիւզանդիոն, 1910 Յուլիս)

ՏԵՂԱՓՈՒՈՒԹԻՒՆ ԹԷ ԶՆՋՈՒՄ

Վերջերս լրագիրներն խմացուցին մեզ թէ ձեռնհաս իշխանութիւնը կը խորհի հանրատունները տեղափոխել : Հանրային աղտոտութեան մաքրագործման համար այսպիսի միջոցի մը դիմել այնքան միամտութիւն է՝ որքան միամտութիւն է հաւատալ թէ սենեակին վոշին կը ջընջուի՝ երբ չոր աւելով աւլուի : Փոշին տեղափոխած կ'ըլլանք այս կերպով, ոչ ուրիշ բան : Բայց եթէ դիւրին է աւելի բանաւոր միջոց մը գտնել աւլելու, նուազ դիւրին է, գիտեմ, « բարուց հսկողութեան » հարցը լուծել . վկայ՝ Fédération abolitionniste internationale կոչուած ընկերակցութիւնը, որ, հակառակ, տարիներէ ի վեր, խօսքով և դիրով, ոգի ի բոն պայքարելուն՝ կառավարութեան կողմէ ճանչցուած հանրատուններուն դէմ, կարեւոր արդիւնք մը չէ կրցած դեռ ձեռք բերել :

Եւ սակայն, նոր թուրքիոյ համար պատուաբեր չը՞ պիտի ըլլար փորձել՝ մտնել այն շուղին մէջ, ուր մտած է Անգլիա 1883էն ի վեր, ջնջելով Պետութեան կողմէ կանոնադրուած պոռնկութիւնը : Նորվեկիա, Տանըմարքա, Հոլանտա, Չուիցերիա, Ալգաս-Լօրէն ևս նշանակելի արդիւնքներ ձեռք բերած են նոյն ձեռնարկին մէջ : Ուրիշ առթիւ, այս սիւնակներուն մէջ բացատրած ևմ արդէն թէ այսօր գիտուններու մեծամասնութեան համար — անոնց մէջ ըլլալով, եթէ չեմ սխալիր, Չուրիխի Բօլէ-

Դէռնի՛ցի նախկին բրոֆէսէօններէն Բրոֆ . Ֆորէլ , որուն պատուական բանախօսութիւններն ըմբոշխնելու բախտն ունին Պոլսեցիք այս միջոցիս — սերական ժուժկալութիւնն ինքնին անկարելի բան մը չէ . յարուց կարգապահութեան խնդիր մըն է այն : Խնդրոյն այս կողմը պարտաւայ մըն է արդէն ի նպաստ հանրատուներու ջնջման : Բայց աւելի բացարձակ ուրիշ պատճառաւ մ'ալ հանրային առողջութիւնը կը պահանջէ հանրատուներուն ջնջումը , այն է թէ՛ Պետութեան կողմէ պաշտպանուած հանրատուները , որոնցմէ իրր թէ բժշկական քննութիւնը կը հեռացնէ ամէն վտանգ , վատահութիւն կը ներշնչին և խրախոյս կ'ըլլան անոնց յոճախորդներուն : Արդ , ամէն ոք համաձայն է սա կէտին վրայ թէ հանրատուներու մէջ բժշկական քննութիւն ըսուած բանը խաբկանք մըն է լոկ , որ , կը կրկնեմ , այսու իսկ , կրկնապէս վտանգաւոր կ'ընէ այս աղտոտ հաստատութիւնները : Հապա խնդրոյն բարոյական կողմը . իրաւօ՞ւնք է որ երկու տեսակ բարոյական տիրէ , մէկը՝ էրիկ մարդուն , միւսը՝ կնոջ համար . իրաւօ՞ւնք է որ էրիկ մարդն իր սերական հաճոյքներն գոհացնէ պարզերես — il faut que jeunesse se passe — , մինչ պոսնիկը , զոհը էրիկ մարդուն , ընկերութեան աղտոտ նկատուի : Մարդկային արժանապատուութեան կը վայլէ՞ որ կինն իրի մը վերածուի , էրիկ մարդուն սերական հաճոյից անարգ գործին ըլլայ :

Սահմանադրական թուրքիոյ համար որքա՞ն պատուարեր է լրագիրներու այն միւս լուրը , աւելի թարմ , որուն համեմատ՝ նկատելով որ Պոլսոյ կողմը կարգ մը անպարկեշտ կիներ տղատ համարձակ կը գործեն , ներքին գործոց նախարարն որոշած է այդ կիներն Համազգային Անկեղանոց զրկել և հոն տշխասացնել նոյն հաստատութեան հաշուոյն :

Հանրային առողջութիւնը , հանրային բարոյականն և

արդարութեան սկզբունքները պարտք կը դնեն Մէպուսական ժողովին վրայ՝ տալ հանրատուներու խնդրոյն բոլոր այն կարեւորութիւնն որուն արժանի է, և լուրջ վիճարանութիւններէ և ուսումնասիրութիւններէ վերջ միայն օրէնք մը քուէարկել այդ մասին: Այս մէկ քանի տողերն ուրիշ յաւակնութիւն չունին բայց եթէ իբր տեսակ մը sonnette d'alarme ծառայելու:

(Բիւզանդիոն, 1940, Ապրիլ)

ԻՆՉ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ ԱՇԽԱՏԻԼ

Կարելի է ըսել թէ Պոլսոյ Հայ ժողովուրդը, ազգասիրական ըմբռնման տեսակէտով, երեք որոշ դասակարգերու կը բաժնուի այժմ, երկու ծայրայեղ կողմերն և չափաւորականները: Ինձի համար, ամէնէն համակրելի դասակարգն այս վերջինն է, որովհետեւ անկա ամէնէն աւելի մօտ կ'երևայ ինձ ճշմարտութեան: Չափաւորականները չեն սիրեր յանդուգն սկզբունքները, որոնք եղջերուաքաղներ են ընկերութեան արդի վիճակին մէջ. բայց, միւս կողմէն, յետադիմական, և հետեւորար դարուս ոգւոյն հակառակ կը դանեն ծայրայեղօրէն պահպանողական դաւանանքը, ու, իրենց հոգեկան այս վիճակին մէջ, կը փնտռեն սկզբունքներ որոնք ոչ չափազանց խիզախ և կործանիչ ըլլան և ոչ ալ ծայրայեղօրէն երկչոտ, երկիւղած և բարեչրջութեան թշնամի:

Արդ, ես կը կարծեմ թէ դիւրին է գոհացում տալ չափաւորականներուն և հասկցնել անոնց թէ միջոցը կայ բարեչրջութեան օրէնքներուն ընդդէմ չեղելու՝ առանց, սակայն, խիզախ և տապալիչ վարդապետութիւններն որդեգրելու: Ես կը կարծեմ թէ ժողովուրդը վտանգաւոր

կերպով կը մոլորեցնեն ամէն անոնք որ ծայրայեղներու դիրքը կը բռնեն :

Միտքս բացատրեմ :

Խիզախ տեսութեանց կուսակիցները կ'ուզեն մեր բարուց մէջ մացնել, մէկէն ի մէկ, խմտատասիրական-ընկերարանական ամէնէն յանդուգն սկզբունքները, որոնք շողշողուն սկզբունքներ են լոկ, և որոնք վախ կամ տարակոյս կը պատճառեն՝ մեզմէ անհամեմատ կերպով աւելի զարդացած ազդերու մէջ իսկ : Միւս կողմէն, մեր ազգային արդի ընդհանուր վիճակն այդ շողշողուն տեսութիւններէն բոլորովին տարբեր բաներու պէտք ունինիւթապէս ու բարոյապէս ինկած, ողորմելի վիճակ մը ունինք . մեր ազգը իր արդի խեղճուկրակ վիճակին մէջ, պէտք ունի նախ միանալու, միաձոյլ դանդուած մը կազմելու . պէտք ունի լրջօրէն գործադրելու այն սահմանադրական սկզբունքները՝ որոնց վրայ հիմնուած է . պէտք ունի բարւոքելու իր անտեսական վիճակը . պէտք ունի գործնական բարոյականի և գործնական դիտելեաց պաշարի մը հետ ողջատութիւն հայթայթող դպրոցներու վերածելու իր հիմակուան խեղճուկրակ վարժարանները : Այս ամէնն ընելու համար պէտք է օգտուիլ անշուշտ ամէնէն խիզախ վարդապետութիւններէն իսկ, առնելով անոնցմէ ինչ որ կրնան ունենալ նպատակայարմար . մեր գործը պէտք է նմանի մեզուի աշխատութեան, որ հոսկէ հոնկէ կը քաղէ զանազան հիւթեր և անոնցմէ կը շինէ մեղր, որ « ոչ ուրց է և ոչ մարեմխոտ » : Մեր աւանդական բարքերը մէկ հարուածով քանդել վարձելը ձախող ձեռնարկ մըն է, կտրծեմ, գուցէ անիրաւ . ամէն պարագայի մէջ, վտանգաւոր՝ այն վիճակին մէջ ուր կը գրտնուի այսօր մեր ազգը : Ես չեմ որ պիտի արդարացնէի մենծաղայութիւնն որ, զանազան ձեւերով, խոր արմատները ձգած է մեր ազգին մէջ : Բայց եթէ սկզբունքով

համամիտ միայն կրնամ ըլլալ մենծադայութեան դէմ մղուած պայքարին, չեմ կրնար համակրիլ այն միջոցներուն զորս ոմանք ի գործ դնել կ'ուզեն այդ պայքարը մղելու համար:

Ուրիշ ուղղութեամբ մը պէտք է աշխատիլ: Այդ ուղղութիւնը Հայ Բարեգործական Միութեան ուղղութիւնն է. ազգն ամբողջ, միահամուռ, պարտաւոր է ոյժ տալ անոր, տածել զայն, տարածել զայն: Ա՛ն է որ կոչուած է վերականգնել մեր ազգը:

Զօրայնել տնտեսապէս մեր ազգը, բարւոք կազմակերպութիւն մը տալ աշխատութեան, նպատակայարմար դաստիարակութեամբ մը ողողել ազգն ամբողջ, առանց դաշելու ազգին հիմնական աւանդութեանց, բայց խաղաղ՝ սակայն ուժեղ և յարատև պայքար մը մղելով մենծադայութեան ու տեսակ տեսակ հանրային զեղծումներուն դէմ. ահա՛ ինչ որ զիրով և մանաւանդ խօսքով պէտք է քարոզել ժողովուրդին: Խիզախ տեսութեանց տննապատակայարմարութիւնը պէտք է ցոյց տալ, զօրաւոր կերպով, և քարոզել այն բաներն՝ որոնց իրապէս կը կարօտի մեր ազգը: Բանախօսութեանց դէմ բանախօսութիւն, և բանախօսութեանց հետ մեր ազգին իրական պէտքերուն գոհացում տուող գործ, ահա՛ ինչ բանի մէջ պէտք է կայանայ մեր պայքարը, զոր իւրացուցած է Հայ Բարեգործական Միութիւնն և որուն աջակցիլ պարտքն է, հետեւորար, մեր ամէնուն:

(Բիւզակնդիտն, 1940, Ապրիլ)

ԱԶԱՏ ՔՈՒՒՔ

Պէտք է այնպէս մ'ընել որ բաղաբա-
կիրթ մարդը՝ ինքզինքին վրայ ու-
նեցած իր իշխանութիւնը բարձրա-
ցընէ, իրերուն վրայ ունեցած իր իշ-
խանութեան մակարդակին:

ԿԻՒՍԴԱՎ ՏԸ ՄՈԼԻՆԱՌԻ

Սիրելի ընթերցող, ճիշդ ժամանակն է որ միասին
խորհինք շատ կարեւոր, կենսական նիւթի մը վրայ:
Վաղը պիտի կոչուիք ձեր քուէն տալու: Գիտէ՞ք, մտա-
ծած էք թէ որքա՞ն վաւիտեկ, որքա՞ն ծանրակշիւ բան
մըն է քուէն: Գիտէ՞ք, մտածած էք թէ ազգին ճակա-
տագիրը ձեր քուէին կապուած է: The right man in
the right place — ինչպէս կ'ըսէ Անդլիացին — այսինքն՝
արժանաւորագոյնը փնտռել, մտքի և սրտի կարելի եղա-
ծին չափ կատարեալ անկախութեամբ, գիտէ՞ք թէ որ-
քան կարեւոր և դժուարին բան մըն է այս: Դժուարին
մանուաւնոյ մեզ համար, որ հանդուցեալ բէժիմին ազի-
տաւոր ազգեցութեան տակ վարժուեցանք կա՛մ նեպո-
տութեան, կա՛մ անվտակութեան և կա՛մ անտարբերու-
թեան: Իրաւ է թէ բարեշրջութիւնն անհրաժեշտ կերպով
իր գործը կը կատարէ, բայց մեր պարտքն է օգնել անոր
որ անարժէքները, նիշէի անատակները շուտով թափին,
և կարողները շուտով անցնին գործին գլուխը: Սակայն
օգնել հանդարտօրէն, լրջութեամբ, ոչ թէ հայեցելով,
պոռալով պոռչալով. ամէն լուրջ գործ հանդարտու-
թեամբ, պաղարիւնութեամբ կը կատարուի: Կուսկածինք
ուրեմն, քուէարկութեան միջոցին, մեր ներսիդին սպըր-
դած յիշեալ երեք թշնամիներէն: Ընտա՛ւ նեպոտութիւն,
միտքէ հեռացնենք անուճններն այն մարդոց՝ որոնք այս

կամ այն կերպով հաճելի կամ նոյն իսկ սիրելի են մեզ , քայց չունին պահանջուած յատկութիւններն այն պաշտօնին համար որուն պիտի հրաւիրենք զիրենք : Միտքէ վտարենք , նոյնպէս , անուններն այն մարդոց՝ որոց ընտրութեան մէջ մեզ կամ մերիններուն համար նիւթական շահ մը կը տեսնենք :— Բնա՛ւ անփութութիւն . չտանք մեր քուէն ու է մէկու մը , պարզապէս մեր խղճմտանքը հանդարտեցնելու համար , քուէարկութեան մասնակցած ըլլալու համար պարզապէս , կամ թէ կուրօրէն առաջնորդուելով ուրիշներու թելադրութիւններէն , նիւթական կամ բարոյական կաշառքներէ , սուանց քննելու՝ մանրամասնօրէն և պատասխանատուութեան կատարեալ զգացմամբ , համոզման կատարեալ անկեղծութեամբ , այն բարեմասնութիւնները զորս ընտրելին պէտք է միացնէ իր վրայ : — Բնա՛ւ անտարբերութիւն . չհրաժարինք քուէարկութեան մասնակցելէ , ինչպէս նաև պարկեշտ Բ-ՕԲ-Կ-Ա-Կ-Մ-Մ՝ ընելէ ի նպաստ այն ընտրելիներուն որոնք մեր անկեղծ համակրութիւնն ու համարումը կը վայելն իրուամբ : Բարոյական մարդն այն չէ որ չարիք չընէր , այլ այն՝ որ բարիք կ'ընէ . քուէարկութեան խնդրոյն մէջ , ձեռնպահ մնալ , իր քուէն չտալ՝ մտքի կատարեալ անկախութեամբ և անկեղծութեամբ , անոր՝ որ արժանի է մեր քուէին , չարիք ընել է , թշնամի ըլլալ է ընկերային բարերար ոյժի մը : Ու քուէարկութեան միջոցին մեր միտքին առջև ունենանք այն զղուելի , դարչելի , ապստամբեցուցիչ , կործանարար թերութիւններն որոնք այնքան սովորական էին հին բէժիմին մէջ : Մեր ընտրելիները պէտք է ըլլան անոնք որ գիտակցութիւնն ունին իրենց յունձնուած դորժին . անոնք որ պատասխանատուութեան զօրաւոր զգացում ունին՝ զայն ուղղամտութեամբ և խնամքով կատարելու համար . անոնք որ զուրկ են շահախնդրական , սնափառական զգացումներէ , չտեսնելու չեն . անոնք

որ ողջամիտ են . անոնք որ անկախ նկարագիր ունին՝
առանց անմիտ պնդագլխութեան . անոնք որ զգայուն են՝
առանց իրենց զգացմանց խաղալիկն ըլլալու . անոնք որ
կը սիրեն Պղատոնը՝ բայց ա՛լ աւելի կը սիրեն Ճշմար-
տութիւնը . անոնք որ կարգապահ օրինապահ են . անոնք
որ կեղծաւորութենէ , ճիշտութեանէ , խարդախութենէ ,
ժածկամտութենէ , մաքիաւելութենէ , ժառանգի հար-
ուածէ , աճպարարութենէ , շպարէ , թաքուն խորհուրդ-
ներէ , փարիսականութենէ , սուտէ կը գարչին ու կը
գայթակղին . անոնք որ շողոքորթութիւնը , սուտակաս-
պասութիւնը կ'ատեն . մէկ բառով՝ այնպիսիներն որ սղ-
գին շահերուն հետ չեն խաղար միամտօրէն , անխղճօրէն :
Գիտն՞ս , սիրելի ընթերցող , որքա՛ն սակաւամիտ են
այս ձիրքերով օժտուած անձերը , և որքա՛ն համբերա-
տար և անկեղծ խուզարկութեանց պէտք կայ զանոնք
զտնելու համար : Որքան ալ քաղաքակիրթ յորջորջուինք ,
վայրենի մարդը դեռ չէ մեռած քաղաքակիրթ մարդուն
մէջ , և տղայամտութիւն պիտի ըլլար Սրենարրի երազած
ապագայ անթերի մարդը փնտռել մեր շուրջը : Ինչ որ
պէտք է փնտռել՝ այն մարդն է որ ազգամլտա էական
թերութիւններ չունի , որ զիտէ ինքզինքին զալ թերա-
ցած ստեն , կորով ունի իր թերութիւնն ինքզինքին
խոստովանելու և հետեւարար զայն ուղղելու : Ահա ին-
չո՛ւ պէտք ունիս դաստիարակելու դու զքեզ , սիրելի
ընթերցող , իբրև քուէարկող , քուէդ սալէ առաջ , որպէս
դի կարենաս հեռացրնել սպառ քուէի բոլոր այն թշնամի-
ները — նեպոտութիւն , անսիրութիւն , անատրքերու-
թիւն և , աւելցնենք նաև՝ ապուշ նախանձ — որոնք
կը վախնամ թէ իրենց որջն հաստատած ըլլան քու մէջդ :
Մի՛ մոռնար , մի՛ մոռնար երբեք , սիրելի ընթերցող , թէ
քու քուէիդ կապուած է ազգին ճակատագիրը , թէ ոճ-
րագործ մ'ես , ազգոսպան մ'ես դու՝ եթէ գիտակցու-

թիւն , մտքի անկախութիւն , անշահախնդրութիւն , անկեղծութիւն չղնես քուէիդ մէջ : Լսէ՛ հետեւեալ պատմութիւնն և տողորուէ անով .

Անգլիացի աղնուական մը՝ որ կրեսփոխան ըլլալ կ'ուզէր՝ կը մտնէ պարկեշտ կօշկակարի խանութ մը : Կօշկակարը կը հարցնէ անոր թէ ի՞նչ կ'ուզէ . « Պզտիկ ծառայութիւն մը , կը պատասխանէ աղնուականը . մէկ քուէի ևս պէտք ունիմ ընտրուելու համար , և կը խընդրեմ որ ձեր քուէն ինձ շնորհէք . — Քանի որ բանն այդպէս է , կը յարէ կօշկակարը՝ ակնարկ մը ներկայացնելով աղնուականին , նստեցէք , խօսակցինք և տեսնենք թէ ի՞նչպիսի մարդ էք . . . : Գարեջուր կը խմէք , այնպէս չէ՞ . անս աման մը գարեջուր մէկ մասը խմուած . մէկ տեղ լինցնենք : Գաւաթս առէք , իմ կենացս խմեցէք , վերջն ալ ես ձեր կենացը կը խմեմ : — Թող գործն ստոր մնայ . . . » կը յարէ աղնուականն և կը խմէ՝ քիթը բերանը ծամածռելով . — « Հիմա , պիտի ծխէք , որովհետեւ ես կը ծխեմ , կը շարունակէ արհեստաւորը : — Ոսքերնիդ չեմ կտարեր » կը պատասխանէ ընտրելին բարկութենէն ինքզինքն ուտելով : Չախաւեր կերպով մը , իր ծխափոխը կը վառէ իր խօսակցին ծխափողէն , և ընտրելի ու ընտրող կ'սկսին քաղաքականութեան վրայ ճառել : Վերջապէս , կօշկակարն՝ ընտրելին ամէն տեսակ կորուսքի ենթարկելէ վերջ , դայն կը ճամբէ անվրդով . « Շուտով դուրս ելէք հոսկէ , և յոյսերնիդ կտրեցէք իմ քուէէս . ես ինքզինքս կը յարգեմ և քուէ չեմ կրնար տալ մէկու մը որ չի յարգեր ինքզինքն և կը ջանայ բարձրանալ՝ ա՛յնքան ստորնութիւններով : »

Յուլիս 11ի բիւրիցս բարերաստիկ թուականէն ի վեր գինով ենք . ո՛ր ժամանակ է որ սթափինք . տեսնենք ինքզինքնիս այնպէս ինչպէս ենք իրապէս , մեր թերութիւններով ու մեր առաւելութիւններով , բայց մանա-

ւանդ մեր թերութիւններով . խոստովանինք մենք մեզ թէ քաղաքական ազատութիւնն աւելի մասնակար քան օգտակար բան մըն է , եթէ մեր Եսը չաղատենք անոր վրայ բռնացող հոգեգէշներէն : Անբաղդատելիօրէն ճգնական , տագնապալի շրջանի մը մէջ ենք . անբաղդատելիօրէն շրջահայեաց և իմաստուն ըլլալու պէտք ունինք : Ամէնէն մեծ վտանգը ռամիկ դասակարգին կողմէն կրնայ գալ , այն դասակարգին , ուր ամէնէն աւելի կիրքը կը տիրապետէ բանականութեան վրայ . անձանձիր բացատրենք անոր թէ ինչ է ազատութիւնը . բայց տանք անոր ազատութեան պահպանման պայմաններն և անոր դէմ սպառնացող հազարումէկ վտանգները , որոնք գեանառիւծի ձևով կը ներկայանան իրեն : Գիտեմ թէ Լամբնէներ , Մօնդալանպէռներ , Լապուլէներ , Բոէսանսէներ ազատութեան մէջ իսկ փնտռած են ազատութեան վտանգներուն և մասներուն դարմանները , նման Ա.քիլլէսի նիզակին որ կը դարմանէր իր բացած վէրքերը , բայց այն պայմաններուն մէջ ուր կը գտնուինք , աղէկ է որ մաքի և սրտի տէր մարդոց այս գաղափարը մեզ առաջնորդ չունենանք : Աղէկ է որ աչալուրջ հսկենք ռամիկ դասակարգին վրայ , մշտակայ յարաբերութեան մէջ ըլլանք անոր հետ , առաջնորդենք զայն դէպի այն Եղեմն որ ահա կը բացուի մեր առջև , զգուշացնենք զայն այն խորխորատէն ուր կրնայ գահավիժիլ ինքը՝ իր ետեւէն տանելով զմեզ ամէնքս ալ : Այնպէս մ'ընենք որ այն յոռետես գուշակութիւնները զորս Ամերիկացի դիւանագէտ մը , Մօրրիս , և Գերմանացի իմաստասէր մը , Վիլհէլմ ֆօն Հիւմպօլտ , ըրին 1789ին՝ Ֆրանսացւոց Սահմանադրութեան առթիւ , շիրակոննանն մեզ համար : Գիտնանք թէ , ըստ Մէյնի , վերջին դարուն մէջ 350 նոր Սահմանադրութիւններ հաստատուած են , որոնց շատերուն հետքը չէ մնացած այսօր : Զգոյշ , իմաստուն ըլլանք և զիրար դաստիարակենք : (Բիւզակեղիոն , 1908 , Յուշիս)

Ո՞Վ Է ԿՈՐՈՎԻՆ

Սահմանադրութեան վերահաստատութենէն ի վեր յաճախ կը յեղյեղուին կո՛րով, կո՛րով է բառերը : Արդարեւ, կորով և Սահմանադրութիւն սերտիւ զօղուած են իրարու հետ : Սահմանադրական ազգի մը մէջ ժողովուրդն է վեհապետը, և ճիշդ այս պատճառաւ ժողովուրդը բուսական կորով պէտք է ունենայ՝ մէկ կողմէն, արդար ըլլալու համար իր որոշմանց և ընարութեանց մէջ, և միւս կողմէն՝ կատարելու համար իր պարտականութիւններն և պաշտպանելու համար իր իրաւունքները, և, իբր կարեւոր հանդամանք՝ բուսական կորով պէտք է պահանջէ իր ընտրելիներէն : Բայց ի՞նչ է կորովը, ո՞վ է կորովին : Բաւական տարածուած ըմբռնման մը համեմատ, կորովին այն անձն է որ աներկիւղ, յանդգնօրէն կրնայ կրօնուիլ կատաղութեամբ : Կարեւոր է որ ուղղուի այս թիւր ըմբռնումը, կարեւոր է դանաղանութիւն մը դնել անասնական կորովին և մարդկային կորովին միջև : Կորովը, արդիւնաւոր կորովը, անհաշտ է անզուսպ կիրքի, բռնութեան, անսանձ գրգռման հետ . կարկաչողը չէ կորովին : Կորովին այն է որ գիտէ հանդարտօրէն գրգռուիլ, եթէ կարելի է մերձեցնել իրերամերժ երեւցող այս երկու բառերը, այսինքն՝ գրգռուիլ այնքան որքան կրնայ գրգռել պատասխանատուութեան զօրաւոր զգացումը, միայն այսքան և այս տեսակ գրգռումով իշխել տալ բանականութիւնն և խիղճը՝ ջիղերուն և սիրտին վրայ, և այսպէս գրգռուած բանականութեան խորհուրդներուն միայն անսպով, ի դուրս հանել պարտականութիւնը : Կորովին խուժանը չէ, կորովին ոչ Հէրակլէսն է ոչ ալ Սփենդորը, կորովին խելայեղեալը չէ, կորովին գրաբանը չէ, կորովին քաջութիւն ցուցադրող եռացկոսը, տապ-

եալ ուղեղը չէ, կորովին այն զօրապետը կամ թագա-
ւորն է որ կ'ըսէր: «Կը վախնաս, մարմինս, բայց եթէ
գիտնայիր թէ ո՛ւր պիտի տանիմ վաղը զքեզ, ա՛լ
աւելի պիտի վախնայիր:» Կորովին Ռօտտիկն է, կորովին
Օհան Րէիզն է, կորովին Սոկրատն է, կորովին Փիււ
Սիմոնն է՝ Դեկտեմբեր 2ի պետական հարուածին յաջորդ
օրը, Սոսպօնի իր բեմին վրայ. կորովին Թիէռն է՝ որ
1870ի Յուլիս ամսուն, իր ժողովրդականութիւնը վտան-
գելով, կը համարձակի աննպաստ կարծիք յայտնել Գեր-
մանիոյ հետ պատերազմի մասին. կորովին ժողովուրդին
շահերովը վառուած հրապարակագիրն է որ չի շահագոր-
ծեր ժողովուրդին կրքոտութիւնն և միամտութիւնը.
Կորովին հանրութեան շահը մտանաւորներու շահէն վեր
բռնողն է, կորովին՝ անկախ նկարագիր ունեցողն է, կո-
րովին՝ մեզ արեւելցիներու յատուկ ակտաժէտ դթա-
սրտութիւն չունեցողն է, կորովին այն է որ քուէ կու-
տայ իր հակառակորդին և քուէն կը մերժէ իր բարեկա-
մին, կորովին այն է որ իր թերութիւնները կ'ուզէ տես-
նել և ինքզինքը չի խաբեր, կորովին այն է որ շողո-
քորթուելէ կը դայթակղի, կորովին այն է որ ստորնու-
թեանց չի կրնար հանդուրժել, կորովին այն է որ չի կրնար
կեղծել, ստել՝ ի դին ո և է գոհողութեան, կորովիները
մեր պաշտելի նահատակներն են, կորովին Իզմիրլեան
Հայրիկն է որ, հանդարտօրէն, իր երդումին կասկեցաւ
մնաց մինչև վերջը՝ ի դին ամէն գոհողութեանց:

Արտաքուստ մեզմ' երեւցած բնաւորութիւն մը, վախտ
կազմուած մը—բաւական է որ ուղեղի գործունէութիւնը
ծանրապէս մեաւուած չլլայ—կրնան օթեւանն ըլլալ ան-
վկանդ կորովի մը. պէտք չէ խաբուիլ երևոյթէն, պէտք
չէ դատել արտաքինէն, որովհետև կորովն արտաքին
բան մը չէ, այլ ներքին ոյժ մը որ «կը դսպէ զգայնու-
թեան բուռն և անկարգ շարժումներն և կատարեալ դի-

տակցութեամբ կը դիմագրաւէ նախատեսուած և չափուած վաանգ մը :» Այս կորովն եղաւ ճարտնական յաղթութեան մեծագոյն ազդակը . ա՛յս կորովը միայն բարոյական է և արդիւնաւոր՝ անհատական և ընկերային կեանքի մէջ , ա՛յս կորովը միայն պէտք է փնտռենք մեր շուրջը :

(Բիւզանդիոն, 1908, Օգոստոս)

ԱՐԴԱՐԱԿՇԻՌ ԱԶԳԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

Եթէ դժբախտ պարագաներ թոյլ չտուին մեզ արժանավայել կերպով տօնել Ազգային Սահմանադրութեան հանդէսը , և այդ գեղեցիկ առիթով իրարու միտք լուսաւորելու՝ ազգասիրութեան մասին , նոյն այն պարագաները մասնաւոր պարտք մը կը դնեն մեզմէ իւրաքանչիւրին վրայ խորհրդածելու ճշմարիտ , արդիւնաւոր ազգասիրութեան վրայ : Արդ , ազգասիրութիւնը մէկն է ընկերային այն երեւոյթներէն որ , ենթակոյ բարեշրջութեան օրէնքներուն , մեծ փոփոխութիւններ կրած են դարերու ընթացքին մէջ : Ի դէպ չէ հոս ուսումնասիրել Մարքսեաններու վարդապետութիւնը , որ պատմական նիւթ ապաշտութեանէն կը յանդի դասակարգային պայքարին , և այս վերջինէն՝ հակազգասիրութեան : Ազգին ներկայ ճղնաժամին մէջ , իրաւունք չունինք խնամատիրական-ընկերային առաւել կամ նուազ յանդուրն տեսութիւններով զրաղելու , և ժողովուրդին արդէն զրգոտած երեւակայութիւնն ա՛լ աւելի զրգոտելու : Ազգասիրութիւնն իրողութիւն մ'է , և կարեւոր եղող բանն է ոչնչացնել այն նախապաշարումներն որոնք , մակարոյծներու պէս փակած ազգասիրութեան , անոր

արիւնը կը քամեն : Նպատակս է մէկ երկու խօսքով
ցոյց տալ այդ նախապաշարումներէն մէկ քանին և ցոյ-
տեցնել արդարակշիռ ազգասիրութիւնը :

Շատերու համար ազգասիրութիւնն ուրիշ բան չէ
բայց եթէ խօշ կիրք մը , և շատ մը խոհական , այսինքն
ճշմարիտ ազգասէրներ , որոնք ջղագրգիռի յատուկ շար-
ժուձեւերով ու խօսքերով չեն արտայայտեր իրենց ազ-
գասիրութիւնը , Ազգին շահերուն հանդէպ անտարբերներ
կը նկատուին , իսկ եթէ Ազգին թերութիւնները քննա-
դատեն անոնք , ազգատեացներ կը համարուին : Ընդհա-
կառակն , դրուատեաց կայթերու և հիացման կ'արժա-
նանան անոնք որոնց ազգասիրութիւնն ի յայտ կուգայ
մասնաւոր ջղագրգռութեամբ և թերակշիռ լաւատեսու-
թեամբ կամ յուետեսութեամբ : Արդ , ազգասիրութիւնը ,
ճշմարիտ , արդիւնաւոր ազգասիրութիւնն աւելի բանա-
կանութիւն է քան զգացում , այսինքն զգացում մ'է որ
այն ատեն միայն կ'ըլլայ օգտակար՝ երբ բանականու-
թենէն կը կառավարուի :

Պատերազմի դաշտին վրայ , Հոսերոսի դիւցազները
չեն որ այսօր պիտի կրնային պաշտպանել ազգը . դա-
շափարի մը համար կուտող և պատերազմի ամբողջ տեսու-
ղութեան միջոցին իր պաղարիւնութիւնը պահելու կարող
սպան կամ զինուորն է որ պիտի կրնայ յաղթող հան-
դիսանալ : Պրանսական Յեղափոխութեան զինուորին
համար «ազգասէր» հոմանիչ էր «հասարակագէտակառ»ի և
«աստիճան»ի : Տեսանք նաև , մէկ քանի տարի տուաջ ,
թէ առաքինութիւնը , այսինքն անխոտով հանդարտ սրի-
ութիւնն է նաև մեծագոյն ձիրքի ճարտնցի զինուորին :
Նոյն առաքինութիւնը չէ՞ նաև որ զմեզ հիացուց Ազա-
տարար Բանակին վրայ : Ժամանակակից պատմութիւնը
ցոյց կուտայ թէ բանակ մը կազմող զինուորներուն ի՞նչ
իւր նախկին կարեւորութիւնը կորսնցուցած է այսօր :

Ինչ որ կարեւորութիւն ունի հիմա , ոչ թէ զինուորներուն թիւն է՝ այլ զինուորին , սպային մէջ տիրող ազգասիրական ուժգին համոզումը , անոնց անխռով , յարատեւող տոկուն արիութիւնը :

Եւ եթէ մտքի անխռովութիւնը , ջիղերու զսպումը կարեւոր յատկութիւն մըն է պատերազմի դաշտին վրայ , որքան աւելի կարեւոր է այն՝ խաղաղութեան միջոցին , քանի որ ազգասիրութիւնը շատ աւելի յաճախ խաղաղութեան միջոցին քան պատերազմի դաշտին վրայ պէտք է յայտ գայ :

Ըսի արդէն թէ ազգասիրութիւնը ջղազրգոտութեան և պոռոտախօսութեան գործ չէ . ազգասէրն այն չէ որ մազերը կ'աճեցնէ , խելայեղեալ շարժումներ կուտայ իր մարմնոյն , Արամազդի երանքէն սերած կը կարծէ ինքզինքը , Հովերոսի լեզուն փոխ կ'առնէ և պատգամներ կ'որոտայ : Ազգասէրն ա՛ն է որ կ'ըսէ թէ Թեմեւ և Գնեւ , հանգարար մարտի , Ազգին Ներկան և Մանուկը ապագան , և այն կամ այն յեւերսով իրո՛վսանն կ'աշխարհ ապահովելու : Ազգին Ներկայ և ապագայ շահերը , իբր Կաթողիկոս , իբր Պատրիարք , իբր Միաբան , իբր Քարողիչ , իբր Երեսփոխան , իբր Քաղաքական կամ Կրօնական ժողովոյ , Տեսուչ կամ Թաղական Խորհրդոյ անդամ , իբր քաղաքացի , իբր արուեստաւոր , իբր ընտանեաց հայր կամ մայր :

Ազգասէրն այն է որ գիտէ տեսնել Ազգին թերութիւնները , (նախանձ , անկարգապահութիւն , պատասխանատուութեան զգացման պակաս , անհամերաշխութիւն , և յն .) և իրովսանն կը ճզնի զանոնք ուղղելու : Ազգասէրն ա՛ն է որ կուսակցութեան մը պատկանելով հանդերձ՝ անջատողական դադափարներ չի անուցաներ ընտու իր մէջ , որ թշնամի է միութեան , բայց բարեկամ միարանութեան : Ազգասէրն այն է որ չի անուցաներ իր մէջ ո՛րս զրացի ժողովուրդին հանդէպ : Սխալ է կարծել

Թէ որն ոյժ մ'է . տկարութիւն մ'է ան , որովհետեւ կոյր
կիրք մըն է , կիրք մը՝ վնասակար մտնաւանդ մեր դիրքին
մէջ գտնուող ազգի մը համար : Ազգասէրը , փոխանակ
որի , իր մէջ կը սնուցանէ արդարութեան զգացումը ,
և ի սպաս դնելով այդ զգացումը՝ բանականութեան ,
խոհեմութեան , կը վարուի իր թշնամիին հետ այնպէս
ինչպէս գիտունը կը վարուի հեղեղին հետ : Մէկ բառով ,
ազգասէրն այն է որ ջիղերն և մկանունքը զօրացնող
Ֆիզիքական դաստիարակութիւն մը տալով հանդերձ
ինքզինքին՝ միտքը կ'ընտելացնէ օրէնքի գաղափարին :

Պէտք է համողութիւն թէ առանց պատճառի բան չկայ ,
և ըստ այսմ , ազգի մը դժբախտութիւններն իրենց խո-
րունկ և նրբին պատճառներն ունին , — պատճառներ
բնական , պատճառներ բարոյական և պատճառներ տրն-
տեսական : Ընկերութիւնը , ազգը , բնական իրողութիւն
մըն է , ՝ ծնունդ հարկաւոր պատճառներու և ենթակայ՝
օրէնքներու : Պէտք է ուսումնասիրել այդ օրէնքներն և
ամէն ջանք ի գործ դնել ապահովելու համար համերաշ-
խութիւնն Ազգին զարգացման և այդ օրէնքներուն միջև :
« Լալկանութիւնը օգուտ չունի : « Օրէնքն է որ էրէն էր
« Երէնքն է որ էրէնքն է » Ազգը պիտի արժէ այնքան որքան
արժեն մեզմէ իւրաքանչիւրին անհատական ջանքերը :
Ջրագրգոտութիւնը , անհամբերութիւնն ալ օգուտ չունի :
Ազգի մը վիճակը մէկ օրէն միւս օրը բարեկաւոր բանակ
կամ մտգական գուաղան չկայ :

Իւրաքանչիւրին սուօրեայ և յարասե ջանքերուն
չնորհիւն է որ Ազգը պիտի բարեկաւր դանդաղօրէն :
Պէտք է գիտնալ թէ այս է տիեզերական օրէնքը , և
պէտք է ըստ այնմ աշխատախ՝ իրր խոհական և ճշմարիտ
ազգասէր : Ո՛րքն է որ ֆիզիքական , « ժողովուրդ »
բարեկաւր « ժողովուրդ » , « ժողովուրդ » , « ժողովուրդ »
ազգասէրն է : Մեզմէ ո՛չ մէկը գիտէ թէ ապագան

ի՛նչ ճակատագիր վերապահած է Հայ ազգին՝ քաղաքական տեսակէտով : Բայց մեզմէ իւրաքանչիւրը կրնայ ըսել ինքզինքին թէ , ազգային զօրութեան տեսակէտէն , Հայ Ազգին ճակատագիրը պիտի ըլլայ այն՝ ինչ որ մեզմէ իւրաքանչիւրը , այր թէ կին , իբր ճշմարիտ ազգասէր պիտի ուզէ որ ըլլայ ան :

(Բիւզանդիոն, 1909, Յունիս)

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԵՐԳԸ

Ապագան այն ցեղերուն է՝ որ պիտի սիրեն
ճշմարտութիւնը

ՏՈՔԹ. ՄՕՌԻՍ ՏԸ ՖԼԷՕՌԻ

Բիւզանդիոնի 3851 թիւին մէջ հրատարակած յօդուածովս կը մատնանշէի ի մէջ այլոց սա հոգևորնկերաբանական ճշմարտութիւնը թէ ոխը սխալ մ'է , մնասակար որքան անհատական նոյնքան և աւելի ընկերային կեանքի մէջ , և թէ ոխին տեղ պէտք է մեր մէջը սնուցանենք մշակենք Արդարութեան զգայումը :

Ու մեծ է ուրախութիւնս ի տես այն ջանքերուն որոնք կ'ըլլան Կառավարութեան և լրագիրներուն կողմէ , սպաննելու ոխն Օսմանցի զանազան տարրերուն միջև : Բայց նոյնքան մեծ է անակնկալը , այնքան մեծ որ ակամայ վայրկեան մը կը թերահաւատիմ ու կը հարցունեմ ինքզինքիս . «Արդարութիւն է թէ Դիւանագիտութիւն» : Որովհետև խնդիրն հոս է , արդարութեան կամ գիւանագիտութեան մէջ :

Եթէ իրաւ է թէ Կառավարութիւնն համոզուած է

որ Արդարութիւնն է այն միակ խարխալը, որուն վրայ կրնայ կանգուն մնալ Օսմ. Պետութիւնը, եթէ իրաւ է թէ այն գեղեցիկ ձեռնարկները, որոնք կ'ըլլան համեարաշխութեան զօրաւոր կապերով զօղելու համար օսման-եան զանազան տարրերը, մէկ կողմէն պատժելով բուն յանցաւորները, առանց բնաւ նկատի առնելու անոնց ազգութիւնն և ընկերային դիրքը, միւս կողմէն եղբայրութիւնը, ճշմարիտ եղբայրութիւնը գոյացնելով անոնց միջև, եթէ իրաւ է թէ հաւասարութիւն և եղբայրութիւն անամէջ բառեր ըլլալէ կը դադրին և կ'ըլլան վերջապէս իրողութիւններ, եթէ իրաւ է որ կառավարութիւնն համողուած է վերջապէս թէ կրօնքի և լեզուի տարբերութիւնները լուրջ արդելքներ չեն կրնար ըլլալ հայրենասիրութեան, և թէ տարբեր լեզու խօսող ու տարբեր կրօնք դաւանող մարդիկ շատ աղէկ կրնան ունենալ մէկ հայրենիք, բաւական է որ միեւնոյն շահերն և միեւնոյն խտէալն ունենան ամէնքն ալ, — եթէ իրաւ է թէ կառավարութիւնն և հասարակաց կարծիքը վարող լրագրութիւնն անկեղծօրէն ու խորունկ կերպով համողուած են այս ճշմարտութեան, հիմա է որ, Ազատութեան ու Սահմանադրութեան վերահաստատութենէն մէկ տարի վերջն է որ թուրքն և Հայր պէտք է զիրար համբուրեն, հիմա է որ պէտք է ուրախութենէ արտասուեն անոնք՝ ազատ և սահմանադրական ժողովուրդ մը եղած ըլլալուն համար: Սահմանադրութեան վերահաստատութեան յաջորդ օրն իսկ, երբ ամբողջ ժողովուրդը խելայեղ՝ իր զգացումներուն միայն ականջ կը դնէր և բանականութիւնը վստած էր, այս սիւնակներուն մէջ կը փորձէի հասկցնել թէ ի՞նչ է Ազատութիւնն և ի՞նչ պայմաններով կրնայ իրական ու անուական ըլլալ ան. կը փորձէի հասկցնել թէ՛ «Բանականութեամբ միայն կարելի է կառավարել իրապէս ազատ ժո-

դովուրդները (Քոնտորսէ) : » Մէկ տարի վերջ պէտք կ'զգամ տակաւին նոյն յօդուածս ընթերցողացս ուշադրութեան յանձնելու դարձեալ :

Ե՛րէ . . . որքա՛ն դարհուրելի է այս բառը , այն դժուարին վիճակին մէջ ուր կը գտնուինք : Ե՛րէ , այսայսինքն լայնափնոտեկ վիհի մը գազաթը : Եթէ հայրենասիրութեան այն լուրջ ըմբռնումը զոր կը լսենք մէկ քանի օրերէ ի վեր , ձեւական բան մըն է լոկ , դատին պէտքին համար ստեղծուած , իրարէի մասլահաթի համար հնարուած , դժուարութենէ մը ազատելու համար մտածուած առժամանակեայ նոր հնարք մը պարզապէս , ա՛լ ազատում չկայ , անդունդին խորն ենք , ուչ կամ կանուխ :

Բայց միտքը կ'ապստամբի այսպիսի կասկածի մը դէմ . ո՛չ , անկարելի է , ո՛չ ոք կրնայ այսչափ ակներև իրողութիւն մը չտեսնելու չափ կոյր ըլլալ : Անկարելի է որ քաջութեան շնորհիւ երկիրն ազատելէ վերջ իրական վտանգէ մը , թող տրուի որ անխոհեմութեան մը զոհ երթայ ան : Եկո՛ւր , Արդարութիւն , եկուր մեր գիրկը , քեզ միայն պէտք ունինք , որպէս զի մեր գեղեցիկ , մեր հրաշալի , մեր անդուգական երկիրն ըլլայ օթեւան Երջանկութեան : Արդարութի՛ւն , դո՛ւ ես անդրիւր ամենայն բարեաց , դո՛ւ ես միակ ոյժը բարերար , միակ ոյժն իրական , միակ ոյժը տեւական , տե՛ս , գրկաբաց , արտասուալից , սրտատրոփ կը սպասենք քեզ ամէնքս , եկուր մեր գիրկը , բնակէ յաւէտ մեր գեղեցիկ , հրաշալի , անդուգական երկիրը : Մենք գիտենք թէ երկիր մը մէկ ակնթարթի մէջ բռնապետական բարքերէ ազատական բարքերու չի կրնար անցնիլ , թէ բռնապետութեան միւսաները , այս կամ այն ձեւով , անխուսափելիօրէն պիտի կրենք Ազատութեան շրջանին մէջ ալ : Այս ամէնը շատ աղէկ գիտենք : Բայց որպէս զի կարենանք ապրիլ իբր մարդ , պէտք ունինք ապահով ըլլալու , ո՛վ Արդարու՞

Թիւն , թէ մեր մէջն ես դուն , թէ ամէն օր մէկ մէկ նոր բարեւաւում պիտի մտցընես մեր երկրին մէջ , թէ դո՛ւ ես կառավարողն այս գեղեցիկ , հրաշալի , անդուգական երկիրը : Ահա՛ մեր ուզածը : Մարդիկ տէրն են իրենց կատարած գործին , բայց աստուածներն իրենց վերապահած են անոնց արդիւնքները , կ'ըսէր Սոկրատ . բայց մենք կը հաւատանք , ո՛վ Արդարութիւն , թէ աստուածներէն առաջ մե՛նք պիտի կրնանք վայելել քու բարիքներդ : Այնքան չարչարանք , այսքան զոհաբերութիւն արժանի ըրած են զմեզ անոր :

(Բիւզանդիոն , 1909 Յուլիս)

ՅԱԿՈՒ ՊԱՊԻԿԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Սարսուցուցիչ է կամախօք , ո՛չ անոր համար որ կեանքի մը անհետացումն է ան , այլ անոր համար որ ՆԿԱՐԱԳՐԻ մը մահն է : Կեանքեր , որքան շատ կան անոնցմէ մեր շուրջը , անհամար պէսպիսութեամբ , բայց նկարագիրներ , որքան քիչ են անոնք , դարհուրելի , յուսահատեցուցիչ կերպով քիչ , Քրիստոսի կամ օգոստինոսի մեր դարուն մէջ : Միտք մ'ըլլալ , և չազդուիլ մոլորումներէ , երբ , աւա՛ղ , այնքան դիւրին է մարդուն մոլորիլ . սիրտ մ'ըլլալ , և յաղթել այն հազարումէկ թելադրումներուն՝ որոնք յետեւախաղացութիւնն են մարդկութեան դէպի վայրենութիւն , համոզում մ'ունենալ , որոչ դաւանանք մ'ունենալ , հաւատալ արդարութեան , կեանքին նպատակն ընել զայն , ու մերժել կեանքի ամէն սովորական հեշտութիւնները , ընդդէմ ելլել կեանքի ամէն սովորական հրապոյրներուն , առ ոչինչ գրել ամէն թշնամութիւն , ամէն վտանգ , ուրանալ պզտիկ , անձուկ

կեանքը, ապրելու համար ստուար, մեծ կեանքը, անհասականութիւնն ի սպաս երկրին դնել՝ իմաստութեամբ, համոզմամբ, ահա՛ կեանքիդ նշանակութիւնը վերջին օրերուս մէջ մեզ ծանօթ: Միայն և միայն այդպիսի կեանքն է որ պիտի վերակենդանացնէ Թուրքիան, ահա ինչո՛ւ խորապէս կը ցնցէ, կը պակուցանէ մահդ Թուրքիոյ ամէն ճշմարիտ բարեկամները, որոնց պետն եղար դու, դու՛ որ դիմադրելու ոյժը մշակեցիր և պահեցիր քու մէջդ, մինչև վերջին շունչդ. . . կեանքդ մեզ օրինակ, ո՛վ Պատուական Ազգասէր, որ գիտցար ինքզինքդ գերազանցել, որ գիտցար ապրիլ «վտանգաւոր կերպով»: Քու մահուանդ նման մահերու առջև է որ կրնանք խորհիլ Եւրիպիդեսի մը կամ Կիկերոնի մը հետ թէ մահը թերեւս ուրիշ բան չէ, բայց եթէ ճշմարիտ կեանքը, և թէ մենք՝ որ ինքզինքնիս կենդանի կը կարծենք, մեռեալներ ենք անոնց համար, որ մեզմէ բաժնուած են անդարձ:

(Բիւզանդիոն, 1909, Յուլիս)

ԱՆԱՌՈՂՋ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ

Նէլքրնի հանդատաւէտ, առողջարար և աժան շէնքերուն նմոյշը՝ Հարպիյէի վարժարանին քովիկը, Սիրքէճիի ու Գումդարուի միջև, երկաթուղւոյ գիծին երկայնքը շարուած մութ, խոնաւ խղիկները, որք հազիւ խրչտեակներ պիտի կրնային ըլլալ, անկարելի է որ գաղտնիարաց այս միաւորութիւնը չկազմուի մտքիդ մէջ, եթէ քիչիկ մը համակրութիւն ունիս ընկերային առողջապահութեան համար: Ամէն անգամ որ կառախումբն ինձ ցոյց կուտայ այդ խչտեակներով ձեւացած տխրատե-

սիլ մռայլ «ինէմ֊տ֊օկր֊ֆը», սրտի սոսկալի սեղմում մը կ'ունենամ, մասնաւանդ Սահմանադրութեան վերահաս֊տատութենէն ի վեր: Օսմ. Մէպուսական ժողովի ո՞ր անգամը չի գիտեր թէ այդ տնակները ԹՈՒՔԱԽՏԻ ԲՈՅՆԵՐ միայն կրնան ըլլալ. իրենց մէջէն ո՞րը կ'անգիտա֊նայ թէ ի՞նչ պայքար կազմակերպուած է քաղաքակիրթ երկիրներու մէջ, վատառողջ բնակարաններու դէմ: Ու մարդ չըմբռներ թէ ի՞նչպէս՝ այսքան կենսակոչ հարց մը ցարդ առաջնութիւն չէ ունեցած ուրիշ կարգ մը հարցե֊րու վրայ, օրինագիծ մը չէ ներկայացուած, օրէնք մը չէ քուէարկուած և ի գործադրութեան դրուած ցարդ այս մասին: Տոքթ. Րիզա Թէվֆիգ Պէյ ինչո՞ւ կը բաւականանայ անցողակի միայն նշանակելով վտանգը, և դայն մատնանիչ չընէր իր բովանդակ մեծութեամբ: Ինքը, ա՛յնքան ջերմ համակրող անգլիական բարուց, ինչպէս կը հաւատտեն, ինչո՞ւ չի բացատրեր թէ Անգլիա, 1836էն ի վեր, չընկրկիր ու է դրամական զոհողութեան առջև, քաջալերելու համար այն ընկերակցութիւնները՝ որ սու֊ներ կը շինեն գործաւորներու համար: Building societies կոչուած ընկերութիւնները խնայողական անտուկներ են որք սուներ կը հայթայթեն ընկերութեան անդամներուն: — Labouring classes' lodging Houses Acts ըսուածը օրէնքներ են որք 10,000 բնակիչէ աւելի քաղաքները կը խրախուսեն առողջարար սուներ շինելու: — Acts for the Removal of Nuisancesր տեղական իշխանութեանց կուսան գործաւորներու սուները քննելու իրաւունքն և օրինադրանցներուն՝ պատիմներ կը տնօրինեն: — Arti֊san's dwellings Acts (Torren's Acts)ը գլխաւոր նպա֊տակ ունին վատառողջ սուները նորոգել և քանդել. նոյն օրէնքը կ'արտօնէ նաև փլցնել այն շէնքերն որ ուրիշ սուներու օղը, լոյսը և օդափոխութիւնը կ'արգի֊լեն: — Artisan's and Labourer's dwellings improvement

actsը կ'ստիպեն քաղաքապետութիւնները՝ փլցնել վատառողջ տուներն և բնակարան հայթայթել այն անձանց որ, այս զգուշութեան հետեւանքով, առանց բնակարանի պիտի մնային :

Չարդարացնենք մենք զմեզ՝ խորհելով թէ Ֆրանսայի պէս քաղաքակրթութեան մէջ յառաջադէմ երկիր մը, թէև 1850էն ի վեր ունի վատառողջ բնակարաններու դէմ օրէնքներ, սակայն միայն 1902էն ի վեր է որ իր նպատակին իսկապէս ծառայող այս տեսակ օրէնքներ ունի, եւ թէ հետեւաբար մենք որ մեր երկիրը նոր բարեկարգելու սկսած ենք, կրնանք քիչ մը սպասել : Ընդհակառակն, ճիշդ անոր համար որ ուշ մնացած ենք, պէտք է որ ժամանակի կորուստը կարելի եղածին չափ շատ և շուտ դարմանենք :

Անգամ մը որ օրէնք մը քուէարկուի վատառողջ բնակարաններու դէմ, «աժան տուներու ընկերութիւններ» պիտի կազմուին, ինչպէս կան ուրիշ երկիրներու մէջ, ընկերութիւններ՝ որ ամէնէն համեստ քսակներու իսկ մատչելի պայմաններով, առողջարար բնակարաններու մէջ պիտի բնակեցնեն զորժաւորներն իրենց ընտանեօք :

Կենսական խնդիր մըն է առողջարար բնակարաններու խնդիրը, որովհետև հանրային առողջապահութեան խնդիրն է ան՝ գերազանցապէս : Ակնդէտ կ'սպասենք որ Օսմ. Խորհրդարանն անյուպաղ զբաղի անով :

(Բիւզանդիոն, 1908, Ապրիլ)

ՄԱՌԻ ԱՂԱՃԱՆ... ՈՒՍՈՒՑԻՉ

Իւնպէս-Քրօֆօրտի խարդախ սերունդին հուշակաւոր շատաւիզը, Մառի Աղաճան, հինչև հիմայ մեզ ներկայա-

ցաւ լոկ իբր նշանաւոր խաբերայ, բայց ո՛չ ոք մեզ ծա-
նօթացուց իր մէկ ուրիշ տիտղոսը: Մառի Աղաճան խա-
բերայ մը չէ միայն, այլ նաև . . . ուսուցիչ: Չեմ գիտեր
թէ ի՞նչ է ճիշդ արժէքը Մառի Աղաճան և Ընկ.եան
խաբերայութեանց, բայց (ձեռագրին այս մասը չէ հրա-
տարակուած) որքան ալ մեծ ըլլայ հասուցած լինասը,
ոչինչ է ան՝ արտադրած օգուտին հետ բաղդատմամբ, եթէ
գիտնանք գնահատել այդ օգուտը: Մառի Աղաճան իր
չահատակութիւններով մեզ կը սորվեցնէ դէմյանդիմանա-
կան մէթոտով գիտական և բնուշ գոյի կարևորութիւնը:
Իրաւ է որ դարեր առաջ արդէն Տէքարդ նոյն բանը սով-
րեցուցած էր, բայց իր դասը, զոր չէր զգենուր Մառի
Աղաճանի դասին իրագիտական ձևը, չէր կրնար ունենալ
այն սզդեցութիւնը, այն արդիւնքը զոր յուսանք թէ
պիտի ունենայ Մառի Աղաճանի դասը:

Գիտական միտք, որքան հազուագիւտ բան մըն է ան
տակաւին մարդոց մէջ: Որքան յաճախ շարուն իբր իրա-
կանութիւն, ձևն իբր հիմ, խօսքն իբր դուրծ կ'ընդու-
նինք: Որքան յաճախ կը բռնուինք շողշողուն, կախար-
դիչ տրամասութիւններու ոստղէն . . . : Առանց շատ հե-
ռուներն երթալու, հաշուենք անգամ մը թէ Սահմանա-
դրուցեան վերահաստատութենէն ի վեր որքան անգամ-
ներ սխալեցանք, խարուեցանք և տուժեցինք, միմիայն
գիտական միտքի պակասութեամբ, այսինքն, միմիայն
անոր համար որ մեր կիրքերուն անձնատուր եղանք տղու-
պէս, փոխանակ մեր զգացումները բանականութեան
հակակշռին ենթարկելու: միմիայն անոր համար որ դրա-
կան պարագաները միայն ուղեցինք տեանել, փոխանակ
հաշուի առնելու ժխտական պարագաներն ալ: միմիայն
անոր համար որ կեղծն անկեղծէն դանապանելու չափ
յատակատես չկրցանք ըլլալ:

Մառի Աղաճան և Ընկ. գիտական միտքի դաս մը

կ'ուտայ մեզ դէմյանդիմանական մեթոտով : Ջանանք օգտուելի դասէն , ոչ միայն մեզմէ ո՛ր և է ձևով և ո՛ր և է անուշով նպաստ ուզողին նպաստ չտալով՝ նպաստ խընդրողին հանգամանքներուն վրայ վատան ըլլալէ առաջ , այլ նաև առանց արտորանքի գործելով , երեւոյթն իրականութեան տեղ չառնելով , գրասենեկի ընկերաբաններու կամ ընկերվարականներու բանդագուշանքն իրականութեան և իրականալիին հետ քով քովի բերելով , մէկ բառով , կշռելով , ապացոյցներ փնտռելով և ապացոյցներ պահանջելով՝ հաւատալէ , գործելէ առաջ : Դաստիարակներ՝ , ձեր զլխաւոր նպատակներէն մէկը թող ըլլայ գիտական սգւով տողորել ձեր աշակերտները , իմաստասիրական տարակոյսին վարժեցնել զանոնք : Անոնց անհատական և ընկերային կեանքին համար ամէնամեծ ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլաք այս կերպով , և , հակահարուածով , ամէնամեծ ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլաք ընկերութեան , որ ա՛յնքան աւելի կ'արժէ՝ որքան աւելի գիտական միտք կը պարունակէ : Ֆէրրէրի նման մարդկութեան յառաջդիմութեան քաջ ոտնվիրայի մը դատապարտութիւնը , որ ապացոյցներու վրայ չէ հիմնուած , անջինջ կեղտ մըն է մարդկութեան ճակատին , գործ մըն է բարբարոսութեան : Մարդկութիւնը դէպի աւելի արդարութիւն կը դիմէ միշտ . վա՛յ այն ժողովուրդին որ դուրն մնալ կը փորձէ արդարութեան օրէնքէն . անխուսափելի է իր կորուստը : Արդ , արդարութիւնն անբաժան է գիտական միտքէն : Ահա ինչո՛ւ պէտք է երախտապարտ ըլլանք Մառի Աղաճան և Ընկերութեան որ գիտական միտքի դաս մը տուաւ մեզ :

(Բիւզակդիոն , 1910 , Յունուար)



ՅԱՆԿ Գ. ՀԱՏՈՐԻ ՆԻԻԹԵՐՈՒՆ (*)

	<i>Էջ</i>
1. Գեղեցիկ օրինակ ընթացաւարներուն	1—6
2. Պատասխան «Մի քանի կրթական հարցեր»ու	7—16
3. Պզտիկներուն համար	17—29
4. Զափու վրայ դպրոց	30—48
5. Նոր կազմական կանոնագիր, նոր կրթական ծրագիր .	49—61
6. «Կուսմոֆոն»ը դպրոցին մէջ	62—64
7. Քննութեանց հարցարանները	65—69
8. Կեդրոնական վարժարանը	70—84
9. Դպրոցասէր Տիկնանց Ընկերութեան վերակենցաղման առթիւ	85—88
10. Պէտք է նորոգել կրթութիւնը	89—92
11. اصول تربیه نك اصلاحی	93—95
12. Մակարոյժներ	96—103
13. Նոր մանկավարժութիւնը	103—107
14. Կրթական գործունէութիւնը	107—111, 167—171
15. Սերական հրահանգում	112—117
16. Դաստիարակին իրաւունքները	118—123
17. Տղուն իրաւունքները	123—129
18. Դպրոցասէր Տիկնանց Ընկերութիւն	129—135
19. Հաւարական հրաժարեցումները	136—141
20. Հաւարական հրաժարեցումները	141—144
21. «Կրթական սկզբունքներ եւ խտէալներ» Մ. Մի- նասեանի	145—164
22. Մարդորսութեան ծանօթ դէպքը	164—167
23. Երեք մուսալներ	172—177
24. Հակակրօն փորձեր	178—180
25. Տղայոց համար դաստարաններ	181—184
26. Ինքնավարութիւն Դպրոցներու մէջ	185—190


(*) Մոռցուած Գ. Հատորին մէջ զետեղելու :

27.	Ողջոյն Պուլկարիոյ	191—193
28.	Սերպիա	193—198
29.	Ուսումնական Խորհուրդին մէկ որոշումը	198—199
30.	Երկու կարեւոր որոշումներ	200—205
31.	Մանուկին հոգեբանութիւնը	205—222
32.	Բնախօսական-հոգեբանական հետազօտութիւններ	223—245
33.	Ռէթէոս Պէրպէրեան՝ իբր դաստիարակ	245—254
34.	Մեր ուսուցիչներուն նիւթական վիճակը	254—258
35.	Թալսթոյ մանկավարժ	258—273
36.	Տղայոց վկայութիւնները	273—282
37.	Մանկավարժական Գիտութեան կաճառ մը	282—289
38.	Հայ Պօյ սրտուղներ	289—302
39.	Մարդկութեան թշնամին	302—307
40.	Հայկական Ողիմպիականներն տպաւորութիւններ	307—312
41.	Ճամբորդութենէ դարձիս	313—321
42.	«Հօգի մը կազմելու համար»	322—379
43.	Դպրոցական զբօսաշրջիկներ	380—385
44.	Շառլրուուաի աշխատութեան Համալսարանը	385—396




ՅԱՆԿ Դ. ՀԱՏՈՐԻ ՆԻԻԹԵՐՈՒՆ

	Էջ
1. Ճամբորդութեան սպաւորութիւններ	1—67
2. Դրուագ մը	68—70
3. Ի նպաստ ամուրիութեան, բայց ոչ ընդդէմ ամուս- նութեան	70—79
4. Նամակ առ Խմբագրութիւն «Բիւզաճղիոճի»	80—82
5. Ուղղելի բարբեր	82—86
6. Էսքէռանդօ	96—104
7. Պարտականութեան մարդը՝	105—110
8. Ազատութեան դաստիարակութիւնը	110—113
9. Ազգ. երեսփոխանի յուշատետրէս	113—131
10. Տուրհոպունները	131—141
11. Զգո՛յշ, կը մոլորինք	141—143
12. Տեղափոխութի՞ւն թէ ջնջում	143—145
13. Ի՞նչ ուղղութեամբ աշխատիլ	145—147
14. Ազատ բուէ,	148—152
15. Ո՞վ է կորույին	153—155
16. Արդարակշիռ ազգասիրութիւնը	155—159
17. Արդարութեան երգը	159—162
18. Յակոբ Պապիկեանի յիշատակին	162—163
19. Անտուող ընակարանները	163—165
20. Մառի Աղան . . . Ուսուցիչ	165—167



441999



ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿԷՆ

ՓՈՒՆՁ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԵԱՆՑ

(1901, Կ. Պոլիս, Տպագր. Մատենական)

Ազգ. Հիւանդանոցին նուիրուած,

Պերպերեան վարժարանի յոբելեանին առիւ




ԳԻՆ

ԻԻՐԱՔԱՆՉԻԻՐ ՀԱՏՈՐԻ

75 ՂՐՇ.

BIBLIOTHEQUE NATIONALE DE FRANCE



3 7513 02061106 6